

ԹԻՒՂԱՆՆԱՆՈՒՄՅԱՆ

ԺԵՐԵՆՅՈՒ



АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР
ИНСТИТУТ ЛИТЕРАТУРЫ ИМЕНИ М. АБЕГЯНА

РУЗАН НАНУМЯН

Ц Е Р Е Н Ц

Жизнь и творчество

ИЗДАТЕЛЬСТВО АН АРМЯНСКОЙ ССР
ЕРЕВАН 1986

929: 891.981 07/10/81

ՀՆԹԵՐՑԱՍՐԱՀ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
Մ. ԱԲԵՂՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՌՈՒԶԱՆ ՆԱԶՈՒՄՅԱՆ

Ծ Ե Ր Ե Ն Ց

A $\frac{\bar{\Pi}}{24281}$

ԿՅԱՆՔԸ ԵՎ ԳՈՐԾԸ



ԳՄԴ 83. 321

Մ 444 Ն

Տպագրվում է ՀՍՍՀ ԳԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի
գիտական խորհրդի որոշմամբ

Պատասխանատու խմբագիր՝ բանասիրական գիտությունների թեկնածու
Վլ. Ա. Կիրակոսյան

Գիրքը հրատարակության են երաշխավորել գրախոսներ՝ բանասիրական
գիտությունների թեկնածուներ՝ Մ. Մ. Սաղյանը և Ս. Բ. Շտիկյանը

Նանումյան, Ռ. Պ.

Մ 444Ն Ծերենց: Կյանքը և գործը /Պատ. խմբ. Վլ. Ա. Կիրա-
կոսյան: ՀՍՍՀ ԳԱ. Մ. Աբեղյանի անվ. գրակ. ին-տ.—
Եր.: ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1986, 218 էջ, 2 թ. նկ.:

Մենագրության առաջին մասը նվիրված է Ծերենցի կյանքի և
հրապարակախոսական գործունեության բնութագրմանը, երկրորդ մա-
սը՝ գրողի պատմավեպերի վերլուծությանը: Պարզաբանվում են հե-
ղինակի ռոմանտիկական պատմահայեցողության և գեղարվեստական
մտածողության այն նորույթները, որոնք հիմք են դառնում դասական
պատմավեպի հետագա զարգացմանը:

Հասցեագրվում է գրականագետներին և ընթերցող լայն շրջան-
ներին:

ԳՄԴ 83. 321

4603010201

ն— — — — — 80—85

703 (02)—86



Ծերենց
Հ. Նիզամյան
(1822—1888)



Ա Ռ Ա Ջ Ա Բ Ա Ն

Հայ ականավոր գրող, պատմառոմանտիկական վեպի հիմնադիր, հասարակական գործիչ, հրապարակախոս Մերենցը (Հովսեփ Շիշմանյան) շուրջ 40 տարի անձնվիրաբար պայքարել է ֆեոդալական հետամնացության դեմ, պրոպագանդել է եվրոպական լուսավորություն: Մերենցի վեպերը ազգային ազատագրության ոգեշունչ գաղափարներով տասնամյակներ շարունակ խանդավառել են ժողովրդի միտքն ու զգացմունքները:

Ուղիղ կես դար (1838—1888) Մերենցը ակտիվությամբ մասնակցել է արևմտահայ հասարակական կյանքի կազմավորման տարբեր պրոցեսներին, ազգային դարթների, վերածնության և ազատագրական շարժման կազմակերպման դրժվարին և հայրենանվեր գործին: Իր կյանքի վերջին տասնամյակում նա սուր կերպով վերապրում է արևմտահայության ծանր ճակատագրի վայրիվերումները, սակայն չի կորցնում ապագայի նկատմամբ ունեցած իր հրապնները:

Մերենցի կյանքի և գործունեության շատ կարևոր էջեր անձանոթ են մեղ: Նրա արխիվից մնացած մասունքները հավաստում են, որ դեռևս պատանի՝ խորապես հետաքրքրվել է հայ ժողովրդի պատմությամբ, հրապուրվել է իտալական ազգային-ազատագրական պայքարով, ծանոթացել է ֆրանսիական լուսավորական և հեղափոխական շարժումների պատմությանը: 21 տարեկան հասակում շրջել է արևմտահայ գավառները, եղել է Արևելյան Հայաստանում՝ նպատակ ունենալով մոտիկից ճանաչելու հայրենիքը:

Փարիզում 1848—1852 թթ. Մերենցի ձեռք բերած բժշկական կրթությունը և հումանիտար բաղմակողմանի գիտե-

լիքները խորապես նպաստում են 50-ական թվականներին 4. Պոլսում արդեն կազմակերպված հայ լուսավորիչների «Ուսումնական խորհրդի» գործունեությանը՝ ընդգնմ ամիրայության և կղերական ղեկավարի: Այդ գործունեության փայլուն արգասիքն է հանդիսանում Ազգային սահմանադրության ստեղծումը:

Առանձնապես նշանակալից է Մերենցի սկզբնավորած և տասնյակ տարիներ տևած պայքարը հայ կաթոլիկյան շարժման ղեկավար Անտոն Հասունյանի ազգապառակտիչ քաղաքականության դեմ, որը և հայ լուսավորչին դարձնում է հակահասունյան շարժման պարագլուխ:

1860 թվականին, Ազգային սահմանադրության հիմնադրումից հետո, ծնվում է «Հայոց համազգային բարեգործական ընկերությունը»: Պահպանելով 1846-ին հիմնադրված և հետագայում խափանված «Համազգայաց ընկերության» գլխավոր գիծը, նոր ընկերությունն իր բաղմամբ զործունեությամբ ճանապարհներ է որոնում բուրժուական զարգացման ուղին լքած հետամնաց Թուրքիայում հայ տնտեսական կյանքի կազմակերպման, գիտության և տեխնիկայի օգնությամբ ժողովուրդն արտագաղթի, պանդխտության, ֆեոդալական բռնության ճիրաններից ազատագրելու համար:

Մերենցի կյանքում նշանակալից երևույթ էր նրա եռանդուն մասնակցությունն ինչպես ընկերության հիմնադրմանը, այնպես էլ նրա գործունեության հետագա ծավալմանը:

1860-ական թվականներին Մերենցը շատ քիչ հոգիվածներ է տպագրում: Ազգային ժողովի իրավունքների վերականգնումից հետո, նա սկսում է հրեման թղթակցել տարբեր թերթերի, իսկ 1872 թվականից՝ դառնում է «Արևելյան մամուլի» թղթակիցը:

1870-ական թթ. 2. Շիշմանյանը «Արևելյան մամուլում» տպագրած հոդվածներում հանդես է գալիս Մերենց ծածկանունով: Նրա առջև բացվում են գործունեության լայն շրջանակներ: Եթե Մամուրյանի համար Մերենցը ուսուցիչ էր, ապա նրա պարբերականը այդ ուսուցչի համար դարձավ իր գաղափարներն արտահայտելու և տարածելու միջոց, ուր նա հնարա-

վորութիւնն ունեցաւ թափանցել աղգային կյանքի խորքը, տեսնել նրա մեջ ծայր առնող տնտեսական հակասութիւնները: Ծերենցն առանձին ուշադրութիւն է դարձնում խրիմյան Հայրիկի և Աղգային ժողովի ղեկավարների միջև մղվող պայքարին, պաշտպանում խրիմյանի դատը:

1870-ական թթ. սկիզբը նշանավորվում է Բալկանյան երկրներում հետզհետե աճող դժգոհութիւններով՝ թուրքական լծի դեմ, որոնք հաստունանալով վեր են ածվում ապստամբութեան: Ապստամբում են բուլղարները, որոնց հետևում են նաև հարևան ժողովուրդները:

Ծերենցի բոլոր հոգիւածները «Արևելյան մամուլի» էջերում հագեցված են արևմտահայութեան քաղաքական-սոցիալական հարցի լուծման ձգտումներով: Այստեղ տիրապետող քննադատութեան ոգին է, որի նպատակն է բացահայտել աղաղակող հակասութիւնները՝ կանխելու համար պանդխտութիւնն ու արտագաղթը: Ծերենցը մերկացնող հոգիւածներ է գրում Հաստունյանի նենգ քաղաքականութեան դեմ, ծաղրում է Վատիկանի գործակալներին, թերահավատ վերաբերմունք ունի եվրոպական դիվանագիտութեան հանդեպ: Այս բոլորն իրենց խոր հետքերն են թողնում ապագա վիպասանի աշխարհայացքի ձևավորման վրա, հանգեցնում մեծ հարցի՝ ժողովրդի փրկութեան ուղիների որոնմանը:

Ծերենցի կյանքի և գործունեութեան շատ դրվագներ լիապես բացահայտված չեն համապատասխան փաստերի բացակայութեան պատճառով: Մեզ համար հետաքրքիր հայտնութիւնների նյութ կարող են ծառայել Ծերենցի կապերը 1880—1882 թթ. Արևելյան Հայաստանի գործիչների հետ: Դրանք կարող են մեծապես նպաստել բացահայտելու Ծերենց հայրենասերի և քաղաքական գործչի պատմական դերն այդ կարևոր ժամանակահատվածում ևս:

Մենագրութեան երկրորդ մասում պարզաբանվում են դասական պատմավեպի սկզբունքները, նրա տարրերիչ գծերը կլասիցիստական ողբերգութիւններից և ռոմանտիկական դրամայից. ներկայացվում են Ծերենցի ռոմանտիկական պատմահայեցողութեան մեջ եվրոպական ներբերումները և հրապարա-

կախոսությունից գեղարվեստական երկերը թափանցած գաղափարական միտումները, արվում են հարցադրումներ՝ կապված գրողի ընդհանուր գեղարվեստական աշխարհայեցողւթյան, նրա ստեղծագործության ժողովրդայնության սկզբունքային խնդիրների հետ:

Ռոմանտիկական պատմավեպի առաջին կարևոր նվաճումը եղավ այն, որ կարիք ղգացվեց ժամանակակից կյանքի խնդիրները լուծել անցյալի փորձով, ըմբռնել պատմափիլիսոփայության գաղափարական այն մեկնակետերը, որոնք ցույց են տալիս, որ ժողովուրդների բարդ հարաբերությունների ընթացքում ժամանակակից կյանքի իրողությունները կապվում են պատմական անցքերի հետ մի ընդհանուր շղթայով:

Առաջ քաշվեց պատմության գիտական հետազոտության պահանջը՝ ճանաչելու պատմական անցյալը, որոնելու ժողովրդի գոյության, նրա կյանքի համար վճռական նշանակություն ունեցող ազատագրական շարժումների փորձը:

Այդ որոնումների ընթացքում Մերենցը հանդես է բերում պատմության շարժիչ ուժերի հարաբերակցության ղգաստ ըմբռնում, հայտնաբերում է պայքարի ուժն ու թուլությունը ներկայացնող իրողություններ, որոնք իրենց համապատասխան ներգործությունն են ունենում հայ ժողովրդի պատմական ճակատագրի վրա: Մերենցն ընտրում է պատմության այնպիսի պահեր, որոնք ցուցադրում են այդ ուժի ու թուլության պատճառները՝ ներքին հարաբերությունների, վերելքների և վայրէջքների, առաջադիմության և անկման հակադիր երևույթների մեջ:

Պատմական ճշմարտությունը գեղարվեստական ճշմարտության մեջ հայտնաբերելու Մերենցի գլխավոր սկզբունքը ժողովրդի պատմական դերի բացահայտումն էր, նրա իրավունքի հաստատումը: Դա իր հետ բերում է ազգային-սոցիալական-քաղաքական հարցերի նորաձև լուծումներ, որոնց մեջ արտացոլվում են ժողովուրդների պատմական առաջադիմության փորձը, դարերի ձգտումը՝ տեսնել ազգը, ժողովուրդը, անհատը ազատագրված բոլոր տեսակի բռնության կապանքներից:

Մերենցի վեպերը հագեցված են նրա պատկերած դարաշրջանների բարդ հարցերի գեղարվեստական խոր և միաժամանակ ուրույն լուծումներով:

«Թորոս Լեոնին», ժամանակակիցների վկայությամբ, միանգամայն արդիական հնչողություն ուներ, համակված էր հեղափոխական զարթոնքի պաթոսով: Ժողովրդայնության բարձր առաքինություններով օժտված վիպական հերոսը՝ Կիլիկիայի մեծ իշխան Թորոսը, իր երկրի անկախությունը և պետության ամրությունը տեսնում է ոչ թե պետության և իշխանների համագործակցության, այլ ուժեղ և կենտրոնացված պետական իշխանության ստեղծման մեջ: Այստեղ հեղինակն առաջին անգամ գեղարվեստորեն փորձում է լուծել ոչ միայն աղատագրական շարժման մեջ ժողովրդի ունենալիք դերի, այլև հայկական պետականության ուժի և նրա հարատևության հետ կապված մի շարք հարցեր:

«Երկունք Թ դարու» վեպում Մերենցը մշակում է նոր հայացք պատմության շարժիչ ուժը հանդիսացող ժողովրդի և պետության, ժողովրդի և տիրապետող դասերի, ժողովրդի և անհատի փոխհարաբերության վերաբերյալ:

Թովմա Արծրունին արաբական զավթիչների դերադանց ուժերի դեմ ծառացած գյուղացի Հովնանի մոտ ընդգծում է առաջին հերթին «տիրասիրությունը»: Մերենցը հակառակը՝ այդ «տիրասիրություն» բառի տակ դնում է իշխանության ուժը և հեղինակությունը ընդունելու գաղափարը: «Հայ ժողովրդի միակ թշվառության պատճառը աղնվական դասն է», — հայտարարում է Հովնանը: Նա ժողովրդի և ապա պատմության դատաստանին է հանձնում հայրենիքի դավաճան իշխաններին, որպես ժողովրդի թշնամիների: Հովնանը ձաղկում է երկրի ապագա տերերի՝ Բագրատունիների թուլությունը և անկամությունը ժողովրդական ուժերի պատմական դերն անտեսելու համար:

Բագրատունյաց իշխանության հիմնադրի նկատմամբ Հովնանի տաժած անվստահության և հակառակը՝ Գուրգեն իշխանի վարքագծում ժողովրդայնության ձգտումների արտահայտություն տեսնելու փաստի մեջ բացահայտվում է հերոսի

խոր հավատը՝ դասային պատենշների կործանումով և «բարոյական միասնության» գաղափարի իրականացումով ուժեղ ու միասնական պետականության հասնելու հեռանկարների հանդեպ:

Այս առումով Մերենցի վեպերի գաղափարական բովանդակությունն ստանում է պատմափիլիսոփայական իմաստավորում: XVIII դարի լուսավորիչներից փոխառած դրույթներով նա փորձում է գտնել բանական և բարոյական ճշմարտության ներքին կապերը, որոնք ազգային-քաղաքական պայքարի մեջ պետք է բարձրացնեին հասարակական անհատի բարոյական ուժերը:

Ուսումնասիրության մեջ լայն տեղ է տրվում հատկապես այն խնդիրների քննությանը, որոնք կապվում են Մերենցի վեպերի նորարարական սկզբունքների հետ: Այդ վեպերով մեր գրականության մեջ սկիզբ է դրվում դասական պատմավիպագրությանը: Դրանք միաժամանակ բերում էին եվրոպական պատմավեպի շափանիշներով ձևված նոր մտածողություն, որը նոր բովանդակություն էր թելադրում պատմական անցյալի գեղարվեստական մեկնաբանություններին: Այս տեսակետից հետաքրքիր ընդհանրություններ են հայտնաբերվում գեղարվեստական պատմահայեցության՝ Մերենցի և Րաֆֆու սկզբունքների միջև:

Գլուխ առաջին

1. ԾԵՐԵՆՑԸ Ս. ՂԱԶԱՐ ԿՂԶՈՒՄ: 2. ՎԵՐԱԴԱՐՁ
ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ: 3. ԳԱՂԱՓԱՐԱԿԱՆ ՀԱՍՈՒՆՈՒԹՅՈՒՆ:
4. ՓԱՐԻԶՈՒՄ

1

Ծերենցը (Հովսեփ Շիշմանյան) ծնվել է 1822 թ. սեպտեմբերի 16-ին, Կ. Պոլսում: Հիշելով մանկության և պատանեկության ծանր տարիները, հետագայում նա գրել է. «Որք մորմե 3 տարեկան, հորմե 11 տարեկան, անցուցեր եմ տղայությունս և պատանեկությունս տարուբեր, տարտամ, շունենալով սովորաբար որևիցէ ապահովություն վաղվան ապրուստին համար»¹:

1830 թ. փոքրիկ Հովսեփը եղբոր հետ ընդունվում է Միջագյուղի (Օրթագյուղ) լուսավորչա՛ն վարժարանը: Այստեղ են բերում նաև Ալիշանյան եղբայրներ Քերովբեին (հետագայում Ղևոնդ) և Սերովբեին: 1832-ին Կ. Պոլիս է գալիս մխիթարյան միաբան, Հայկազյան բառարանի հեղինակ Մկրտիչ Ավգերյանը՝ Ս. Ղազարի «Նոր ընծայարանի» համար աշակերտներ տանելու: Ընտրված 11 աշակերտների թվում էին Շիշմանյան և Ալիշանյան եղբայրները²:

«Սուրբ Ղազար» հուշերում Ծերենցը նկարագրում է հորից բաժանման պահը: «Սա տողերու գրողը, որ իր հոր խստութենեն վատ, ուրիշ բան մը չէր նշմարած մինչև այն բաժանման օրը, դինքը առանձին սենյակ մը տանելով, որդյակ (առաջին անգամ որդյակ բառը լսած էր իրմե),—հիշե մայրդ, մի մոռնար աղոթելու իրեն հոգվույն համար և ես, թե որ մեռնիմ, մի մոռնար աղոթել և ինձի համար,—ըսեր էր և իր սրտին հուղմունքը և ձայնին տխրությունը և աչքերուն փայլը ծածկելու համար թողեր էր տղան և հեռացեր էր. վասն զի արևելք, արցունքի տխրության երևույթը ան ատեն մեծ ամոթ էր»³:

Ճանապարհորդությունը, ըստ Ալիշանի գրառումների, տե-
վում է 57 օր: Այդ օրերից 40-ը «կարանտինի» անվան տակ
անց են կացնում ս. Ղազարի մոտ գտնվող կղզյակներից մե-
կում: Հուլիսի 5-ին երեխաները մտնում են ս. Ղազար կղզին:
«Կղզի մը արդեն բանտ մըն է և մենք դարձյալ կղզանքի տակ
բանտի մը մեջ մտանք,—գրում է Մերենցը,—բայց բանտը
գեղեցիկ էր. այդ միշտ կղպված դուռը, ընդարձակ երկայն
սրահի մը վրա կհաններ, որուն մեկ կողմը կարգով սենյակներ
կային և դիմացը գեղեցիկ դռան պես պատուհան մը, որը ծո-
վուն վրա կբացվեր, ուսկից իտալական երկինքը և Ադրիակա-
նին լիճը պայծառ կծիծաղեին մեր տղոց աչքերուն: Մաքրու-
թյունը և լուսավորությունը աս բնակարանին, որուն զետինը
հայելիին պես միակերպ կփայլեր: Խոցերուն կոկիկ միակեր-
պությունը, անոնց կարասյաց պարզությունը և առանձին
սենյակի մը տեր լինելու փափագը տղու մը համար մղող ազ-
գեցություն մըն էր: Ուստի մենք մեր աս բանտի հետ, որ նոր
ընծայարան անունը ուներ, սիրով հարմարեցանք, վասն զի
աղոց համար նորությունը միշտ սիրելի է»⁴:

Ս. Ղազարի ցածր և բարձր դասարանի աշակերտները
դպրոցի վերակացուի հսկողությամբ հանգստանում էին վան-
քին պատկանող կղզյակներից մեկում: Ամռան ընթացքում
երեխաներին զբաղեցնում են Մ. Ավգերյանը և երիտասարդ
վանական, ապագա դրամատուրգ Պետրոս Մինասյանը: Ավ-
գերյան վարդապետը առաջին իսկ օրից գրավում է մանուկ-
ների սիրտը: «Աս այն մարդն էր,—գրում է Մերենցը նույն
տեղում,—որ Հայկազյան բառարանը գրեր էր, միաբանական
պետության մեջ, մխիթարյան ան հմուտ գլուխն էր և թե ի
Հոռոմ կարդինալաց եղվիտներուն մեջ շատերը ափ ի բերան
լոցցուցել էր իր վանքին և նորա հիմնարկության վրա հար-
գանոք խոսելով» (16/I, էջ 3):

Իր զրույցներով մանուկներին առանձնապես գրավում է
Պետրոս Մինասյան վարդապետը: Երեխաներին հայտնի է
դառնում, որ իրենք ազգությամբ ոչ թե «կաթոլիկ են», այլ՝
նալ: «Իր պատմություններն իմացանք, որ մենք հայ ենք
ևղեր, մեր երկիրը Պոլիս չէ եղեր, այլ Հայաստան, և թե մենք

ալ երբեմն թագավորներ ունեինք և թե մեր նախահայրք քաջ մարդիկ են եղեր և թե մեր անմիաբանության պատճառով ամեն բան կորուսել ենք և հիմա գերի ենք օտարաց» (նույն տեղում)։

Երիտասարդ վանականը երեսաներին պատմում է Տըրդատի, Տիգրանի և Վարդանանց պատմությունները, խոսում է մեր հայրենիքի գեղեցկությունների և մեր գիտուն ու հայրենասեր գործիչների մասին, համակում նրանց հայրենասիրական զգացումներով։

Այսպես անցնում են օրերը։ Ամռան վերջին ս. Ղազար են վերադառնում դպրոցականները՝ վերակացու Անդրեաս Ծըռվիզյանի հետ։ Վերջինս հավաքում է նորեկներին և ծանոթացնում միմյանցից վարժարանի կանոններին։ Առաջին կանոնը, հանդիսավոր հայտարարում է նա, հնազանդությունն է. «Ուստի մեր վերակացուն ժամ մը երկու ասոր վրա խոսեցավ, շատ մը օրինակ բերելով ի սուրբ գրոց ու Մովսես, Սամուել, Դավիթ, Եսայի, Երեմիա, բոլոր մարգարեք, ավետարանիչք, առաքյալք, խառնիխոտն ականջին կըլիցներ որ և անդիմադրիկ քուն կբերեին» (նույն տեղում)։

«Հնազանդություն» կոչված կանոնի մեջ մտնում էին հետևյալ պատվիրանները՝ չխոսել, չնայել ուրիշին, ձեռք չտալ, չքսվել, երկու հոգով չառանձնանալ, հանդիմանություններին չպատասխանել և ծնկաչոք ներողություն խնդրել, անկախ նրանից՝ հանդիմանողը մեղավոր է, թե ոչ։

Ուսման առաջին իսկ օրից մանուկ Հովսեփը չի հանդուրժում վանական խստությունները։ Հուշերում նկարագրվում են վերակացուի հետ ունեցած ընդհարումները։ Անդրեաս Ծըռվիզյանը գործադրում է բոլոր միջոցները՝ հանդուգն պատանուն իրեն ենթարկելու։ «Նոր ընծայարանի» ուսուցիչներից Մերենցը սիրով հիշում է Պետրոս Մինասյանին, որը նրան հնարավորություն էր տալիս դասերից դուրս կարդալու հայոց հին պատմիչներին։ Նա հիշում է Զեմպերեքճյանին, որն ամեն կերպ աշխատում էր հարթել վերակացուի հետ ունեցած բախումները, խրախուսում նրան՝ հետևելու դասերին։ «Նոր ընծայարանում» պարապում էին նաև վարժարանի բարձր դասարանի

աշակերտները: Ծերենցը հիշում է Գաբրիել Այվազովսկուն, համակրանքով խոսում նրա մասին:

Մխիթարյանները դեռևս նախորդ դարի վերջերին կազմակերպել էին «Դպրոցական թատրոն», ուր աշակերտության ուժերով բեմադրում էին կրոնական, ինչպես և հայրենասիրական բնույթի ինքնուրույն և թարգմանական պիեսներ:

Հայրենասիրական բնույթի պիեսների կողքին խաղացվում էին աշխարհաբար լեզվով գրված կենցաղային պիեսներ: Մխիթարյանները սիրում էին Մուխեբին, բեմադրում էին նրա «Տարտյուֆը», գրում էին հայ ամիրանների և գյուղական հարստահարիչների բռնություններն ու կողոպուտները ներկայացնող պիեսներ:

Ծերենցի՝ ս. Ղազարում եղած ժամանակ թատրոնի խաղացանկի մեջ էին մտնում Ալֆիերիի «Բրուտոս», Կորնելյի «Պոլիկտոս», Վոլտերի «Յեզարի մահը» և այլ ողբերգություններ: «Նոր ընծայարանի» հուշերի մեջ Ծերենցը պահպանել է մխիթարյան թատրոնից մնացած ջերմ տպավորություններ:

«Զմեռը բարեկենդանին,—գրում է նա,—երկու, երեք ամիս մնացած թատրոնական հանդիսություններ կլինին նոր ընծայարանում և այն օրերը դասերը կդադարին: Յուրաքանչյուր ոք յուր հատվածը կսերտե, ղգեստ, ղենք, տեսարան և փորձ պատրաստելու կզբաղի: Ուստի ազատության մը ժամանակ է: Մենք աս թատրոնական տեսարաններուն վրա չենք ուղեր խոսել, որ սովորաբար վարժապետաց բարի կամ գեշ ախորժակներուն վրա կկայանա և օգտակար կրնա լինիլ տղոց դաստիարակությանը» (16/1, էջ 8):

Անշուշտ, հայրենասիրական բնույթի ողբերգություններն իրենց ներգործությունը պետք է ունեցած լինեին պատանու վրա: Նրա մոտ հենց այդ տարիներին է ձևավորվում հետաքրքրությունը դեպի հայ ժողովրդի ապրած ծանր կյանքը: Այդ շրջանում իտալական ժողովրդի մղած պայքարը՝ թուրքական լծից ազատագրման համար, նրա մոտ խմորում է նոր զգացմունքներ, որոնք նա արտահայտում է մխիթարյան միաբանությունը թողնելուց անմիջապես հետո:

1837 թ. վերջին Ծերենցը գալիս է Կ. Պոլիս: Նա վահան-
 քըստից նա քայլերն ուղղում է մորեղբոր աշխատատեղը: Կա-
 թոլիկյան համայնքի «ազգապետ» Կարապետ Եսայանը նրան
 ընդունում է սառը: «Քո կամքով թողիր կրոնավորությունը», —
 հարցնում է նա: «Այո», — պատասխանում է պատանին: Եսա-
 յանը ցույց է տալիս Անդրեաս Մովսիսյանի նամակը, լուռ հաս-
 կացնում նրան, որ իրեն հայտնի է վանքում տեղի ունեցածը,
 և առանց բացատրություն պահանջելու, ուղարկում է նրան
 եղբոր սուռն (նույն տեղում, էջ 16):

Մորեղբոր ընտանիքի անդամները պատանուն ընդունում
 են ավելի ջերմ: Մորեղբայրը մասնագիտությամբ դեղագործ
 էր, ուստի հարմար է համարում առժամանակ տղային տեղա-
 վորել իրեն ծանոթ դեղագործներից մեկի մոտ, որպես աշա-
 կերտ: Մորեղբոր խոսքից պարզվում է, որ այդ «մասնագի-
 տությունը» «հայրենական էր», ուրեմն պետք է կնթաղրել, որ
 Ծերենցի հայրը նույնպես զբաղվել է դեղագործությամբ:

Իտալացի դեղագործ վարպետն ընդունում է տղային՝
 շաբաթը չորս դուրուշ չնչին աշխատավարձով: Նրա պարտա-
 կանությունն էր լվանալ շշերը, եփել ծաղիկները և բույսերի
 արմատները, պատրաստի դեղերը լցնել շշերը, տեղավորել
 զամբյուղներում, տանել ըստ հասցեների:

Ծանր էր պատանի Ծերենցի կյանքը Պոլսում՝ հատկապես
 առաջին տարին: «Ելանել կղզիեն դուրս, թեպետ իմ կամոք
 ելած և աշխարհքին տաժանմանց մեջ ինկած զիս կգտնեի.
 հյուր տան մը մեջ... ինձ համար չի կար հոր, մոր անուն: Տու-
 թու բառը ևս չէի հիշեր, թե իմ բերնես ելած լինեիր... Կար-
 դալու չափազանց սեր ունեի, բայց ո՞ւր էր գիրք: Եթե ձեռքս
 անցներ, կդողայի երբ վերջին գլխուն պիտի հասնեի: Ի՞նչ կար
 մխիթարության դեռ 15 տարվա չի հասած պատանվոյ համար
 որ գրականության համը միայն առած, նովա՛վ կտոշորեր և չի-
 կար յուր ճաշակաց հարմար ոմն, որուն հետ կարենար տես-
 նըլիլ, խոսքը և իր լեզուն հասկնալ»⁵:

Այդ ծանր օրերին նրա մոտ առաջանում է ցանկություն՝
 խորանալու դպրոցում թերի ուսած իտալերեն լեզվի մեջ, և նա

սկսում է կարդալ իտալերեն գրքեր՝ բառարանի օգնությամբ։ Հուշերում նա թվարկում է իր կարդացած իտալացի հայրենասեր գրողներին՝ Մոնտի, Մանձոնի, Պելիկո-Սիլվի, Վ. Ալֆիերի...։ Ոգևորությունը իտալական գրականությամբ, նրան դարձնում է այդ օրերին տարածում գտած իտալական հայրենասիրական խոսքի պրոպագանդիստը դեղագործի արհեստանոցում։

Այդ մասին նա գրում է նույն տեղում։ «Ամբողջապես կթարգմանեի բառ առ բառ... և երբ բավական կհասկնայի լսարան մը կկազմվեր շուրջս և կսիրեի պատմել իմ կարդացածներս, իմ կողմես երգ մը ստեղծելով, կամ պատմություն մը երևակայելով և կերևա թե բավական հաջողությամբ, որովհետև շատ հուզմունք և արտասուք կթափվեր զիս շրջապատող պատանիների մեջ»։

Պարզվում է նաև, որ իտալական գրականությամբ ոգևորված պատանին թարգմանել է երգեր և արձակ էջեր։ Ինչը կարող էր հետաքրքրած լինել նրան, եթե ոչ այն երգերը, որոնց արձագանքները հասնում էին Պոլսի իտալացի և հույն պատանիներին ու երիտասարդներին։ 1831 թվականին Մաձինիի հիմնադրած «Երիտասարդ Իտալիա» կազմակերպության գաղափարների արձագանքները երևում են ժերենցյան այս տրամադրությունների մեջ։ 1830-ական թթ. թևավոր խոսք էր դարձել բանաստեղծ-դրամատուրգ Վ. Ալֆիերիի այն արտահայտությունը, թե՛ «այո, մենք ստրուկներ ենք, այնուամենայնիվ ստրուկներ՝ պատրաստ ապստամբության»։

Ծերենցի նույն հուշերից պարզվում է մի նոր հետաքրքիր փաստ ևս։ Պատանին ոչ միայն ոգևորվել է իտալական ազատաշունչ երգերով, այլև հորինել է այնպիսի բանաստեղծություններ և պատմություններ, որոնք հուզում էին իր շուրջը համախմբված ունկնդիր պատանիներին։ Թեև կոնկրետ ինչ է հորինել նա, դժբախտաբար չգիտենք։


Այդ ժամանակ նրա նախկին դասընկերներից Ս. Ալիշանյանը (Ղ. Ալիշանի եղբայրը), որ նույնպես թողել էր ս. Ղազարը, Ծերենցին ծանոթացնում է իր ազգականներից՝ Պապա Ալիշանյանին։ Դա մի անձնավորություն էր, որն իր զարգա-

ցումով վեր էր ժամանակակիցներից: «Երբ ես այդ մարդուն հետ տեսնվեցա, աչքերես քող մը իջավ,—գրում է Ծերենցն իր հուշերում,— մարդը ինձ նոր աշխարհքի մը հետ կխոսեր, որուն վրա ես ոչ գաղափար ունեի, թեպետ բավական գիրք կարդացել էի... բայց իմ կարդացածս գրքերը այն տեղը չէին տար... Ուստի այդ մարդը, որ ֆրանսերեն գիտեր և այդ ուսմունքին տրված լինելով ինքը ղինքը իրեն աշխատել էր և հատորներով գիրք կարդացել էր այդ նյութի վրա, ղիս ղարմացուց: Բնական էր նրա ղարմանքը նաև իմ տգիտության վրա, բայց այնչափ ազնիվ էր, որ ոչ արհամարհանք հայտնեց և ոչ մեղադրանք, իսկ ես յուր վրա իրապես համարմունք առի...» (նույն տեղում, էջ 2):

Ծերենցի այս հիացումն իր նոր ուսուցչով ցույց է տալիս նրա հետաքրքրության շրջանակների և հայացքների ընդլայնումը, որն, անշուշտ, իր ներգործությունն է ունենում նրա դեմոկրատական աշխարհայացքի կազմավորման վրա:

1838-ին Ծերենցը հանգիպում է իր մխիթարյան ուսուցիչներից Զեմպերեքճյանին, որն առաջարկում է դասեր Օրթա-գյուղի դպրոցում՝ ամիսը 300 ղուրուշով: Դա անակնկալ հաջողություն էր. ամիսը 16 ղուրուշից հետո ստանալ 300, աղաւթվել դեղագործի աշակերտի դժվարին գործից, ընտանիքում ծանր բեռ լինելուց, ունենալ ինքնուրույն կյանք, շփվել դրագետ մարդկանց հետ, զբաղվել ինքնակրթությամբ:

1879 թ. «Փորձում» տպագրած «Արարատյան ընկերություն» հոդվածում Ծերենցը, խոսելով 1830-ական թթ. արևմրտահայ իրականության մասին, նշում էր, որ հոգևորականությունը թավալվում էր տգիտության և խավարի մեջ. սակավաթիվ մարդկանց կարելի էր հանդիպել, «որոնք հաջողակ հյուսներ և որմնադիրներ, ճարտարապետներ էին, առանց ամենափոքր գիտության: Ժողովուրդը կանոնավոր հսկողություն ընելու իրավունք չուներ, իրեն միայն միմիայն պարտականություն էր հնազանդիլ քանի մի բարեբախտ սեղանավորաց, որ դրամական ազդեցությամբ պատրիարքին էլ կիշխեին, ժողովրդյան էլ, որոց քմահաճույքն օրենք էր և ամենքը



եկեղեցական և աշխարհական, ամիրային ամենախոնարհ երկրպագուքն էին»⁶:

Նա այնքան ծանր էր զգում իր շրջապատի «հիմար մեծությունների» նենգությունները և խաբեությունները, որ, ինչպես ինքն է գրում հուշերում, լինում էին պահեր, երբ «կմոռնայի ս. Ղազարու վանքին համար զգացած ձանձրությունս և երանելյաց կղզվոյն հիշատակն ինձի քաղցր կուգար»⁷:

1830-ական թթ. Կ. Պոլսում էսնաֆ դասը, հասած լինելով որոշակի դիրքի, հակադրվում էր ամիրաներին, փորձում իր մասնակցությունը ցուցաբերել ազգային գործերին: Եվ ահա նույն տասնամյակի վերջին Սկյուտարի ճեմարանի առթիվ էսնաֆների և ամիրաների միջև ծագած կոնֆլիկտը 1841 թ. ավարտվում է էսնաֆների հաղթանակով: 1840-ական թվականներին Կ. Պոլսում երևում են եվրոպական կրթություն ստացած մասնագետներ, որոնք իրենց գործնական աշխատանքներով փորձում են վերափոխել Թուրքիայի տնտեսական կյանքը և առանձին ուշադրություն են նվիրում հայ ազգային կյանքի վարգացմանը:

1840 թ. Զմյուռնիայի «Նղանակ» օրացույցում հրատարակվում է Սենեքերիմ Տեր-Մինասյանի «Օրագրություն ճանապարհորդության» հուշագրությունը: Հեղինակը պարտք է համարում նախապես ասել, որ ամեն մի հայ, ինչպես և ամեն մի ազգի զավակ, պարտավոր է ծանոթ լինել իր հայրենիքին: 1843-ին Թիֆլիսում հրատարակվում է Սարգիս Վարդապետ Զալալյանի «Ճանապարհորդութիւն ի մեծն Հայաստան» գրքի առաջին հատորը. առաջաբանում հեղինակը գրում է. «Ա՛յս վիշտ, ա՛յս անտանելի վէր, զոր ընկալայ ի սրտի յիմոց համազգեաց, ստիպեայ զիս շրջիլ անձամբ ի մեծն Հայաստան և զամենայն արձանագրութիւնս դրոշմնալս ի վէմս և յորձատաշ քարինս եկեղեցեաց, վանօրէից, բերդից և ապարանաց, օրինակեալ ամենայն ստուգութեամբ՝ մատուցանել ազգի մերում»⁸:

1842 թ. Վանից Արևելյան Հայաստան է գնում երիտասարդ վանական Մկրտիչ Խրիմյանը: 1850 թ. հրատարակած «Հրավիրակ Արարատեան» գրքույկում նա նկարագրում է հայ-

կական բնօրրանը, էջմիածինը, Անիի ավերակները, Օշականում ծոմար է իջնում Մաշտոցի գերեզմանի առջև:

Վերհիշելով իր տեսած խոսպանացած դաշտերը, անապատ դարձած շենքերը նա կոչ է անում հայ պանդուխտներին՝ վերադառնալ հայրենիք: Այս և այլ փաստեր ցույց են տալիս, որ 1840-ական թթ. սկզբներին արևմտահայ նորաստեղծ մտավորականության առջև ծառանում է սեփական երկիրը ճանաչելու պահանջը:

Ծերենցի առաջին կենսագիր Բ. Զաքարյանը գրում է, որ 1843 թ. օգոստոսին Ծերենցը դուրս է գալիս Կ. Պոլսից՝ Գյումուշխանեի, Բաբերդի, Տրապիզոնի, էրզրումի, Ալեքսանդրապոլի վրայով հասնում Թիֆլիս: 1880 թ. «Արևելյան մամուլում» նա տպագրում է մի հուշ, որից պարզվում է, որ Թիֆլիսից 1844-ի սեպտեմբերին գնացել է Տրապիզոն: Տրապիզոնից նա նորից գնացել է Թիֆլիս և հետո եկել Կ. Պոլիս:

1879 թ. «Փորձ» ամսագրում, հիշելով իր առաջին այցելությունը Թիֆլիս, նա ընդգծում է քաղաքի հայերի հետամնացությունն ու անգրագիտությունը. «...ժողովուրդը տգետ ուսմանց, տգետ յուր լեզվին ոչ մտավորական պիտոյից և ոչ ազգության գաղափար ուներ, դրամ և գինի և մուշտի կռիվ յուր զբաղմունքն էին, ոչ լրագիր՝ և ոչ ընթերցարան՝ ոչ դասախոսություն՝ ոչ գիրք՝ ոչ թատրոն, ոչ ժողովարան սոցա և ոչ մեկուն գաղափարը չի կար այն ատեն»⁹: Քաղաքում չկար ուսումնական մարդ, շարունակում է նա, համալսարանի ուսանող, բժիշկ: Քաղաքի մեծագույն մասը հայեր էին:

Ծերենցը Պոլիս է վերադառնում այն տպավորությամբ, որ իր տեսած Հայաստան աշխարհը շատ «խեղճ երկիր է»: Երիտասարդ հոգում առկայծող հայրենասիրական զգացումները բորբոքվում են իր ժողովրդի կյանքի բարելավման համար ուղիներ որոնելու ձգտումներով: Դժբախտաբար նա գրի չի առել իր այդ օրերի տպավորությունները:

1844 թվականին Ծերենցը շարունակում էր իր պաշտոնավարությունը Օրթագյուղի վարժարանում: 1845 թվականի աշ-

նանը Պոլիս են գալիս Պադուայի Մուրադյան վարժարանն ավարտած մի խումբ երիտասարդներ, մի քիչ ուշ՝ նույն դըպրոցի շրջանավարտ, 17-ամյա Մ. Պեշիկթաշլյանը¹⁰։ Նա տեղավորվում է Օրթագյուղի վարժարանում, որպես ուսուցիչ։ Սյուտեղից էլ սկիզբ է առնում Ծերենցի և Պեշիկթաշլյանի բարեկամությունը։

Այդ ժամանակներում, գրում է հակահասունյան շարժման ղեկավարներից Ս. Ասկերյանը, «քաղաքականագետ և ուսումնագետ ազգասերներեն ոմանք, տեսնելով, որ հիմիկվան եվրոպացվոց մտաց լուսավորությունը վաճառականության և արվեստից ծաղկելը, հարստությունները և ասոր հակառակ ազգիս տգիտությունը և վերջին աղքատությունը, կուղեին և կփափագեին ազգովին, ասոր ճար ու ճարակ և դարման մատուցանել՝ մեկ կարգավորյալ ընկերությամբ մը։ Որպեսզի ազգիս աղքատ և անտեր տղոցը բավականին գիտություն, ուսմունք և արվեստ սորվցնեն, որ ետքը կաշող ըլլան դյուրավ ապրուստ ճարելու»¹¹։

Այդ նպատակն էին հետապնդում 1841 թ. Կ. Պոլսում հիմնված «Ուսումնական ընկերությունը», 1842 թվականին՝ Անդրեաս Փափազյանի «Հայկազյան ընկերությունը», նույն տարին կազմակերպված «Ս. Սահակի ընկերությունը», 1843-ին՝ «Արամյան ընկերությունը» և այլն։ Ընկերությունները կազմակերպվում էին այս կամ այն մեծահարուստի նյութական օժանդակությամբ կամ հանգանակության միջոցով։

Կ. Պոլսի հայ գաղութը XIX դարում դառնում է տնտեսական, քաղաքական և մշակութային կենտրոն, ստեղծվում են դպրոցներ, տպարաններ, հրատարակվում են օրացույցներ, գրքեր, պարբերական թերթեր։ Այդ գործին մասնակցում են նաև հայերին դավանափոխ անելու ձգտումներով տարված կաթոլիկ և բողոքական գործիչները, որոնք հովանավորվում են Հոռմի պապի և Ֆրանսիական, գերմանական պետությունների կողմից։

1840-ական թթ. ազգային զարթոնքի համանման դրսևորումներ երևում են նաև Զմյուռնիայի, Կալկաթայի, Մոսկվայի,

Թիֆլիսի հայ գաղթօջախներում, ինչպես և Կաղանում: Կալկաթա քաղաքում 1845-ից հրատարակվող «Աղգասեր» և ապա՝ «Աղգասեր Արարատյան» թերթերը ակափվորեն արձագանքում են Պոլսի հայ կյանքի իրադարձություններին, խրախուսում են նվրոպայից եկած արևմտահայ իրիտասարդների առաջին քայլերը՝ դպրոցաշինարարության և տնտեսական վերափոխումների ուղղությամբ: Մ. Թաղիադյանն առանձին ուշադրություն է դարձնում «Արշալույս Արարատյանում» և «Բազմավեպում» տպագրվող աղգային լուսավորությանը նպաստող առաջարկներին, քաջալերում է Պոլսի և Զմյուռնիայի բարեկամներին՝ Թիֆլիսի հայ գաղթօջախի հետ մամուլի միջոցով կապեր ստեղծելու համար:

1846 թ. Կաղանում Ստ. Նաղարյանը հրատարակում է «Обозрение Истории Гайканской письменности в новейшие времена» աշխատությունը, որի մեջ վկայակոչելով աղգային դարթոնքի առաջին արտահայտությունները հայ գաղթօջախներում, հատկապես Պոլսի, Զմյուռնիայի և Կալկաթայի լուսավորական շարժման մեջ տեսնում է եվրոպական լուսավորիչների գաղափարների աղգային արձագանքները: Նաղարյանը նոր ճանապարհներ էր հարթում աղգային վերածնության առջև, իսկ Թիֆլիսում, թեև չտպագրված, բայց իր ազդեցության շրջանակներն էր ընդլայնում Խ. Աբովյանի հայրենասիրական գործունեության ընթացքում ծնված «Վերք Հայաստանին»:

Պոլսի «Համազգյաց ընկերության» գործունեության առաջին քայլերը խոստանում էին միավորել հասարակական արթնացած ուժերը, նպաստել երկրի տնտեսական-հոգևոր զարգացմանը՝ ինքնաճանաչման և ինքնագիտակցության նոր ուղիներ գծելու համար: Ընկերության գործունեությանը մեծապես նպաստում է նրա կազմակերպիչը, հետագայում բուհաստեղծի մեծ անուն վաստակած Մ. Պեշիկթաշլյանը: 1846-ին ընկերության կազմակերպման նախօրեին Պոլիս է գալիս Պաղուայի Մուրադյան վարժարանի ուսումնապետ, դաստիարակ և վերակացու Պ. Մինասյանը, որը վարժարանի փակվելուց հետո Տրապիզոն էր գնում Մխիթարյանների հանձնարարու-

թյամբ նոր դպրոց բացելու։ Այստեղ նա օգնում է իր նախկին սաներին՝ «Համազգյաց ընկերության» կազմակերպման գործում, ինչպես նաև կազմելու նրա կանոնադրությունը։ «Պ. Մինասյանը,—գրում է Ծերենցը «Փորձ» ամսագրի էջերում,—... որ իրոք սովորական մարդ չէր, յուր հաստատամիտ բնավորությամբ, յուր խառնափնթոր գիտությամբ, յուր ազգասիրությամբ, կաթոլիկ կրոնամոլությամբ և յուր անշահասեր առաքինությամբ... որ մեծ ազգի մը ընկիթները կուզեր ընել տալ յուր ընկերությանը և որուն անունը մկրտել էր «Համազգյաց»։ Ահա այդ մարդը «Համազգյաց ընկերության» որոմը ցանեղին վերջ Պոլիս, կերթար Տրապիզոն վարժարան շինելու, Հասունին սրտին ցավն ավելացնելու»¹²։

Ավետիս Պերպերյանն իր «Հայոց պատմության» էջերում, իբրև ականատես, ավելի ստույգ տեղեկություն է տալիս ընկերության կազմակերպման մասին։ Նա գրում է. «Ազգասէր և ուսումնասէր անձիք ի հռովմեական հայոց՝ յորոց բազումք աշակերտյալք էին ի Մուրադեան և ի Ռաֆայէլյան վարժարանս և ի Վանսն Վէնետկոյ և Վէննայու համամիտ և համակամ խորհրդով և հավանությամբ կամեցան հաստատել ղընկերութիւն իմն ընդ լուսավորչյան Հայոց»։ Նույն տեղում Պերպերյանն ավելացնում է, որ այդ ընկերության կազմակերպման գործում իր դերն ունեցաւ Մինասյանը՝ խմբագրելով և հաստատելով ընկերության կանոնադրությունը և «ղանունն» կոչեց «Համազգյաց»¹³։

1900 թ. «Բաղմավեպում» Ս. Նրեմյանը որպես ընկերության կազմակերպչի առաջին անգամ նշում է Մ. Պեշիկթաշլյանի անունը։ Ա. Զոպանյանն իր «Մ. Պեշիկթաշլյան» գրքում (1907) հաստատում է Նրեմյանի կարծիքը (էջ 57), Զարդարյանն իր «Հիշատակարանում» նույնպես նշում է, որ Մ. Պեշիկթաշլյանը հղել է «Համազգյաց ընկերության» ատենադպիրը, մինչև 1852 թվականը։ «Համազգյաց ընկերության» ծրագրի հիմքում ընկած էր, առաջին հերթին, տարբեր դավանանք ունեցող հայերի համախմբումը մի դրոշի տակ՝ լուսավորական գործունեությամբ ազգը միավորելու, նրա գոյությունն ու առաջադիմությունն ապահովելու համար։

Պայքարելով այն մտայնության դեմ, թե հայը, եթե կաթոլիկ է դավանութեամբ, ուրեմն դադարում է հայ լինելուց, թե՛ «արտաքոյ Հայաստանեայց եկեղեցւոյ չիք հայութիւն», ընկերութիւնը գտնում է, որ դավանանքի տարբերութիւնը չի կարող արգելք հանդիսանալ ազգային ինքնութեան պահպանմանը: Պահպանվել են Պեշիկթաշլեանի արտասանած ճառերից երկուսը, որոնց մեջ արտացոլվում է ընկերութեան գործունեութեան գլխավոր նպատակը՝ լուսավորական պրոպագանդան դարձնել ազգի բոլոր անդամների, այսինքն՝ և՛ լուսավորչական, և՛ կաթոլիկ, և՛ բողոքական հայերի ազգային առաջադիմութեան, համազգային ձգտումների գլխավոր պայմանը. գյուղերում և քաղաքներում պետք է բացել տղաների և աղջիկների դպրոցներ, ազգի մեջ զարգացնել երկրագործութիւնը և արհեստները՝ ժամանակակից տեխնիկայի միջոցներով, հիւրուպական ձևով ծաղկեցնել վաճառականութիւնը: Անհրաժեշտ էր առանձին ուշադրութիւն դարձնել ազգային մշակույթի հին արժեքների հավաքման, մշակման և տպագրութեան գործին: Սրանք հարցեր էին, որոնք ընկերութեան հիմնադիր անդամների կարծիքով պետք է նպաստեին ազգային ինքնաճանաչութեանը, ազգային միասնութեանը:

1830-ական թթ. կեսերին հռոմեական կոլեջն ավարտած Անտոն Հասունյանը, ներգրավվելով Հռոմի Պապի՝ արևելեան երկրները կաթոլիկացնելու ծրագրերի մեջ, վերականգնում է իր նախորդ քարոզիչներին տրված իրավունքները և Հայաստանի հարցում դառնում Վատիկանի առաջին օգնականը: 1846 թ. նա նշանակվում է հայ կաթոլիկեան համայնքի պետ: Այդ շրջանից Հասունյանի հակաազգային գործունեութեան առաջին քայլերը սկսվում են «Համազգայց ընկերութեան» դեմ պայքարով: Նա իր ուշադրութիւնը կենտրոնացնում էր նաև Մխիթարյանների վրա՝ նրանց կտրելու ազգային մշակույթից և ստիպելու իր հսկողութեամբ զբաղվելու միայն դավանաբանական հարցերով:

1848 թվականին Մերենցը մեկնում է Փարիզ: Այստեղ նա պաշտոն է ստանձնում Պադուայից Փարիզ փոխադրված Մուրադյան վարժարանում և ընդունվում Սորբոնի համալսարանի բժշկագիտության ֆակուլտետը¹⁴: Այդ շրջանում Փարիզում ուսանում էին Ն. Ռուսինյանը, Ն. Պալյանը, Ստ. Ոսկանյանը և ուրիշներ: Փարիզն այդ օրերին համակված էր հեղափոխական տրամադրությամբ: Ազգային սրահներում քննվում էին Սեն Սիմոնի, Ֆուրիեի ուտոպիստական գաղափարները, լսվում էին ռեֆորմիստների և բրիստոնեական սոցիալիստների քարոզները, լուի Բլանի ճառերը: Արժարժվում էին գաղափարներ, որոնք հանգում էին բուրժուազիայի և բանվոր դասակարգի միավորման պահանջին:

1848 թ. փետրվարի 22-ին Փարիզի պանթեոնի հրապարակում հավաքված ուսանողությունը և ժողովուրդը շարժվում են դեպի Բուրբոնյան պալատ: Փետրվարի 23-ին ամբոխը գրավում է Թյուիլրիի ամրոցը, դուրս է բերում թագավորական գահը և այրում՝ «Կեցցե հանրապետությունը» կոչով: Կործանվում է լուի Ֆիլիպի իշխանությունը, բայց փետրվարյան հեղափոխությունը բուրժուական հեղափոխություն էր: Հրատարակված դեկրետները քիչ էին փոխում ժողովրդի սոցիալ-քաղաքական վիճակը: Հունիսին տեղի ունեցավ բանվոր դասակարգի հեղափոխական ելույթը, որը ճնշվեց Կավենյակի ձեռքով: 1848-ի դեկտեմբերին լուի Բոնապարտն ընտրվեց Ֆրանսիական հանրապետության պրեզիդենտ:

1830-ական թթ. Փարիզում ուսանող հայ երիտասարդները 40-ական թթ. արդեն որոշակի թիվ էին կազմում: Մերենցն այստեղ հանդիպեց Ստ. Ոսկանյանին և ականատես եղավ նրա եռանդուն մասնակցությանը 1848 թվականի փետրվարյան հեղափոխությանը: Նա տեսավ լուի Ֆիլիպի կործանված գահը, Ն. Ռուսինյանի և մյուս հայ երիտասարդների հետ մասնակից եղավ հասարակական ժողովներին, լսեց Ֆրանսիական հեղափոխության աչքի ընկած տրիբունների ճառերը՝ ազատության և եղբայրության մասին:

Այս ամենի ազդեցութեամբ հայ երիտասարդութեան շրջանում ձևավորվում են ազգային-լուսավորական դադափարներ, որոնց իրագործման համար անհրաժեշտ էր առաջադնմ ուժերի համախմբում:

1849 թ. Փարիզում հիմնվում է «Արարատյան ընկերութիւնը»: Այդ ընկերութեան մեջ ներգրավվում է Փարիզում սովորող հայ երիտասարդութիւնը. սկզբում ատենադպիր, հետո ատենապետ է հայտարարվում Մերենցը: 1850 թ. «Արշալույս Արարատյանը» տպագրում է «Հայտարարութիւն «Արարատյան ընկերութեան»: Ըստ այդ «Հայտարարութեան», ընկերութիւնն իր առջև նպատակ էր դնում հայթայթել դրամական միջոցներ՝ հայրենիքում դպրոցներ ստեղծելու, հրատարակութեան և ժողովրդի լուսավորութեան գործը կազմակերպելու համար: Ընկերութեան անվանումը աղղանշում էր ազգային միավորման, նրա ներքին ուժերի համախմբման գլխավոր համատարածքը:

Փարիզյան դեպքերին ականատես Մերենցը կանգնում է ժողովրդի կողմը: Նրա մեջ հաստատվում է այն համոզմունքը, թե բարձր բանականութեամբ հիմնավորված դաստիարակութիւն լինելու դեպքում բռնականները չէին համարձակվի ճնշել ժողովրդին, կհասկանային, որ դասակարգային անհավասարութիւնը արդյունք է տարբեր դաստիարակութիւն և տարբեր կրթութիւն ունեցող մարդկանց դասերի ստեղծած հակասութիւնների:

Հետագայում ևս, ղարգացնելով ֆրանսիական լուսավորիչներից վերցրած դրույթները, Մերենցը մնում է այն համոզման, որ սոցիալական անհավասարութիւնը հնարավոր է վերացնել մարդկանց մոտ բարձր գիտակցութիւն ստեղծելու միջոցով: Հասարակական անհատը, անկախ իր դասակարգային պատկանելութիւնից, պետք է պայքարի մարդկութեան նյութական պայմանների բարելավման, երկրի երեսից «ահավոր թշվառութիւնները» վերացնելու համար: Ամենազորեղ միջոցը, Մերենցի կարծիքով, մարդկային «բանականութեան» ուժն է, որը կարող է քանդել բոլոր պատենշները՝ ճշմարտութիւնը վերջնականորեն հաստատելու համար:

1. 1850—1852 թթ. ՀԱԿԱՀԱՍՈՒՆՅԱՆ ՇԱՐԺՄԱՆ ԱՊԱԳԱ
ՊԱՐԱԳԱՆՈՒԹԵԼ: 2. 1850-ԱԿԱՆ թթ. ԱՐԵՎՄՏԱՀԱՅ ԱՆԴՐԱՆԻԿ
ԼՈՒՍԱՎՈՐԻՉՆԵՐԸ

1

1860-ական թվականներին Արևմտյան Հայաստանում նորահաս բուրժուազիան ամրապնդում է իր տնտեսական դիրքերը, սկսում ակտիվ դեր կատարել ազգային կյանքում: Արևելեյան պատերազմի ընթացքում հասունացող բուրժուազեմոկրատական ուժերը կենտրոնացնում են պայքարը կղերաաղայական և կղերաամիրայական հետադեմ ուժերի դեմ, արժարժում լուսավորական, քաղաքական հարցեր, որոնք նոր ուղղութիւն են տալիս համադեմոկրատական շարժմանը: Արևմըտահայերի մոտ հետադեմ ուժերի հետ գլուխ է բարձրացնում Անտոն Հասունյանի գլխավորութեամբ գործող կաթոլիկյան ռեակցիան, որի նպատակն էր պառակտել ազգը՝ դավանափոխութեամբ Վատիկանին ենթարկելու համար: Պայքարը կաթոլիկութեան դեմ դեռ պաշտոնական ձև չէր ընդունել, երբ Ծերենցը հեռավոր Փարիզից բողոքի ձայն բարձրացրեց, պաշտպանելով «Համազգաց ընկերութեան» իրավունքները:

Այդ տեղի ունեցավ հետևյալ առիթով: Վիեննայի միաբան Ղ. Հովնանյանը 1850-ին հրատարակում է «Մարտինոս Լյութերին վարուց և նորոգութեան պատմութիւնը» վերնագրով մի գիրք: Այդ գրքի առաջաբանը նա տպագրում է «Եվրոպա» թերթում: «Բողոքականներուն քանի մը տարին ի վեր իրենց սկզբունքներն ու մոլորութիւնները ազգերնուս մեջ տարածելու համար ըրած ջանքը տեսնելով, մտքերնիս դրած էինք, որ աս թե կրթական և թե ազգային նկատմամբ, սաստիկ վնասակար շարյաց առջնն առնելու հարմար գիրք մը հրատարակենք: Այս մեր մտածութեան կամ բաղձանքին մեջ երթալով ավելի ևս հաստատվեցանք զանազան բարերէս անձանց բաղձանքը տեսնելով, որոնք գրով ու խոսքով մեզ կհորդորեին ու կաղա-

շէին, որ ազգը մոլորեցնել ուղղներուն դեմ ինքնք և պատ-
շահավոր գրվածքներ հանելով դործած ու գործելու շարիրնին
յուսփանելու ջանանք»¹:

Հովնանյանի նպատակն էր բողոքականության քննադա-
տությամբ պաշտպանել կաթոլիկյան շարժումը Հայաստանում,
քարոզելով հայությանը հեռանալ լուսավորչական դավանան-
քից, ազգի մեծամասնությունը հնթարկելով փոքրամասնու-
թյանը, այն է՝ կաթոլիկ համայնքին: Այստեղ այս կամ այն
դավանանքին առաջնությունը տալու հարցը չէր, այլ այն, որ
հայերը կորցնում էին իրենց ազգային հիմքերը, դադարում
հայ լինելուց:

Նույն թվականի հոկտեմբերի 27-ին Մերենցը Փարիզից
մի նամակ է ուղարկում «Արշալույս Արարատյանին», հաս-
ցիագրված Վիեննայի մխիթարյան միաբանին: Նամակագիրը
ցավ է հայտնում, որ մեր փոքրաքանակ ազգը բավական չէ,
որ ապրում է մասնատված տարբեր իշխանությունների ներքո,
այլև անջատված են իրարից դավանանքով, որը և վնասում է
ազգային ներքին ուժերի միավորմանը ու բնականոն վարդապ-
մանը:

«Թե կարելի է ազգը միացնել,—գրում է Մերենցը,—օգ-
տակար կերպով, պետք է անոր աչքը դարձնել էջմիածին...»,
եթե ոչ, այս պայքարի մեջ ոչ ոք շահել չի կարող, ո՛չ պապա-
կանությունը և ո՛չ բողոքականությունը: Ազգի մեծամասնու-
թյունը չի կարող հնթարկվել փոքրամասնությանը²:

Նամակում Մերենցը խոսում է և Անտոն Հասունյանի գոր-
ծադրած միջոցների մասին, որոնց դեմ պետք էր պայքարել՝
դրանք արմատախիլ անելու համար: Նամակագիրը քննադա-
տում է «Նվրոպային» և «Բազմավիպին», որ, կողմ չլինելով
իրենց դեմ դուրս եկած Հասունյանին, «զգուշություն» են հան-
դես բերում:

«Արշալույս Արարատյանն» այդ նամակը չի տպագրում և
Մերենցին գրում է, թե որոշ հանգամանքներ ստիպում են
առայծմ շանդրադառնալ Վիեննայի մխիթարյանի գրած գրքին:

Հասունյանի սադրանքով Հռոմի «Հավատի տարածման
ժողովի» կողմից մի կոնդակ է ուղարկվում Կ. Պոլիս, Հասուն-

յանի անունով: «Ժողովը» կարգադրում է քննության առնել «Համազգյաց ընկերության» գործունեությունը՝ այն խափանելու նպատակով: Ի պատասխան այդ որոշման՝ Պեշիկթաշլյանը տպագրում է մի գրքույկ «Զատագովություն Համազգյաց ընկերության» վերնագրով, ուր շարադրվում են ընկերության 6 սարիների գործունեության դրական արդյունքները: «Զարմանալի շէր, որ,— գրում է Դ. Վարուժանը,— Մ. Պեշիկթաշլյանը փարվեց այդ ընկերության գաղափարին, մեկ միության մեջ տեսնելու բոլոր հատվածները եղբայրացած ընդմիջտ»³:


«Արշալույս Արարատյանն» արձագանքում է պոլսահայ առաջավոր մտավորականության միասնական պայքարին Հասունյանի հրապարակային ոտնձգությունների դեմ, որոնք իրենց թիկունքում պաշտպան ունեին Հոռոմի Վատիկանի «Հավատի տարածման ժողովի» պատգամները: Հասունյանի նպատակն էր ոչ միայն կործանել «Համազգյաց ընկերությունը», այլև ենթարկել իրենց Մխիթարյան միաբանությունը: Այդ պատճառով էլ մի այլ գրություն՝ նա մեղադրում է միաբանությանը՝ կաթոլիկյան սկզբունքներից շնչվելու, սեփական ազգը մեծարելու և լուսավորչական հայ եկեղեցու հետ համագործակցելու մեջ:

Վերջիններս տեղեկանալով Հասունյանի ուղարկած գաղտնի գրությունը, այդ «չարամատյանի» դեմ Վատիկան են ուղարկում մի այլ գրություն, որտեղ, պաշտպանվելով Հասունյանի «քսություններից», իրենց հերթին «անմեղանշական» երևալու համար Պապի դեմ, պարսավում են լուսավորչական հայերին՝ համարելով նրանց «հերձվածողներ» և այլն: 1852-ին ուժեղացած պայքարը խճճում է Մխիթարյանների և Հասունյանի հարաբերությունները, ցուցադրում նաև բացասական դիրքորոշում «Համազգյացի» հանդեպ:

Պաշտպանելով «Համազգյաց ընկերության» ղեկավար Պեշիկթաշլյանի հրապարակային պայքարը, «Արշալույս Արարատյանն» իր հերթին տպագրում է մի շարք հոգևածներ՝ մերկացնելով կաթոլիկյան շարժման աղգակործան նպատակները: 1853 թվականին նույն թերթում լույս է տեսնում Ծերենցի՝ 2 սարի առաջ Փարիզից ուղարկած հոգևածը Վիեննայի մխի-



Ծերեմցը իր դստեր՝ Թագուկի հետ



թարյան միաբան Ղ. Հովնանյանի դեմ: Ծանոթության մեջ
թերթի խմբագիրը նշում է, որ այդ հոդվածն իր ժամանակին
չի տպագրվել «զանազան ազգօգուտ նկատմունքներով», այժմ
այն կարող է խիստ օգտակար լինել «մեր համազգի ժողո-
վրդյան»:

2

1852-ին Ծերենցը Ն. Ռուսինյանի օրինակով Փարիզից
փոխադրվում է իտալական Պիզա քաղաքի համալսարանի
բժշկական ֆակուլտետի վերջին կուրսը, լսելու անվանի մի
շարք մասնագետների դասախոսությունները: 1853-ին նա
ավարտում է իրականաբար դասընթացը և բժշկագիտության
վկայականով շտապում Կ. Պոլիս: Վենետիկում ոստիկանու-
թյունը հանկարծակի ձերբակալում է նրան՝ շփոթելով իտա-
լական ազգային-ազատագրական շարժման հերոս Մաձինիի
հետ: Թյուրիմացությունը պարզվում է, Ծերենցը հունիսին վե-
րադառնում է Կ. Պոլիս:

«Արշալույս Արարատյանը» նորից տպագրում է Ծերենցի
հոդվածը, այս անգամ պատասխանելով Վիննայի մխիթար-
յան միաբան Հովնանյանի առարկություններին: Ծերենցն ան-
միջապես ներգրավվում է հակակաթոլիկյան շարժման մեջ,
դուրս գալիս Ա. Հասունյանի դեմ, հետևողականորեն մերկաց-
նելով նրա յուրաքանչյուր քայլը: Այդ պայքարը տևում է մինչև
իր կյանքի վերջը, որը և մեծապես նպաստում է հասունյանա-
կան շարժման դեմ համազգային պայքարին:

Թանգիմաթի հրապարակումից հետո՝ 1840-ական թվա-
կաններին Կ. Պոլսում՝ տեղում կրթություն ստացած և Փարի-
զից եկած երիտասարդ լուսավորականների առաջին խմբերը
փորձում են հետևել կրթության նոր եղանակներին, պայքա-
րել ամիրայական և պատրիարքի կաշկանդումների դեմ: Այդ
երիտասարդությունը, ինչպես գրում է Ա. Արփիարյանն այդ
ժամանակ, թեպետ Հայաստանի կյանքից կտրված, բայց ազ-
գասեր էր և «իր ձգտումներուն մեջ թեև տակավին տարտամ և

անորոշ, բայց դեպի ազատ հայրենիքի մը գաղափարը կար-
փաթեցէ՞ր»⁴։

Այդ շրջանում Փարիզից եկած հայ մտավորականներից
իր հայրենանվեր բուռն գործունեությամբ աչքի ընկավ հատ-
կապես Ն. Ռուսինյանը։ 1841—1844 թթ. նա միջնակարգ կրթ-
ություն է ստանում Փարիզի կոլեջներից մեկում, ապա ըն-
դունվում է Սորբոնի համալսարանի բժշկագիտության ֆակուլ-
տետը։ Դա այն շրջանն էր, երբ, ինչպես նկատում է Գր. Օտ-
յանը, ֆրանսիական «քաղաքական ամբիոնները, ղաշխարհ
թնդացրին իրենց խոսքերով»։ 1849-ին Ռուսինյանն ավար-
տում է համալսարանը, ղեկավար մասնակցություն է ցուցա-
բերում «Արարատյան ընկերության» կազմակերպմանը, գնում
Իտալիայի Պիզա քաղաքը՝ այնտեղի համալսարանի բժշկագի-
տության ֆակուլտետում լրացուցիչ գիտելիքներ ձեռք բերե-
լու, ապա 1851-ին վերադառնում Կ. Պոլիս։

1851 թ. լույս է տեսնում Գր. Օտյանի «Առաջարկություն
աշխարհաբար լեզվի վրա» գրքուկը, 1852-ին՝ Ն. Զորայանի
«Ընթերցասիրություն կամ գիրք կարդալու միջոցով մտավո-
րական մշակության հասնելու օգտակար խրատներ» գիրքը։

1853-ին Պոլսում Ն. Ռուսինյանի և Գր. Օտյանի նախա-
ձեռնությամբ ստեղծվում է «Ուսումնական խորհուրդ», որի
նպատակն էր կազմակերպված հունի մեջ դնել նոր սերնդի
ազգային-լուսավորական գործունեությունը, նպաստել գրական
լեզվի մշակմանը և ազգային գրականության զարգացմանը։
Նույն թվականին Ռուսինյանը հրատարակում է «Ուղղախոսու-
թյուն» վերնագրով մի ձեռնարկ, ուր փորձում է օգտակար
բարեփոխումներ կատարել կենդանի լեզվի մեջ։ Ռուսինյանի
առաջարկները մերժվում են պատրիարքարանի կողմից, միա-
ժամանակ քննադատվում նրա համախոհներից՝ արհեստական
փոփոխությունների համար։

1850-ական թվականների գրապայքարում արևմտահայ
լուսավորիչները դեռևս հստակ պատկերացում չունեին սեփա-
կան բարբառների օգտագործման ուղիների վերաբերյալ և լիո-
վին չէին ազատագրվել գրաբարի ազդեցությունից։ Եթե նրանք
այդ տարիներին լրիվ չլուծեցին գրաբարի ու աշխարհաբարի

հարաբերության և գրական նոր լեզվի մշակման հարցերը, այնուամենայնիվ մեծ շարժում առաջ բերին արևմտահայ ազգային հասարակական կյանքում՝ ճանապարհ բացելով ազգային ներքին կյանքի կազմակերպման և առաջադիմության համար:

Այդ տեսակետից, ահա, մեծ եղավ «Ուսումնական խորհրդի» դերը արևմտահայ մտավոր շարժման մեջ: Ն. Ռուսինյանը, Գր. Օտյանը, Ն. Պալյանը, Աղաթոն և զբայրները. Ներենցը և մյուսները «խորհրդի» գործունեության սկզբից խիստ առաջ մղեցին ազգային ուժերի համախմբման գործը՝ նոր հեռանկարներ բացելով ազգի վարճացման համար:

«Անոնցմե ոմանք,—գրում է Ա. Արփիարյանը,—աչնչեղ Բարիդին մեջ կռված էին 48 թ. հեղափոխականներուն հետ և հետևին Բոսֆորի ստրուկ ափունքը տարածած էին Բարիդի փողոցի ոգին: Գաղափարներու հեղաշրջողներ ու պայքարողներ եղան, կործանեցին կես ավատական բարքերը, որ դեռ կտիրեին հայոց մեջ: Զնչեցին ամիրաներու ջոջերուն ու եկեղեցական տիրապետությունը և հիմնեցին հայկական սահմանադրությունը իրենց Ֆրանսա սորված սկզբունքներուն համեմատ, ժողովրդին տվին նշանակություն և ուժեր, գիտակցություն ու Ազգային ժողով»:

Ինքը՝ Գր. Օտյանն, իր հուշերի մեջ, խոր զգացումով խիշակում Ն. Ռուսինյանի և Ն. Պալյանի գործունեությունը «Ուսումնական խորհրդում», նշում է, որ այդ օրերին դեռ կազմավորված չէին ազգային գլխավոր գործոնները՝ ազգ, լեզու, դպրոց. «Առքա ձեռնարկին կերպարանել այս երեք բաները, որ երեք էական պայմաններն են ազգային առաջադիմության: Այս ձեռնարկութենեն ծնած սահմանադրությունը, Ուղղախոսությունը և 1854-ի «Ուսումնական խորհուրդը», ավելի երկունք, տքնություն և զոհողություն պատճառած է իր հեղինակաց քան սահմանադրությունը»:

Հետևելով ևլրոսպական պետությունների, հատկապես Գրանսիական հեղափոխության ծնունդ «Ազգային սահմանադրությանը», Ն. Ռուսինյանն իր գործակիցների հետ մշակեց մի կանոնադրություն, որն առաջին հերթին պետք է սահմա-

նափակեր պատրիարքի և ամիրաների անսահմանափակ իշխանությունը և կարգ ու կանոնի տակ դներ ազգային կյանքի առաջադիմության գործը:

Արևելյան պատերազմը, այնուհետև օսմանյան պետության հրապարակած «Թանգիմաթը» որոշ դյուրություններ են ստեղծում կանոնադրության օրինականացման համար: Երկու անգամ մերժվելուց և փոփոխություններից հետո, հատկապես Պոլսի էսնաֆ դասի հրապարակային ցույցերի շնորհիվ, 1860 թ. մայիսի 24-ին պատրիարքը հաստատում է փոփոխված կանոնադրությունը, որը Ռուսիայանի առաջարկով սկսում է կոչվել «Ազգային Սահմանադրություն»:

Հետագայում հիշելով այդ տարիների մղած պայքարը, Գր. Օտյանը գրում է. «...երբ այնքան տարիների ետքը մշտքովս կհածիմ այն ժամանակներուն մեջ, ուր լավ պատերազմը պատերազմեցանք լուսո խավարի դեմ, ժողովրդականության ամիրայության դեմ և սահմանադրության եկեղեցական ու աշխարհական իշխանության դեմ, երբ աչքիս առջև կբերեմ այնքան խոշընդոտները, այնքան սպառնալիքները, այնքան ահ ու դողը, այնքան վտանգը, որոնց մեջեն անցանք, երբ կհիշեմ վնասներն ալ, որ ըրինք և անոնց ներգործությունը զոր կրեցինք առ հապայն, զարմանքը կպատե զիս ու կըսեմ. «Ի՞նչ վեհ է երիտասարդությունը»⁶:

Ֆրանսիական հեղափոխություններին և ժողովրդի պատմության քննական տեսություններին ծանոթացած հայ լուսավորիչները գտնում են, որ սեփական ազգը իր դարավոր քաղաքացիությունից հանելու և լուսավորությամբ ու ազգային գիտակցությամբ տոգորելու համար պետք է վերանայել հին սլաւոմագրության կողմից ժողովրդին վերագրված «անմիաբանության» թեզը և կանգնեցնել նրան պատմական դարգացման բնականոն ուղիների վրա, սովորեցնել հասարակության համակեցության օրենքները, արթնացնել նրա մեջ օրենքին ենթարկվելու կենսական ուժերը, նշել ազգային կյանքի կազմակերպման նոր միջոցներ: Օտար լծի տակ տառապող ժողովուրդը այդ նպատակին կարող է հասնել միայն «ազգային կանոն-

Նադրություն» ունենալու և նրանով ղեկավարվելու գեպքում, ասում էին լուսավորիչները:

Հայ անդրանիկ լուսավորիչները քաղաքակրթության հետ էին կապում տնտեսական կյանքի վերափոխման խնդիրը, կապիտալիստական հարաբերությունների մեջ որոնում մարդկային իրավունքների պաշտպանության, «արդար» ուղիների ստեղծման հնարավորություններ: Թուրքական իշխանության բռնությունների պայմաններում ծնված ազգային կանոնադրությունն ինքնին հավաստում էր այն կարևոր փաստը, որ այդ նոր գաղափարների ազդեցությամբ իմաստավորվում և ուժ է ստանում Պոլսում էսնաֆի դասի մղած պայքարը:

1850-ական թթ. արևմտահայ լուսավորիչների մոտ գեոևս չկար հասարակության ներսում գասակարգային հակասությունների ըմբռնում: Հասարակական-տնտեսական նոր հարաբերությունները և դրանց հակասությունները դեռ սաղմնային վիճակում էին, և լուսավորիչները չէին կարող տեսնել «հակասությունները այն կարգի մեջ, ուր ճորտատիրություն էր աճում»⁷:

Նրվանդ Օտյանը «Մասիսում» տպագրած իր հոդվածներից մեկում, բնութագրելով Մերենցին, քնդհանրություններ է տեսնում նրա և Ն. Պալյանի ու Ն. Ռուսինյանի հետաքրքրությունների միջև, միաժամանակ նկատում է, թե նրանք «այնպիսի ժամանակ մը կրթեցին մտքներնին ու վերջնական ձև տվին իրենց գաղափարներուն ու համոզումներուն, երբ Ռընանը չէր արձակած... ոչ Զոլա «Ռուբոն Մաքարներ» սկսած էր հրատարակել, այդ հոռետես գյուցադներգությունը, մարդկային անասնության, ինչպես կկոչէ Ժյուլ Լե Մետր: Տարակույսի թույնը դեռ չէր կաթկըթած իրենց մտքին խորշերուն մեջ»⁸: Իրոք, նոր ժամանակները իրենց հետ բերում էին ահավոր հակասություններ, որոնք անձանոթ էին հնօրյա լուսավորիչներին:

Այդ հավատավոր մարդկանց շարքում էր նաև Մերենցը: Ինչպես այնուհետև գրում է Նրվ. Օտյանը, նա «կատարյալ մարդ մը էղած է, օգտակար, աշխատասեր, կրցած բարիքն

անշահախնդրությամբ գործելով ու իրեն վնասակար երևացող բաներուն դեմ մարտնչելով, ձեռքին եկածին շափ։ Սակայն այս ամենքն, անշուշտ, եզական դիրք մը չեն կրնար տալ իրեն, ոչ ալ կրնանք բացառիկ երևույթ մը համարել զինքը մեր մեջ։ Շիշմանյան և իր մյուս ժամանակակիցները կարգէ դուրս մարդիկ չէին և եթէ այսօր հարկ կըգանք կերպով մը անցյալին դառնալու ու նախորդ սերնդին հիշատակովն սնանալու անոր համար չէ, որ շատ մեծ արժանիք ունենին անոնք, այլ միայն, որովհետեւ մեզմե ավել կարժեհին»³։

Պոլսահայ լուսավորիչների անդրանիկ խումբը 1850-ական թթ. իր գործունեությամբ խոր ճեղք առաջացրեց դարերով կարծրացած գաղափարների մեջ, չեզոքացրեց ամիրայական դասի ազդեցությունը արեւմտահայ կյանքում, նոր ուղղություն տվեց հոգևոր մշակութի, աշխարհաբար լեզվի զարգացմանը, ստեղծեց ազգային կյանքի կազմավորմանը նպաստող և նրա զարգացումն առաջ մղող Ազգային կանոնադրություն, որն իր խոր ազդեցությունը պետք է ունենար հայ հասարակական մտքի զարգացման վրա։

Ծերենցը Պոլիս գալուն պես դարձավ ազգային այդ շարժման առաջատար ուժերից մեկը։ Ուղեցույց ունենալով «Համագլխաց» և «Արարատյան» ընկերությունների նախագծումները, Ծերենցն առաջին իսկ օրից ներգրավվում է կաթոլիկյան համայնքի պետ Անտ. Հասունյանի դեմ սկսված պայքարին, շատ շուտով դառնում հակահասունյան շարժման պարագլուխը։ Ազգային ներքին ուժերի համախմբման, ազգի ամբողջության պահպանման, ազգաճանաչման, ազգային ինքնագիտակցության հարցերը նրա մոտ կապվում են ազգային լուսավորության կարևոր խնդիրների հետ։

1. ԾԵՐԵՆՑԸ Կ. ՊՈԼՏԻ «ՀԱՅՈՑ ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ» ՀԻՄՆԱԴԻՐՆԵՐԻՑ: 2. Մ. ՆԱԼԲԱՆԴՅԱՆԸ ԵՎ «ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԸ»: 3. ԾԵՐԵՆՑԸ ԶԵՅԹՈՒՆԻ ԱՊՍՏԱՄԲՈՒԹՅԱՆ ԸՐԶԱՆՈՒՄ ԵՎ ՆՐԱ ԿԱՊԸ Մ. ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ԾՐԱԳՐՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ

1

1857 թ. «Մասիսը» հրապարակում է Ն. Ռուսինյանի կազմած «Ազգային կանոնադրությունը»: Պետություն միջամտությունները, պատրիարքի և ամիրանների դժգոհությունները ստիպում են վերանայել կանոնադրության մեջ մի շարք «ազատամիտ», «հակապետական» թվացող կետեր: Ազգային այդ կանոնադրությունը պաշտպանության տակ առնվեց Կ. Պոլսի արհեստավորների և մշակների կողմից և վերջապես նորանոր լիաժապրումներով հաստատվեց 1860 թ. մայիսի 24-ին, ստանալով «Ազգային սահմանադրություն» անվանումը:

Այդ սահմանադրությամբ մեկընդմիջտ սահմանափակվում էին ամիրանների իրավունքները, պատրիարքը դառնում էր ընտրովի, ընտրությունները պետք է կատարվեին գաղտնի քվեարկությամբ և այլն: Բնական այդ սահմանադրությանը իրավունք չվերապահվեց լուծելու սոցիալական-քաղաքական հարցեր, բայց այն թուրքական իրականության և հայ իշխողների բռնադատումների պայմաններում ինքնին առաջադիմական երևույթ էր, սկիզբ էր դնում արևմտահայերի քաղաքական հասունությանը:

Սահմանադրության հաստատման օրերին Հ. Սվաճյանը պրում է «Արիք Հայկազունք» սահմանադրության հիմնը.

«Գարուն Հայաստան գա ծաղկապսակ
Զայն ողջունելու ելիք հայ դավակր,
Անցան սե օրեր, օրեր մահահոտ,
Հայոց նոր բախտի ծագի առավոտ»¹:

Նույն տարվա սեպտեմբերի վերջին հիմնադրվում է Կ. Պոլսի «Հայոց համազգային բարեգործական ընկերություն»:

ներ»։ Ընկերության «բանիբուն» հիմնադիրներն էին Գր. Աղաթոնը և Հ. Շիշմանյանը, անդամները՝ Գր. Օտյանը, Ն. Ռուսինյանը, Մ. Մամուրյանը, Ա. Հայկունին, Մ. Պեշիկթաշլյանը, Հ. Սվաճյանը, Ս. Թագվորյանը, Մ. Նալբանդյանը...։ Ընկերության առաջագրելիք խնդիրները օրգանապես կապվում էին Մահմանադրության մշակողների գործունեության հեռանկարների հետ։ Այս գործի կազմակերպման համար կազմվում է մի հանձնաժողով, որի ատենադպիրն է ընտրվում Ծերենցը. նրան և Գր. Աղաթոնին հանձնարարվում է մշակել ընկերության կանոնադրությունը։

Նույն տարվա հոկտեմբերի 30-ին Ծերենցը ընկերության սումարաթ նիստում հանդես է գալիս իրենց անելիքները որոշող մի «ազդու ճառով»։ Մեր երկիրը դարեր շարունակ ավերվել է, ասում է նա, ժողովուրդը հալածվել ու խոշտանգվել, բայց պահել է իր լեզուն և ինքնությունը։ Այժմ եկել է ժամանակը, որ նա ապաստվի իր տառապանքներից, հետևի եվրոպական լույսին, նրա միջոցով կազմակերպի իր կեցությունը և նպաստի իր հոգևոր վարգաքմանը։

Ընկերության ծրագրի հիմքում նկատելի էր Մ. Պեշիկթաշլյանի «Համազգացի» և «Արարատյան ընկերության» շրջանակներում հենց իր՝ Ծերենցի շիրականացած կանխագծումների դրոշմը։ Նորաստեղծ ընկերությունը պետք է ներգրավեր ազգի բոլոր անդամներին՝ առանց դավանանքի խտրության, պետք է կապվեր ժողովրդական դանգվածների հետ, ուսումնասիրեր նրանց տնտեսական վիճակը, առաջագրեր միջոցներ արևմտահայ գյուղացուն ծանր հարկերից ազատելու, պանդրխտության առաջն առնելու, տնտեսական շուկան օտար ապրանքներից ազատելու, սեփական արտադրություն ստեղծելու, հասարակական ներքին ուժերի վարգաքմանը նպաստելու, արհեստներն ու երկրագործությունը, առևտուրը եվրոպական ձևերով առաջ տանելու համար։

Սոցիալական լայն շառավիղով գործելու հլած Բարեգործական ընկերությունը, ինչպես նշում է Աշ. Հովհաննիսյանը, «օգտագործվելու էր Թուրքիայում հայ ազգային-ազատագրական շարժում կազմակերպելու համար»²։

1861 թ. հրապարակվում է «Բարեգործականի» «Հայտարարությունը», որտեղ շարադրվում է ընկերության համառոտ ծրագիրը: Ծրագրում հաշվի է առնված սոցիալական-տնտեսական այն կացությունը, որի մեջ գտնվում էր Թուրքիան, որի մեջ արտացոլվում էր նաև արևմտահայության ծանր վիճակը: «Երբ կտեսնենք, — ասված է «Հայտարարության» մեջ, — որ հաղարավոր արհեստավորներն ձեռնարկեն ծոցերին դրած, աշվրենին ապարդյուն գործիքներու վրա ձգած ու օրական հացերինն ճարելի հուսահատած անշարժ ու տխուր նստած կմտածեն, երբ որ հարյուր ընտանիքներ հարստության ու շքեղ սլաշատներուն մեջ կքնանան ու գառն չքավորության ճանկերուն կարթնան, երբ կտեսնենք, որ խումբ-խումբ որք ու անտեր մանկախն փողոցներն ու շուկաները կթափառին, մոլությանց օդը միայն ծծելով կապրին, ազգերնուս անպատվություն ու բեռ ու պետության վնաս-առիթ հպատակներ կըլլան, երբ կտեսնենք Ասիոյ բաղամաբեղուն դաշտաց շատերը և անոնց մեջ Հայաստանի պատվական երկիրները լքյալ ու խռպան, երբ կտեսնենք, որ արիասիրտ վաճակները օտար աշխարհների պանդխտած սով ու քաղց հանձն առան իրենց սիրելիաց ոգևպահիլը ճարելու համար հաղար տեսակ տառապանած ենթակա եղած ու տարիներով իրենց սիրուն ընտանյաց զգվանքեն զրկված. ոհ, ոհ ինքնամոլ հայն է այն, որուն սիրտը ի գուժ շշարժի ու անտարբեր աչքով կկարենա նայիլ արենակցածը այս աղեկտուր վիճակի վրա»³:

Ինչպես պետք է ազգը փրկել ֆեոդալական և թուրքական բռնադատություններից, հայ վաշխառուների շարաշահումներից, կապիտալիզմի բերած աղետներից: Միակ ճանապարհը, գրում են «Հայտարարության» հեղինակները, ազգը դորացնելն է «նյութապես և բարոյապես», վերակառուցվելն է կյանքի հեղաշրջող պայմանների համեմատ: «Շատ դյուրությամբ լուծելու խնդիր մըն է տալ, ի բնե արհեստավոր և երկրագործ ազգ մը՝ իր ձեռքի արվեստն ու երկրագործությունը անգիտանալու համար թշվառության մատնված՝ ուրիշ կերպով չիրնար կանգնիլ, բայց միայն նոր բաղաբականության պահանջած արվեստներն ու երկրագործություն ձևեր բերի-

լով: Այն ատեն ահա, կրնանք հավասար զորությամբ մրցիլ մեր հողին վրա օտարոտի ճարտարությանց՝ արվեստներու և երկրագործության հետ և մեր բնիկ երկրացի ըլլալուն շնորհիւն ի բաց վանիլ զանոնք, որով և մեր ճակտին քրտինքովը հաց պտնել ու ուտել այն հողին վրա, ուր այս աստվածային վճիռք տրվեցավ առաջին մարդուն»⁴:

Ինչպես Ծերենցն, այնպես էլ մյուս ղեկավար գործիչները պտնում են, որ առաջին գործը պետք է լինի հավաքել աղքատ ու խեղճ ժողովրդի զավակներին, գիտության նվաճումների փորձով սովորեցնել երկրագործություն, արհեստներ, կապիտալիստական հիմունքներով ստեղծել նյութական բազա՝ երկրագործության ճանապարհով ազգի առաջադիմությանն ըստ ամենայնի օգնելու համար:

Հնկերությունը մտածում է կատարել այս ծրագրի իրականացման գործնական քայլեր՝ ընտրել հարմար վայր, բացել մասնագիտական դպրոցներ՝ սեփական կադրեր պատրաստելու համար: Այդ համապատասխան վայրը դառնում է Կիլիկիան: Հանգանակություն է կատարվում՝ գումարներ ստեղծելով, առաջիկայում կոնկրետ գործնական քայլեր կատարելու՝ նախատեսված ծրագրի իրականացման ուղղությամբ:

2

1860 թ. նոյեմբերի 20-ին Կ. Պոլիս է գալիս Մ. Նալբանդյանը: «Մեղոն» ողջունում է Նալբանդյանին և ոգևորությամբ նշում, որ իրենց մոտ ևս ընդհանուր շարժում կա:

Նալբանդյանը ծանոթանում է արևմտահայ ազգային գործիչների ծավալած պայքարին՝ ամիրայության և կղերական ռեակցիայի դեմ: Սահմանադրության հակառակորդներին նա անվանում է «խավարյալներ»՝ միաժամանակ բացահայտելով Ազգային ժողովի տատանումներն ու երկչոտությունը, որոնք և հետագայում հանգեցրին պահպանողականների հետ դաշինքի. «Ոչ երբեք պիտի հառաջանա ազգը,—գրում է նա «Մեղվի» խմբագրին ուղղած նամակում,—հետևելով մի տեսակ մարդերի վարդապետության, որ թեև զգում էին անցածի

և հնի ամլությունը, բայց սրտի և հոգու քաջության պակասությունից, վախենում են միանգամայն կտրել, բաժանել յուրյանց անձը տխուր անցածից և ոտք կոխել վճռաբար նոր սահմանագլխի վերա, ուր մանուկ առույգությամբ ծածանում է առաջընթացների դրոշակը»⁵:

Շարժման ղեմավարական հոսանքը Նալբանդյանի զորեղ ազդեցությամբ դուրս եկավ սահմանադրական պատրանքներից: Հ. Սվաճյանը, Հ. Փանոսյանը, Մ. Մամուրյանը, Գր. Զիլինկիրյանը հրապարակ եկան Ազգային ժողովի քննադատությամբ:

Կ. Պոլիս առաջին այցին Նալբանդյանը ծանոթանում է նոր միայն կազմակերպված «Բարեգործական ընկերության» ծրագրերին, անդամագրվում է ընկերությանը և մասնակցում առաջին նիստերին: Մանրամասն ուսումնասիրելով «Բարեգործականի» գործունեության ընթացքը, Նալբանդյանն իր «Երկրագործությունը որպես ուղիղ ճանապարհ» աշխատության մեջ արտահայտում է կարծիքներ, որոնք ցույց են տալիս նրա հաստուկ վերաբերմունքը «Բարեգործականի» նկատմամբ:

«Նալբանդյանի և Բարեգործականի միջև եղած առնչությունների ամենացայտուն արտահայտությունը պիտի համարենք այն,—նկատում է Աշ. Հովհաննիսյանը,—որ «Երկրագործության» գլխավոր նպատակներից մեկն էր՝ մանրամասնորեն քննության առնել ու լուսաբանել այն հարցերը, որոնք վբադեցնում էին Բարեգործականի ղեկավարներին»⁶:

«Երկրագործությունը որպես ուղիղ ճանապարհ» ուսումնասիրության մեջ, այնուհետև նշում է Աշ. Հովհաննիսյանը՝ «հեղինակի արծարծած հարցերի և Կ. Պոլսի Բարեգործականի շուրջը խմբված մարդկանց կողմից առաջ քաշված խնդիրների զուգադիպությունը հիմք է տալիս կարծելու, որ գիրքը գրվել է հենց Բարեգործականի պիտակի տակ գործող արևմտահայ համախոհների առաջ ուղենիշներ ու հեռանկարներ գծագրելու համար»⁷:

Կապիտալիզմի ծրագրային քննադատության հետ մեկտեղ, շարունակում է զարգացնել իր միտքը Աշ. Հովհաննիսյանը, «Երկրագործության» հեղինակը ենթադրում էր ստեղ-

ծել նաև «Բարեգործականին» անդամակցած ազգային-լիբերալ և արևմտահայ հեղափոխական-դեմոկրատական խմբակցությունների գործակցություն:

Արևմտահայ ժողովրդի թշվառության պատճառը նախնադյանը նույնպես համարում էր մանր արտագրողների քաջալուծը: Նրա կարծիքով «տնտեսական հեղափոխությունը» կարող էր վերջ տալ այդ քայքայման պրոցեսին:

Ընդլայնված ձևով դիտելով «Բարեգործականի» առաջադրած «տնտեսական հարցը», նախնադյանը դուրս է դալիս նրա շրջանակներից՝ ցույց տալով «տնտեսական հեղափոխություն» անհրաժեշտությունը, միաժամանակ շանտեսելով ազգության քաղաքական խնդիրները:

3

Արևմտյան Հայաստանում, 1830—50-ական թվականներին ազատատենչ Զեյթունը շարունակում էր պաշտպանել իր կիսանկախ դրությունը: Թուրքական պետությունը գործադրում էր բոլոր միջոցները՝ հպատակեցնելու լեռնականներին: 1858 թվականին Մարաշի տարածքում բնակեցված չերքեսները կառավարության հատուկ հրամանով հարձակվեցին Զեյթունի վրա: Մարտերն ավարտվեցին զեյթունցիների հաղթանակով:

1860 թվականին կառավարությունը զորքեր է կուտակում Զեյթունի վրա արշավելու համար: Նույն թվականի հունիսի 8-ին առաջին հարձակումն անցնում է անհաջող, զեյթունցիները ետ են մղում թշնամական ուժերը: 1861 թ. փետրվար-մարտ ամիսներին Ազգային ժողովը արձանագրում է զեյթունցիների հաղթանակը և դիմում է կառավարությանը՝ դադարեցնելու հարձակումները: 1861 թ. Մերենցը գնում է Կիլիկիա, նրա մասին ընկերությունը հանգամանալից տեղեկություններ տալու նպատակով: Ի՞նչ ընդունելություն է գտել ընկերության պատվիրակը, ի՞նչ է տեսել, ի՞նչ տպավորություններ է ստացել զեյթունցիներից, դժբախտաբար նա այս հարցերին չի անգրադառնում իր դասախոսության մեջ:

Պոլսի հայերին, ինչպես և «Բարեգործական ընկերութեանը» հայտնի էր, որ 1862 թ. Մարաշի նոր կուսակալ Ալիզ փաշան պատրաստութեանն էր տեսնում Զեյթունի վրա հարձակվելու։ Այն օրերին, երբ Պոլսում հայտնի են դառնում Ալիզ փաշայի նախապատրաստութեանները, Ծերենցն ընկերութեան կատարած հանգանակութեաններից մի «մեծկակ» գումար վերցնելով, մալիսի 24-ին նորից մեկնում է Զեյթուն։ Պաշտոնական հայտարարութեան մեջ ասված է, որ նա Կիլիկիա էր գնում հողամաս գնելու, գյուղատնտեսական դպրոց բացելու, երկրագործութեան համար տեխնիկական դիմում կադրեր պատրաստելու։

1862 թ. հուլիսի 28-ին Ալիզ փաշայի բանակը մտնում է Զեյթունի գավառը, ավերածութեան մատնելով գյուղերը։ Օգոստոսի առաջին օրերին թուրքական բանակը ներխուժում է Զեյթունի արվարձանները։ Տեղի ունեցած մարտերում զեյթունցիները հաղթանակ են տանում։

1862 թ. հոկտեմբերի կեսերին, գաղտնի ճանապարհով Կ. Պոլիս են հասնում Զեյթունի պատգամավորները։ Նրանց պատմածներից ոգևորված, պոլսեցի հայերը հանգանակութեամբ մեծ գումար են հավաքում, հանձնում պատգամավորներին՝ ղենք գնելու համար։

Ապստամբութեանն առաջինը արձագանքեց «Մյուսաթի» թերթի խմբագիր Կ. Փանոսյանը։ Նա պահանջում է պաշտոնանկ անել Ալիզ փաշային՝ խաղաղ ժողովրդի վրա հարձակում գործելու համար։

«Մեղու» պարբերաթերթն ավելի մանրամասն անդրադարձավ զեյթունցիների հաղթանակին։ Թերթի N 170-ում հրապարակվեցին Ս. Շահապիդի ոտանավորի հետևյալ տողերը.

Ո՛չ որ չէ կարող հողուս նպատակ
ձնշել, խորտակել բնութեան ղենքով.
Ո՛չ սուր, ո՛չ արշուն, ո՛չ բանտ, ո՛չ կալծակ,
նշ նույնիսկ գեհեն մշտավառ բոցով։

Զեյթունի ապստամբութեանը ղեմավարտական շրջաններում ամենուրեք լայն արձագանք է դառնում։ Կ. Պոլսի «Բարե-

գործական ընկերությունը» Զեյթունի հետ գործարար կապեր է ստեղծում: Նա պատասխան նամակներ է ուղարկում Զեյթուն՝ ապստամբության ղեկավարներին, դրամական օգնություն հասցնելով նրանց: Բաղմաթիվ անուններ են կապված այդ հերոսական պայքարի հետ, որ ցույց են տալիս արևմտահայ մտավորականության խոր զգացումներն այդ շարժման հանդեպ:

Մերենցը մոտ մի տարի մնում է Կիլիկիայում: Ի՞նչ մասնակցություն է ունեցել նա այդ ապստամբությանը, ի՞նչ տեղեկություններ ունեին նրանից Պոլսի բարեկամները: Հայտնի է միայն այն, որ 1863-ին կառավարության պահանջով նա վերադարձել է Պոլիս և կասկածի տակ առնվելով որպես «անբարեհույս տարր»՝ տարիներ շարունակ հալածվել, որից տուժել է բարոյապես և նյութապես, հաճախ մնացել առանց աշխատանքի:

«Բարեգործական ընկերության» ղեկավար գործիչների մեջ Ա. Ղ. Հովհաննիսյանը հատկապես ընդգծում է Մերենցի անմիջական կապը Զեյթունի ազատագրական շարժման հետ: «Թյուրք պետականության հանդեպ «անբարեհույս» մարդ էր, հարկավ, Շիշմանյանը,—գրում է նա,—հետագայում, իբրև գրող, Հովսեփ Շիշմանյան-Մերենցին հուզում էր ազգային-ազատագրական գաղափարներ և արձագանքում Զեյթունի ապստամբության տրամադրություններին: Հայտնի է նաև նրա անմիջական կապը Զեյթունում արծարծված շարժման հետ»⁸: Մերենցի, ինչպես և «Բարեգործականի» նկատմամբ քաղաքական կասկած հարուցելու գործում եռանդուն գործունեություն է ծավալում Անտոն Հասունյանը: Կասկածից վեր է, որ Մերենցը կարող էր եղած լինել նրա մատնության զոհ: Մերենցն, իրոք, կարող էր տեղյակ լինել Զեյթունի ապստամբության նախօրյակին տեղի ունեցած դեպքերին և նույնիսկ այն ծրագրերին, որ կանխագծում էր Նալբանդյանը: Այդպիսի ենթադրության հիմք է տալիս հետևյալ ակնառու փաստը:

Նալբանդյան ազետներն առանձին ուշադրություն են դարձրել Նալբանդյանի թղթերում ցարական խուզարկողների կողմից հայտնաբերված ծածկագիր մի նամակի վրա: Պարզվել է,

որ այդ նամակը գրել է Ս. Թագվորյանը Պոլսից՝ 1862 թ. մայիսի 14-ին: Նամակի վերծանությունը ցույց է տալիս, որ Նալբանդյանը գործարար կապերի մեջ է եղել ինչպես ռուս, այնպես էլ իտալական հեղափոխական և ազատագրական շարժման ղեկավարների հետ, մշակել է ծրագրեր Հայաստանի ազատագրման համար:

Նամակը ենթադրել է տալիս նաև, որ Նալբանդյանը Պոլսում վերջին անգամ եղած ժամանակ կազմակերպել է մի խմբակ, որի անդամները մտահոգվել են Կիլիկիայի հարցով: Ս. Թագվորյանը հայտնում է Նալբանդյանին, որ նրա առաջադրանքը կատարելու համար հազիվ կարողացել է «քսաներեսուն հոգով» մի ժողով անել՝ Տավրոսից եկած վարդապետին դրամ տալու համար, որը պետք է զենք գներ՝ Կիլիկիա տանելու: «Ակնհայտ է,—գրում է Հ. Ղազարյանը,—որ ինչպես Նալբանդյանը, այնպես էլ Պոլսում եղած «քսան-երեսուն» մտավորականները տակավին 1862 թ. գարնանը տեղյակ են եղել Զեյթունի իրադարձություններին և ձգտել են կապեր ստեղծել Տավրոսի և մայրաքաղաքի հայկական բեկորների միջև»⁹:

Ծերենցը Կիլիկիա է մեկնել մայիսի 24-ին, Թագվորյանի գրած նամակից տաս օր հետո: Անհնարին է մտածել, որ նա տեղյակ չի եղել և չի մասնակցել Զեյթունի համար դրամ որոնող «քսան-երեսուն» անձնավորությունների ձեռնարկումներին: Կասկած չկա նաև, որ Թագվորյանը Նալբանդյանին նախապես տեղյակ է պահել «Բարեգործականի» կողմից Կիլիկիա մարդ ուղարկելու և այնտեղ դպրոց բացելու ծրագրումներին: Նույն տարվա հունիսի 20-ին Նալբանդյանը «Հյուսիսսիսիան» տված իր «Հայտարարության» մեջ նշում է, որ «Կոստանդնուպոլսի հայկական «Բարեգործական ընկերության» նպատակն է հայոց աղքատ մանուկները կրթել և դաստիարակել հատկապես երկրագործության և արվեստների մեջ: Այս նպատակով հիմնվող մասնավոր (специальный) դպրոցը շուտով կբացվի Փոքր Հայաստանի մեջ, ուր հողի արգավանդությունը և ծովաօդային դրությունը մեծապես զբաղում է մեր բոլորի ուշա-

գրութիւնը, որ մի հատ է յուր տեսակի մեջ և որու վրա անշա-
փելի մեծ են ազգի մտածողների հույսերը»¹⁰։

Ուշադիր ընթերցելով Նալբանդյանի «Հայտարարութիւն-
ներ», անմիջապէս նկատում ենք, որ հեղափոխական-դեմոկրա-
տըն իր ծրագրումների մեջ առանձին տեղ է տվել ընկերութեան
այդ ձեռնարկմանը, որի իրականացնողներից մեկը Մերենցն
էր։ Վերջինս պետք է զբաղվեր ոչ միայն դպրոցի կազմակերպ-
ման հարցով, այլև պետք է ուսումնասիրեր երկրի պայման-
ները, «լեռնականների հետ դաշն դնել խոսակցել»։

Հետագայում գրած իր «Բարեգործական ընկերութիւնը»
հոգւածում Մերենցը «խաւարի որդիներ» է անվանում նրանց,
ովքեր խափանեցին ընկերութեան գործունեութիւնը։ Նա էլ
մեծ նշանակութիւն էր տալիս այն ձեռնարկումներին, որոնց
համար Նալբանդյանը մտածում էր «Քարտեզի» վաճառքից
ստացված գումարներ հատկացնել։

1860-ական թվականների կեսերին Մերենցը անբարեհու-
սութեան պիտակով ապրում է ծանր օրեր, սակավ մասնակցում
մամուլին ու հասարակական կյանքին։ Քաղաքական ռեակցիա-
յի պայմաններում Գր. Օտյանը, հուսախաբ իր երազներից,
անհնար էր համարում ազատագրական որևէ շարժում, հեղա-
փոխական որևէ ցույց պետութեան հանդեպ, պատճառաբանե-
լով, թե պետք է նկատի ունենալ հանգամանքները, հակառա-
կորդի ուժերը, շրջապատող պետութիւնների պայմանները։

Գլուխ չորրորդ

1. Ն. ՌՈՒՍԻՆՅԱՆԸ ԵՎ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԱԸ։ 2. Մ. ՄԱՄՈՒՐՅԱՆ։
3. Մ. ԽՐԻՄՅԱՆ։ 4. Հ. ՍՎԱՃՅԱՆ։ 5. ԾԵՐԵՆՅԻ
ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅՈՒՆԸ

1

«Բարեգործական ընկերութեան» գործունեութեան ընդհա-
տումից հետո Մերենցն իբրև քաղաքական անվստահելի անձ-
նավորութիւն մնում է ուշադրութեան ներքո և հալածվում

մասնավորապես թուրքական պետութեան դրածո Անտ. Հասունյանի կողմից: Այդ շրջանում հետզհետե ուժեղացող ուսակցիան զգալի չափով սահմանափակում է Սահմանադրութեամբ նախատեսված հոգվածների իրականացման հնարավորութիւնները: Ազգային ժողովի տնօրէնները խոստում են «Ազգային ոգու» և նրա ապահովութեան մասին, սակայն իրականում ուժեղացնում են իրենց կապերը «բարեխնամ» պետութեան հետ: Հայկական ուսակցիայի և պետութեան կամքով վերաքննված Սահմանադրութիւնը կորցնում է իր կարեւոր նվաճումներից մեկը. պատգամավորները այսուհետե պետք է ընտրվեն ոչ թէ էսնաֆական միութիւններից, այլ եկեղեցական խորհուրդներից: Ժողովուրդը, հետևաբար և նրա հետ կապված հարցերը ինքնաբերաբար դուրս էին ընկնում օրակարգից:

1861 թ. հուլիսին և 1862 թ. օգոստոսին Պոլսի արհեստաշէրները և մշակները ցույցեր կազմակերպեցին պատրիարքի և Ազգային ժողովի դեմ, պահանջելով իրենց իրավունքների վերականգնումը: Մամուլը հանդես է գալիս Ազգային ժողովի անդամ քաղաքականութեան դեմ: 1864-ին «Հյուսիսափայլ» ամսագրում, խմբագրի ստորագրութեամբ տպագրվում է Մ. Նալբանդյանի հոդվածը՝ «Ազգային թշվառութիւն» վերնագրով: Մամուլում տպագրված փաստերի հիման վրա Նալբանդյանը քննադատում է Սերվիշեանի հակաժողովրդական դիրքորոշումները, մատնանշում դավառի հայերի տնտեսական ծանր կացութիւնը: «Մենք միշտ էլ դատապարտել ենք, երբ մի մարդ որոնում է օտարի պաշտպանութիւնը, — գրում է նա բանտից, — բայց նույնպէս դատապարտել ենք և դեռ պիտի դատապարտենք ազգային անպիտան գործակալքը, որ յուրյանց լուծը օտար լծից շատ առավել ծանրացնելով, ստիպում են խեղճ ազգը օտարի լծի վրա նայիլ, որպէս մի երանացուցիչ քաղցր բեռի վերա: Մեր ազգի բոլոր թշվառութեան աղբյուրը այս բանի մեջ է ահա: Անտառը ջարդող կացնի կոթը անտառի փայտից է լինում միշտ»¹:

1860-ական թթ. ազգային ժողովներին շարունակում են մասնակցել Գր. Օտյանը և Ն. Ռուսինյանը: Առաջինը շատ շուտ

հեռանում է հուսախար և վհատ իր պատրանքներից, իսկ Ռուսինյանը դեռևս ջերմորեն փարված իր ստեղծած Սահմանադրությանը, Ազգային ժողովի նիստերում քննադատում է ժողովի անգործնական քայլերը: 1864-ին նա առաջարկում է կազմակերպել հանգանակություն՝ գավառի տնտեսական-լուսավորական գործը բարվոքելու համար: 1865-ին տպագրում է «Հանգանակություն» գրքույկը: Ծերենցը մամուլում հանդես է գալիս Ռուսինյանի առաջարկների պաշտպանությամբ: Ժողովում ծայր առած բանավեճերը դրական արդյունք չեն տալիս:

1866-ին Գր. Օտյանին գրած մի նամակում Ռուսինյանն արտահայտում է իր հոգեկան ծանր խռովքը մեծ գործի անփառունակ վախճանի համար: Արձագանքելով իր բարեկամի գրած տխուր խոհերին Ռուսինյանը գրում է նրան. «Գիր չէին ատոնք այլ հառաչք՝ որ սրտիս մեջ գտին արձագանք ինչպես կրնայի գրով պատասխանել: Դիրը ու գրիչը ընկած են աչքես ու անկարող կթվին դիս բացահայտելու. խոսակցության սիրող եղա, այն մտերիմ զվարթ խոսակցության՝ ուր ամեն բան կճառվի լայն ու ազատ՝ ինչ որ մտքն անցնի, առանց խնդրոց կարգ հարցնելու, ուր սրտեր կկարդացվին: Ո՞ւր են այն օրերը, որք գիշեր կըլլային և այն գիշերները որ տիվ կըլլային և դեռ մեր խոսքերը չէին սպառեր և դեռ մեր սրտերը չէին հագենար... ինչպես չըլլամ առանձնամուլ, երբ կամուրջն անցնիմ ու դառնամ ու այն խուժանին մեջ ձեռք մը չելլա ձեռքս սեղմելու, ձայն մը ձայնիս և սիրտ մը սրտիս պատասխանելու: Շատ են մարդիկ, լայն է աշխարհս. մարդիկ, աշխարհ, երկինք տաղտուկ են աչքիս...»²:

1866 թ. կառավարությունը լուծարքի է ենթարկում «Ազգային ժողովը»: Գր. Օտյանի, Ն. Ռուսինյանի և ուրիշների միջամտություններից հետո 1868 թ. այն վերականգնում է իր իրավունքները՝ Սահմանադրությունը նորից վերափոխելու պայմանով: Սահմանադրության վերաքննության ընթացքում Ռուսինյանը անում է մի շարք նոր առաջարկություններ, որոնց մեջ մտնում էին նաև ազգային տուրքի սահմանման և գավառի հետ կապ ստեղծելու հարցերը: Երբ ժողովը ձգձգում է այդ

հարցերի քննությունը, Ռուսիայանը հրաժարական է տալիս։
Նա հեռանում է Աղգալին ժողովից, ինչպես նաև առհա-
յարակ աղգալին գործունեության ասպարեզից՝ հուսախաբ և
անմխիթար։ Ինչպես հեռացել էր և Գր. Օտյանը... Մարում են
աղգալին անդրանիկ լուսավորիչների հույսերը, փլուզվում են
նրանց պատրանքները։ Կյանքի վերջին տարիները նրանք ապ-
րում են՝ կտրված քաղաքական կյանքից։

2

1860-ական թթ. աղգալին գործունեության ասպարեզ է
մտնում Մ. Մամուրյանը։ Նա աշակերտել էր Մերենցին փա-
րիզում, ուստի և հասարակական-գրական գործունեության
առաջին իսկ տարիներին նրանց միջև հաստատվում է անձնա-
կան և գաղափարական սերտ բարեկամություն, որը տևում է
մինչև Մերենցի կյանքի վերջը։ 1860-ական թթ. Մամուրյանը
տպագրում է գլուխներ իր «Անգլիական նամականից»։ 1880 թ.
այն լույս է տեսնում առանձին հրատարակությամբ։ Մամուր-
յանը իր գիրքը նվիրում է Մերենցին հետևյալ ընծայականով։

«Առ ազնիվ Մերենց, Շատ տարիներ Լոնդոն գտնվելով
գրել սկսած էի աս Նամականին, որու ուրվագիրն ի դարձիս
Կ. Պոլիս, Ձեզի ցույց տվի, իբրև իմ վաղեմի դաստիարակիս,
որ՝ առաջին անգամ ազատ մտածման ճաշակն ինձ ներշնչած
էիք, և իբրև սրտակից բարեկամիս, որ իմ վիճակիս միշտ հա-
մակիր գտնված էք։ Հորդոր տվիր այն ժամանակ, ավարտե-
լու ու հրատարակելու այս նամականին որմե հաղիվ մաս մը
(16 նամակի չափ) անկլիական անվամբ լույս տեսավ «Զմյուռ-
նիո Միություն» հանդեսին և Թիֆլիսի «Հայոց աշխարհի
կոնկան» մեջ, իսկ մյուս մեծագույն մասը (90 նամակի չափ)
ձեռագիր կմնար գրասենյանին»...³։

Սահմանադրության վերականգնումից հետո Մամուրյանը
արտոնություն է ստանում Զմյուռնիայում հրատարակելու
«Արևելյան մամուլ» հանդեսը։ Հ. Շիշմանյանը նորաստեղծ
հանդեսին սկսում է աշխատակցել «Մերենց» կեղծանունով։
Առաջին հոդվածների տպագրության առթիվ Շահնուրը (խրմ-

բագրի կեղծանուններից մեկը—Ռ. Ն.) հանգեսի խմբագրին ուղղած նամակներից մեկում հարկ է համարում գրել հետևյալը. «...բարեկամ, կտեսնեմ որ ուրիշ թղթակից մ'ալ գտեր եւ «Ծերենց» անուն: Քաջ է: Իր անվան և ոճին նայելով՝ գրականության հինօրյա զինվորներեն կերևի, որոց տեսակը դժբախտորեն հատնելու վրա է մեր մեջ, ինձի պես գրչիկներու հրոսին մեջ: Գրիչ և իմաստ կգործածե նա, ինչպես կգործածեն այժմ ումբը ճշտությամբ: Թեև Մեքուլի սրտահոս խոսքեր, չերմ հոգի և թռիչք ունի: Շատ նիզակներ կոտրած է գրական մենամարտերուն մեջ, և այժմ ազգային մեծ նպատակի մը նվիրած է իր բոլոր ջգուները: Նայինք ինչ արատ պիտի դնեն այս նոր թղթակցիդ վրա»⁴:

Ծերենցը «Արևելյան մամուլին» սկսեց թղթակցել այն օրերից, երբ Մամուրյանն առանձին հետաքրքրություն էր ցուցաբերում «Ազգային ժողովի» գործունեության նկատմամբ, քննադատում էր նրա անտարբերությունը ժողովրդի ճակատագրի հանդեպ: Իսկ այն շրջանն էր, երբ Ռուսինյանը ջանում էր ժողովի լիբերալ ղեկավարներին տրամադրել դեպի ժողովուրդը, երբ խրիմյան հայրիկը ջերմ ճառեր էր արտասանում՝ մատնացույց անելով գավառի թշվառ վիճակը:

«Ասում ենք Սահմանագրությունը վերաքննելի է,—գրում է Ծերենցը «Արևելյան մամուլի» էջերում,—բայց միայն խոսում ենք. քաղաքական ժողով կա, բայց հրաժարված, կրոնական ժողով կա, զբաղված ոչնչով, լրագրություն կա, բայց փնտրում է միայն վատը... թատրոններ կան, ուր ժողովուրդը միայն գործողություն տեսնելու կհաճախի և մտավորական լույս փնտռելու փափագ չատ քիչ կցուցանե»⁵:

Ծերենցը շարունակում է իր խորհրդածությունները՝ դիմակադերձելով ազգը ղեկավարելու փոխարեն երեսպաշտությունամբ իշխանություններին հաճոյացող երեսփոխաններին. «Հայ երեսփոխանը չէ թե միայն առ ազգն բարոյական պարտավորություն ունի այլ այդ շրջանում ալ դուրսը մեծ տերություն մը առաջադիմության և կենդանության բարի օրինակ պիտի ըլլա և փորձով ապացուցանե թե երեսփոխան կառա-

վարությունն երկրի մը ճշմարիտ առաջադիմության առաջին պիտոյից մէկն է»:

«Արեւելյան մամուլին» Մերենցի հղած նամակ-հոգւած-ներից երեւում է, որ նա հաճախ լինում է զավառներում և մոտիկից ծանոթ է ժողովրդի կյանքին: Ներկայացնելով նախապաշարումների, շարաշահումների, հարստահարությունների մի շարք պատկերներ՝ նա կամենում է «Ազգային ժողովի» ուշադրութունը հրավիրել ժողովրդին հուզող հարցերի վրա՝ համապատասխան միջոցներ ձեռնարկելու ակնկալությամբ:

Սահմանադրության վերականգնման շրջանում Մերենցի «Ծիածան» և «Մանղումիի էֆբյար» թերթերում տպագրում է մի հոգւած՝ «Ապակեդրոնացում» վերնագրով: Այս հոգւածի կարևոր նշանակութիւնը ընդգծելու համար 1871 թ. «Մեղուն» իր № 55-ում նորից տպագրում է այն: Հոգւածում հիմնականը այն խնդիրն է, թե ինչպիսին պետք է լինի Ազգային խորհրդի քաղաքական և հասարակական դերը՝ իբրև կենտրոնացված և լայն իրավունքներ ունեցող մի ղեկավարության, որը կոչված է կարգավորելու ազգային կյանքը, օգնելու նրա առաջադիմության գործին:

Այս կապակցությամբ հոգւածում բարձրացվում է նաև մի այլ, ավելի ընդհանուր բնույթի հարց: Խոսքը վերաբերում է հայ պատմադրության մեջ դարեր շարունակ հոլովված «անմիաբանության» վարկածին, որը ոչ սակավ դեպքերում հանդիմադրվել է որպէս ժողովրդին բնորոշ հատկանիշ: Մերենցը աշխատում է ցույց տալ, որ այդ «անմիաբանութիւնը» բոլոր շրջաններում բոլոր ժողովուրդների մոտ ունեցել է իր պատմական հիմքն ու ծնող պատճառները, որոնց վերանալը դեպքում չէր լինի նաև անմիաբանությունը:

Իր միտքը հաստատելու համար Մերենցը դիմում է այլ ժողովուրդների պատմության փորձին: Խոսելով Ֆրանսիայում կենտրոնաձիգ պետության ստեղծման հետ կապված պատմական դժվարին անցումների մասին՝ նա ցույց է տալիս, թե ինչպէս նախկին անջատ իշխանութիւնները կենտրոնացված պետական իշխանության մեջ զորացրին իրենց ուժերը՝ ընդդէմ օտար նվաճողական ձգտումներին:

«Ահա՛ հայոց պատմութիւնը ինչ որ մեզի օտար պատմութեան հետ բաղդատելով կսորվեցնէ և ապակեդրոնացում քարոզողները թող կարգան Բագրատունյաց հարստության ժամանակի դեպքերը և մխիթարվին տեսնելով գործադրված այն դրութիւնը ամբողջապէս, վասնզի հոն հայտնի կը տեսնվի կեդրոնը շարունակ օր օրի տկարացած և երկաթյա մարդը Աշոտ հուսահատ՝ Սևանայ կղզին կպարտաւորի սահման ընել յուր թագաւորութեան: Իսկ այդ նախարարութիւնքը, որ այդչափ ազատութիւն կվայելեին, ի՞նչ բարեկարգութեամբ իրենց մասնավոր երկիրներն կզարդարեին: Հարցուցեք պատմութեանը՝ հորենացի, Նդիշե, Փարպեցի, Հ. կաթողիկոս, Լաստիվերտցի, ձեզի կը պատմեն՝ թե որ ասոնց ողբերը քան թե պատմութիւնք բավական համբերութիւն ունիք կարդալու: Ապակեդրոնացման վերջի բառը, վերջի եզրակացութիւնը ևսութիւնը կամ անձնապաշտութիւնն է, և անկից բարիք հուսալ, անկից բարոյական օգուտ՝ սպասել ժողովրդեայն, անկից նշուածական առաջադիմութիւն ակնունել տղայութիւն է: Անոր համար ալ պետք էր որ նախախնամութիւնը բարոյական իշխանութիւն մը հաներ խեղճ հայոց ազգին համար, իշխանութիւն մը թեպէտ բարոյական, բայց կանոնավոր դասակարգութեամբ, ժողովրդեայն ներքին և արտաքին բռնութիւններէ արած հատվածներուն դարման մը ըլլար»⁶:

Անդրադառնալով Օսմանյան կայսրութեան սահմաններում հայկական ինքնավարութիւնը խորհրդանշող «Աղգային ժողովին»՝ Մերենցը դա համարում է «բարեբախտութիւն», որը պետք է ճիշտ օգտագործել՝ հետեւելով սահմանադրութեամբ ընդունված օրենքներին:

Թե որքան էին իրական Աղգային ժողովի հետ Մերենցի կապած հույսերը և դրանց իրականացման հնարավորութիւնները, ցույց տվեցին հետագա պատմական իրադարձութիւնները: Բայց հողվածն ինքնին արտացոլում էր հեղինակի համեմատաբար ճիշտ հայացքը «անմիաբանութիւն» և «անիշխանութիւն», «ապակեդրոնացում» և «կեդրոնացում» հասկացութիւնների պատմական իմաստի վերաբերյալ: Մերենցը

հետագայում իր վեպերում անդրադարձավ հողվածում բարձրացված հարցերի կոնկրետ վերլուծումներին:

3

«Դեմոկրատական գծերով օժտված գավառահայ ազգային պահպանողականները,—գրում է Հայկ Ղաղարյանը,—դատափետում էին վայրենաբարո քուրդ վերնախավին, թուրք աղաներին, հայ վաշխառուներին, ջանք գործ դնում հաղթահարելու գավառի տգիտությունը, խավարամոլությունը, սակայն դեռևս վախենում էին մարտահրավեր նետել սուլթանական միահեծանությանը: Հեռու մնալով հեղափոխական հայացքներից, նրանք շքնկալեցին Մ. Նալբանդյանի ու արևմտահայ ազգային-դեմոկրատական մտավորականների երկնած ծրագրերը, խուսափեցին ժողովրդի վանգվածային շարժումների քարոզից, արևմտահայերի զինված ինքնագործունեության գաղափարից»⁷: 1850—60-ական թթ. գավառահայ այդ մտավորականության ղեկավարը երիտասարդ վանական Մ. Խրիմյանն էր:

1855 թ. Կ. Պոլսում Խրիմյանը հիմնում է «Արծվի Վասպուրականի» ամսագիրը: 1857-ին նա ամսագիրը փոխադրում է Վան, ուր և բացում է Վարազի Ժառանգավորաց վարժարանը: Ամսագիրը հետզհետե դուրս է գալիս կրոնական սահմանափակ շրջանակից, Խրիմյանի շուրջն են հավաքվում Գ. Սըրվանձտյանը, Արս. Թոխմախյանը, Երեմիա և Արիստակես Տեկանցները:

1850-ական թթ. Խրիմյանը կոչ էր անում իր հայրենակից գավառացիներին արթնանալ քնից, լուսավորվել՝ ճանաչելու համար իրենց առջև դրված խնդիրները, ձայն բարձրացնել սեփական շահերը պաշտպանելու համար: Գր. Օտյանը այն ժամանակ դուր էր համարում Խրիմյանի ջանքերը՝ նոր կյանք ստեղծելու Վասպուրականի «ծխաշունչ փլատակների վրա»:⁸ Հետո նա քննադատական դիրք ընդունեց Ազգային ժողովի հանկաժողովրդական քաղաքականության դեմ:

Գր. Օտյանի նախաձեռնությամբ Մ. Խրիմյանը 1869-ին ռեստավելեց պատրիարք: Գումարվեց Աղգալին ժողով, նորընտիր նախագահը երգվեց հավատարիմ մնալ ժողովրդի ձայնին:

Խրիմյանի նախաձեռնությամբ Աղգալին ժողովում սկսեցին ավելի հաճախակի բարձրացվել ժողովրդի իրավունքի պաշտպանության հետ կապված հարցերը: «Մեր աղգալին օրենքը, — հայտարարում է նա. — խմբագրվել է մայրաքաղաքի մեջ, այնպիսի անձերու հեղինակությամբ, որոնք ավելի Եվրոպայան կճանչնային, քան Հայաստանի աշխարհացույցը և այդպես մեր Սահմանադրությունը Եվրոպիո գաղափարաց վրա ձուլվել է ավելի քան թե Հայաստանի: Օրենսդիրը պարտավոր է քննել ավելի այն ժողովրդյան վիճակը, պիտույքն ու քարքը, որու օրենք սահմանել միայն կոչված էր. և այդ ժողովուրդը միայն Վոսփորի մեջ չէր բնակեր այլ անձուց շրջանակըն անդին՝ Հայաստանին հեռավոր գավառներուն մեջ, և երբ տակավին այս կերպով խմբագրված սահմանադրությունը մը մայրաքաղաքիս մեջ անգամ գործադրված ատեն դժվարություններ կծագին, մտածելու է թե գավառներու մեջ ինչ հիմ կբռնե և ի՞նչ արդյունք կունենա»⁸:

Աղգալին ժողովում երեք տարի Խրիմյանը ջանքեր դրժագրեց՝ նրա ուշադրությունը կենտրոնացնելու գավառի վիճակի վրա: Նա կազմում է մի «Հրահանգ»՝ գյուղական եկեղեցիներին կից վարժապետանոցների հիմնելու, քահանաների կրթության վրա հատուկ ուշադրություն դարձնելու, հարկերի և տուրքերի հավաքման ժամանակ վաշխառուներին և մյուզիկներին հետևելու, նրանց խաբեություններից գյուղացուն աղատելու: Խրիմյանը հանդես էր գալիս մարդու իրավունքների պաշտպանությամբ՝ ապավինելով օրենքին: Սակայն այդ «Հրահանգի» դեմ առաջինը դժգոհեցին Աղգալին ժողովի ղեկավարները: Ծերենցը մամուլում հանդես եկավ «Հրահանգ» հոգվածով և պաշտպանեց Խրիմյանին: Պետք է շտապել, գրում էր նա, գրագետ դարձնել ժողովրդին, գործի դնել ուսումնական ժողովները, աղգալին գումարներն օգտագործել կրթության համար, բարձրացնել ազգը ահավոր հետամնացությունից՝ կյանքը բարեկամելու համար:

Բաֆֆին «Մշակի» էջերում նկարագրում է խրիմյանի դեմ ծայր առած բանսարկությունները, որոնք հանգեցնում են նրան, որ պաշտոնական դասը պատրիարքին հաշտարարում է «Հակասահմանադրական»: Բաֆֆին հեղինակ է այդ ձևակերպումը՝ նրա մեջ տեսնելով բուրժուական լիբերալիզմի քաղաքականության լիակատար կեղծիքը ժողովրդի դատի հանդեպ: 1873 թ. սեպտեմբերին խրիմյանը հրաժարվում է պատգարբությունից, բնակատեղի է քաշվում և ընդհանուր վարչության նախագահի պաշտոնից:

1872 թ. Ծերենցը «Մասիսում» հանդես է գալիս «խրիմյան և Սահմանադրություն» հոդվածով: Խոսքն ուղղվելով «Ազգային ժողովի» հիմնադիր անդամներին նա գրում է. «Նույն միջոցին, երբ Սահմանադրությունը դեռ անշունչ թուղթ՝ մի գրասենյակի լուսնյան մեջ կպատրաստվեր, անդին երիտասարդ եկեղեցական մը կրոնք և ազգություն կքարոզեր բեմին վրա՝ եռանդուն պարզ և բնական լեզվով և անկից իջնալով խեղճուկ տպարան մը, գրչին արծվի թևեր տված ինչ որ ճշմարտություն, ինչ որ առաքինություն, ինչ որ բարոյական, ինչ որ երկնային ունի բրիստոնելություն՝ կսլացներ իր հայրենի վասպուրական երկիրը, ուր բյուրավոր հայ ազգին զավկներ՝ հզոր տերության մը հպատակք՝ դեռ ազատ չեն քանի մը ցեղ ավազակաց հուղկահարութենեն և հարստահարութենեն: Բայց վարդապետը՝ որ իր պարզամտության մեջ ուներ խորագիտություն, համոզված էր, թե յուր հայրենյաց քրդեն ավելի վնասակար՝ տգիտությունն էր»⁹:

Ծերենցը մերկացնում է Սահմանադրության խոսքի և գործի հակասությունը: Այն, ինչ առաջին իսկ հայացքից նկատել էր Նալբանդյանը, հաստատեց Ծերենցը տարիներ անց. «Բայց ի Պոլիս՝ Սահմանադրությունը՝ որ ալեկոծության և մրրկի մը օրով հանկարծ երևան ելած տեսանք, յուր բեկբեկ անիվներովն և կերպարանափոխությամբն, երբեմն կբալեր և կրբեմն կընդհատեր»¹⁰:

Ծերենցի այս դիտողությունները բացահայտում են Սահմանադրության գործադիր մարմնի լիակատար անկարողությունը: Դրան հակառակ, նա խրիմյանի ամենամեծ արժանի-

քը համարում է ժողովրդայնությունը: «Սահմանադրությունն ազատություն տվել է խոսելու և գրելու»¹¹: Բայց ո՞վ է ասել, թե իրավունք ունեն ամբաստանելու: Հարստահարության դեմ ժողովում են, բայց իրենք հարստահարող չեն, մի՞թե իրենք նրանց պաշտպանները չեն, մի՞թե իրենք չեն կանոնադանցը, սուտը, խաբեբան, կեղծավորը: «Ազգային ժողովի» ղեկավարներին ուղղած այս խոսքերը բավական են ցույց տալու, որ Խրիմյանի պաշտպանությամբ հանդես եկող հայ առաջավոր մտածողը խորապես հասկանում էր, որ առանց այդ ղեկավարության հիմնավոր փոփոխման, հնարավոր չէ իրականացնել ժողովրդի բաղձանքները:

«Երբ ազգը մեկ ձեռքով արտաքին հարստահարողաց դեմ բողոք բողոքի վրա դնելով արդարություն պիտի խնդրե և գտնե իր ղավկները պատսպարելու համար, մյուսովն ալ պետք է ջախջախե ան ներքին հարստահարողները, որ գայլ են իրենց ժողովրդոց, որ չար օրինակ են իրենց հոտին, որ իրենց տգիտությամբ կույրք են կուրաց, առաջնորդք, որ պճնասեր զարդերով նման են գերեզմանաց բռնուց որ քարողեն խռովվության և բաժանման, որք առիթ են օտարանալու հայրենի տնեն...»¹²: Ծերենցն ակնարկում է հատկապես կաթոլիկյան շարժման ղեկավարներին և նրանց առաջնորդ Հասունյանին, որը շարունակում էր պայքարը՝ հայությունն իր ազգային հիմքերից կտրելու համար:

Ծերենցը 1870-ական թթ. առաջին կեսին իր գործունեությունը կենտրոնացրեց «Արևելյան մամուլի» էջերում: Միասնական ճակատ կազմելով ամսագրի խմբագիր Մ. Մամուրյանի հետ, նա անդուլ կերպով հետևում էր «Ազգային ժողովի» գործունեությանը, Օսմանյան պետական քաղաքականությանը՝ հատկապես Հայկական հարցի նկատմամբ, եվրոպական երկրների նենգություններին, Հռոմի պապի և նրա գործակալների դավադրական գործունեությանը և այլն:

Մինչև 70-ական թվականները Թուրքիայում քրիստոնյա սղգաբնակչության համար զինվորական ծառայության փո-

խարեն սահմանված էր զինվորական տուրք: Այժմ հայերը, ինչպես նաև քրիստոնյա մյուս հպատակները ենթարկվում էին ընդհանուր զորակոչի՝ պետության սահմանած հրահանգի համաձայն:

1870-ական թվականներին «Ազգային ժողովում» այս հարցի շուրջը տեղի են ունենում տաք վեճեր: Մեծ մասը առարկում է՝ պահանջելով կառավարությունից պահպանել հին օրենքը: Սակայն Ռուսիայանը, Օսմանը և ուրիշներ գտնում են, որ պետության այս նոր որոշումը կարող է փոխել քրիստոնյաների իրավական վիճակը մահմեդական աշխարհում: Զինվորական օրենսդրությամբ ձեռք բերելով քաղաքացիություն՝ քրիստոնյան կկարողանա պաշտպանել իր իրավունքները:

Ծերենցը 1871-ին «Մասիսում» տպագրում է մի հոդված՝ «Զինվորագրություն» վերնագրով: Նա նույնպես գտնում է, որ զինվորագրությունը իրավունք կտա հայերին զենք կրելու, պահանջելու, որ իրենց հետ վարվեն մարդկայնորեն: Պետության հրամանները պետք է օգնեն, որ «ոչ միայն հարստահարությունք դադրին, այլև արհամարհանքն առ քրիստոնյան վերջանան»¹³: Դիմելով թուրքական իշխանավորներին՝ Ծերենցը նկատում է, թե՝ «...աշխարհակալութենեն ավելի փառավոր և հազար անգամ ավելի օգտակար՝ այսպիսի ընդարձակ, գեղեցիկ ու հարուստ երկրի մը արդար մատակարարությունն է՝ որ երջանիկ կընեն՝ եղբայր կընեն իր ամեն կարգի բնակիչները և թե առանց անոր՝ ամեն փառք իբրև ցնորք կցնդին և ավերակներու անապատներ կհաջորդեն»:

Այս հոդվածի դեմ հանդես է գալիս խորեն Գալֆայանը՝ հայտնելով այն միտքը, թե, իբր, Ծերենցը դեմ է գնում ժողովրդի շահերին, քանի որ հայերը, ինչպես գտնում է եպիսկոպոս պատվելին, ոչ մի օգուտ չեն կարող ունենալ Թուրքիայի վարած պատերազմներին մասնակցելուց:

Ծերենցը պատասխանում է իր ընդդիմախոսին՝ պաշտպանելով սեփական կարծիքը, միաժամանակ մերկացնելով եպիսկոպոսի անձնամոլությունն ու փառասիրությունը:

Այս առիթով «Մեղվի» խմբագիր Հ. Սվաճյանն իր հանդեսի 1871 թ. № 62—65-ում տպագրում է մի հոդված՝ «Քրիս-

տոնելի եկեղեցիի բաժանումը և պապականութիւնը: Դեռեւոր Շիշմանյան և Տեր Խորեն եպիսկոպոս» խորագրով: Հոգւածը ներկայացնում է Ծերենցի եռանդուն պայքարը կաթողիկական շարժման և նրա ղեկավար Հասունյանի դեմ: «Ո՞վ է Ծերենց» հարցին Սվաճյանը պատասխանում է. «Մարդ մը եղած է անի մինչև ցարդ, իր վարքովն անբասիր, իր գործերովն ազգասեր, որով և թե լուսավորչական և թե կաթողիկ հայոց, ամեն խելահաս անձանց սիրելի և հարգելի, իբրև հակառակորդաց իսկ ականածելի և կենացը մեջ առաջին անգամ այս տարի ամբաստանված, ան ալ Խորեն եպիսկոպոսն»:

Ժողովուրդը կարող է խաբւել Խորեն եպիսկոպոսի խոսքերից, գրում է Սվաճյանը, բայց «հայ ժողովրդի մեջն փորձաքույն մաս մը կա, որ աչք ունի ու կտեսնէ, ականջ ունի ու կլսէ և միտք ունի ու կխորհի ազգին օգուտն ու վնասը, պատիւն ու անպատիւութիւնը: Անոր ճշմարիտ խարդախ և նենգամիտ բարեկամը գիտէ ու կճանշնա: Մաս մը կա, որ իրեն պայքար քրտն է ազգի ճշմարիտ բարօրությամբը կաշկանդող կատարչալ անձուրացությամբ, ամեն ատեն անոր կեղծավոր բարեկամներու դիմակը վար առնել, ժողովրդին առջև, անոր առաջադիմության ճամփան հարթել ու լուսավորել և սրտի մտքը վաստակիլ անոր աչքն ու ականջը, միտքը բանալ» (նույն տեղում):

1850 թվականին Շիշմանյանը միակն էր, գրում է ալեուհետև Սվաճյանը, որ ցույց տվեց, թե ազգային միության հնարավոր եղանակը ազգի փոքրամասնութիւնը մեծամասնությանը ենթարկելն է և որ ազգը պետք է պահպանի իր սկզբնական դավանանքը: «Մեղվի» խմբագիրը բարձր է գնահատում «Բարեգործական ընկերության» գործունեութիւնը՝ առանձին նշանակութիւն տալով Ծերենցի ունեցած մասնակցությանը: Այդ ընկերութիւնը, գրում է Սվաճյանը, «...որուն իր համեստ անվան ներքո ազգին մեջ հեղափոխութիւն հարուցանելու կարողութիւնը և ազգային միության կեդրոն ըլլալիքը ծնած օրէն կռահելով շար մարդիկ, անդեն իր խանձարուրոց մեջ խեղդել ճգնեցան», այնուամենայնիւ կարողացաւ

կատարել իր որոշակի դերը ազգային առաջադիմության գործում (նույն տեղում):

1870—1872 թվականներին Սվաճյանը կարևոր նշանակություն է տալիս Ծերենցի հոգվածներին, ընդգծում դրանց մերկացնող քննադատական ոգին: Պաշտպանելով նրան խորեն Գալֆայանի քննադատությունից, նա վեր է հանում Ծերենցի քաղաքական-հասարակական գործունեության մարտնչող ուղղվածությունը՝ ընդգեմ կաթոլիկյան ռեակցիայի և հայ կղերի:

1872-ին Սվաճյանը «Մեղուն» հանձնում է Հ. Պարոնյանին և գնում գալառները: Ուսումնասիրողները ենթադրում են, թե նա գնացել է հեղափոխական գործունեության նպատակով: Նշել է նաև այն կարծիքը, թե իր նյութական վիճակը կարգավորելու համար է նա մեկնել Պոլսից: Այսպես թե այնպես՝ Ծերենցը փաստում է այդ անդուգական տաղանդի «կորուստյան» համար: Նրա մահից հետո «Արեւելյան մամուլում» մի առիթով գրում է. «Սվաճյան այն երիտասարդներեն էր ազդի մեջ, որ բավական տաղանդ զգալով չինքն, կուղեր սլանալ և բարձրանալ և կարծեր թե կամենալ՝ կարենալ կնշանակե, ուստի իր մտավորական տաղանդը հարստացնելն, որ ավելի դյուրին էր, քսակն ուղեց հարստացնել և այս սոսկալի պատերազմին մեջ զոհ ընկավ»¹⁴:

Պատմությունը մեզ չի թողել որևէ փաստ՝ ճշտելու Ծերենցի վարկածի իսկությունը: Բայց այստեղ կարևորն այդ չէ, այլ այն, որ նա բնութագրում է Սվաճյանին իբրև ուժեղ և սկզբունքային գործչի: Նա իր «Մեղվի» խայթոցով, գրում է Ծերենցը, նույնպես «զինյալ կհարձակի ընդդեմ տգիտության, ընդդեմ բռնավորության, ընդդեմ նախապաշարմանց, ընդդեմ ապօրինավորության, ընդդեմ անիրավության, և ով որ դիմացը կգտնե, կաթողիկոս, պատրիարք, ամիրա, առաջնորդ, ժողովրդապետ, եկեղեցական և աշխարհական, բան մը չխնայեր, կկոխե կանցնի...»¹⁵:

Այսպիսով՝ 1850-ական թթ. հրապարակ եկած ազգային լուսավորական շարժման անդրանիկ ներկայացուցիչները՝ Գր. Օտյանը, Ն. Ռուսինյանը, Ստ. Ոսկանյանը, Ն. Պալյանը,

Մ. Մամուրյանը, Հ. Սվաճյանը, Մ. Խրիմյանը, որոնց հետ շփվել ու գործել է Ծերենցը, իրենց ազգային-քաղաքական տարբեր դիրքերից պայքարել են մի ընդհանուր գործի համար՝ առաջ մղել ազգի առաջադիմությունը, աննահանջ դեմ գնալով ֆեոդալական բռնիշխանությանը, ազգային նախասպաշարումներին՝ ժողովրդի շահերի պաշտպանության, նրա կյանքի արմատական վերափոխման համար։ Ազգը, հայրենիքը, անհատի իրավունքի պաշտպանությունը, ազատությունը և լուսավորությունը, անկախ աշխարհայացքային տարբերություններից, եղել են նրանց կյանքի գլխավոր երազը և իդէալը։

5

1860-ական թվականներին Կ. Պոլսի հայկական թաղամասերում կազմակերպվում են դասախոսություններ գիտության, գրականության և լուսավորության տարբեր հարցերի շուրջ։ 1873 թ. հունվարի 29-ին Օրթագյուղի նորաբաց լսարանում տեղի է ունենում Ծերենցի առաջին դասախոսությունը՝ «Եվրոպական քաղաքակրթության ներկա ժամանակներուս հայ ազգին վրա ըրած ազդեցությունը» վերնագրով։

Լսարանի տնօրենը՝ իր ժամանակին գիտության բնագավառում աչքի ընկած մտավորական Տիգրան Յուսուֆյանը, ներկայացնում է Ազգային լսարաններում տրվող դասախոսությունների նպաստակը՝ հասարակաց կրթություն տարածելու և ժողովրդին լուսավորելու համար։ Շիշմանյանին նա ներկայացնում է իբրեւ. «...յուր բաղմարդյուն գրություններովն և գործքերովն ազգային առաջադիմության մատուցած մեծ ծառայության համար, հասարակաց համակրությանը արժանացած անձանց մեկը...»¹⁶։

Դասախոսության մեջ Ծերենցը շոշափում է հիմնականում XIX դարի առաջին կեսին հայ հասարակական ազգային առաջադիմության վրա եվրոպական քաղաքակրթության ազդեցության հետ կապված առանձին երևույթներ։

Եթե Եվրոպան մինչև այսօր մեզ վատ է ճանաչել, ասում է նա, պատճառը նախորդ դարերից Հայաստան ոտք դրած

կրօնական տարբեր տիպի քարոզիչներն են, որոնք կրօնական վեճերի ընթացքում աղավաղելով մեր պատմությունը՝ սխալ ապավորություն են ստեղծել մի ժողովրդի մասին, որը ժամանակին ունեցել է իր որոշակի դերը պատմության մեջ: «Պետք էր ուրեմն, որ հասներ փիլիսոփայության դարը,— շարունակում է Մերենցը,—որ ծնունդ էր Գաղղիոյ հեղափոխության, որ իրոք քաղաքականության դայակը եղավ՝ նախապաշարմունքները փշրելով, և պատմիչներուն բերնին գայլը կորզելով՝ որ ճշմարտությունը երևան ելնե կատարելապես» (նույն տեղում):

Քաղաքակրթությունը, նկատում է Մերենցը, որեւէ ժողովրդի ազգային կամ կլիմայական միջավայրի հատկանիշը և արգասիքը չէ, այլ ստեղծվում է այնտեղ, ուր «պարարտ հող մը կը գտնեն»:

Կարևորելով լուսավորական դարի եվրոպական քաղաքակրթության նշանակությունը հայության վերարթնացման գործում՝ Մերենցն առանձին ուշադրություն է դարձնում կրօնական տարբեր ուղղությունների դեմ մղվելիք պայքարին: «...ի՞նչ արդարություն, ի՞նչ տեղեկություն, ի՞նչ քաղաքականություն պետք է հայ ազգին հուսալ այդ կրօնամոլության երեսփոխաններեն, որ իրենց ձեռք բերած քաղաքականության նշխարներն ալ թունավորած էին արհամարհության ատելության ոգով որ կբերեին Հայաստան իր ցիրուցան դավակաց» (նույն տեղում):

Իսկ ո՞վ պետք է պայքարի այդ մոլախոտի դեմ, որը դրերով ոչնչացնում է հայկական արդասաբեր հողի պտուղները: Ժողովուրդը շուննուր սեփական պետականություն, ազգային հիմնարկներն էլ ի վիճակի չէին իրականացնելու ազգային առաջադիմության կազմակերպման գործը. «...Ազգը թեպետ ներքին կառավարություն մը ունի,— ակնարկելով «Ազգային ժողովը»՝ հայտարարում է Մերենցը,— բայց այդ կառավարությունը բավական ժողովրդական չէր, որ իր ազգին սիրելի ըլլար և բարոյական ազդեցություն մը ունենար» (նույն տեղում, էջ 19):

Անդրադառնալով Հասունյանի գործունեությանը, Մերեն-
ցը գտնում է, որ նա մի «պալար է ազգի վրա», որին պետք
է հիմքից կտրել՝ ազգի միասնությունն ապահովելու համար,
այլապես ազգը կկորցնի ոտքի տակի հողը և կկանգնի կոր-
ծանման առջև: Իսկ մեր ժողովուրդը, հայտարարում է նա,
պետք է ապրի իր ներքին միասնությամբ, կազմակերպի իր
կյանքը՝ վնասակար ուժերի դեմ մաքառելով, եվրոպական
քաղաքակրթության նվաճումները յուրացնելով: Լուսավորու-
թյունն առաջին պայմանն է՝ ազգային գոյության պահպան-
ման և առաջադիմության համար:

Այդ պայքարի համար ստեղծվում են լուսավորական
օջախներ, գոյություն ունի եվրոպական լուսավորությամբ տո-
պրված երիտասարդություն:

Մերենցի դասախոսության դեմ հրապարակ է գալիս «Ազ-
գասեր հայ մը» ստորագրությամբ մի գրքույկ՝ «Ցնորք և երե-
վակայությունք տեղեւոր Շիշմանյանի...» վերնագրով: Այդ
«ազգասեր հայը» չի ընդունում Մերենցի դասախոսության
ոգին: Նա հայտարարում է, թե դասախոսությունը ուղղված է
ոչ թե Հասունյանի, այլ ընդհանրապես կրոնի դեմ: Ոչ թե կրո-
նը, այլ նախապաշարումներն են վնասում ազգի առաջադիմու-
թյանը, նկատում է հեղինակը: Պետք է ուրեմն պայքարել
սոցիալական դեմ՝ նախապաշարումները վերացնելու համար և
ձեռք չտալ կրոնի հիմքերին: Եվրոպական երկրները, ուր առա-
ջադիմում է քաղաքակրթությունը, արդյոք փոխե՞լ են իրենց
դարգացման ընթացքը դեպի ճշմարիտ լույսն ու արդարու-
թյունը: Ոչ, հայտարարում է նա, ուստի մեր խնդիրը պետք է
լինի հենվել միայն «ազգային բարոյական» ուժերի վրա,
որոնց մեջ իր դերը պետք է ունենա կրոնը:

Եզրակացությունը պարզ է. ազգասեր անվան տակ հեղի-
նակը աշխատում է արդարացնել Հասունյանի գործունեությու-
նը՝ կոծկելով նրա քաղաքական նկրտումները:

Գլուխ հինգերորդ

1. ՕՍՄԱՆՅԱՆ ԵՎ ԱՆԳԼԻՍԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ՔՆՆԱԳԱՏՈՒԹՅՈՒՆԸ: 2. ՀՌՈՄԻ ՎԱՏԻԿԱՆԻ ԵՎ ՀԱՍՈՒՆՅԱՆԻ
ԴԱՎԱՒԻՐ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԵՐԿԱՅՈՒՄՆԵՐԸ: 3. ԾԵՐԵՆՑՑԱՆ
ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1

1870-ական թթ. առաջին կեսին թուրքական դիվանագի-
տությունը եվրոպական մեծ երկրների, հատկապես Անգլիայի
աջակցությամբ վարում է երկակի քաղաքականություն հայերի
եկատմամբ: Առերես խաղաղասիրություն ներկայացնելով
նա նախապատրաստում էր այն ծրագրերը, որոնք հետագա-
յում իրականացրին՝ անընդհատ կազմակերպելով կոտորած-
ներ: Դեռևս 60-ական թթ. Թուրքիայի մեծ վեզիր Ալի փա-
շան լայն գործունեություն սկսեց Զևթունի ապստամբությու-
նից հետո պետություն մտադրություններն իրականացնելու
ուղղությամբ: Ծերենցը նրա քաղաքականությունը համարեց
«մետերնիքյան» և նրա անվան հետ կապված «Արևելյան քա-
ղաքականությունը»՝ հղի հայերի համար վտանգավոր հետև-
վանքներով:

...Մահմուդ փաշային նվիրած հոդվածում Ծերենցը հիշա-
տակում է Ալի փաշայի՝ դեռևս 60-ական թվականներին տված
միջխոսքը, թե հայերը, եթե դժգոհ են թուրքական պետությու-
նից, թող հեռանան երկրից: «Իբրև թե դուրին էր հայուն ջրհե-
ղեղենի վեր յուր հայրենիքը կոշիկներուն մեջ դնիլ տանիլ-
ըստ հռչակավոր զրուցվածին»¹, — հայտարարում է Ծերենցը:

«Ալի փաշան և Արևելյան խնդիր» հոդվածում Ծերենցն
անգրադառնում է եվրոպական մեծ պետությունների կողմից
սեփական շահերի համար հորինված «Արևելյան հարցին»:
Ծերենցի դատողություններն ու եզրակացությունները հավաս-
տում են նրա քաղաքական սրատեսությունը:

Մեռնում է Ալի փաշան: Եվրոպան նրան է վերագրում դա-
րասկզբից հրապարակի վրա արժարժիղ «Արևելյան հարցը»
բոլոր տեսակի խափանումները: Սակայն հոդվածագիրը հար-

ցը քննում է ավելի լայն առումով՝ բացահայտելով եվրոպական քաղաքականության ողջ կեղծիքը: Միայն «Արևելյան խնդրի» արծարծումով չի վերջանում օտարերկրյա լծի տակ առապող ժողովուրդների հարցը, գրում է Մերենցը: Եթե կա «Արևելյան հարց», կա և «Հյուսիսային հարց», «Արևմտյան հարց» և այլ հարցեր, որոնք դուրս են մնում եվրոպական դիվանագետների ուշադրությունից, քանի որ ձեռնառու չեն նրանց, դիտում է հայ հրապարակախոսը: Եթե աչքի առաջ ունենանք միայն Ֆրանսիայի պատմությունը, նկատում է նա, ապա կտեսնենք, որ Նապոլեոն Մեծից մինչև մեր օրերը իտալական, գերմանական, ավստրիական իշխանությունների հարաբերություններում տեղի ունեցած փոփոխությունները առաջացնում են հարցեր, որոնք պակաս արժանի չեն ուշադրության:

«Եվ թե որ միայն թագավորական ցեղերու և աշխարհագրական սահմանաց փոփոխությունք եղած ըլլային, դարձյալ զարմանքնիս չափավորեինք: Բայց սահմանադրությանց և կարգադրությանց կենսական փոփոխությունները մարդուս միտքը կզարմացնեն, անսանձ ազատությանց անսահման իշխանությունք կհաջորդեն և բռնակալությունը քստմենլի կտեսնըվի, թե վարեն և թե վերեն»²:

Մերենցի ուշադրությունից չեն վրիպում եվրոպական պետությունների միջև հակասությունների հետևանքով առաջ եկած զավթողական ձգտումները, որոնք ցույց են տալիս նրանց՝ խաղաղասիրական նպատակով առաջ քաշած հարցերի ողջ կեղծիքը:

Քաղաքական այս իրադրության քննությանը ղուգահեռ Մերենցն անդրադառնում է Ալի փաշայի ներքին և արտաքին քաղաքականությանը: «Կերթան մեջիդներ, ֆուատնիր, ալինեհ՝ իմաստուն, սրամիտ և հանճարեղ մարդիկ, ինչպես և աշխարհ բոլոր կվկային. կնայիս իրենց գործքին վախճանը արդյանց պղտիկությունը և իրենց ձգած հետքին վրա՝ կտեսնես դարձյալ ո՛չինչ, ո՛չինչ, ո՛չինչ...»³:

Նույն թվականին Մերենցը «Մասիսում» տպագրում է Ալի փաշային հաջորդած «Մահմուդ փաշայի շրջաբերականը» հոդվածը: Նրան գրավում են եվրոպական ձևով գործել ցանկացող

մեծ վեզիրի առաջարկութիւնները՝ ուսումնասիրել երկրի վիճակը և ըստ այնմ գործել: Ժողովրդին պետք է «խնամել» առանց կրօնական խտրութեան, առանց աղգային տարբերութիւնների, հայտարարում է Մահմուդ փաշան: Ծերենցը այդ առթիւ դիտում է. «Այս երկրին միմիայն բարոյական կապն արդարութիւնն է, վասնզի երկրի մը բնակիչը, երբ այսչափ այլասեռ, այլակրօն և այլալեզու աղգերն կկաղմվին, թե որ կապ մը կա զիրենք իրարու հետ կապելու—Արդարութիւնն է» (101):

Ծերենցն ուզում է համատալ, թե նոր վեզիրը կկարողանա իրականացնել իր ծրագրումները: Ուստի նա ողջունում է Մահմուդ փաշայի վճիռը՝ ծանոթանալ երկրի վիճակին, ապա ձեռնարկել միջոցներ ժողովրդի տնտեսական պայմանները բարւոյացնելու նպատակով:

Ծերենցի համար կարևորն այն չէ՝ միապետութիւնն է ալկալ երկրում, թե՛ հանրապետութիւն, այլ այն, թե արդարութեան ինչպիսի շափանիշներով է նա ղեկավարվում:

«Անսահման ազատութիւնը ինչչափ տարապայման ըլլա, երբ ուրիշի իրավունքը և ազատութիւնը չի բռնաբարէր չի հափշտակեր, օրինավոր է և միմիայն օգտակար ժողովրդից և առանց անոր առաջադիմութիւն չի կրնար ըլլալ: Ամեն իմաստուն կառավարութիւն, որ հայրական է, պարտավորութիւն ունի այդ ազատութիւնը չէ թե միայն չի վտարելու ալկա տածելու սնուցանելու իր գրկին մեջ՝ հօգուտ աշխարհին և հայրենյաց»⁴:

Ծերենցը համատում էր, թե իրոք հնարավոր է «անարդուն հեղափոխութեամբ» բարեփոխել երկրի վիճակը, ստեղծել ժողովրդի համար տանելի պայմաններ: Նրա կարծիքով Օսմանյան պետութեան մեջ հակասութիւնները և անօրինութիւնները բխում են ոչ թե կրօնական տարբերութիւնից, այլ երկրի հետամնացութիւնից և ժողովրդի տգիտութիւնից: Նկատի առնելով Մահմուդ փաշայի նոր նախագծումները երկրի տնտեսական բարենորոգումների ուղղութեամբ, Ծերենցը կարևոր է համարում ոչ միայն ժողովրդի վիճակի ուսումնասիրութիւն-

նը, այլև նոր օրենքների և դրանց կիրառման ուղիների որոնումները:

1872 թ. նորից անդրադառնալով Մահմուդ փաշայի գործունեությանը, Ծերենցը գտն է, որ մեծ վեզիրը գավառներ է ուղարկել լրագրողներ, որոնք պետք է տեղեկություններ հաղորդեն մամուլին և իրեն՝ Մահմուդ փաշային՝ երկրի վիճակի մասին: Համարելով այդ համապետական ու համաժողովրդական գործ՝ Ծերենցը լրագրողների ուշադրությունն է հրավիրում էիլիկիայի և Տարսուսի ներկա վիճակի վրա. երբեմնի արգավանդ հողերն այսօր շորացել կամ ճահիճների են վերածվել, տիրողների կամայականությունները անչափելի են: Մամուլը պետք է ուշադրությամբ քննի բերված բոլոր փաստերը և արդար որոշումներով փրկի երկիրը օրհասական վիճակից:

Ծերենցի ամեն մի հոգված լի է գավառից վերցրած փաստական տվյալներով: Անձամբ շրջելով գյուղերը, նա խորհուրդ է տալիս պետության ներկայացուցիչներին՝ պայքարել շարաշահումների, կողոպուտների և նախապաշարումների դեմ: Երկիրը տառապում է հետամնացության և խաղարի ճիրաններում, հարկավոր է փրկել ժողովրդին: Իր դիտարկումների մեջ հայ լուսավորիչը չի սահմանափակվում միայն հայ գյուղացու վիճակով, նրա տեսադաշտում են նաև տնտեսապես քայքայվող թուրք, բուլղ և այլազգի ժողովուրդները: Հենվելով բնականոն զարգացում ապրած եվրոպական ժողովուրդների փորձի վրա, Ծերենցը համոզված էր, որ համառ պայքարը ֆեոդալական քայքայված երկրում կարող է կարգավորել շատ հարցեր, լուսավորության անունով իրականացնել տնտեսական ուժերի կազմակերպման և միավորման գործը՝ օրենքի ուժով մեղմացնելու համար գյուղացու ծանր վիճակը:

1867-ին Հռոմի պապը վերացնում է Հասունյան կուսակցության ներքին ինքնուրույնությունը՝ ցանկանալով վերջնականորեն ստիպել կաթոլիկ հայությանը կտրվելու աղգային իմքերից: Այս հողի վրա առաջացած պառակտումը կաթոլիկ մտավորականության մեջ ստեղծում է հակահասունյան շարժում, որը նպաստում է կաթոլիկյան շարժման թուլացմանը: 1874 թ. Բաֆֆին «Մշակում» Մեխիբդադե ստորագրությամբ

տպագրում է «Հասունյանը և յուր կուսակցութիւնը» հոդւածը, ուր պախարակում է Հասունյանի «ազգանկնդ» գործունեութիւնը, ցույց տալով, որ հակահասունյանների «ապստամբութիւնը մի համարձակ, միևնույն ժամանակ հակակրական բողոք էր՝ ընդդէմ Հռոմի քահանայապետի մի այգալիսի վարմունքի»⁵:

«Մշակը» և Արծրունին քարոզում էին այն միտքը, թե թող ամեն հայ դավանի այն կրօնը, որին համակրում է, բայց թող ազգությամբ շանջատվեն միմյանցից՝ կրօնի տարբերության պատճառով և կապված լինեն հայրենիքի հետ մայրենի լեզվի միջոցով: «Կրօնը, լեզուն և հայրենիքը» կարևոր դեր են կատարում մեր ազգի պահպանության համար, գրում է Արծրունին, բայց դա չի նշանակում, թե պետք է ֆետիշացնել կրօնը, անընդհատ կրկնելով, թե լուսավորչական եկեղեցին է ազգի հիմքը, թե լուսավորչական եկեղեցուց դուրս հայութիւն չկա: Դա վտանգավոր տեսակէտ է: Պետք է անընդհատ պրոպագանդել, թե մենք մի ազգի դավակներ ենք, բայց ունենք տարբեր եկեղեցիներ և դավանանք: Մեր ազգի փրկութիւնը մեր միության մեջ է:

Տարբեր հոդւածներում, տարբեր առիթներով շարունակելով մերկացնել Հասունյանի ազգադավ գործունեութիւնը՝ Մեքենցը. որ ամբողջ կյանքում իր անձի վրա կրեց նրա հալածանքների հետևանքները, 1870-ական թթ. այդ պայքարի մեջ հանդես է գալիս ավելի լայն և սկզբունքային քննադատությամբ՝ իր հոդւածների առանցքը դարձնելով պապականության սուր քննադատութիւնը:

«Առ արհիապատիւ և գերապայծառ տեր ֆրանգի առաքելական նվիրակ գահին Հռովմա ի Կ. Պոլիս» հոդւածում Մեքենցը գրում է, որ հայերը դարերով պայքար են մղել իրենց «առաքելական հիմքերը» պահպանելու համար՝ «այլակրօնից դեմ», և այժմ ահա կաթոլիկ եկեղեցու քահանայապետը, այսինքն Պապը, որոշել է վերացնել հայ եկեղեցին՝ «հերետիկոս, հերձվածող» հորջորջումները շռայլելով:

Կաթոլիկութիւնը, նկատում է Մեքենցը, ծնել է թշվառութիւն, պառակտում: «Երբ աթոռ մը սուտերդումնության, ապա-

կանության, օրինազանցության, կաշառակերության, հափըշ-տակության, կեղծավորության վրա հիմնյալ կըլլայ, յուր ամե-նեն մեծ ղենքը բարուց ապականությունն և արդարության և զատաստանաց խարդախվիլը կըլլա»⁶:

Ծերենցը հեգնում է կաթոլիկ եպիսկոպոսի ճառը, որով նա փորձում էր սիրաշահել ֆրանսիացիներին, որոնք «որդնո-տեցին ու փտեցին» Նապոլեոն Գ-ի բռնիշխանության ներքո, կամ թե իտալացիներին՝ որ երկար տանջվեցին Պապի իշխա-նության կամայականությունների պատճառով: Ժիշտ բնորո-շելով Վատիկանի բացասական դերը եվրոպական կաթոլիկ բլետությունների վարած քաղաքականության մեջ՝ ճառախոսը, ինչպես նկատում է հայ քննադատը, հաշվի չէր առնում նաև հեղափոխությունից հետո մոլեգնող ֆրանսիական բուրժուա-կան ռեակցիան, որը, դաշինք կնքած ֆեոդալական ուժերի հետ, ծնեց Նապոլեոն III-ին:

Հասունյանի գործունեությունը Հայաստանի արևմտյան հատվածում, վերջին հաշվով շահավետ էր նաև թուրքական պետությանը, որի կարծիքով հայերի դավանափոխությունը վերջնականորեն կազատեր երկիրը ազգային-ազատագրական շարժումների վտանգից: «Քառասուն տարի» հոդվածում Ծե-րենցը Հասունյանի գործունեությունը իրավամբ դիտում է իբ-րև Հռոմի պապի «Արևելյան քաղաքականության» բնորոշ օրի-նակներից մեկը: «...մի՞թե,—գրում է նա,—աշխարհիս ան-կրոնության և անբարոյականության պատճառները Վոլթեր, Ռուսո և ասոնց նմաններն են եղեր: Միթե չի տեսնվեցա՞վ ժողովրդյան մը ալեկոծություն՝ ամոթահար տեսրակի մը երևալուն վրա, ուր հեղինակը կպահվտվեր և ժողովրդի մատ-նանիշ զՀասուն կցցներ: Այդ տեսրակը, որ քրիստոնեկան բոլոր բարոյականն ոտնկոխ կընէր, ժողովրդին ձեռքը հարմար զենք մը կարծվեցավ ազատելու համար իր բռնավորեն...»⁷:

Ինչպես տեսանք, Ծերենցը հայ հրապարակագրության մեջ մտավ արևմտահայ ժողովրդի ազգային-քաղաքական

զարթոնքի առաջին իսկ շրջանում, երբ նոր միայն համա-
խմբվող՝ Կ. Պոլսի անդրանիկ լուսավորիչների առջև պահանջ
էր դրվում չեղոքացնելու ֆեոդալական հետադիմական ուժերի
ներգործությունն ազգային առաջընթացն ապահովող լուսա-
վորական շարժման վրա: Նա առաջիններից էր, որ իր ուշա-
դրությունը կենտրոնացրեց Հասունյանի ազգապառակտիչ
գործունեության վրա և պայքարի դուրս եկավ՝ ամրապնդելու
հայությունն զարգացման համազգային սկզբունքները: Այդ հե-
տևողական պայքարի փայլուն էջերից մեկը եղավ «Բարեգոր-
ծական ընկերության» հետ կապված Ծերենցի ակտիվ գործու-
նեությունը:

Մենք ծանոթացանք նաև Ծերենցի հրապարակախոսական
գործունեության երկրորդ, ոչ պակաս կարևոր շրջանին: Թուր-
քիայի առաջին մինիստրների Ալի և Մահմուդ փաշաների «մե-
տենիքյան» քաղաքականության պայմաններում նա կարո-
ղացավ ձաղկել կղերաամիրայական դասի հետ դաշնակցած
հայ սահմանադրական ղեկավար էֆենդիների ապազգայնաց-
ված և ապաքաղաքականացված գործունեությունը, պաշտպա-
նել ժողովրդի շահերին հետամուտ խրիմյան հայրիկի դատը,
միաժամանակ պահպանելով Ռուսիյանի և Գր. Ստյանի լու-
սավորական պատրանքները՝ «արդարության և ճշմարտու-
թյան» մասին:

Զհրաժարվելով այդ լուսավորական պատրանքներից,
Ծերենցը հայերի նկատմամբ թուրքական իշխանության և
ևվրոպական պետությունների վարած քաղաքականության վե-
րաբերյալ մշակեց որոշ ռեալիստական հայացք: Հաղթահա-
րելով հակասությունները և լիբերալ տատանումները՝ նա կա-
րողացավ քաղաքական նոր իրադրությունների ազդեցության
տակ 1876 թ. վերջին հանգել հայկական հարցի ավելի ար-
մատական լուծումների:

«Մասիսում» տպագրած «Արևելից քրիստոնյայք» վեր-
նագրով հոգվածում, վրդովված թուրք և ևվրոպական շրջան-
ներում հաճախ արտահայտվող այն կարծիքից, թե հայերը եր-
բեք չեն կարող միավորվել, բանի որ դավանափոխությունը
Վկործանի նրանց, Ծերենցը գրում էր. «Քաղաքական անցյալըն

Եվրոպիոյ, որ մեզի ուղղակի իր բուն և ճշմարիտ գիտնոց լույս-
ւը շատ քիչ անգամ տված է, մեզի առատապէս դրկած է յուր
ամեն տեսակ կրօնական, կրօնամոլ քարոզիչները, որոնց բուն
մեծ ջանքն եղած է մեզմէ հեռացնել ևղբայրութեան հոգին,
ինչչափ որ հաջողել են: Ինչչափ որ քիչ են Դյուբուայի պէս
խորհրդածող անձինք, որ Հայաստանի ավերակաց վրա, Արա-
րատաց ստորոտը Նոյան գերեզմանին վրա կանգնած հա- ադ-
գին պակասութեաններուն խիստ նկարագիր մը տալեն վերջը,
արեւելեան երկու հին երեւելի աղգաց, հրեից և հունաց օրի-
նականերն ալ ավելցնելով, անկանոն և բուռն վիճակների պատ-
ճառ կդառնա և կհոսա կառավարութեանց կանոնավորութենէն
ժողովրդոց բարոյական բարձրութեանը»⁸: Եվ իրօք, դա ճիշտ
է, շարունակում է Ծերենցը, վերջին 40 տարիների ընթացքում
փոխվել են ժողովրդի սովորութեանները, բայց ճիշտ է նաև
այն, նկատում է այնուհետև հողվածագիրը, որ դրսից եկող
մարդիկ, Արեւելքում գիտութեան և քաղաքակրթութեան տարա-
ծողներ լինելու փոխարեն՝ «անիրավութեան, կրօնամոլութեան
և հափշտակութեան» պաշտպաններն են դառնում:

Եվրոպական մեծ պետութեանները խոսում են ազգերի
սաշտպանութեան անունից, համոզում են, թէ լուսավորու-
թեան տարածելու առաքելութեան ունեն, մինչդեռ իրակա-
նում, ինչպէս ցույց է տրվում հողվածում՝ լուսավորութեան
փոխարեն բռնանում են այդ ազգերի կամքի վրա: Կաթոլիկա-
կան կրօնի տարածումն ավելի է վատթարացնում ժողովուրդ-
ների վիճակը. «Տեսեք,—գրում է Ծերենցը,—Ֆրանսա, Իտա-
լիա, Սպանիա, Մեքսիկոյի և Հարավային Ամերիկո հասարա-
կապետութեանքը, ինչպէս հիմանդ են, ո՛չ իշխել գիտեն, ո՛չ
հնազանդիլ, ո՛չ կրօնք գիտեն և ո՛չ բարոյական, օրենք և հե-
ղինակութեանք ծաղր եղած են իրենց համար: Այսօր թագա-
վորներ և նախագահներ կընտրեն և կպաշտեն, վաղը կկոտրեն
և կնախատեն, դատավորներ ունին ու քահանաներ, որոնց
սրբարութեանն ու առաքինութեանը կհռչակեն, վերջը դահիճ-
ներու և ավաղակներու հովասար դանոնք կվատահամբավեն,
ամեն ձեւ կառավարութեան սահմանադրութեան կփոխեն և

կիփփօիսեն և դարձյալ ո՛չ իրենք հանգիստ կգտնեն և ո՛չ աշխարհիս խաղաղություն կբերեն»⁹:

Ծերենցին դուր չեն գալիս ո՛չ ֆեոդալական միապետության, ո՛չ էլ հանրապետության պետական ձևերը: Նա կաթողիկայոված երկրներից գերադասում է Անգլիայի, Գերմանիայի, ռուսական միապետության ձևերն այնքանով, որքանով այդ երկրներում տիրապետող դավանանքը կաթողիկական է: Եթե չլինե՞ր Վատիկանի գերիշխանությունը, հայտարարում է Ծերենցը, ապա ֆրանսիական ժողովուրդը չէր տառապի Նապոլեոնի կրնկի տակ և Փարիզյան կոմունայի ժամանակ դուրս չէր գա իր շահերը արյան`գնով սլաշտպանելու: Իդեալականացնելով ոչ պապական երկրների պետական սիստեմները, Ծերենցը կաթողիկական երկրների ժողովրդական շարժումները բացատրում է գլխավորապես պապական բռնապետությամբ՝ որոշակիորեն անտեսելով դրանց սոցիալական շարժառիթները:

Ծերենցի կարծիքով անհավասարությունը և դրանից ծագող հակասությունները ոչ թե հասարակության մեջ տիրող դասային տարբերությունների հետևանք են, այլ բխում են մարդկանց խմբերի միջև եղած դաստիարակության և կրթության տարբերություններից, իսկ դա հնարավոր է և պետք է վերացնել միմիայն բարոյական վերափոխման ճանապարհով: «Զէ, մարդս հավասար ըլլալու համար չէ ստեղծված և ոչ երբեք պիտի կարենա ըլլալ,—գրում է նա նույն տեղում,—աշխարհքը ստեղծող աջը դաստիարակություն մը դրած է ամեն բանի մեջ և ղեռ հաղարավոր տարիներ պետք են, որ ժողովրդոց դաստիարակությունը հասնի հոն, որ կարենա ճանչնալ և որոշել հանճարը և առաքինությունը և հանձնել ինքըդիները անոր»:

Մինչև վերջ Ծերենցը մնում է այն կարծիքին, թե բոլոր ազգերի նյութական և բարոյական թշվառության, կորստյան պատճառը միմիայն տգիտությունն է: Նրա լուսավորական ծրագրի հիմքում ընկած է բանական սկզբունքներով ազգային դաստիարակության խնդիրը: «Ով որ ազգային դաստիարակության համար կաշխատի, փրկության համար կաշխատի,

ով որ ուսմանց ծավալման կաշխատի, աղքատութենն և գերութենն ազատելու համար կաշխատի, ով որ գիտությանց ընդհանրության կաշխատի, ժողովրդյան բարոյականին համար կաշխատի և անոնք կրնան ըլլալ երկրի մը երջանկության, հարստության և անդորրության աղբյուրները»:

Մեր ազգը, գրում է Ծերենցը, որ հին և մեծ ազգի մնացորդ է, որի ծագումը և երիտասարդությունը մշուշների մեջ, պատմության ջահը հազիվ է լուսավորում, և այժմ ազգերի հնավանդ պահարանի մեջ պատվական տեղ է ուղում գրավել, ցանկանում է, որ իր զավակները ներսում և դրսում հարստահարություններից ազատ կյանք ունենան:

Այդ տեսանկյունից դիտելով՝ իր և իր համախոհ բարեկամների կողմից բազմիցս քննադատված սահմանադրական ժողովները Ծերենցն այնուհանդերձ համարում է ազգային առաջադիմության կարևոր գործոն, թեպետ նկատում է նաև, որ այդ «երեսփոխան ժողովները» քիչ բան են անում այդ ուղղությամբ:

Ձանաղան օրինակներ բերելով պատմության փորձից, Ծերենցը վերջում գրում է. «Դիտողության արժանի է, որ ազգ մը երկայն տարիներ սակավաթիվ անձանց հաճոյից և բըռնության ծառայել է, երբ օր մը ինքզինքն կառավարել կսկսի, ալ ավելին վիճակին ծանրությունը և երկյուղը ղինքը անդի ծայրը կնետն և ամեն բան յուր անմիջական ձեռք կուզեն կարգադրի...»¹⁰:

3

Արևմտահայության կյանքում դրական երևույթ համարելով Սահմանադրության ստեղծումը և մտավորականության ձգտումը՝ նրա միջոցով նպաստելու հասարակության ներքին կարգի և ազգի բարոյական ուժի ամրապնդման գիտակցությանը, Ծերենցը նկատում է, թե՝ «որքան էլ կամենա ժողովուրդը անտեսել, բայց դարձյալ մեծ առաջադիմություն կա ժողովրդյան գաղափարաց մեջ և հոն է մխիթարությունը»:

Բայց ամիրաներին փոխարինելու եկած է ֆեենդիները իրենց

անդորութեամբ չկարողացան նպաստել ժողովրդի բարոյական ուժերի միավորմանը: Ծերենցն ըմբռնում է այդ միավորման էութունը հասարակական նոր ուժերի առաջադիմութեան մեջ, բայց չի տեսնում այն պայմանները, որոնց մեջ պետք է բարգաւաճեին այդ հասարակական ուժերը՝ հիմք դառնալով ազգային կյանքի առաջընթացին: «Ո՞վ կրնար ուրանալ ազգ մը, որ յուր օրենքներն կաշկանդալ և անոնց գերի, ընտանեկան ոգին յուր ամեն վիճակին մեջ պահելով, աշխատութեամբ յուր մտաց զորութիւնը սրելով, աթոռաց պատմանդան մը կշինէ հոն՝ ուր հալածանք և նախանձ կղզանան իրեն օդ և ջուր և հող և ինք կհաջողի, ինչպես միշտ պիտի հաջողի իբրև բարոյական զորութիւն նյութական զորութեանց դեմ»¹¹:

1874 թ. «Մասիսում», «Ներկայիս վրա խորհրդածութիւնը» վերնագրով հոդվածաշարում, նորից անդրադառնալով Հաստունյանին, Ծերենցը շոշափում է հասարակութեան մեջ անհատի բարոյական ու մարդկային հատկանիշների հիմնական գծերի մշակման անհրաժեշտութեան խնդիրը. «Մարդկային ընկերութեան մեջ ամենակարևորը մարդն է: Մարդ, որ ուսմունքով և դաստիարակութեամբ, հանճարով, գիրքով, ծննդությամբ և հարստութեամբ կտարբերվի իր նմաններէն և որ իր համանմանները կառավարելու համար ստեղծված է: Այս մտածողութիւնը թեպէտ բոլոր ժողովրդեայն կամ ռամկավարական զորութեանց հակառակ ալ կերևա, բայց ճշմարտութեան է»:

Եթէ անհատը օժտված է ազգային շահերի և իր ժողովրդի կյանքի բարվոքման և առաջադիմութեան բարձր գագաթամէնքով, դիտում է Ծերենցը, ապա կարող է աչքի ընկնել իր մարդկային բարձր հատկանիշներով: «Անհրաժեշտ է, որ կարող մարդ մը ազգին մեջ գլուխ կանգնի, ժողովի ինչ որ ազգի մեջ մտավորական, բարոյական և դրամական զորութիւն կա, հաստատե հզոր հիման վրա: Այս է ազգային կենսունակութեան մասը և եթէ որ այդ անձը ելլի՝ ազգային դափնին իր ճակտին համար է»:

Ծերենցի խորհրդածութիւններն այդօրինակ հարցերի շուրջը շարունակվում են 1876—1878 թթ. «Արևելեան մամու-

լում» ապագրված հեղվածներում և խորանում պատմական վեպերում:

Գլուխ վեցերորդ

1. ԾԵՐԵՆՑ ՄԱՆԿԱՎԱՐԺԸ: 2. ԿԻՊՐՈՍՈՒՄ: 3. Վ. ՀՅՈՒԳՈՅԻ
«ՎԻԼՅԱՄ ՇԵՔՍՊԻՐ» ԱՇԽԱՏՈՒԹՅԱՆ ՄԻ ՀԱՏՎԱԾԻ
ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆԸ: 4. «ԹՈՐՈՍ ԼԵՎՈՆԻ» ՎԵՊԻ ՀՂԱՅՈՒՄԸ

1

1874 թ. մեռնում է Ծերենցի կինը, թողնելով 14 տարեկան Թագուկին: Տիգրան Արփիարյանը հիշում է. «Հայրը՝ կորաբամակ ու տխուր՝ իր խիստ դիմագծերուն տակ մանկական գորովմբ պահելով միշտ զավկին համար, անբաժան էր Թագուհիեն՝ այն դանգրահեր սիրունիկ փոքրիկ աղջիկեն, զոր թեև առած շրջագայության կելլեր: Հաճախ, գրեթե ամեն իրիկուն կհանդիպեինք անոնց ու տեսակ մը պատկառանքով կդիտեինք այդ ձերուհին ու մանուկը, ծնողական ու յորդական սիրո այդ մարմնավորությունը»¹: Այդ տարիներին Ծերենցը անկասկած Հասունյանի ջանքերով շարունակում էր հսկողության տակ մնալ: Հետագայում այդ առթիվ նա գրում է իր հուշերում. «Բայց գոնե իմ տերության ծառայությանց մեջ հաջող էի, հոն համարմունք կառնվեին վրաս, դժվարին խնդիրներ կը հանձնելվեին... բայց դրամական վարձատրությունից երբ կհասներ խնդիրը ես միշտ հաղիվ ապրելու ռոճիկովս կմնայի: Մինչդեռ ինձմե տգետներ և անիրավներ կտեսնեի, որ կբայլեին դեպ առաջ, վերջապես համոզվեցա, թե ճակատագիր մը յիս որ դրոշմյալ էր, դա մի օրապահիկ է... որ պիտի ունենաս ծայրը ծայրին»²:

Հուշերից պարզվում է, որ մինչև 1871 թվականը նրա ճակատագրին խառնվել է նույնիսկ Ալի փաշան³: Վերջինիս մահից հետո նա մի կերպ իրեն գտավ, բայց հալածանքները շարունակվեցին:

Ենթարկվելով բանտարկությանների նա կամ հանվել է պաշտոնից, կամ ինքն է հեռացել: Մի նոր տեղ տեղափոխվելու համար ստիպված է եղել միշտ դիմել Գր. Օտյանի միջնորդությանը: Բազուկի թողած հուշերի պատառիկներից մեկում կա մի աչտախիսի գրանցում: 1875-ի ամռանը աղջիկը գտնվում էր բուժարաններից մեկում: Հայրը այցելում է նրան. աղջիկը հարցնում է հորը, թե արդյոք «ենթրիքներ չկա՞ն...»: «Ենթրիքներ» կալին իհարկե:

Այդ իսկ շրջանում, Բերայի հիվանդանոցում կաթուղիկ մաշրապետները, տեղեկանալով Մերենցի հակակաթուղիկատն պալքարի մասին, հրաժարվում են ենթարկվել նրան: Գործը բարդանում է, հիվանդանոցի տնօրենը ստիպված է լինում աղատել նրան իր պաշտոնից. «Իմ գործիս համար եղած բանտարկության կողմանե, որ իրենց ամեն ջանք դործ կդնենին, դիտե՛նա՛ն, համար հիվանդանոցեն, որուն սոճիկը բարձր լինելով, ինձ համար շատ դժուարացիչ էր և որ եթե խաղաղության վայելել թողնված լինեիր նախախնամութենեն, ես երջանիկ մարդ է՛ր ինքզինքս կրնայի համարել: Բայց աստված ալլապես էր սահմանած»⁴:

Նորից Գր. Օտյանի միջնորդությամբ 1875 թ. աշնանը Մերենցը նշանակվում է Միջագյուղի (Օրթագյուղ) լուսավորչյան վարժարանի տնօրեն և ազգային պատմության ու գրականության ուսուցիչ: Մինչև նույն տարվա վերջը նա մնում է այդ դպրոցի տնօրենի պաշտոնում: Շուտով նրան հայտնի է դառնում, որ Կիպրոսի Նիկողիա քաղաքի հիվանդանոցում բժշկի թափուր տեղ կա, և կյանքը համեմատաբար էժան է: Արդեն ձանձրացած իր նյութական անհաստատ վիճակից, անբնդհատ հետապնդումներից՝ Մերենցը որոշում է մեկնել Կիպրոս: Գր. Օտյանը նորից առաջարկում է իր օգնությունը, բայց նա մերժում է, որոշում է թողնել Կ. Պոլիսը՝ հեռավոր կղզում սուժամոտակ հանգիստ գտնելու համար⁵:

Գր. Զոհրապը 1893 թ. «Մասիսում» տպագրում է մի հուշ՝ իր դպրոցական տարիների մասին: 1874 թ. Թարգմանչափ վարժարանը նյութական ծանր վիճակի պատճառով ժամանակավորապես փակվում է, երևիաներին, նրանց հետ և Զոհրա-

պին, ստիպված փոխադրում են կաթոլիկյան վարժարանը, որի տնօրենն էր նշանակված Մերենցը: Հետագայում անդրադառնալով իր դպրոցական ուսումնառության շրջանին՝ Զոհրապը հիշում է լուսավորչյան վարժարանի տնօրենին. «Տնօրենը միջահասակ մեկն էր, հաստաբուն ու կայծակնահար ծառի մը կոճղին տպավորություն կթողուր զինքը տեսնողին վրա: Արեւակեզ ու թխաթույր դեմքին խստությանը տակ անուշությունը կը պահվտեր, հիշեցնելով այն ամպամած երկինքը, որ ծիրանի գոտի մը կը պարզե աչքիդ՝ շսպասված վայրկյանի մեջ:

Իր ալեորած մաղերը կերկարեին, կծիփային ուսին վրա, բանաստեղծի մը, արվեստագետի մը հողմածածան մաղերուն պես ու ճերմկած մորուքն կուրծքին վրա: Ձայնը խորունկն եկող արձագանքի մը պես թավ ու տրտում շեշտ մը ունէր: Այս տնօրենը դոքտոր Հովսեփ Շիշմանյանն էր: Մենք նորեկներս իր դպրոցին մեջ ամենեն ավելի իր հոգածության առարկա եղանք: Հայերեն լեզուն կսիրեր ու բոլոր ջանքին հակառակ՝ անոր արժանավոր տեղ չէր կրցած տալ վարժարանին մեջ և ահա իրենց լեզուն սիրող ու գիտցող պատանիներու ամբողջ խումբ մը մեկեն կուգար իր քովը, իր ձեռքին տակ»⁶:

Յուշց տալու համար կաթոլիկ երեխաների կտրվածությունը հայրենիքից, Զոհրապը պատմում է Մերենցի հետ հայոց լեզվի դասին տեղի ունեցած մի դեպք: «Կհիշեմ օր մը Նդիշեի մեկ հատվածը կարդացնելով հոռմեական աշակերտի մը հարցուց անոր թե աշխարհիս ո՞ր մասին մեջ կգտնվեր «ի հեռատանէ» կոչված երկիրը (Նդիշեի այդ հատվածի մեջ խոսքը հայոց երկրի մասին է — Ռ. Ն): Հեռատա՞ն... աշակերտը կմտածեր շփոթած իր քաղաքական աշխարհագրության բոլոր հիշատակներն ամփոփելով Պելուճիստան, Աղվանստան, Հընդեկաստան, Պարսկաստան, Հեռատան... ու համարձակությամբ դարձավ տնօրենին... Ասիոյ մեջ...: Ահագին բրբիջով մը ողջունեցինք այս ապուշ պատասխանը: Սրահը ամբողջովին թնդաց մեր քահ-քահեն. թարգմանչաց վարժարանը կծիծաղեր իր կորուսած աշակերտներեն վրեժը լուծելով» (նույն տեղում):

Ինչպես նախորդ տարիներին, այնպես էլ այժմ Մերենցը, առանց դավանանքի խտրության, նույն վարժարանում աշխա-

տում էր մանուկների մեջ սերմանել լուսավորության համազգային զգացումներ ու գաղափարներ: Իր աշակերտների մեջ նա դաստիարակում էր ազգային ինքնաճանաչում, արթնացնում սեր հայրենի պատմիչների թողած ժառանգության նկատմամբ: Ամեն մի հասարակական գործչի, հրապարակախոսի, ուսուցչի դերագույն նպատակը պետք է լինի վսեմ զգացմունքներ արթնացնել երեխայի, ինչպես նաև ազգի ամեն մի անդամի մեջ: Ուսուցիչը, հասարակական գործիչը ազգին ժառանգելու համար պետք է պատրաստ լինի հոգարությանը կրել բոլոր զրկանքները: Ազգային ճիշտ դաստիարակությունը Մերենցը կապում էր ուսումնական ճիշտ ծրագրի հետ:

Ինչպես հրապարակախոսական հոգվածներում, այնպես էլ մանկավարժական գործունեության ընթացքում Մերենցը մտահոգված է եղել ազգային դպրոցի մանկավարժական հիմունքների վերափոխման գործով: Հայրենական կրթության հիմքում նա դնում է մայրենի լեզվի ուսուցման անհրաժեշտությունը:

Երկար տարիների մանկավարժական գործունեությունը խորապես նպաստավոր է եղել Մերենցի համար նաև հրապարակախոսության մեջ, օգնել է նրան միշտ կենդանի պահելու կապը երիտասարդ սերնդի հետ: Հաղորդելով նրանց իր մըտքերը, հայրենասեր գործիչը միաժամանակ խթան է ստանում նրանցից՝ միշտ թարմ գաղափարներով տոգորվելու և առաջ տանելու իր հայրենանվեր գործը:

2

1571 թ. թուրքերը գրավում են Կիպրոս կղզին ու մինչև XIX դարի վերջերը ծառայեցնում իբրև աքսորավայր: Մերենցի առաջին կենսագիր Թ. Զաքարյանը գրել է, որ նա Կիպրոս է գնացել կառավարության հրամանով: Այս վարկածը երկաք ժամանակ մնացել է իբրև նրա աքսորը հաստատող փաստ⁷:

1876 թ. հունվարի 8-ին Մերենցն աղջկա հետ դուրս է գալիս Պոլսից դեպի Զմյուռնիա, իջևանում է Մամուրյանի տանը: Զերմ ընդունելությունը սաստիկ հուզում է հորը և աղջկան:

Հունվարի 12-ին նրանք ճանապարհովում են Նիկոլիա: Մարտի վերջին Մերենցը որոշ գործեր կարգավորելու համար վերադառնում է Պոլիս, այնուհետև հաստատվում կղզում որպես Նիկոլիայի հիվանդանոցի տնօրեն: Աշխատանքը լավ էր, դրամը բավարարում էր նրանց, մնում էր հարմարվել նոր միջավայրին, սովորել մեկուսացված կյանքին: Առաջին ամիսներին նա աղջկա հետ ծանոթանում է Կիպրոսի տեսարժան վայրերին, հիանում բնության գեղեցկություններով: Մի թուղցիկ ակնարկում նա ցավով նշում է, որ՝ «Տաճկական պատուհասն անցել էր վրայեն և խանձել էր կղզին, ինչպես ամեն տեղ: Ո՛ր էր այդ պատմության դրախտը, ուր կանաչ գեղեցկությունները մարդկանց վայելչության...»⁸:

Բայց կիպրոսյան խաղաղությունը, ինչպես հետագայում նկատում է Նրվ. Օտյանը, պետք է որոշ չափով նպաստեր Մերենցի՝ անհանգիստ կյանքից քայքայված առողջության վերականգնմանը. «...իրեն պես լգայուն, գործվալից ու գրասեր մարդու մը համար, ի՞նչ ավելի մեծ երջանկություն, քան այդպես պայծառ երկիրքի մը տակ քաշված անձնատուր ըլլալ գրականության»⁹: Մերենցի՝ Կիպրոսում եղած ժամանակ Նիկոլիայում ապրում էին այլազգիներ և ընդամենը 150 հայ: Առաջին ամիսներին նա ծանոթանում է քաղաքի հայտնի ընտանիքներին, լինում բանտում, խոստում է բանտարկյալներին և աքսորականների հետ, տեսնում է հայտնի ապստամբ շեյխ Ահմեդին, գրի առնում դրվագներ նրա կյանքից՝ այն հետագայում շարագրելու ակնկալությամբ:

Շոգենալը 15 օրը մեկ անգամ մոտենում էր Նիկոլիայի նավահանգստին, առաքում թերթեր, նամակներ: 15-ամյա թագուկն իր վրա է վերցնում նամակների առաքման գործը: Մերենցի բարեկամներին հաղորդակից անելով նրա մտքերին ու խորհրդածություններին՝ աղջիկն իր հերթին ակտիվ մասնակցություն է ունենում քաղաքական-հասարակական կյանքին, հասունանալով իբրև քաղաքացի և մտածող: «Թագուկ ինքն ալ զրադեռ մը եղած է,—գրում էր նրա մասին Նրվ. Օտյանը,—և դուքի անգիտակից աշխատակիցն իր հոր. նուրբ ճաշակ և արվեստագետի երևակայություն կերևան իր հող-

Հիմններուն և «Գարնան մի Ասուպ» անուն իր մեկ գեղեցիկ վիպակին մեջ»¹⁰։

Մերենցի արխիվի մնացորդների մեջ առանձին տեղ են գրավում «Մենիկ» կեղծանունով Թագուկի մի քանի բանաստեղծութիւնները, նրա արձակ խոհերը։ Կիպրոսյան շրջանում գրած պատառիկների, պատանեկան վերապրումների, տխրութեան ու թախծի մեջ երևում են Համարթինի, Հյուզոյի ազգացոյցի հետքերը։

Մերենցն իր հուշերում նշում է, որ Թագուկը Համարթինից, Ալֆրեդ դ՝ Մյուսեից, Հյուզոյից բացի սիրում էր կարգալ նաև Խուսո, Դյումա, Վ. Սկոտ, Շեքսպիր, ծանոթ էր Միշլին և Քրինկին։ Կիպրոսյան առանձնութեան ժամերին նրանք խոսում և խորհրդածում էին այդ երեւելի անհատների արտահայտած մտքերի շուրջը և ամեն անգամ գտնում համաձայնութեան ընդհանուր կետեր։ Աղջիկը սիրում էր Մյուսեից հատվածներ արտագրել և մի անգամ էլ Մյուսեից թարգմանած տողերի հետ նա հորն է ուղղում հետեւյալը.

Գրե զու զեռ, զրե զու միշտ,
Սրտիդ անշեջ վառարանեն
Քանի մը կայծ տուր քո ազգիդ,
Զնա՝ այդ կայծերն աի արծարծեն.

Գրե, թեպետ քեզ քարկոծեն
Քո թշնամիք և... բարեկամք,
Անոնց համար պատրաստի չե՞ն
Քո ժպիտը և արհամար հանք...

Թող օրինակ՝ իրենց առնուն
Քու խիստ ոճը՝ պարզ կորովի
Եվ թող տեսնեն թե ներշնչուներ
Պետք է սրտն միայն բոխի...

Թագուկն իր մեկնութեան զգացումների հետ միաժամանակ, հոր խորհրդածութիւններին արձագանքելիս, հանդես է

բերում մտքի խորաթափանցություն, զգաստ հայացք տար-
բեր հարցերի վերաբերյալ:

1876 թ. հունիսին Տյուսաբին ուղղած մի նամակում Թա-
գուկը գրում է. «Մի կարծեք թե անտեղյակ եմք քաղաքակա-
նացյալ աշխարհից: Օրագիր կառնենք, կիմանանք, որ հեղա-
փոխություն կընեք առանց արյուն թափելու»¹²: Նա ակնար-
կում էր սուլթան Աբդուլ Ազիզի գահազուրկ լինելը և Մուրադ
V-ի շրջանում Միհրդատ փաշայի՝ Գր. Օտյանի հետ կազմած
Օսմանյան սահմանադրության քննարկումը: Այնուհետև հա-
սած նոր լուրերը պարզում են պալատում տեղի ունեցած նոր-
իրադարձությունները, որոնք ավարտվում են օգոստոսի 31-ին՝
Աբդուլ Համիդ II-ի գահ բարձրանալով:

Աստիճան չկա, որ այդ ամիսներին Կիպրոսում գտնվող
Ծերենցը մեծ հույսով ու հավատով էր սպասում այդ Սահմա-
նադրության հաստատմանը՝ ունենալով այն համոզումը, թե
վերջապես Թուրքիայում կհաստատվեն օրենքներ, որոնք կլու-
ծեն քաղաքական ծանր հակասությունները, կնպաստեն երկրի
կյանքի բարգավաճմանը: Եվրոպական ազատամտական հո-
վերով տարված Ահմեդ էֆենդին ելույթներ էր ունենում պառ-
լամենտում, պաշտպանում նորաստեղծ Սահմանադրությունը:

Պոլսի թուրքահայ թերթերից մեկը հաղորդում է, թե Կով-
կասում ապստամբություն է ծագել ռուսների դեմ, ստեղծվել
են առասպելներ, թե Կովկասի հայերը 80 000 մարդ են հանել
ռուսների դեմ, թե փոխարքա մեծ իշխան Միխայիլը թագա-
վոր է հայտարարվել Կովկասում, հայոց կաթողիկոսը բան-
տարկված է և այլն: Թագուկը օգոստոսին գրում է իր բարե-
կամուհիներից Հերիգա Եվանդուլյանին. «Քաղաքականին մա-
սին սխալ լուրեր ելեր են ի Պոլիս և մանավանդ ազգային ան-
տեղի լուրն գրողները սրիկա, բայց հավատացողներն ալ քիչ
մը գարմանալի: Մի՞թե կարելի է, որ Ռուսիոյ կառավարու-
թյունը այնչափ impolitiquement բան մը ըներ այն միջոցին, երբ
ինչպես կտեսնենք խռովությանց ժամանակ մ'է, իսկ Կովկաս
հայոց հեղափոխությունը նույնպես անհավատալի, որովհետև
Միքայել դուքսը ռուս մը և ոչ սովորական ռուսաստանցի,
դուքս մը, այլ նույնիսկ կայսեր եղբայրը՝ կրնա՞ր հայոց

առաջադրութեան գլուխ ըլլալ, մանավանդ երբ ինք ճամփորդութիւն կընեն... Աս ալ չէին գիտեր Պոլիս, թե որեւէ մեկը, նույնիսկ երբ դուրս է, չկրնար միանգամայն երկու տեղ գտնել»¹³։ Աղջկա նամակում արտահայտւած՝ Մերենցի չեղաբերմունքն այս լուրի առթիւ ցույց է տալիս, որ նա դեռ այդ լուրերը չ'ենթադրած՝ համոզւած էր նրանց սուտ լինելուն։

Մինչև Կիպրոս մեկնելը Մերենցը նորից անգրադառնում է արևմտահայութեան տնտեսական-քաղաքական անտանկի վիճակին։ «Ով որ մշեցի հայուն թշվառ վիճակը կուզէ տեսնել, թող երթա ոչ ի Մուշ, շատ հեռու երկիր և ճամփան վտանգաւոր,—գրում է նա 1876 թ. «Արևելյան մամուլում» տպագրած թղթակցութեան մեջ,—այլ հոս Պոլիս Գասըմ փաշայի խան անվանյալ որջերը և տեսնէ մշեցի ընտանիք, այր, կին, տղայք, գրեթէ մեկը, գետնախշտի անկահ, անկարասի, չարածամ ի կռիւ աղքատութեան, անոթութեան և օդին խոտութեանց դեմ...»¹⁴։ Երկար տարիներ այս հարցով տառապող Մերենցը մեծ ցավ է համարում պանդխտութիւնը և արտագաղթը։ Նախորդ տարիների հոգւածներում, ինչպէս նաև «Բարեգործական ընկերութեան» ծրագրի մեջ, Մերենցն առաջարկում էր միջոցներ՝ այդ ահաւոր երևույթը կանխելու համար։ Այժմ նա առանձնապէս կանգ է առնում այն հարցի վրա, թե էթնե գաղթում են, ապա գոնէ օտար երկրի տակ ապրեն միավորւած, ինչպէս, օրինակ, Պարսկաստանի և Հնդկաստանի հայերը։

Մերենցի այս նոր դատողութիւնները ընկալւում են որպէս հայութեան արտագաղթի պաշտպանութիւն։ Իր անհամաձայնութիւնն է հայտնում և Մամուրյանը՝ հոգւածի տողատակում։ Բայց աղմուկը բարձրացնում է «Մշակը»։ Թերթի № 14-ում Արծրունին տպագրում է Թավրիզից Բաֆֆու ուղարկած «Դժատուն» վերնագրով հոգւածը՝ Մեկ... ստորագրութեամբ։ Բաֆֆին ներկայացնում է Մերենցի արտահայտած միտքն այնպէս, թե իբր նա ուղղակի պատրաստւում է ամբողջ արևմտահայութեանը հանել իր հայրենիքից։ Արծրունին իր հերթին «Մենք էլ հրեաներ ենք» հոգւածով անսիրելի է համարում թողնել մայրենի հողը, գնալ օտար երկրներ, Ով որ

սեփական երկրում ընդունակ չէ դիմանալու դժվարություններին, որպէս ազգ իրավունք շունի գոյություն ունենալու: Արծրունին ալեքսան մեծացրեց Մերենցի «հանցանքը», որ նույնիսկ վերջինիս մահից հետո «Թորոս Լեոնիի» և «Երկունքի» հեղինակի մասին փոխանակ մի դրվատական խոսք գրելու, անմիջապէս հիշեց, թե դա այն մարդն էր, որ, իբր, դրդում էր հայերին թողնել իրենց հայրենիքը, և որ այդ պատճառով էլ ուժեղացավ արտագաղթը Արևմտյան Հայաստանից:

Նման դնահատականով ամփոփել «Թորոս Լեոնիի» և «Երկունքի» հեղինակի կատարած պատմական դերը հայ իրականութեան մեջ, անարդարացի էր: Անդրադառնալով այդ օրերի իրադարձութիւններին՝ շինք մոռանում նաև, որ այն ժամանակ, երբ Արծրունին հանդես եկավ «Հայկական հարցը» «Արևելյան հարցի» հետ կապելու անհրաժեշտութեան կոչով, Մերենցին՝ իր համախոհ բարեկամների հետ դեռ հավատում էր Օսմանյան պետութեան տված խոստումներին: Իսկ 1876-ի երկրորդ կեսից Արծրունին հրապարակորեն կոչ արեց արևմրտահայերին բալկանյան ժողովուրդների նման պաշտպանել սեփական իրավունքը՝ ազատութիւն ձեռք բերելու համար: Դա այդ ժամանակ անբնական հնչեց, ինչպէս արևմտահայ թուրքոֆիլ, այնպէս էլ արևելահայ կղերական և բուրժուական հոսանքի ներկայացուցիչների մոտ: Շուտով հրապարակվեց Ներսէս պատրիարքի շրջաբերականը, որտեղ նա պաշտպանում էր «Բարեխնամ պետութեան» հոգատարութիւնը քրիստոնյաների հանդէպ: Ներսէսն այդ շրջաբերականը հրապարակում է այն ժամանակ, երբ բալկաններում դաժանորեն ճնշվում էր ժողովրդի արդար իրավունքը, երբ ավելի ու ավելի ծանրանում էին Թուրքիայի ներսում հայերի կյանքի պայմանները: Արծրունին այդ շրջաբերականը տպագրեց «Մշակի» № 23-ում մի առաջնորդողի հետ, արտահայտելով իր դարմանքն ու դաշրութիւնը:

Մերենցը 1876 թ. «Արևելյան մամուլի» № 10-ում հանդես եկավ մի հոդվածով, որտեղ պատասխանելով իր դեմ ուղղված «Մշակի» թղթակիցներին, միաժամանակ պաշտպանեց Ներսէսին և թուրքոֆիլ մտավորականների այն կարծիքը, թե Օս-

մանչան պետութիւնը բոլոր դեպքերում կ'ապշտապանի հայերին, ուստի պետք է հետեւել բաղկանների օրինակին: «Մենք կուզենք, որ ամեն հեղափոխութիւն վերեն գա և ոչ վարեն,— գրում էր նա իր հոգւածում,— վարեն եկած հեղափոխութիւնը (թե երբ հաջողին ալ) այնչափ աղետք՝ այնչափ թշուառութիւն ունին և այնչափ արյուններու առիթ կ'լինին և հայ ազգը այնքան քիչ արյուն ունի յուր երակներուն մէջ, որ իր կարողութենէն վեր է այդ մասին շռայլ լինիլ և ընդհակառակը վերեն եկած հեղափոխութիւնը միշտ հաստատ են և երբեք արյուն գիներով չեն լինիլ»¹⁵:

Բայց շատ ժամանակ պետք էէր, որ Սերենցը վճռական շրջադարձ կատարեր դեպի ավելի արմատական պայքարի գաղափարը: Այդ մտորումները նրա ուղեկում և հոգում խմորվում էին, բայց դեռ վերջնական ձևավորում չէին ստացել: Դա երևւում է «Արեւիկան մամուլում» նրա տպագրած մի հոգւածից «Ամբոխ և ոգիք» վերնագրով:

3

Կ. Պոլսից Կիպրոս գնալիս, Զմյուռնիայում տիկին Մ. - մուրջանը Թագուկին է տալիս Վ. Հյուգոյի «Վիլիամ Շեքսպիր» գիրքը: Նիկողիա հասնելուն պես Սերենցը հետաքրքրվում է այդ գրքով և հանձնարարում է աղջկան թարգմանիկ «Ամբոխ և ոգիք» հատվածը՝ հինգերորդ գլխից: Թարգմանութեան լույս է տեսնում «Արեւիկան մամուլի» 1876 թ. N 3 և 6-ում: Այդ թարգմանութեանը կցած փորձիկ առաջաբանում Սերենցը խորհուրդ է տալիս կապվել գրականութեանը՝ իրազեկ լինելու հասարակական հրատապ խնդիրներին: Նա դրական է համարում, որ հայ երիտասարդութիւնը հետաքրքրվում է Դյումա-յով, Ժ. Սանդով, կարդում է է.ժ. Սյու: Այդ ընթերցանութիւնը, նրա էարժիքով, ընդլայնում է երիտասարդութեան գաղափարական հետաքրքրութեան շրջանակները: Ահա գրանցից մեկն է Վիկտոր Հյուգոյն:

Սերենցին՝ մեր հիշատակած գրքից, ինչպես տեսնում ենք, հետաքրքրել է հատկապես «Ամբոխ և ոգիք» հատվածը

ժը¹⁶, որտեղ շոշափվում են ժողովրդի մտավոր և հոգեկան կյանքի հասունության հետ կապված հարցեր: Այստեղ հեղինակը առանձին նշանակություն է տալիս ժողովրդին հասկանալու, նրա հոգևոր արժանիքները բացահայտելու և գնահատելու հարցին: Հյուգոն անհրաժեշտ է համարում հատուկ աշխատանք կատարել ժողովրդի հետ՝ նրան բարձրացնելու, անխմացությունից հանելու և հասարակական գաղափարներով համակելու համար: Դրա համար անհրաժեշտ է ստեղծել ժողովուրդ, առաջադեմ ժողովուրդ, լույսով ողողված ժողովուրդ: Աշխատել ժողովրդի համար, նշանակում է հասկացնել նրան շարժում բարին, իր իրավունքը հաստատելու ճշմարտությունը: Հյուգոյի մտքերը համընկնում են Մերենցի խորհրդածություններին՝ ժողովրդի դաստիարակության և լուսավորության վերաբերյալ: Հյուգոն դրդում է նրան նորից անդրադառնալ ժողովրդի ազատության համար հանդես եկած ուսմունքներին, նորից վերհիշել ազատությունը ճնշող սիստեմները, նորից խորհել այն ուղիների մասին, որոնք նրա կարծիքով, կարող են լույս տալ ժողովրդին, ապահովել նրա ճշմարիտ ազատության գործը:

«Զխուժանը» ժողովուրդ դարձնել մեծ աշխատություն է: Մրան են նվիրած նրանց ջանքերը, ովքեր «ընկերահաշտական են»¹⁷, — գրում է Հյուգոն: Մերենցը տողատակում բերում է ֆրանսերեն բառը՝ socialiste: Հյուգոն խոստովանում է, որ ինքն այդ ուղղության ամենահին համակիրներից էր: 1828 թ. նա հրատարակել էր «Դատապարտված կյանքի վերջին օրը», 1834-ին՝ «Քլոդ կեր» գործերը: «Ընկերահաշտության դեմ» հալածանք շատ կա աղդեցություն ունեցող կարգերի կողմից. գրում է նա, «Պետք չէ մոռանալ թե ճշմարիտ ընկերահաշտության նպատակն է՝ ղամբոխը բարձրացնել իր քաղաքական արժանավորության և յուր գլխավոր զբաղումն է բարոյական և մտավոր զարգացումն»: Չմոռանանք, ասում է Հյուգոն, որ ճշմարիտ սոցիալիզմի նպատակն է բարձրացնել ժողովրդական մասսաներին քաղաքացիական արժանապատվության աստիճանին, հետևաբար առաջին խնդիր է նրանց բարոյական և ինտելեկտուալ զարգացումը: Սոցիալական հարցն այսօր

ավելի քան երբեք պահանջում է շրջվել մարդկային արժանապատվության հարցի կողմը, ցույց տալ մարդուն մարդկայնության նպատակը:

Հյուգոյի այս մտքերը ինքնին բացահայտում են Մերենցի՝ մինչ այժմ մեր ներկայացրած սկզբունքները՝ մարդու և նրա զարգացման մասին: Ազատությունը պետք է առանց ազատության մարդ չի կարող տնօրինել իր կյանքի երջանկությունը. «Ազատությունը բիք է աշաց... Ազատությունը անպատեհությունների և նույնիսկ վտանգների ունի, առանց անոր քաղաքակրթություն ուզելը՝ առանց արևու երկիր մշակելու կնամանի...»¹⁸:

Նորից անդրադառնալ Հյուգոյին, նորից ստուգել նրա մոտ արմատավորված սկզբունքները՝ այդ նույն հարցերի մասին, ինչպես տեսնում ենք, դառնում է Մերենցի համար կենսական պահանջ: 1876 թ. թուրքական պետության ներսում օրեօր աճող հակասությունները նրան ենթադրել են տալիս նոր ռեակցիայի և նրանից աճող տագնապանների մասին: Նա դեռ շարունակում էր հավատալ իր պատրանքներին, բայց իրականությունն զգացնել էր տալիս իրեն: Մինչև «Մշակի» և նրա խրմբագրի՝ արթնացման կոչերը, Բալկանյան սուլտամբությունն արդեն առաջին ազդակներն էր տալիս Մերենցին՝ նոր խմբումների և նոր եզրակացությունների համար:

4

Բալկաններում բորբոքվող պատերազմը, գավառներում օրեօր ուժեղացող խժգժությունները, հրդեհներն ու սպանություններն իրենց արձագանքներն են գտնում արևմտահայ մամուլում: Գահ բարձրացած Աբդուլ Համիդը կամեցավ Սահմանադրության հաստատման պատրվակի տակ թաքցնել իր ծրագրերը, բայց շուտով բացվեցին խաղաթղթերը, մի կողմ նետվեցին եվրոպական բոլոր միջամտությունները և «Սահմանադրությունը» 1878 թ. օդ ցնդեց, մնաց սուլթանը, նրա կամքը՝ ապստամբների հետ հաշիվ տեսնելու արյունարբու ծրագրերով:

1876 թ. հոկտեմբերի 5-ին Թագուկի՝ հորեղբորորդուն գրած նամակից երևում է, որ վերջինս տարակուսանք է հայտնել որոշ մարդկանց սխալ կողմնորոշումների նկատմամբ։ Թագուկը պատասխանում է, թե՝ «...իսկ ազգային գաղափարաց եղգացմանց գալով անկարելի է բացատրել ինձի համար, թե ինչչափ այդ տեսակ բաներ չեն հասկնար և ամենևին մի վարմանար, վասնզի այդ գաղափարներն ունենալու համար նախ քիչ մը բարոյական ու հետո քիչ մը կրթություն ունենալ պետք է...»¹⁹։

1876 թ. վերջերին Ծերենցը լսում է, որ պատրիարքը հուսախաբ է Համիդի խոստումներից և արդարություն է պահանջում։ Նրան հայտնի է դառնում որ Գր. Օտյանը և մյուսները, որոնք ոգևորված Սահմանադրությունից էին խոսում և հայության փրկությունը կասում նրա հետ, այժմ կասկածում են և ելք չեն գտնում։ Այն ժամանակ, երբ խմբագրվում էր Օսմանյան Սահմանադրությունը, երեք հայ խմբագիրներ բանտարկվեցին և ծեծի ենթարկվեցին, բանի որ համարձակվել էին ապագրել հողվածներ հայաբնակ գյուղերում տիրող հարաբերությունների մասին։ Նույն շրջանում էր, որ վանում տեղի ունեցավ սոսկալի հրդեհ, և հայ ազգաբնակչության մի մասը կորցրեց իր ունեցվածքը։

1876 թ. սեպտեմբերից հետո Թագուկի նամակներում արտահայտվում են նոր դժգոհություններ ներսես պատրիարքի, Մ. Մամուրյանի և այլոց անգլիստիությունից հանդեպ։ Արժրունին «Մշակում» գրում էր, թե պատմությամբ կարելի է հաստատել, որ հայերը միշտ ցանկացել են «մտավոր զենքով, ռատողություններով» պաշտպանել արդարությունը։ Նրան հնչել են, վիրավորել, ոչնչացրել, իսկ նա կամեցել է փիլիսոփայության զենքով պահանջել արդարություն, մարդկային իրավունք և երբ չի հասել այդ արդարությանը, թողել է իր ուղը, իր հայրենիքը ու գաղթել է՝ օտար երկնքի տակ մուրալու իր «ազատությունը»։

Զմյուռնիայից ներսես պատրիարքին ուղղած մի նամակում Ծերենցը գրում է, թե՝ «Նիքոլիա, երբ Կիլիկիայի և Հայաստանի աշխարհացույցները առջև դրած կհառաչի, կերևա-

կայելի, թե ինչչափ հայ սրտեր կը բաբախեին ազգովցան համար»²⁰։ Ներսեսին նա գրել է Կիլիկիայի մասին՝ «...նորա գերագույն դրից վրա խոսեցով երկայն»։ Ներսեսը պատասխանել է, թե՝ «մենք ևս այդ կարծիքին վրա եղանք, բայց հիմա մեր ուշադրութիւնը պարտավորեցանք բուն մեր հայրենիքին՝ Հաստատանի վրա դարձնել» (17/1, էջ 2)։

Ծերենցը Կիպրոսում եղած առաջին իսկ տարին գիտում է քաղաքի առջև ծովից այն կողմ փռված լեռնային Կիլիկիայի տարածքը և հետաքաշում, հիշելով իր ապրումները, գրում է. «Մենք խեղճ անօք-անօգնական հայքս, որ բոլոր ժամանակ ոչ ուրուք վրա հուշս ունեինք և ոչ գորովյուն, այս պապանայ ամեն շարժմունքին հնազանդելու պարտավորված պետք է նոցա կամաց հետեւինք, ուստի Կիլիկիոյ խոսքը բոլորովին մոռցանք կամա թե ակամա։ Թեպետ ամեն մտածող հայու ապագա կյանքը այդ երկրին վրա է և պետք է նաև լինի, քանի որ հայը կշնչե աշխարհիս վրա և աչքը հոն պետք է ունենա, յուր սքանչելի դրից համար, զոր աստված փոքր ու տկար ժողովրդոց վերջին տպաստարան մը շինած է։ Նս Օտյանին գրած էի, երբ Կիպրոս էի և խնդրել էի անգործ չկենալ» (նույն տեղում)։

Նվ ահա 1877 թ. հունվարին Ծերենցի աղջիկը հայտնում է իր բարեկամներից մեկին, որ հայրը սկսել է մի վեպ գրել Կիլիկիայի մասին։ Նույն տարվա ապրիլի 3-ին հորեղբորդու գուն ուղղած նամակում նա նորից գրում է. «Գաղտնիք մը պիտի հայտնեմ քեզի։ Հայրս հեղինակութիւն մը սկսած է. «Թորոս Լեոնի» անվամբ վեպ մը հունվարի 3-ին սկսավ, կեսը անցած է»²¹։ Մի այլ տեղ նա գրում է, որ «Թորոս Լեոնի» վեպը հայրն աւարտել է ապրիլի վերջին։ Վեպը ուղարկվում է Պոլիս և լույս տեսնում նույն տարվա վերջերին, մեծ արձագանք գտնում Հայաստանի երկու հատվածներում։

Ժողովրդի մասին երկար տարիների խոհերը հասունանում են, և արեւմտահայութեան սուր ճգնաժամի նախօրեին Ծերենցը հասնում է այն գիտակցութեան, որ հարկավոր է բոլորքեւ Զեյթունի ապստամբութեանից հետո անընդհատ ծխացող կրակը, անհրաժեշտ է ցույց տալ, որ այդ բոլորքովու կրա-

կը կարող է դառնալ հրդեհ, լափել բոլոր պատվարները և կրակների միջից բարձրացնել դարերի արհավիրքների մեջ կործանւած Կիլիկյան պետութիւնը. «Երբոր բացվին դռներն հուսո...»,—հնչում էր նրա ականջին ազգային շարժման հին առաքյալներից՝ Ռուսինյանի հայրենաբաղձ ձայնը: Զեյթունցի ապստամբների անձնվեր պայքարում ուրվագծվում է ահա Կիլիկյան պետութեան փառքը վերականգնողի՝ Թորոսի մասին հուշը, որը պատմութեան մեջ մնացել էր իբրև ժողովրդի առաջնորդի, պետական հմուտ գործչի անօրինակ կերպար:

Ծերենցի կենսագիրներից և հուշագրողներից ոմանք նշել են, որ «Ծրկունք Թ դարու» վեպի գաղափարը ևս հղացվել է Կիպրոսում: Այս վարկածը կարող է հավանական լինել, քանի որ առաջին և երկրորդ վեպերի գաղափարական ընդհանուր միատումները սերտորեն կապված են իրար հետ: Մի դեպքում անհատի, մյուս դեպքում ժողովրդի, նրանց սերտ միասնութեան գաղափարները զարգանում են միասնական պլանով. լրացնում մեկը մյուսին: «Թևոդորոս Ռշտունի» վեպը կապվում է արդեն 1878 թվականից հետո տեղի ունեցած նոր իրադարձութիւնների հետ:

1877 թվականի վերջին ամիսներին դեսպանաժողովի քաջքշուկները, Օսմանյան սահմանադրութեան ազդարարութեան օրերին պետական բռնութիւնները վերջնականորեն փարատեցին Կ. Պոլսի պատրիարքի և նրա թուրքամետ համախոհների՝ սահմանադրութեան հետ կապված պատրանքները: 1878 թ. հունվարին, Ադրիանապոլսի ղինադադարի նախօրեին, Ազգային ժողովի ռուսոֆիլ թևը իրազեկ է դարձնում ռուսական կառավարութեանը՝ Ռուսաստանին միանալու հայերի ցանկութեան մասին: 1878 թ. փետրվարի 28-ին կնքվում է Սան Ստեֆանոյի դաշնագրութիւնը: Զեռնոգորիան, Սերբիան, Ռումինիան, Բոսնիան, Հերցեգովինան ազատվում են թուրքական լծից: Ռուսաստանին են անցնում Կարսը, Արդահանը, Բաթումը, Բայազետը, Օլթին, Մարդվինը, Ալաշկերտը: 16-րդ հոգւածը խոստանում էր բարենորոգումներ անցկացնել հայկական գաւառներում: 1878 թ. հուլիսի 21-ին Կ. Պոլսի պատրիարք Ներսէսը «Ազգային ժողովում» արտասանած ճառում

նշում է, թե «վասնզն ականերև էր ինձի համար և ամենուն համար, որ հայոց ազգը պիտի կրնար անհետանալ իբրև ինքնուրույն ժողովուրդ և եթե իր գոյությունը շամրապնդեր, պիտի ոչնչանար: Հարստահարության խնդրոյն կառնկանար մեծ բան դայն խնդիր, ազգին գոյության ու շարժության խնդիրը»²²:

Հուլիսի 1-ին Մերենցը գրում է, որ Կիպրոս բերված գերիների մի մասի վիճակի բարելավումից իմանում են թուրքական կառավարության ղեկավարների մասին՝ Սան Ստեփանոյի դաշնադրությունից հետո: Թագուկը 1878 թ. ապրիլին գրում է Մամուրյանին, որ իրենք ուրախ են, «վասնզի ազգը քիչ մը կշարժի, վասնզի բանի մը կպիսկոպոս կրցածին ընկնուն կրնեն, վասն զի կրնա ըլլալ որ հողին վրա անկյուն մը և քիչ ազատություն տրվի հայուն: Ես իմ մասին պատրաստ եմ, թե անանկ բարեբախտություն մը պատահի այդ հողին անկյուն մը, հորս հետ երթալ. պինդ անուշն ալ իմ կարծիքին է»²³: (Խոսքը վերաբերում է տիկին Մամուրյանին—Ռ. Ն.): Թագուկի նրա հոր՝ Մերենցի երազների մեջ երևում էր հայության ազատության ցանկալի հեռանկարը: «500 տարիներէ վերջապէս այդ անտարբեր կարծված ազգը ձայն մը կձգեր աշխարհի վրա, յուր ազատության փափագը կհայտնէր»²⁴, նշում էր Մերենցը՝ այդ օրերը հիշելիս:

Մինչև Բեռլինի վեհաժողովը Մերենցը շարունակում էր շփոթաբեր ազդեցական գիվանագիտութեանը: «Թագուկ, մենք քեզի հետ ինչ պիտի ընենք,— կատակով ասում էր հայրն ազգական,— թե որ Իզմիր և Պոլիս երբ երթանք, դուռները դոց կգտնենք և կտեսնենք, որ Մամուրին բարեկամ անգլիացիք ամեն տեղ պաշարել են...»²⁵:

1878-ի հունիսի 14-ին Մերենցն ազգային հետ դուրս է գալիս Կիպրոսից: Զմյուռնիայում իմանում են, որ Թուրքիան Կիպրոսը նվիրել է Անգլիային՝ նրա հովանավորութեանը պահանջելու համար: Այստեղ նա իմանում է նաև Բեռլինի կոնգրեսի մասին, ուր 16-րդ հոգովածը դարձել էր 61 և ընդունած որոշումներով նոր ազգի էր կախվում հայ ժողովրդի գլխին: Զմյուռնիայից Մերենցը Պոլիս է գալիս այն ժամանակ, երբ ծանր տրամադրութեան էր տիրում բարեկամների մոտ: Ներ-

սեսը դեռ հույսեր էր կապում հայերի վիճակի բարվոքման հետ: Բայց դրովթյունը խիստ լարված էր, հիասթափությունը՝ մեծ: Այդ ժամանակ Թիֆլիսից լուրեր էին հասնում Արևմտահայաստանի հարցով զբաղվող խմբակների գործունեության մասին: 1876 թ. Պոլսում հիմնադրված «Արարատյան ընկերության» գործունեությունը նոր հեռանկարներ էր բացում՝ «Մշակի» և մյուս հաստատությունների եռանդուն օգնության շնորհիվ: «Մշակի» նախաձեռնությամբ այդ ընկերությունը փոխադրվել էր Վան՝ բուն Հայաստանում գործելու համար:

Ծերենցը ցանկանում էր վերահրատարակել «Թորոս Լև-Վոնին», բայց իշխանությունները արգելում են այն: Աշխատանք չկար, մյուս կողմից էլ Թիֆլիսը բաշում էր նրան: Ծերենցը գործունեության ասպարեզ էր որոնում:

Գլուխ յոթերորդ

1. ԾՆԵՐԵՆՑԸ ԹԻՖԼԻՍՈՒՄ: 2. ԱԶԳԱՅԻՆ ՀԱՐՑԻ ԼՈՒԾՄԱՆ
ԲԱՂՁԱՆՔՆԵՐԸ: Յ. ՓԱԿՈՒՂԻՆԵՐՈՒՄ

1

1878 թ. հեկտեմբերի 30-ին Ծերենցն իր դստեր հետ դուրս է գալիս Պոլսից և նոյեմբերի 3-ին հասնում Տրապիզոն: Քառաբը մնացել էր Հուլնը, ինչ 35 տարի առաջ էր, երբ ինքը, 10—21 տարեկան, մի փոքր գումարով հայտնվեց աշգտեղ՝ արևմտյան դավառներին ծանոթանալու և Արևելյան Հայաստան զննելու համար: Այստեղ նա հանդիպում է հին ծանոթների, ինչպես և Թիֆլիսից՝ Սպանդար Սպանդարյանի եղբորը: Ծերենցը զայրույթով է վերհիշում Բաֆֆու, Արծրունու, Ս. Սպանդարյանի հարձակումներն իր դեմ: Նոյեմբերի 11-ին նրանք դուրս են գալիս Տրապիզոնից դեպի Բաթում, ապա Փոթի, այնտեղից՝ նոյեմբերի 18-ին հասնում Թիֆլիս, բնակարան վարձում Ճավճավաձե փողոցի № 17 տանը: Առաջին ծանոթությունները Աբգար Հովհաննիսյանի, Դ. Նվանդուլյանի, Գ. Սունդուկյանի, Տ. Նավասարդյանի, Ղ. Շխյանի, Ա. Երից-

յանի և իրենով հետաքրքրվող այլ անձանց հետ: Հայտնի է, թե նա ինչպես է հանդիպել Արծրունուն և ինչ տպավորություն են ստացել նրանք իրարից: Բայց հայտնի է այն, որ Արծրունին մինչև Մերենցի մահը շարձադանքեց ո՛չ նրա գործունեությանը և ո՛չ վեպերին: «Թորոս Լեոնիի» հեղինակն առանձին հետաքրքրություն է առաջացնում թիֆլիսյան տարբեր շրջաններում: Թագուկը գրում է Պոլիս՝ Ս. Ալիշանյանին. «Դուք, որ Մերենցի ճշմարիտ բարեկամն եք, պետք է գիտնաք, թե Թորոս այն աստիճան ազդեցություն ըրած է այստեղ, զիմնազ գացող աշակերտեն սկսյալ մինչև հայ խմբագիրը և ազուլեցի շաքար ծախողն, որ կըսե թե Ազուլիս ալ զրկած է քանի մը օրինակ, մինչև քաղբիս նշանավոր տիկնայք կարդացած են»¹:

Թագուկի նամակներից երևում է, որ Թիֆլիսի հիվանդանոցում թափուր տեղ չլինելու պատճառով Մերենցը հայոց պատմության, գրականության և ֆրանսերենի ժամեր է ստանում Ներսիսյան դպրոցում: Մի գրառումից պարզվում է, որ Ալ. Նրիցյանը առաջին օրերին Մերենցին տվել է Շ. Շահամիրջանի «Որոգայթ փառացը»: Վերջինս առաջին անգամ ծանոթանում է հնդկահայ լուսավորչի այդ գործին: Թագուկը հիշում է նաև, որ Սունդուկյանի հետ ունեցած առաջին հանդիպումներից մեկի ժամանակ, երբ խոսք է լինում հայի ճակատագրի մասին, Սունդուկյանը տրամոթյամբ նշել է, թե «Վանդակը կոտորվել է, թռչունները ցրվել են»: Մի այլ նամակում Թագուկը մեծ բավականությամբ գրում է, թե Թիֆլիսում ճանաչում են հայր Ալիշանին, և որ երգում են Պեշիկթաշլյանի երգերը²: Մերենցի այդ շրջանի գրառումներից մեկում կա տեղեկություն այն մասին, որ նա 1879 թ. հունվարի 1-ին նամակ է գրել Պոլիս՝ Պ. Ադամյանին և Գ. Չմշկյանի անունից հրավիրել նրան Թիֆլիս³:

Թագուկի կարևոր գրառումներից է նրա տված տեղեկությունը «Երկունք Թ դարու» վեպի մասին: Պարզվում է, որ հունվարի 15-ին Մերենցը նոր վեպի առաջին գլուխները կարդացել է Աբգար Հովհաննիսյանի տանը և ապա Ռ. Նադիրյանի մոտ: Ինչպես նշում է Թագուկը, Աբգար Հովհաննիսյանը «փափագում է» տպագրել այն «Փորձում»⁴, բայց հետո հրա-

ժարվել է և վեպի փոխարեն տպագրել Եղիշե Գեղամյանի՝ (Հայկունու)՝ «Երկունքի» մասին գրած բացասական հոդվածը։

1879 թ. հրապարակված «Երկունք Թ դարու» վեպը Ծերենցը նվիրել է աղջկան՝ հետևյալ մականգրությամբ. «Քեզ որդյակ, իմ սիրելի, ուրախություն իմ և մխիթարություն, որ երբեմն ի սուգ ի լուռություն ի միայնություն մեր երկուսիս կենաց տխրության, հորդ հեղձ գրիշը ոգևորեցիր գրելու զԹորոս, առ ընդունե ի նվեր յոր զիս հորդորեցիր այս Երկունք, ձայն սրտի հայրենի հառաչանաց Ծերենցիս.

1879 հունիսի 1, Տփլիս»։

Ավետիք Եղեկյանը՝ Ծերենցի թիֆլիսյան ջերմ բարեկամներից մեկը, ներկայացնում է հոր և աղջկա անօրինակ պատկերը՝ հակադրությունների և միասնության մեջ. «...հիշեցեր այն աշխույժ, այն վառվուռն, այն զգացումներովն ու զրուցադրությամբ, կրակ ու կայծակ ծերունին, յուր աղավնի, հեղ և նաղելի աղջկան հետ մեր ընտանեկան շրջաններում, մեր խնջույքներում, մեր գրական և գիտական հանդեսներում։ Տոն էր մեղ համար, կատարյալ վայելք՝ տեսնելն այդ ծերունին յուր բազմադիմի և անհուն հմտությամբ, յուր հայրենյաց անցյալի և ներկայի ընդարձակ գիտությամբ և յուր անկեղծ, խորարմատ և հզոր զգացումներով առ այն ամենայն, որ ազգին էր և հայրենիքին և որ ցանկանում էր լինել ազգինն ու հայրենիքինը... Զմայլանք էր տեսնել մի աղջիկ՝ զլիովն սքանչելի գեղեցիկ և աչքերն իմաստության կայծերով լի, մաքուր ու նուրբ հայախոս, յուր հմտության պաշարներով, որ սիրելի հրապույրքով վարագուրել գիտեր համեստության բողիտակ, յուր հոր փոքրիկ կտորը, ոչ որոտում էր, ոչ մորիկ հանում, այլ յուր հոր կողքին՝ նորա որոտումներից ու մորիկներից ես՝ խաղաղություն ու հեղիկ հանդարտություն, յոթնգունի ծիածան էր...»⁵։

Ծերենցի արխիվից մեզ հասած մասունքների մի մասը աղջկա՝ Թագուկի գրառումներն են և նրա ստեղծագործություններից ու թարգմանություններից մնացած պատահիկներ։ Թագուհի Շիշմանյանն իր ապագա գործունեության համար ընտրել էր Մենիկ կեղծանունը։ Արխիվում մնացել է անվեր-

Նազիր մի փոքրիկ թարգմանություն՝ թեման 1870-ական թվականների ռուսական կյանքից:

Բեռլինի կոնգրեսից հետո Պոլսի մտավորականների մի մասը, նրանց հետ և պատրիարքը, 61-րդ հոգվածից ելնելով՝ սկսում են նոր ծրագրեր մշակել հայոց աշխարհի սուլթանական «բարեկարգումների» համար: Բայց դրությունը չէր փոխվում, ժողովրդի մեջ շարունակվող ճնշումները և հալածանքները նորից առաջացնում են գաղթի տրամադրություն: «Արևելահայ մամուլը», հատկապես «Մշակը» շարունակում են դբադվել «թուրքահայ հարցով»: Արժրունու նախաձեռնությամբ Կ. Պոլսից Վան փոխադրված «Արարատյան ընկերությունը» ակտիվ գործունեություն է ծավալում՝ զավառում կազմակերպելով օգնություն տառապալներին: Ա. Արսիարյանը «Հայկակ» ստորագրությամբ «Մշակի» էջերում ներկայացնում է սրևմտահայության օրեօր վատթարացող վիճակը և Պոլսի մտավորականների նոր մտահոգությունները:

1879 թ. գարնանը Թիֆլիսում կազմակերպվում է դասախոսությունների մի շարք: Այստեղ հանդես են գալիս Գր. Արծրունին՝ «Թուրքաց հայերի տնտեսական դրությունը», Աբգար Հովհաննիսյանը՝ «Հայը և Հայաստանը օտարի աչքերով», Ծերենցը՝ «Կիլիկիա» թեմաներով:

Ծերենցի դասախոսությունը տեղի է ունենում ապրիլի 29-ին: Օգտագործելով մամուլում հրապարակված և այդ թեմային վերաբերող առանձին հոգվածները, ուղեգրությունները Կիլիկիայի մասին, Ծերենցն առանձնապես կանգ է առնում իր տեսած և ուսումնասիրած փաստերի վրա: Հայերը պետք է ցույց տան նվրոպացիներին «թե կա քրիստոնյա ասիացի մի աղգ ընդունակ և հարմար քաղաքականության (քաղաքակրթության—Ռ. Ն.) և որուն փոքրիկ ձեռնտվություն մը կբավի լինելու խաղաղ, խելոք զինվոր առաջադիմության»⁶:

Ներածականից հետո դասախոսն անցնում է Կիլիկիայի աշխարհագրական դիրքին, պատմական հակիրճ ակնարկով փորձում է ներկայացնել Կիլիկյան պետության անկման պատճառները: Այժմ Կիլիկիան օրեօր կորցնում է իր գոյության տնտեսական և իրավական հիմքերը, ասում է նա, եթե ժողո-

վուրդների վիճակը վատ է, մեղավոր են կառավարման բար-
րարես իղանակները: Նթև այսօր Տաճկաստանը աղքատ է, մե-
ղավորը կառավարութիւնն է: Հունաստանն ազատվեց բռնու-
թյան լծից և այսօր շենացել է. նույնը՝ Սերբիան, Բուլղարիան,
Ռումինիան:

Անցնելով բուն Կիլիկիային, Մերենցը հայտարարում է,
որ ինքն անձամբ շրջել է Տավրոսյան լեռների գոտիով շրջա-
պատված դաշտային Կիլիկիան, եղել է նաև Տավրոսի շաբու-
նակութիւնը կազմող քարային Կիլիկիայում: Այնտեղ նա
տեսել է հին բնակատեղիների մնացորդներ, քաղաքների և
գյուղերի հետքեր: «Բայց ի՞նչպիսի կարելի է չի տեսնել մար-
դու ձեռագործը, երեք շորս օր ճամփա քնել և կենդանի մար-
դու կերպարանք մը չի տեսնել և տխրութեամբ չի համակիլ,—
ասում է նա,— տեսնել Սելեկիո բերդը, Կոբրիկոսի բերդը յուր
աշտարակներով, տեսնել Հեթումի անունն արձանագրեցալ և
սարիսպներու ընդարձակութեան մեջ քարերու կույտ միայն
գտնել և տխրութեամբ չի համակիլ»⁷: Ահա այդ վայրերում
այսօր, թափառական ցեղերը իջնում են լեռներից և իրենց
անասունների հետ ձմեռն: անցկացնում այդ բնակատեղիներ-
ում:

Մերենցն իր ունկնդիրներին պատմում է դաշտային Կիլի-
կիայի բարերեր, բայց այժմ խոստնացած հողերի, ծաղկուն
հովիտների, առատորեն հոսող գետերի մասին, որոնց մի մա-
սը դուրս գալով իրենց հունից, ճահիճներ կազմելով փակում
են ճանապարհները, դժվարացնում գյուղից գյուղ անցնելը:
1861 թվականի սմռան և աշնան ամիսներին Մերենցն անց-
էր կացրել Կիլիկիայում՝ ուսումնասիրելու տեղանքը, կազմելու
ապագա գործունեութեան ծրագիր: Նա խոսում է կիլիկյան հին
քաղաքների կիսավեր մնացորդների մասին, ուր հողաշին-
տներում պատսպարվում են հայ գյուղացիները:

Հենվելով իր հուշերի վրա, Մերենցը հավաստի տեղեկու-
թիւններ է տալիս Սիսի՝ Կիլիկիայի երբեմնի մայրաքաղաքի,
Ադանայի և մյուս քաղաքների բնակիչների թվի և նրանց ապ-
րուստի միջոցների, կենցաղի մասին: Այստեղ նա ավելի հան-
գամանորեն կանգ է առնում Զեյթունի բնակիչների վրա, որոնց

մեծ մասը հանքափորներ էին և կամ զբաղվում էին տարբեր արհեստներով, մեծ մասամբ ապրում էին ապրանքափոխանակութեամբ:

Զեյթունի մասին խոսելիս նա բերում է 1862 թ. ֆրանսիական թերթերից մեկի մանրամասն տեղեկությունները ապստամբած ժողովրդի հերոսական պայքարի մասին: Իր պատախոսության վերջում Մերենյը մերկացնում է Աբդուլ Համիդի պետական քաղաքականությունը՝ ոչնչացնելու Հայկական հարցը, նրա հետ և սպառնալիք բարենորոգումների խնդիրը: Կիրիլիայում դեռ ապրող հին հայկական պետության բնակիչների մնացորդները, Մերենյի կարծիքով, պետք է պահպանեն իրենց արիությունը և տեղունությունը՝ պաշտպանելու հողն ու կյանքը: Մերենյը կոչ է անում օգնել «Կիրիլյան բնակչության» զործունեությանը՝ իր առջև դրված խնդիրների իրականացումը համար:

2

1876 թվականից Գր. Արծրունին մեծ եռանդով արձագանքում է Արևմտյան Հայաստանում տեղի ունեցած իրադարձություններին: Ռուսական զորքի հաջողությունները, Սուլտանի զաշնադրությունը նա համարում է կարևոր ցուցանիշ Ռուսաստանի օգնությամբ Արևմտյան Հայաստանի հարցի լուծման համար: Բեռլինի կոնգրեսից հետո «Մշակ» շարունակում է մերկացնել եվրոպական դիվանագիտությունը, հատկապես անգլիական ներդ քաղաքականությունը՝ հայերի նկատմամբ: Արծրունին առաջարկում էր Պոլսի Ազգային ժողովը տեղափոխել գավառները, իսկ մտավորականներին՝ լուսավորություն տարածել արևմտահայերի մեջ: Ապավինելով Ռուսաստանին՝ Արծրունին պահանջում էր նաև զինքի միջոցով հասնել քաղաքական հարցի վերջնական լուծմանը:

«Փորձի» խմբագիր Աբգար Հովհաննիսյանը 1879 թվականին շարունակում է հույսեր կապել անգլիական հովանավորության հետ: Սակայն անգլիական դիվանագիտության հրապարակային ցուցադրումները Թուրքիայի օգտին նրան

Քեզում են բարենորոգումների իրականացման գործով ղեակ-վող եվրոպական հսկող պետությունների կողմը: Բայց իրականությունը վերջնականորեն «Փորձի» խմբագրին բերում է այն համոզման, որ արևմտահայություն փրկության գործը պետք է տրվի ժողովրդի ձեռքը:

Քիֆլիսում եղած տարիներին Մերենցը թղթակցում է «Փորձին» և «Մեղու Հայաստանի» թերթին: «Փորձի» առաջին համարում նա հանդես է գալիս «Ժամանակի ոգին և հայի ապագան» վերնագիրը կրող մի ընդարձակ հոդվածով: Պետք է խոստովանել, որ այդ օրերին, «Հայկական հարցով» ղեակ-վող գործիչների մեջ, Մերենցը թերևս այն եղակի դեմքերից էր, որ ամենից ավելի խոր ընդհանրացումներ էր անում տեղի ունեցած ազգային-քաղաքական իրադարձությունների վերա-բերյալ՝ առաջադրելով հարցեր, որոնք կապվում էին ժողո-վրդական շարժմանը նպաստելու առաջին քայլերի հետ: Կա-րելի է ասել, որ այդ շրջանում նրա մտքերն ու եզրակացու-թյունները հիմնականում համընկնում էին «Մշակի» այդ օրե-րի հարցադրումներին: «Ժամանակի ոգին» հասկանալու հա-մար պետք է դնալ պատմության խորքերը. կար ժամանակ, որ մարդը մարդակեր էր, հետո մարդը մարդուն կրկես նետեց զվարճանալու համար, խորհրդածում է Մերենցը, հետո քրիս-տոնեությունը կամեցավ մարդուն մարդ դարձնել, բայց այսօրը մկա է, որ մարդկությունը այնպես էլ չհրաժարվեց իրար ոչնչացնելու ցանկությունից:

Այս դատողություններն ինքնին հանդիսանում են այն եզ-րակացության, որ մարդու ձգտումը՝ պահպանել իր իրավունքը, կանգնեցնում էր նրան ազատության համար մղվելիք պայ-քարի անհրաժեշտության առջև: «Ազատությունը պետք է, որ խուզարկու ոգիներ հարուցանեն, որ ամեն բան քննեն՝ կշռեն, օրենքներ ի բովս փորձեն և ըսեն թե այդ վայրենի էր, այն անի-րավ էր, այս մարդավայել էր, սա իրավացի էր, թե այն անո-րոշ էր և մյուսը լուսավորության կարոտ էր»⁸:

Մերենցն այս հոդվածում ցույց է տալիս արևմտահայ առաջավոր գործիչների՝ Անգլիայի հետ կապված միամիտ ուսման խաբկանքը: «Այդ ազատամիտ Անգլիան», Մերենցի

համոզումով, ավելի սիրում է «ոսկին», քան «ազատությունը»: «Անգլիան բարոյապես և նյութականապես պատասխանատու է և գործակից է ամեն անիրավությանց,—գրում է նա իր հոգվածում,—որ Ասիո Տաճկաստանի մեջ տեղի ունեին 1878 թ. հունիսի 4-են վերջը: Այո՛, այն օրվրնե, որ Անգլիա կիպրոսը Օսմանյան տերութենե առնելով, յուր սևախաղաղությունն ընկելով, փոխարեն նորա ասիական ստացվածքը կերաշխավորե, աշխարհք զինքը պատասխանատու կճանաչե լինելիք թե՛ լավ և թե՛ վատ գործողությանց»⁹:

Հատկանշական է, որ այդ շրջանում Արծրունին ևս խիստ բացասական վերաբերմունք ուներ եվրոպական այդ մեծ պատության հանդեպ: «Ի՞նչ արավ Անգլիան» վերնագրով առաջնորդողներից մեկում նա գրում է, որ Անգլիայի համար ազգերի անհատական քաղաքական կյանքը նշանակութուն չունի, այլ միայն նյութական շահը: «Մենք միշտ հարձակվել ենք Անգլիայի դեմ, միշտ զգուշացրել ենք թուրքաց հայերին սարդասեր Բրիտանիայի նենգավոր և կեղտոտ որոգայթների դեմ... Մեզ չէին կամենում լսել և ահա այժմ, մեր խոսքերն իրագործվում են»¹⁰:

«Փորձի» 1879 թ. № 4-ում Մերենցը հանդես է գալիս «Արարատյան ընկերության» գործունեության գնահատության մասին: Հոգվածից հետո տպագրվում է ընկերության կանոնադրությունը: Հաջորդ համարում նա հարկ է համարում նորից անգրադառնալ Անտոն Հասունյանի դավադիր գործունեությանը՝ արեւելահայության առաջ մեկ անգամ ևս մերկացնելով կաթոլիկյան շարժման վնասարեր հետևանքները հայության համար:

1880 թ. «Մեղու Հայաստանի» № 38-ում Մերենցը հանդես է գալիս մի նոր հոգվածով՝ «Ներողամտություն» (Tolérance) վերնագրով: Հակասությունների աշխարհում ենք ապրում, գրում է նա, Ֆրանսիան, որ իր երկրում պայքարում է ճիզվիտների դեմ, հատուկ շրջաբերականով պաշտպանում է կրոնամոլությունն Արեւելքում: «...Հայ ազգին այն դավանները, որ տարիներով Գաղղիա կեցած Քինիի, Միշլեի և նոցա հետևողաց դասեր լսած են, նոքա, որ Հյուգոյի, Լամարթինի

Գլերի, Ժյուլ Սիմոնի, Լիթրեի և նոցա նմանյալ գրականու-
նամբ իրենց մտքերը մշակած են, տխրություն կղզան այդ
ազատական պաշտպանության սույն օրինակ դավանության
մը առջև, որ յուր երկրին մեջ թույնը չի ներել վաճառել՝ և այդ
թույնին վաճառականը կքաջալերե և կպաշտպանե դուրսը յա-
րևելս»։ Խոսքը վերաբերում է ֆրանսիական կաթոլիկ այն
քարոզիչներին, որոնց նա հաստուկ շրջաբերականով ուղարկում
էր Արևելք՝ դիվանագիտական նպատակներով։

Ծերենցը դարմանում է, որ էջմիածնի «Արարատը» այդ
շրջաբերականը արտատպել է «Արշալույս Արարատյանից»։
Դրա կարիքը կա՞ր արդյոք, մանավանդ երբ տպագրում է այն՝
առանց վերաբերմունք ցույց տալու։ Ծերենցը մեկ անգամ ևս
հաստատում է իր վաղեմի թեզերից մեկը, որ ազգը պետք է
ունենա առաքինի և դիտուն հոգևորականներ, որոնց առաջին
պարտականություններից մեկը պիտի լինի ազգի կրթության
և լուսավորության մասին մտածելը։ Այդ ճանապարհով ազ-
գային պառակտման դեմն առնելու համար, հայ եկեղեցին
պետք ունի վերանորոգման. դա լուսավորյալ հայերի առաջ-
նահերթ խնդիրներից մեկն է, գրում է Ծերենցը։

1880 թ. Ծերենցը «Մեղու Հայաստանի» № 20—21-ում
հանդես է գալիս «Հայկական խնդիրը» հոդվածով։ Նրա խոսքի
մեջ թախծի երանգներ կան։ Նա գտնում է, որ ինչպես էլ լինի՝
արևմտահայերը պետք է հասնեն ինքնավարության, այլապես
կկործանվեն։ Հայերը քրիստոնյա փոքրիկ ազգ լինելով՝ պա-
հեցին իրենց լեզուն, պատմությունը, գրականությունը, ավան-
դությունները և մնացին իրենց հողի վրա մեծ տառապանքնե-
րով։ Ուստի Եվրոպան պետք է ուշադրության առնի այդ խըն-
դիրը։

1881 թվականի «Մեղու Հայաստանի» էջերում տպագրած
«Թրոթը և հայկական խնդիրը» հոդվածում Ծերենցը նորից
մերկացնում է Անգլիայի խարդախ դիվանագիտությունը, դալ-
քանում անգլիական հյուպատոսի այն հայտարարության վրա,
թե Հայաստանը «աշխարհագրական հասկացողություն է»։
Հանցավորն իրենք հայերն են, հայտարարում է Ծերենցը և

ներից հիշում, որ ահա բուլղարները համառ պայքարով հասան իրենց ազատութեանը, իսկ «Հայկական հարցը» չլուծվեց:

Բեռլինի կոնգրեսից հետո պոլսահայ մտավորականութեան մեջ առաջացած նոր ճեղքվածքը խորացնում է անվստահութիւնը հայկական բարենորոգումների նկատմամբ: Օսմանյան պետութիւնը «Հայկական հարցը» Բեռլինի 61-րդ հոդվածով համարեց «կործանված» և հետզհետե հրապարակ նետեց իր ծրագրի առանձին կետերը, որոնց ամբողջութիւնը պարունակում էր իր մեջ հայութեան բնաջնջումը իր սեփական հողից, իր հայրենիքից: Խճճված և մոլորված անզլիական և թուրքական քաղաքականութեան բավիղներում լսվեցին ձայներ այն մասին, թե իբր հարկավոր չէր հայկական շահերը զատել թուրքական շահերից և որ հարկավոր չէր «թուրքասիրութիւնը» փոխվեր «ռուսասիրութեան», որ պետք է շարունակել հավատալ սուլթանական «ողորմութեանը» և անզլիական «բարեգթութեանը»:

Երբեք ուղղակի գրում է, որ եթե թուրքական կառավարութիւնը մտածում է, թե հայերին ջնջելով կկենդանանա, սխալվում է: «Փորձված հայտնի ճշմարտութիւն է, որ ինչպես առաջին մարդկան, նույնպես պետութեան համար միմիայն ճանապարհ կա փրկութեան՝ լինիլ ուղիղ և պարզ: Մաքիսովիչական քաղաքականութիւնը, որ բռնութեան, խաբէութեան, ստութեան և խարդախութեան վրա կհիմնի, ոչինչ չկրնար ստեղծել»¹¹:

Երբեք նորից ու նորից առաջադրում է իր լուսավորական ծրագիրը: 1882 թ. «Մեղու Հայաստանիում» հրապարակված «Հերիք է քանդենք, պետք է շինել» հոդվածում նա գրում է, թե մենք թեպետ «վանդալիզմ» բառը չունենք, բայց նման «գործեր» շատ ունենք: «Երբ հասարակաց կյանքին հաղիվ աչք բացի, տեսա, մի քանի անգամ զորգամբ շարժյալ կարող անձինք միաբանեցան և ընդարձակ շէնք մը կառուցին, անունը ճեմարան դրին, թեպետ իրենք անուսում մարդիկ էին, բայց ժամանակին փոփոխութիւնն իմացան, գիտութեան հարգը և պետքը զգացին և սկսան զոհողութեան: Եվ ահա հաղիվ թե մի քանի տարի կյանք ունեցավ այդ ճեմարանն, ելան, կանգնե-

ցան մարդիկ, խռովեցուցին ժողովուրդը... քանդեցին, ոչինչ չշինեցին»¹²:

Ծերենցը խոսում է Ներսիսյան ուսումնարանի շինարարության և ժողովրդական ոգևորության մասին և ապա պատմում, թե ինչպես «մեծ ոգուն» (Ներսես Աշտարակեցուն — Ռ. Ն.) եկավ փոխարինելու «փոքրոգին» (Հովհաննես Կարբեցին — Ռ. Ն.), և կործանվեց ուսումնարանը: Այնուհետև Ծերենցը հիշում է «Բարեգործական ընկերությունը», որի նպատակն էր տալ երկրագործի սրտին «բարոյական կորույլ», գիտություններ: Կային մարդիկ, ասում է նա, «Գործին հաջողության ամեն զոհողություն հանձն առած էին և ամեն բան պատրաստ, բայց ահա քանդող հոգին կհասներ...» ու կքանդվեր ամեն ինչ: Եվ այսպես՝ անվերջ: Տգիտությունը և նախապաշարումները առաջին թշնամիներն են հայության, նրանք կործանում են ամեն մի առաջադիմական գործ, աճեցնում «անտարբերությունը» և բաղամաթիվ արատներ, որոնց ժողովուրդը պահել է իր՝ արհավիրքներով լի անցյալից և այժմյան «թշվառ, անկարող» վիճակից:

Հուսավորությունը առաջին պայմանն է սևիական ինքնաճանաչման, ինքնագիտակցության, մարդու բարոյական ինքնակատարելագործման, հասարակության մեջ քաղաքացիական գծերի կազմակերպման և ընդհանուր առաջադիմության: Այսպես էր մտածում Ծերենցը:

Ծերենցը մինչև վերջ մնաց այն համոզման, որ այդ ճակատագրի վերջնական լուծումը իր՝ ժողովրդի գործն է: Ժողովուրդը պետք է գա այդ ինքնագիտակցությանը, իսկ դա կարող է լինել այն դեպքում, երբ նա հնարավորություն ունենա ոտքի կանգնել՝ կազմակերպելու իր ուժերը թշնամու դեմ: Այդ նպատակն էր հետապնդում, ահա, Ծերենցի թիֆլիսյան առաջին տարիների գործունեությունը:

Բեռլինի կոնգրեսում «Հայկական հարցի» անհաջող լուծումից հետո «Մշակը» իր ամբողջ հույսը կապում է Ռուսաս-

տանի հետ: Նա դեռ հույս ուներ, որ արևմտահայերը կամ ինքնավարություն կստանան կամ կմիանան Ռուսաստանին: «Մշակում» պարբերաբար հանդես եկող Բաֆֆին ևս մշակում էր Արևմտյան Հայաստանի փրկության ծրագրեր: Էականն այստեղ այն չէ, թե այդ ծրագրերի որ մասն է համընկնում Մերենցի կանխագծումներին, այլ այն, որ նրանք հավատում էին, թե ահա կրկին եկել է մի ժամանակ, երբ ինքը՝ ժողովուրդը, պետք է հասնի իր ազատությանը:

1879 թ. Թիֆլիսում, երևանում և այլուր կազմակերպվում են «կոմիտեներ», որոնց ղեկավարման գլուխն են անցնում Գ. Եվանգուլյանը, Լ. Տիգրանյանը և ուրիշներ: Կոմիտեները ղենք են փոխադրում Արևմտյան Հայաստան, պատրաստում կամավորական խմբեր: Մերենցը 1879 թ. ամռանը մեկնում է Կարին, որը ղինված ապստամբության ղեկավարման գլխավոր կենտրոնն էր: Ապստամբության կազմակերպիչները և նրանց ոգեշնչող և ուղղություն ցույց տվող Կ. Եղյանը համոզված էին, որ կգա այն պահը, երբ ռուսական զորքերը կօգնեն այդ գործին, «Հայկական հարցը» կստանա իր ցանկալի լուծումը, ինչպես այդ եղավ Բալկաններում¹³:

1880 թ. Վասպուրականում սկսվում է ահավոր սով, կոմիտեի անդամներն ամբողջ ուշադրությունը բևեռում են այդ շրջանի վրա: Մերենցը ևս մասնակցում է «Սովիկոց հանձնաժողովի» նախաձեռնումներին: Կարինի նախապատրաստությունները շարունակվում են: Հենց այդ պահին Թուրքիան և Անգլիան աշխարհին հրամցնում են մի ահավոր կեղծիք: Տեղի է ունենում հետևյալը. օգտվելով Անգլիայի հովանավորությունից՝ սուլթանական կառավարությունը մերժում է Հայաստանին ինքնավարություն տալու պահանջը, հայտարարելով, թե Թուրքիայում հայերը կաղմում են ընդամենը 17 տոկոս: Անգլիան իր հերթին հայտարարում է, թե Թուրքական պետության սահմաններում չկա Հայաստան, «այլ կա Քրդստան...»:

Սուլթան Համիդը արգելում է Թուրքական հողի վրա ազատասիրական որևէ քայլ հայերի կողմից, արգելվում է Թիֆլիսում հրատարակվող հայկական թերթերի մուտքը Թուրքիա, մի շարք արևմտահայ խմբագիրներ ձերբակալվում են և ար-

սորվում: Գավառներում ուժեղանում են հայերի նկատմամբ հալածանքներն ու խժոժությունները:

Այդ դժվարին շրջանում Ծերենցը հրատարակում է իր երբորդ վեպը՝ «Թեոդորոս Ռշտունին»¹⁴: Վեպն արտացոլում է նոր ճգնաժամի առջև կանգնած Հայաստանի վիճակը: Ներկայացնելով պատմական Հայաստանը արաբական առաջին արշավանքների շրջանում՝ Ծերենցը, կարծես, այդ օրինակով գուշակում էր հայության առջև կանգնած նոր աղետը: Ծերենցյան խորհրդածությունները ցույց են տալիս նրա խոր հավատը, կաղմակերպված ուժերի միջոցով վտանգը կանխելու նրա մեծ հույսը:

1882—1885 թթ. Ծերենցը լինում է Պոլսում, ապա գնում Փարիզ, վերադառնում է Պոլիս և նորից՝ Թիֆլիս: 1884 թվականին, կաթողիկոսական ընտրությունների շրջանում, նա գրում է «Կաթողիկոսություն և խրիմյան» գրքույկը, պաշտպանում մերջինիս թեկնածությունը:

1885 թ. նրան պատահում է մեծ դժբախտություն: 25 տարեկան հասակում մեռնում է Թագուհի Շիշմանյանը՝ թողնելով 3 մանկահասակ որբուկներ: Շատ չանցած Ծերենցը կաթված է ստանում, հետո մի փոքր ապաքինվում է: Այդ ընթացքում նա թողել է մի քանի հուշագրական պատառիկներ, ուր ֆկարագրում է իր ծանր հոգեկան ապրումները:

Հուշագրական պատառիկներից մեկը 1879 թ. մալիսին Աղստաֆայի վրայով դեպի էջմիածին նրա կատարած ճանապարհորդության նկարագրությունն է: Ճանապարհին նա տեսնում է Սևանը, մտքում վերակենդանանում են անցյալի հիշատակները, Բեշիրի կողմից Աշոտ Երկաթի պաշարումը Սևանա կղզում, հիշում է պատմիչների ժլատ հիշատակությունները քաջարի իշխան Գևորգ Մարդակետունու մասին:

Ծերենցը կարևոր է համարում անցյալի փշրանքների հավաքումը, որպեսզի դրանք չտրորվեն և չանհետանան. «Սպասենք, որ հասնի այն օրը և անշուշտ պետք է հասնի, մարդակերության հետքը ջնջվի և այն, որ քաղաքակրթության բարձրությունը պիտի հարգե տառապյալը և նկուն աղգաց մնացորդը պիտի նկատե, որ նոքա ևս կշնչին, նոքա ևս աբևուն»

տակ կարենան գլուխնին բարձրացնել, մարդկանց աղգաց, իշխանությանց և ղորությանց առջև շամաշեն ըսել թե հայ են, հրեա են, ասորի են: Նույնի ի շնորս յուրյանց նախնի փառաց կհամարձակին բարձի գլուխ նրեալ... Հայք քաղաքակրթության առաջադիմության շնորհիվ թերևս նույն բախտին հանդիպին»¹⁵: Փոխվել էին ժամանակները: Նոր սերունդը շատ հարցերի նկատմամբ ուներ արդեն այլ հայացքներ. 40-ից ավելի տարիների ընթացքում մշակած հայացքների տեսանկյունից դիտելով, շատ հարցեր Մերենցի համար արդեն անհասկանալի էին, և դրանց պատասխանները նա տալ չէր կարող:

Կաթվածահար վիճակում, հազիվ գրիչը ձեռքն առած, իր մահվան նախօրերին նա գրում է Պետերբուրգ, «Արաբսի» խումբագրությանն իր վերջին նամակը, որը մնացել էր նրա սեղանին՝ անավարտ: Մերենցի մահից հետո նրա առաջին կենսագիրը՝ Թ. Զաքարյանը, հրապարակում է այն:

«Կիմանամ թե սկսած եք հրատարակություն մը, կփափագիմ հաջողություն ձեր աշխատությանց. մանավանդ օգտակարություն ազգերուդ համար, որովհետև այդ օրագրությանց և լրագրությանց հանդիսից շաբաթաթերթերից բաբելոնին մեջ խմբագրաց եթե հարցնենք, թե ի՞նչ նպատակի համար և ի՞նչ սկզբանց վրա է յուրյանց հրատարակությունը, հավանական է թե շատերը շփոթին և չկարենան պատասխանել. միայն ոմանք պիտի պատասխանեն թե մեր պաշտոնն է մտրակել, ումբալուծել, քանդել ամենայն ինչ որ կա հայ աղգին մեջ և այդ կործանմանց և ավերակաց վրա կանգնել նոր և փառավոր շենքը, որ մենք կերեակայենք արգար և ուղիղ: Մենք վերանորոգվի ենք բարոյականի, որովհետև մոլորությունը մարդկային ընկերության անհանգուրձելի են մեր առաքինասիրությանը:

Քանի քանի տարիներ են, որ մենք գրչով և մեր կենաց օրինակով կաշխատինք այս աղգը բարոյականացնել իրեն ամեն առավոտ քարոզելով թե նախապաշարմունքներն պետք է թոթափել, վտարել, բայց մեր այսչափ տարիներու հանքը անօգուտ եղավ: Ասացինք ամեն դասու մարդկանց և մեզ չլսեցին, ոչ քաղաք ոչ գյուղ ականջ չունեցան մեր անշահասեր ձայնը լսելու և կշարունակեն մութ նախապաշարմանց տղմին

մեջ լողալու: Նոր սերունդը տոգորյալ հին գաղափարներով չի կրցավ հասկնալ թե նախ հայրենի տնեն սկսելու է վերանորոգել. հրեական ծթռած գաղափարք դեռ կտիրեն ամեն հայ տան մեջ, որդին դեռ չի կրցավ իմանալ թե ծեր պառավ ծնողաց հնազանդություն հիմարություն մի է անարժան ազատամտության և ժամանակիս լուսավոր...»¹⁶: Այստեղ ընդհատվում է Ծերենցի նամակը: 1888 թ. փետրվարի 17-ին նա կնքում է իր մահկանացուն:

Այդ շրջանում տաճկահայ գրողներից ամենատաղանդավորը և ամենաժողովրդականը Ծերենցը եղավ, գրում էր «Արաքս» հանդեսի էջերում Թ. Զաքարյանը. «Ծանոթանալով այդ մարդու կյանքի հետ, մարդ չէ իմանում ինչ բանի վրա ավելի զարմանա. նորա բազմակողմանի ընդունակությամբ, հմտությամբ, թե՞ անհողողող եռանդի վրա...»¹⁷:

Հայ հասարակական մտքի պատմության մեջ, հրապարակախոսության բնագավառում Շիշմանյան—Ծերենցը մնաց իբրև 1850—80-ական թթ. արևմտահայ ազգային բուռն վարթոնքի՝ ծանր հակասություններով լի վերելքի, ինչպես նաև 1878 թվականից սկիզբ առած մեծ ողբերգության առաջին խորաթափանց կռահողներից մեկը: Ծերենցի հողվածների ժողովրդայնությունն ինքնին հավաստում է նաև նրա խոր հավատը՝ դարերով արհավիրքների ենթակա իր հայրենի հողի պահպանման և իր ժողովրդի կյանքի հարատևության նկատմամբ:

Այդ մեծ գաղափարի ցայտուն արտահայտությունն էր պատմական վեպը, որի հիմնագիրը հանդիսացավ նա:

Գլուխ առաջին

1. ՊԱՏՄԱԿԱՆ ՍՅՈՒԺԵՆ XIX ԴԱՐԻ ԱՌԱՋԻՆ ԿԵՍԻ ՀԱՅ
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ: 2. ՌՈՄԱՆՏԻԿԱԿԱՆ ՊԱՏՄԱՎԵՊԻ
ԵՎՐՈՊԱԿԱՆ ԱԿՈՒՆՔՆԵՐԸ: 3. ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ԳԱՂԱՓԱՐԱԿԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ 1860—1870-ԱԿԱՆ ԹԹ.

1

Ինչպես նշեցինք զրքի առաջին մասում, Մերկնցը 1847—
1881 թթ. Կ. Պոլսում և Թիֆլիսում հրատարակեց «Թորոս Լե-
վոնի», «Երկունք Թ դարու» և «Թեոդորոս Ռշտունի» վեպերը:
Նա հայ գրականության մեջ մտավ որպես հայ ուսման տիկա-
կան պատմավեպի հիմնադիր: XVIII դարից մինչև XIX դարի
կեսերը, ազգային զարթոնքի և վերածնության ամբողջ ընթաց-
քում հայ գրականության զարգացման գլխավոր ազդակներից
մեկը եղավ պատմության վերաիմաստավորումն՝ իբրև հայու-
թյան պատմական առաջընթացի գաղափարական դեմքերից
մեկը:

Մեզ հայտնի են մխիթարյան պատմագրության առաջին
նվաճումները, որոնք թեև կրոնական աշխարհայեցողությամբ,
բայց և այնպես հնարավորություն տվին ազգային իդեալնե-
րով համակելու հայ գրականության նոր ուղղությունը՝ կլա-
սիցիզմը: Հայկական կլասիցիզմը ճանապարհ բացեց ուսման-
տիղմի առջև, որը և լուծեց նոր գեղարվեստական պատմահա-
յեցողության հարցերը: Հաղթահարելով հին պատմագրության
նյութի մշակման և ուսումնասիրման մեթոդաբանության սահ-
մանափակությունները, հայ ժողովրդի պատմությունը հետըղ-

հետեւ դրվեց գիտական համակարգի տակ, ուսումնասիրվեցին հին շրջանի, միջնադարի և նոր շրջանի պատմության սերտ կապերը՝ հայտնաբերելու համար պատմական դարգացման միասնական ընթացքի գլխավոր ուղենիշները:

Այս տեսանկյունից էլ, ահա, հայ գրականության մեջ դիտվում է պատմական վեպի գաղափարական ու գեղագիտական սկզբունքների ձևավորման մի ուրույն պրոցես, որն արտացոլում է մեր ժողովրդի պատմական կյանքի բարդ և հակասական անցումները: XIX դարի առաջին կեսին հայ գրականության մեջ արդեն կային պատմավեպի ստեղծման գաղափարական ու գեղագիտական գրեթե բոլոր նախադրյալները, սրունք լիարժեք դրսևորվեցին միայն XIX դարի 70—80-ական թվականներին՝ Ծերենցի, Րաֆֆու, Մուրացանի երկերում:

XVII դարի վերջին սկիզբ առած հոգևոր շարժումը XVIII դարում ձևավորված հայկական գաղափարաբանության մեջ արմատավորում է ազգամիասնության և հայրենասիրության բարձրագույն սկզբունքները: XIX դարի առաջին երեսնամյակին մխիթարյան կլասիցիզմը ինչպես շափաթ և արձակ գործերում, աչնպես էլ ողբերգություններում առանձին տեղ է տալիս միմյանցից ու թագավորից պառակտված իշխանների կենտրոնախույս ձգտումների պատկերմանն ու քննադատությանը, մի բան, որ գեղարվեստական կառույցի ներսում հաճախ ուղեկցվում էր թագավորի հետ համագործակցության և միաբանության բարոյախոսական տրակտատներով:

1830-ական թթ. հայկական կլասիցիզմը գոյակցում է արդեն ձևավորվող գրական նոր ուղղության՝ ռոմանտիզմի հետ: 1853 թվականին Վիեննայի Մխիթարյանների օրդան «Շվրոպան» տպագրում է «Արտաշեսյան Արտավազդի բարքն ու վարքը»: Առանձին հրատարակությամբ լույս են տեսնում «Տրդատի կյանքի վերջին օրերը և մահը», «Սոսինք Արագածոտնիայ կամ Խոսրով թագավոր», «Ամբաստ Բագրատունի»: Գ. Պատկանյանն իր «Արարատում» տպագրում է վեպ Բուրինյաց իշխան Թորոս 2-րդի մասին, աչնուհետև՝ «Արամերգ», «Հայկերգ», «Վարդենի», «Առնակ», «Կար» և շափաժո աչլ գործեր:

կլասիցիստական վեպի սյուժեները հիմնականում կա-
ռուցվում են թագավորների և իշխանների ներքին հարաբերու-
թյունները ներկայացնող պատմական տարբեր դրվագների
վրա, որոնց մեջ գործում են հայրենիքին նվիրված կամ դավա-
ճան իշխաններ: Գեղարվեստական հյուսվածքը ցուցադրում է
նախախնամության կամքով սահմանված շարի ու բարու հա-
վիտենական պայքարը: Իշխողը կրոնական բարոյախոսու-
թյունն է, որը մարդու բոլոր տեսակի ձգտումները և նրա իրա-
կանացման հավատը կապում է «ամենավերինի»՝ աստծու հետ:

Այն, ինչ պետք է աներ ռոմանտիկական արձակը, կլասի-
ցիզմի շրջանակներում, որոշակի պատմական սահմանափա-
կությամբ հանդերձ, արեց պատմական ողբերգությունը:
Պ. Մինասյանը, օրինակ, մի նոր աստիճանի բարձրացրեց
հայրենիքի քաղաքական անկախության թեման՝ տալով նրան
համազգային նշանակություն:

Մ. Թադիադյանն առաջինն է, որ «Վեպ Վարդգիսի» ստեղ-
ծագործությամբ փորձում է եվրոպական վեպերի օրինակով
պատմության դրվագներում որոնել այն թելերը, որոնք կա-
պում են իրար պատմության ողջ ընթացքը, այդ ընթացքի մեջ
բացահայտում պետական միանձնյա իշխանության պաշտպա-
նության գաղափարը: Հրաժարվելով ողբերգությունների մշա-
կած կլասիցիստական թեմաներից՝ նա իր վեպի գլխավոր հե-
րոսը դարձնում է ժողովրդական ամենահին զրույցներից մե-
կում գործող՝ Տուհաց գավառից եկած Վարդգեսին, որն առանց
իր իշխանական ծագումը հրապարակելու, դեպքերի բերումով
մերկացնում է Երվանդ թագավորի դեմ դավադրություն կազ-
մակերպող իշխաններին և իր «հայրենապաշտպան» թուրը,
որպես պետության միասնական ուժի գրավական, ղեկում թա-
գավորի առջև:

Այն ժամանակ, երբ Թադիադյանն իր «Ազգասեր» և «Ազ-
գասեր Արարատյան» հանդեսներում սրտնում էր պատմական
անցյալը նոր օրերի հետ կապող հանգույցներն ու հայրենա-
սիրության ոգեկոշող դրվագները, Ղ. Արիշանը «Բապմալն-
պում» տպագրած բանաստեղծություններում և խորհրդածու-
թյուններում, այնուհետև՝ «Հուշիկը հայրենյաց հայտը» գրքում

բացում է հայոց աշխարհի պատմութեան մոռացված էջերը: Հայ ժողովուրդը պետք է ոնենա իր պատմութիւնը, գրում է նա, «միայն թե մեր ուղած պատմութիւնն ալ չըլլա շոր ու ցամաք դիպվածներու պատմութիւն, ինչպէս լրագրաց ոճն է, կամ աղգաբանութիւն մը, կամ միայն աշխատողներու վարք, հապա ժողովրդոց վարքը պատմե իբրեւ մեկ մարդու մը վարք կամ մեծ ընտանյաց մը»¹:

«Կարելի է ասել,—գրում է Վ. Թերզիբաշյանը,—որ XIX դարի առաջին քառորդում, Եվրոպայում արդեն տիրապետող ուղղութիւնը դարձած ռոմանտիզմը ճանապարհ է գտնում դեպի ս. Ղազար կղզում պարփակված միաբանութիւնը, սակայն չի կարողանում տիրապետող դառնալ»²: Երբ Ալիշանը գրում էր իր «Հուշիկները...», հուզմունքով մտածում էր, թե երբ պիտի հին հիշատակների վրա շարժվի գրողի «գրիչը», այնպես, որ պատմիչը վիպասան դառնա, բանաստեղծը՝ պատմիչ, պատմավիպասանը՝ պատմիչ-բանաստեղծ: Ալիշանի գործը, գրում է Արշակ Զոպանյանը, մեծապես նպաստել է աղատագրական շարժմանը, նրա ծննդյանն ու աճմանը՝ արդի հայ մտքի մեջ, «որովհետեւ ժողովուրդ մը, երբ գիտակցութիւն կունենա անցյալին մեջ, մեծ ու ազատ եղած ըլլալուն չի կրնար երկարորեն հանդուրժել անարգ կացութեան մը մեջ կապկապած մնալու, և կշտապի ամեն ղոհութիւնն թափել, այդ գեղեցիկ անցյալը դրականապէս վերանորոգելու համար: Ալիշանի գործը սթափեցնող, ազնվացնող, ներշնչող մեծ ձայնն է, որ պատրաստած և դուրացուցած է Րաֆֆիի գործը»³:

Հայոց պատմութեան ավանդների, ժամանակի ոգուն համապատասխան արձագանքների ցայտուն դրսևորումն է Ն. Աբովյանի «Վերք Հայաստանին»: «Պատմական ճակատագրի ողբերգութեան մեջ հերոսութեան էպոպեայի հայտնաբերումը մի մեծ վավերական էր,—գրում է Ս. Սարինյանը,—ուր ռոմանտիկ Աբովյանը ի լուր աշխարհի պիտի կարդար իր ազգի գոյութեան իրավունքը»⁴: Ինքը՝ Աբովյանը, գրում էր, թե պատմութիւնը մինչ այժմ ծառայել է մեծ ժողովուրդներին, նրանցով է որոշվել պատմական անցյալի ներքին օրինաչափութիւնների ընդհանուր շղթան: Այժմ ժամանակն է՝ համաշխար-

հային պատմության մեջ բացելու մեր ժողովրդի փառավոր անցյալը, ցույց տալու, որ հայերը նույնպես իրավունք ունեն գրավելու իրենց պատմական տեղը: «Ո՞վ է նայում հայերին. քանի որ հիմնականում իրենց առաջ են գցում»⁵: Նա կշտամբում է պատմիչներին, որ նրանք ավելի շատ խոսում են անմիաբանության, քան ժողովրդի պատմության հերոսական դրվագների մասին: Աղգասիրության և աղգային ոգու հայտնությունը Աբովյանի պատմահայրենասիրական ռոմանտիզմի գլխավոր նորույթներից մեկն է: Աբովյանի «Վերք Հայաստանին» լույս տեսավ 1858 թվականին: Նրա նոր ավանդույթներն իրենց իրար աղդեցությունն ունեցան XIX դարի երկրորդ կեսի հայ ռոմանտիկական գրականության գաղափարական և գեղարվեստական զարգացման վրա:

1850—1860-ական թթ. լուսավորական սերունդն արդեն հաղորդակից էր եվրոպական գեղարվեստական մտքի հայտնություններին: Գրականության մեջ ընդլայնվում են նախորդ տասնամյակներին ռոմանտիկական ուղղության նվաճումները հաստատող գաղափարական միտումները: Ռոմանտիկական պատմական դրաման առաջադրում է հայրենասիրության գաղափարի մշակման նոր հայեցակետեր:

Ռոմանտիկական այդ դրամաների մեջ Գր. Արծրունին տեսնում էր «մի հասարակական միտք, մի ձգտում, մի տենդենցիա, որը ծնեցնում է ժողովրդի մեջ սեր գեպի հին անցյալը, ոգևորում ամբոխը, ազատասիրություն տարածում հասարակության մեջ...»⁶:

2

Գրքի առաջին մասում մենք ծանոթացանք 1848 թ. ֆրանսիական բուրժուական հեղափոխության հայ ակնադատների դործունեությանը, որոնք հայ հասարակական մտքի և գրականության մեջ հաստատեցին նոր սկզբունքներ՝ հակադրվելով ֆեոդալական գաղափարախոսության հիմունքներին, իսկ գրականության մեջ՝ կլասիցիստական դոգմաներին: Եվրոպական ռոմանտիզմի գեղարվեստական փորձը օգնում է հայ գրական-

նությանը՝ լուծելու կլասիցիզմից ռոմանտիզմին անցման շրջանի հակասություններն ու տարբերությունները:

«Եվրոպական ռոմանտիզմի ժամանակագրական սահմաններն ավելի լայն են, քան ընդունված է ներկայացնել գրական-նության պատմության մեջ»,—գիտում է Նեուպակուեան՝ «Եվրոպական ռոմանտիզմ» աշխատության մեջ (1979 թ.): Ներկայացնելով առանձին աղգային գրականությունների մեջ ռոմանտիզմի զարգացման պատմությունը, նա կանգ է առնում տարբեր գրականությունների զուգամիտող կամ տարամիտող այն հատկանիշների վրա, որոնք միաժամանակ ընդգծում են գեղագիտական սկզբունքների և՛ ընդհանրությունները, և՛ առանձնահատկությունները: Այս ուսումնասիրությունն ընդհանրապես ցույց է տալիս, որ ամեն մի աղգային գրականություն չի կարող բարձրանալ համամարդկային նշանակության աստիճանի, եթե սահմանափակվի միայն աղգային նեղ շրջանակների մեջ, չհասկանա և չյուրացնի համաշխարհային պատմության և գրականությունների փորձը միավորող ընդհանուր փիլիսոփայական օրենքները:

Հայ անգրանիկ լուսավորիչները, նրանց թվում և Ծերենցը, 1850-ական թթ. գիտակցում էին գրականությունն աղգային շրջանակներից դուրս բերելու և վերջինիս հեռանկարները պատմական զարգացման ընդհանուր պրոցեսների մեջ դիտելու անհրաժեշտությունը: Այդ գիտակցությունն ինքնին պարտադրում էր մշակել ֆրանսիական նոր պատմագրության սկզբունքներով ձևված մի պատմահայեցություն, որն անմիջապես բխում էր իրենց ապրած օրերի աղգային-քաղաքական հրատապ խնդիրներից: Այդ խնդիրների մեջ էին մտնում կլասիցիստական գրականության պատմահայեցության քննությունը, լուսավորության, կրթության, բարոյական և հասարակական առաջադիմության հին նորմաների վերանայումները, հայրենասիրության գաղափարի ընդլայնումը և այլն:

Ռոմանտիկական պատմահայեցությունը գիտական հիմքերի վրա նոր բովանդակությամբ տվեց բարոյաբանական այն հարցադրումներին, որոնք կլասիցիստական գրականության մեջ պահպանվում էին կրոնական թանձր շղարշի տակ: Կա-

թուիկական ռեակցիայի և կղերամտության դեմ մղված պայքարում 50—60-ական թթ. Կ. Պոլսի, Զմյուռնիայի առաջադեմ գործիչները, նրանց թվում և Ծերենցը, ուրվագծեցին նախապաշարումներից ղերծ, բարոյական ուրույն առաքինություններով օժտված այն մարդու իդեալական տիպը՝ որը հետագայում պետք է հանդես գար Ծերենցի վնասներում:

Հայ լուսավորիչներն իրենց ծրագրումների մեջ իրական հայրենիքի իդեալը պատկերացնում էին մարդկային կոնկրետ հարաբերություններով: Այդ պատկերացումների հիմքում ընկած էր ժողովրդի դերի բարձրացման գաղափարը, որն իր հաս-բերում էր նոր վերաբերմունք տիրող հասարակական և բարոյական նորմաների հանդեպ՝ մարդու հոգեբանական կերտվածքից մինչև պետական և հասարակական կառուցվածքի բոլոր ազակները:

Ֆրանսիական նոր պատմության հեղինակները՝ Բյւրը, Գիլոն և մյուսները, առանձին հետաքրքրություն են ցուցաբերել Վ. Սկոտի վնասների նշանակության, պեղարվեստական զարգացման վրա դրանց թողած ազդեցությունների նկատմամբ: Նրանց շատ է վճռել, օրինակ՝ գեղարվեստական ճշմարտության և պատմական ճշմարտության փոխհարաբե-րույթյան հարցը: Վ. Սկոտի վնասներում, գրում էին ֆրանսիացի քննադատները, ավելի շատ ճշմարտություն կա, քան պատմության մեջ: Վ. Սկոտի սյուժեները միայն պարզ հորինվածք-ներ էին, որոնք, սակայն, ճիշտ էին ներկայացնում պատմա-կան կոնկրետ ժամանակաշրջանի էութունը, պատմական առաջընթացի գլխավոր ուղղությունը՝ իր ներքին հակասու-թյունների ու կոնֆլիկտների մեջ: Որքան ճշմարտամոտ են ներկայացվում այդ պրոցեսներն, այնքան խորն է պատմական ճանաչողությունը:

Ընդգծելով Վ. Սկոտի խոր ազդեցությունը XIX դարի առաջին տասնամյակների ֆրանսիական պատմավեպի վրա՝ ֆրանսիական պատմագրության նոր դպրոցի ներկայացուցիչները ավելի հստակ են պատկերացնում այն առանձնահատկություն-ները, որոնց մեջ երևում են ֆրանսիական վեպի ինքնուրույն-նությունը և զարգացման սեփական ուղիները: Պատմական վե-

պում ամեն մի հեղինակ առաջին հերթին ուշադրութեան է առնում իր սեփական ժողովրդի պատմական կոնկրետ պայմանները, ազգային հոգեբանութիւնը, մտածողութեան եղանակը, սովորութիւնները: Պատմութեան բացված դռների ետևում արվեստագետի խորաթափանց աչքը նկատում է այն սերտ կապը, որ կա մի կողմից՝ անցյալի պատմական անցքերի և դրանց մեջ գործող անձնավորութիւնների, մյուս կողմից՝ իր օրերին տեղի ունեցող իրադարձութիւնների և դրանց մասնակիցների կամ առաջնորդների միջև:

Վ. Սկոտնի իր գրքերի մի շարք առաջարաններում, անդրադառնալով իր պատմական վեպերի շուրջը ծագած տարակարծութիւններին, անում է բնորոշ խորհրդածութիւններ. վեպի մեջ անհրաժեշտ է վերականգնել էպոխայի հիմնական գծերը, բայց հաճախ լինում է այնպես, որ պատմական և գրական հուշարձանները քիչ են նյութ տալիս լայն ու ճիշտ գեղարվեստական ընդհանրացումների համար: Եղած նյութով հեղինակը երբեմն անկարող է լինում գեղարվեստորեն վերականգնել դեպքերի ճշմարիտ ընթացքը: Այստեղ արդեն վճռական դեր է խաղում հեղինակի երեակայութիւնը: Խիստ հնչաբանը կարող է մտածել, ասում է Վ. Սկոտը, որ խառնելով երևւակայութիւնը իրական ճշմարտութեան հետ, գրողը աղավաղում է պատմութիւնը ժամանակակից դատումներով, ապակողմնորոշելով ընթերցողին պատմական ճշմարտութիւնը ըմբռնելու մեջ: Դա սխալ մեկնութիւն է:

Պատմավիպասանի խնդիրը պետք է լինի պատմութեան մեջ վեր հանել այն երևութիւնները, որոնք հատկանշական են բոլոր ժամանակների համար: Իսկ դրա համար, ասում է Վ. Սկոտը, պետք չէ մողեռնացնել մարդուն, այլ նրան պետք է հասկանալ և ցույց տալ նրա մեջ այն մարդկային ապրումները, որոնցով նա բնորոշում է ոչ միայն իր միջավայրը և ժամանակը, այլև այն, ինչ կապում է նրան ընդհանուր մարդկութեան և բոլոր ժամանակների հետ: Պատմական վեպը, նկատում է Ռեիզովը, ի մի բերելով Վ. Սկոտի տեսակետները, հաստատում է անսահման բաղմադանութիւնը մարդկութեան

պատմության և միաժամանակ հաստատում է մարդկության
միասնությունը ժամանակի և տարածության մեջ:

Ոչ ոք ավելի լավ, քան Վ. Սկոտը, ներկայացրեց Շոտլանդիայի կյանքը՝ նրա պատմության կրիտիկական շրջաններում, երբ ժողովուրդը կրում էր ծանր տառապանքներ՝ ենթակա
ամեն տեսակի բռնությունների և հալածանքների: Սկոտը
պատկերում է իր ժողովրդի ընդվզումը բռնության դեմ, ժո-
ղովուրդ, որը կրում է իր մեջ արգարության և ճշմարտության
համար մղվելիք պայքարի խոր գիտակցությունը: Պատմական
ճշմարտությունը գեղարվեստական ճշմարտության մեջ երև-
վան է հանում ոչ միայն իր ժողովրդի պատմական կյանքի
նկատմամբ հեղինակի ունեցած ճիշտ ըմբռնումը, այլև դի-
տակցումը այն ընդհանրությունների, որոնք իր ժողովրդին
կապում են բոլոր ժողովուրդների հետ՝ բոլոր ժամանակներում:
Դա Վ. Սկոտի գեղարվեստական պատմահայեցության կարևոր
հայտնություններից է:

Վ. Սկոտի ազդեցության մասին խոսելիս անհրաժեշտ է
նշել նաև, ինչպես Ռեիզովն է ընդգծում, որ ֆրանսիական
պատմական վեպը ավելի հիմնավոր ձևով փոխեց պատկերա-
յումը մարդու և հասարակության մասին: Անհատը ստացավ
բարոյական ազատություն՝ ազդելու հասարակության վրա,
մասնակցելու իր ժողովրդի զարգացման պատմական պրոցե-
սին. ֆրանսիական պատմական վեպը սերտորեն կապվում է
քաղաքական նկրտումների բարոյական սկզբունքների հետ:
Այդ տեսակետից, ահա, Հյուգոյի, Մերիմեի, Բալզակի վեպերը
կապված լինելով Վ. Սկոտի մշակած ավանդների հետ, տար-
բերվում են նրանից իրենց առանձնահատկություններով:

Ս. Օրլովն իր «Վալտեր Սկոտի պատմական վեպը» աշխա-
տության մեջ, նշելով պատմական վեպի ժանրային առանձ-
նահատկությունները, անդրադարձել է Հեգելի, Բալզակի,
Պուշկինի, Բևիլիսկու, Հյուգոյի մշակած սկզբունքներին և կար-
ծիքներին: Այս սկզբունքների և կարծիքների վերլուծությու-
նից հանված եզրակացությունների մեջ էականը մի կողմից՝
այն ընդհանրություններն են, որոնք գոյություն ունեն պատ-
մական անցյալի գեղարվեստական տարրեր արտացոլումների

միջև, մյուս կողմից՝ այն առանձնահատկությունները, որոնք հետաքրքրություն են ներկայացնում միայն տվյալ ազգային գրականության շրջանակներում:

1860-ական թթ. Վ. Սկոտի և Վ. Հյուգոյի պատմավեպերի գեղարվեստական սկզբունքները և ումանտիկական ուղղությունը ներկայացնող հատկանիշները թափանցեցին նաև հագ գրականության մեջ, ընդլայնեցին հայ պատմավիպագրության շրջանակները և գեղարվեստական բարձր մակարդակով արտահայտվեցին Ծերենցի և Րաֆֆու պատմավեպերում:

Սեփական ժողովրդի պատմական կյանքի ճանաչողությունը ունի լայն ընդգրկում: Խորապես ծանոթ լինելով մեր պատմությանը, պատմիչների մոտ պահպանված՝ հին հոմեական-հունական պատմության՝ մեզ հետ առնչվող էջերին՝ Ծերենցը շատ տեսակետներից վերանայել է մեր պատմիչների թողած ժառանգությունը, համաշխարհային պատմության փորձից ելնելով՝ արել հղրակացություններ, որոնք հնարավորություն են տվել ոչ միայն ընդլայնել մեր պատմագրության ուսումնասիրության շրջանակները, այլև գիտական հիմքերի վրա դնել պատմության գեղարվեստական ճանաչման հիմնական սկզբունքները, ստեղծել մի ուրույն պատմափիլիսոփայություն, որի մեջ առաջնայինը ժողովրդի պատմական դերի ըմբռնումն է, դրա արտացոլումը գրականության մեջ: Գեղարվեստական գրականության մեջ Ծերենցը մշակեց պատմական նոր հայացք ժողովրդի և պետության կապի վերաբերյալ, առաջադրեց ազգային կյանքի կազմակերպման գործում պետականության ուժի և ժողովրդի ուժի միասնության, պետական մտածողության հարցերը: Այս հարցերը նրա մոտ սուռճացան մեր կյանքի ծանր ճգնաժամներից մեկի ժամանակ, երբ հարկավոր էր, որպեսզի ժողովուրդը գիտակցի սեփական ուժերը՝ կործանումից փրկվելու համար:

Այս տեսանկյունից էլ դիտվում է հայ պատմավեպի զարգացման օրինաչափ կապը անգլիական և ֆրանսիական պատմավեպերի հետ՝ ազգային առանձնահատկություններով հանդերձ: Ազգային գրականություն ստեղծելու համար անհրաժեշտ է ուշադրություն դարձնել ժողովրդի անցյալի և ներկայի վրա:

«Եվ մի՞թե կպակսին մեզի ներքին նյութերը,— գրում է Մ. Մամուրյանը,— հին ու նոր արկածներ, տեսարաններ՝ որպեսզի անոնց վրա հիմնենք մեր հեղինակությունները։ Մի՞թե բանահյուսության համար, օդ, երկին, ավերակ և գերեզման, ողբ և արտասուք չկան Հայաստանի մեջ, մի՞թե ազգային երգիչները համար սեր, ազատություն, խանդ ու եռանդ անհե՞տ եղան մի՞թե իմաստասերին համար հին պատմությունն ու մեր արդի թշվառության պատճառները լեզու չունին, մի՞թե վիպագրության համար սրտաշարժ հառաչներ, անասելի ցավեր, եղբրական իրողություններ, ձայն մը չունին, այո ունին և վգայուն ու բանիմաց գրագետ մը բավական է որ կամփունենա և իսպառ հիշողություն, մարմին, շունչ, խորհուրդ մը դառնա իր գրչին»⁷։

Խոսելով թարգմանությունների մասին՝ Մամուրյանը գրում է, որ դրանք պետք է բխեն առաջին հերթին ժողովրդի հոգեկան, բարոյական և հասարակական ընդհանուր միտումներից, որոնք կարող են կենսատու աղբյուր լինել ազգային վիպագրության զարգացման համար։ Հյուզոն, Վ. Սկոտը, Ա. Դյուման, որբան էլ քիչ լինի նրանցից մեր ստացած հոգևոր սնունդը, ասում է Մամուրյանը, այնուամենայնիվ նրանք նպաստում են հիլրոպական գաղափարների ներթափանցմանը հայ իրականություն, խթանում ազգային գրականության մեջ պատմական միտումների զարգացումը, պատմության գեղարվեստական ընկալումը։

XIX դարի 70-ական թթ. հայ դրական շարժումը նախ և առաջ ամրապնդում էր նախորդ տասնամյակների նորածնվ գրական ավանդույթները։ «Հայ ժողովրդի միջից դուրս են գալիս դրողներ, մատենագիրներ,— գրում է Ս. Սպանդարյանը,— որոնք իրենց լավ և սխալ, գեղեցիկ և տգեղ կողմերով ներկայացնում են ժողովրդի պատկերը, նրա մտավորական կյանքի հայելին, նրա ճաշակը»⁸։

Հետագայում կեն այդ շրջանի գրականության մեջ տարբերակում էր «ռեալական և իդեալական ուղղությունները»։ մի դեպքում, ասում էր նա, գրողն արտացոլում է իրական կյանքը, մյուս դեպքում նա առաջադրում է նաև գաղափարներ,

որոնք անհրաժեշտ են մարդկային կյանքի բարեփոխմանը, հասարակության զարգացմանը: 1870-ական թթ. արևմտահայ գրական մտավորականությունը, ինչպես տեսնում ենք, ավելի շատ թարգմանում էր եվրոպական ուսման տիկներին, բացառում՝ նատուրալիզմը՝ շտաբբերակելով այն ռեալիստական ուղղությունից: «Մենք,—գրում էր Գր. Օտյանը,—մեկ կողմեն նոր սերունդը նոր մատենագրության ընթերցմանը կհրավիրենք, մյուս կողմեն շենք ուղեր, որ անփորձ ու տհաս պատանիք գլխիկոր մտնին թեթև ու լպիրշ գրվածքներու ասպարիզին մեջ, որոնք բարոյականն ավրելու ու կրոնական զգացումը տկարացնելու կը ծառայեն...»⁹:

Գրողի հասարակական կոչումը պարտադրում է նրան, ինչպես Արծրունին կասեր, ստեղծել «գործնական գաղափար հայտնող գրվածքներ»: Ուստի այդ շրջանի մեր գրականության միտումնավորությունը ոչ միայն զուտ ազգային, այլև ընդհանուր դարաշրջանային երևույթ էր: Ինչպես Րաֆֆին, Պատկանյանը, այնպես էլ Մերենցը իրենց հասարակական միտումնավոր ուղղությամբ արտացոլիցին ժամանակի ոգին՝ բարձրացնելով մեր գրականության հասարակական արժեքն ու հնչեղությունը: Պատմական նոր իրադրությունը նոր հույսեր ու բաղձանքներ է ներշնչում նրանց՝ ստեղծագործությունների մեջ առաջ բերելով նորանոր միտումնավոր գաղափարներ: Գրականության մեջ ազգային ազատագրության պատմական ձրգտումներն արտացոլվում են կոնկրետ ծրագրերի և գործնական պահանջների ձևով:

Հայնանում են ուսման տիզմի շրջանակները, հատկապես գեղարվեստական արձակն ստեղծագործական մեծ նվաճումների է հասնում Մերենցի և ապա Րաֆֆու պատմական վիպերի մեջ: Արտացոլելով ազգային-ազատագրական շարժման հակասական, բարդ կողմերը՝ նրանք մշակելիցն պատմահայեցողության նոր սկզբունքներ, որոնք վերանայեցին հայ պատմագրության միջնադարյան, ինչպես նաև մխիթարյան կլասիցիզմի ավանդները՝ արտահայտելով պատմական նոր իրադրությունը համապատասխան հայացքներ:

«Սև լեռին մարդը» վեպի առաջաբանում, անդրադառնալով թարգմանված գրքերին, մամուրյանը գտնում է, որ բոլոր

ղեկաբերում այդ գրքերում արծարծված խնդիրները պետք է համապատասխանեն մեր ժողովրդի, ժամանակի պահանջներին, մեր ձգտումներին և զգացումներին: Թեպետ նրանցից ստացած «հոգեկան սնունդը քիչ է մեզ համար», դրում է նա, բայց նրանք օգնում են ժողովրդի զարթոնքին, բարձրացնում նրանց ինքնագիտակցությունը, «մտային սնունդ տալիս», պատրաստում նրանց սեփական ձգտումների և զգացումների վերարտադրության համար:

1871 թ. Մամուլըյանը հրատարակում է «Սև լեռին մարդը» պատմական վեպի առաջին գլուխները, իսկ ամբողջությունը հրատարակում է 1882 թվականին: Թեման ընդգրկում է 1826—1828 թթ. ռուս-պարսկական պատերազմը և արևելահայ հատվածի ազատագրումը պարսից լծից: Արևմտահայ ժողովրդի ներկայացուցիչը՝ գյուղացի Զորան կաղմակերպում է կամավորական խումբ, մասնակցում արևելահայերի ազատագրման համար մղվող պատերազմին: Այդ վեպով Մամուլըյանն արտահայտում է իր դրական վերաբերմունքը ռուսական զորքերի հաղթանակների նկատմամբ, ռուսական հեղափոխության մեջ տեսնելով ամբողջ հայության ազատագրման ճանապարհությունը:

Մեր աշխարհիկ գրականությունը, նկատում է Մամուլըյանը, իր բովանդակությամբ աղքատիկ է, նա դեռ չի կարողանում իր նյութը հանել ազգի կենսատու ակունքներից, ներշնչել ընթերցողին ազգային կենսական հարցեր շոշափող գաղափարներ: Անհրաժեշտ է ներկայացնել հայ ժողովրդի կյանքի պատկերն իր անցյալի և ներկայի մեջ, ցույց տալ նրա լավ ու վատ կողմերը, նրա պատմական ձգտումները: «Դրա համար հայ գրականությունը պետք է ունենա իր բերանժեները, բայրոնները, հյուգոներն ու գյոթենները: Սակայն ո՞ր է նրանք, ո՞վ է պաշտպանում մի Աբովյան մը, որ Հայաստանի վերքը ցույց տալու և ողբալու ատենը՝ անտեսանելի ձեռք անդունդ կզորի, նալբանդյան մը, որ ուղիղ ճանապարհ հայտնելուն՝ արծիվին ճիրանին տակ կճնշի և աղատություն գոշելով հոգին կփչե, Պատկանյան մը, որ փլած սրտերու հայրենասիրության թելերը կթնդե: Այո, կան և թերևս շատ կան

այնպիսի գլուխներ որ թիւ առնելու համար ազատություն, օգնություն և դուրակեցություն կխնդրեն և այս օգն ու դուրակեցությունը առկաելով՝ անտես և անհայտ կհնծեն, կտառապին, կմարեն»¹⁰։

1860—1870-ական թթ. հայ պոեզիան ևս արտացոլում էր ինչպես իր ապրած օրերի, այնպես էլ պատմական անցյալի հայության ազգային-հայրենասիրական զգացումները, հայ գրականության մեջ բերում մարդկային տառապանքների, վշտի վերապրումները, որոնք ինքնին ազդարարում էին գեղարվեստական նոր ուղղության՝ ռոմանտիզմի մուտքը հայ գրականության։

Ծերենցը դեռևս մխիթարյան դպրոցում սովորելով է պատմահայրենասիրական սյուժեներով տրվող ներկայացումների ազգային-ազատագրական գաղափարներով։ Հետագա տարիներին իր՝ պատմության վերաբերյալ խորհրդածությունների մեջ քննադատելով կլասիցիստական ողբերգության գաղափարական սկզբունքները, հանգում է այն կարևոր եզրակացության, թե պատմական ճշմարտությունը մարդկային կենդանի զգացմունքների տրամաբանության մեջ է. այդ տրամաբանության միջոցով պետք է ճանաչել ու վերարտադրել այն կապը, որ կա անցյալի ու ներկայի միջև։ Ռոմանտիկական դրաման առաջինը փորձեց նոր սկզբունքների կիրառումով հաղթահարել դրամայի սահմանափակումները։ Սակայն այս դեպքում էլ պատմական անհատը կտրված մնաց ժողովրդից, պատմության վարագույրը մնաց մինչև վերջը չբացված։

Ժամանակը պահանջում էր ժողովրդի կյանքի գեղարվեստական պատկերը ներկայացնել պատմական դարգացման միասնական ընթացքի մեջ, ցույց տալ այն կապերն ու ընդհանրությունները, որ գոյություն են ունեցել և այժմ էլ ունեն ժողովուրդների ազգային-քաղաքական և անձնական սարսուռների ու խոհերի միջև։ Պատմական անցյալը լիարժեք ներկայացնելու պահանջը Րաֆֆին նշեց «Սամվել» վեպի առաջաբանում։ Մեր անցյալի պատմագրության և գրականության մեջ չկան ժողովրդի առօրյա կյանքի ու կենցաղի նկարագրություններ. պատմիչները բավարարվել են հիմնականում պատերազմական գործողությունների նկարագրությամբ. չկան

բարձրի լայն պատկերներ, չկա պատմութեան հիմնական շարժիչ ուժը՝ ժողովուրդը, նրա հոգեբանությունը արտահայտող իրողություններ և այլն¹¹:

1860-ական թթ. Հ. Քաջբերունու, Պ. Պռոշյանի, Ղ. Աղաջանի գեղարվեստական արձակի նոր նմուշներն արդեն հրապարակի վրա էին, երբ Րաֆֆին պահանջում էր ժողովրդի կյանքը վերարտադրող վեպեր: «Ռոմաններն են այն կախարդական հայելիքը, որոնց մեջ ազգերը՝ տեսանելով յուրյանց կյանքի տգեղ ու ավերված պատկերքը, յուրյանց մոլությունների ամոթալի նկարագիրքը, ուսանում են շինել և բարեկարգել յուրյանց դրությունը»¹²: Վեպը, լինի դա ժամանակակից թե պատմական, «ազգի բարոյական և իմացական կյանքի սլաոմագրություն» դերն է ստանձնում:

Մեսրոպ Թադիագյանը առաջինը ղգաց այդ պահանջը և պատանի տարիներից Հայաստանի տարբեր շրջաններից հավաքեց ժողովրդական զրույցներ, գրի առավ հին սովորությունները, ծեսերը, պատմական հուշարձանների բեկորներից արտագրեց հին արձանագրությունները: Բայց այդ գրառումները կորան նրա աստանդական կյանքի, կրած տառուպանքների օրերին. միայն փրկված մի քանի պատառիկներ երևացին նրա հրատարակած պարբերականներում և «Ճանապարհորդութիւն ի Հայս» աշխատության մեջ:

1840-ական թթ. Ղ. Ալիշանի հրապարակած, այնուհետև նաև մամուլում առանձին առիթներով տպագրված ժողովրդական նյութերը, իսկ 1870-ական թթ. սկսած՝ Գ. Սրվանձտյանի գրառումները, գրականության մեջ մտցրին մեր ժողովրդի պատմական կյանքի, նրա հոգեբանության, մտածողության, սիրո, վշտերի ու երազանքների փաստացի տվյալները:

Ինչպէս տեսանք սույն ուսումնասիրության առաջին մասում, Մերենցն իր առաջին վեպը գրեց ճիշտ ժամանակին, ինչպէս նշել է նրա առաջին գրախոսներից մեկը: Մերենցը կյանքի կոչեց և գրականության մեջ արտացոլեց թուրքական ռեալիստի պայմաններում տնտեսական-ազգային-քաղաքական նորանոր հալածանքների մեջ տառապող ժողովրդի՝ իր կյանքն ու ազգային գոյությունը պահպանելու տարերային

ձգտումները: Այն ժամանակ, երբ «Մշակը» զբաղված էր ներ-
քին հարցերով, Ծերենցը «Արևելյան մամուլի» 1876 թ. № 3—
4-ում հրապարակեց Վ. Հյուգոյի «Շեքսպիր» աշխատությունից
մի հատված, ուր արծարծվում էին ժողովրդական շարժում-
ների և սոցիալական ուսմունքների հետ կապված հարցեր: Այդ
հարցերը Ծերենցի մոտ վերախմբատալորվում էին սեփական
ժողովրդի ներկա վիճակից բխող պահանջներին համապատաս-
խան: Այդ ժամանակ էր, ահա, որ Կիպրոսում Ծերենցի առջև
պատկերանում են քարային Կիլիկիան, իր շրջագայությու-
նների ընթացքում տեսած անցյալի փառքի բեկորները և Զեյ-
թունի ապստամբությունը:

«...հալածանք սելջուկյանց, հալածանք ամիրապետաց և
անթիվ մահմեդական ամիրայից, հալածանք բյուզանդական
կայսերաց, հալածանք նաև ի վրաց, զինք քշեր բերել էին Տո-
րոսի բարձունքը և հոն կը լեցվեր, կդիզվեր ամպի պես ժո-
ղովուրդը, ուր կարևի շէր թե քիշ-քիշ իբրև վտակ, վերջը իբրև
զետ և էն վերջը իբրև հեղեղ չիջներ և դաշտը չողողեր»¹³:

Գլուխ երկրորդ

1. «ԹՈՐՈՍ ԼԵՎՈՆԻ» ՎԵՊԻ ԱՌԱՋԻՆ ԳՆՈՒՆՆԵՐԸ (Ա-Ը):
2. ԹՈՐՈՍ ԻՇԽԱՆԸ ՈՐՊԵՍ ՊԵՏԱԿԱՆ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՈՒԺԻ
ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՑԻՉ ԵՎ ԺՈՂՈՎՐԴԻ ԱՌԱՋՆՈՐԴ: 3. ՎԵՊԻ
ՀԵՐՈՍՈՒՀԻՆԵՐԸ: 4. ՎԵՊԻ ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ
ԱՌԱՆՋՆԱԶՍԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ: 5. ԱՐՁԱԳԱՆՔՆԵՐԸ

1

Հնագույն ժամանակներից Կիլիկիայի հիմնական բնա-
կիչներից էին հայերը: Արաբական նվաճողները VII դարի կես-
ին հանդիպել են հայ բնակչության համառ դիմադրությանը:
X—XI դարերում Կիլիկիայում գերազանցապես իշխող հայերը,
պայքարելով Բյուզանդիայի և սելջուկյան թուրքերի դեմ,
ստեղծեցին ինքնավար հայկական պետություն: 1080 թ. Բագ-
րատունիներին և Արծրունիներին ցեղակից Գագիկ Բ արքայի
թիկնապահ Ռուբեն իշխանին հաջողվեց լեռնային Կիլիկիայի

հայերի աջակցությամբ ապստամբել Բյուզանդիայի դեմ, հիմնել անկախ հայկական պետութիւն: Ռուբեն Ա-ն իր ավագ որդուն՝ Կոստանդինին, թողեց կայուն իշխանութիւն: Շարունակելով հոր քաղաքականութիւնը՝ նրա որդին՝ Թորոս Ա-ն, ընդարձակեց Կիլիկիայի սահմանները: Նրա եղբայրը՝ Լևոն Ա-ն, ջախջախեց սելջուկյան թուրքերին և խաչակիրներին: 1137 թ. բյուզանդական Հովհաննէս Կոմնենոս կայսրը խոշոր բանակով ներխուժեց Կիլիկիա, դերի վերցրեց Լևոն Ա-ին, նրա որդիներ Ռուբենին և Թորոսին:

Սովետահայ պատմաբան Գ. Միքայելյանը նշում է, որ «Ռուբինյաններն ունեին այն դրական հատկանիշը, որ ձգտում էին բյուզանդական լծից ազատադրել Կիլիկիայի տարածքը: Չնայած նրանք երբեմն ստիպված էին լինում տեղի տալ և ընդունել բյուզանդական իշխանութիւնը, բայց երբեք բաց չէին թողնում ոչ մի փոքր հարմար առիթ, որպեսզի վերականգնեն անկախութիւնը, դառնային Կիլիկիայի տները, որը և ի վերջո հաջողվեց նրանց»¹: Թորոս Բ-ից հետո Ռուբինյան իշխաններից պատմութեան էջերում աչքի է ընկել Լևոն Բ-ն: Նա շարունակել է պահպանել Հայկական Կիլիկիայի անկախութիւնը, ստեղծել ուժեղ ու բարեկարգ պետութիւն, նրա օրոք ծաղկել է հայ մշակույթը, բարգաւաճել են քաղաքները:

Ռուբինյան իշխաններից Մերենցն ընտրում է Լևոն Ա-ի որդուն՝ Թորոսին, որը, փախչելով բյուզանդական զերեւոյթունից, վերադառնում է հայրենիք, իր շուրջն է հավաքում իշխանութեանը հավատարիմ մարդկանց, վտարում բյուզանդական նվաճողներին, իրեն ենթարկում իշխաններին՝ զրկելով նրանց ինքնուրույնութիւնից, ապահովում միանձնյա իշխանութիւն: Պատմութիւնը չի տվել Թորոսի անձնական կյանքի նկարագիրը, նրա՝ Կիլիկիա վերադառնալու մանրամասնութիւնները: Պատմութեան ֆոնի վրա հեղինակը ստեղծել է մի կերպար՝ օժտելով նրան պատմական Թորոսի ուժեղ անհատական գծերով: Պատմութեան խորքից նա մեղ երևում է ոչ իբրեւ բռնակալ իշխող, այլ՝ ժողովրդի առաջնորդ, իր վրա վերցնելով մեղ՝ ժամանակակիցներիս, հտաքրբրող ազգային-քաղաքական-պետական շատ հարցերի լուծումներ:

Պատմիչները հիացմունքով են խոսում միջնադարյան քաղաք Կոստանդնուպոլսի մասին: Ահա համբավավոր հռոմեական «Ֆորում» կոչված կրկեսն իր կամարներով, արձաններով, նրանց մեջ արևի ճառագայթների ցուանքների մեջ բարձրանում է Ֆիդիասի ձեռակերտ Ապոլլոնի պղնձե արձանը: «Արևիկյան պերճանք և արևմտյան ճաշակ միացեր էին զարդարելու համար աս քաղաքը. Օտարականը ապուշ կմնար, երբ ամեն անկյան գլուխ՝ հոս ոսկեղեն դուռ, հոն մարմարիոնն մարդկանց և կենդանեաց արձաններ, անդին պղնձե փիղեր կտեսնեն»²:

Այս շքեղութունները լրացնում էին մինչև ծովեզրը հասնող չքնաղ այգիներն իրենց բարձր պարիսպներով և մյուս բոլոր շքեղութունների հետ մոռացնել էին տալիս, ինչպես հեղինակն է նկատում, Հռոմը, Երուսաղեմը, Բաբելոնը:

Բայց Կոստանդնուպոլիսը XII դարում արդեն կանգնած էր անկման եզրին, շարունակաբար տևող պատերազմները հյուծում էին բյուզանդական օրգանիզմը և դասային հակասութունների մեջ ծնվում էր քայքայումը, որը և երկիրը կանգնեցնում էր անկման վտանգի առջև: Ծերենցն, ահա, այդ շքեղությանը հակադրում է պատերից դուրս ժողովրդական կյանքի ծանր պատկերը. «...մեկ մասը քաղբին աղտոտ, զաղիր, մըշտընջեննավոր մութի դատապարտյալ, վասնզի հարուստները՝ տուններով կնեղցնեին ճամփաները և աղքատներուն խավար և աղտեղություն կթողվին...: Արդարություն չի կար ամենևին և ոչ ամոթ, վասն զի անղգամությունը օրենքներեն չէր պատըծվեր և ոչ ալ հեղինակը կնշմարվեր» (էջ 6):

Բյուզանդական շքեղ մայրաքաղաքի բաղմապիսի նկարագրություններ կան ինչպես բյուզանդական, այնպես էլ համաշխարհային պատմության էջերում, ճանապարհորդների հուշագրերում: Ծերենցի նկարագրությանը բնորոշ են այնպիսի հատկանիշներ, որոնք պարզում են նրա ընդհանուր տրամադրությունը այն քաղաքի հանդեպ, որից պատմական ժամանակներում բաղմաթիվ դժբախտություններ են հասել հայությանը և շարունակում էին հասնել նաև իր ապրած օրերին: Այդ «արևելյան պերճանքի և արևմտյան ճաշակի» մեջ, ինչ-

պէս տեսանք, նա մեկ անգամից բացում է բաղաքի ներքին վարագույրը, երևան հանում այն դարհուրելի պայամանները, որոնց մեջ ապրում է ժողովուրդը: Պատմական ճշմարտության և հեղինակի ներկայացրած գեղարվեստական պատկերի մեջ հակասություն չկա:

Այս խորհրդանշող սկիզբն ինքնին բացում է այն միջավայրը, որի մեջ պետք է հանդես գար վիպական հերոսը՝ Թորոս Լեոնին: Նոր գահ բարձրացած Մանուել Կոմնենոսի հրամանով նա աղատվում է բանտից և ներկայանում կայսեր: Սովեզրից մինչև պալատ ընկած կարճ տարածության մեջ հեղինակը ստեղծում է դրամատիկական պատկերներ, որոնք ներկայացնում են վեհը և աշխնդակը, գեղեցիկն ու տգեղը, հերոսականն ու արգահատելին, հակադրություններ, որոնք բնորոշ են ռոմանտիկական վիպագրության ստեղծած պատկերներին:

Ահա Թորոսը: Որոշակի նպատակով իրեն դիտող մաքուր կանց ներկայանում է ապուշի տեսքով, անտարբեր շրջապատի նկատմամբ: Սակայն՝ «Կարելի չէր սուր աչքի մը իր կորովի ձեռք չի նկատել, թեպետ ինք թույլ և անհոգ կերպ մը առնուկ կձևանար. և աչքերը, որ մարած էին ընդհանրապէս, հանկարծ ի մոռացութեան փայլակներ կարձակէին...» (էջ 7): Բանտից նա դուրս է եկել՝ կորցրած հորը և եղբորը: Նրա մտքերը թեւածում են հեռուները. «...երկու հոնից մեջ խորհրդածութեան ուղիղ գիծը կրնար մատնել թե այս պարզութեան տակ խորին խորհուրդներ կծածկվէին»: Հեղինակն այնուհանդերձ շտապում է ընթերցողին հաղորդել, որ այդ 20—22 տարեկան երիտասարդը իր «...սրտին անթափանց խորերուն մեջ յուր արհամարհանքը կայսերական պալատին դմբեթներէն ալ ավելի բարձր էին. վասն զի արդեն որոշած էր իր նշանավճիռը՝ Համբերութեան անխուով» (էջ 7—8):

Երիտասարդ իշխանի հպարտ և անտարբեր կեցվածքը հակադրելով շրջապատում տիրող կեղծիքին ու քծնանքին, հեղինակը ցանկացել է ցույց տալ իր հերոսի հոգեկան և բարոյական ուժերի գերազանցութիւնը, որը շատ շուտով պետք է

հենարան դառնար նրա հետագա գործողությունների համար՝ հանուն իր հայրենիքի և ժողովրդի:

Թորոսի անձնական կյանքի վերաբերյալ պատմական աղբյուրներում աննշան տեղեկություններ են մնացել: Մի դեպքում ասվում է, որ նա, աղատվելով բանտից, միառժամանակ մնացել է Կոստանդնուպոլսում՝ պալատական հսկողության տակ, ամուսնացել է մի հույն մեծահարուստ կնոջ հետ և ապագաղտնի վերադարձել է երկիր, հավաքել իր շուրջը Ռուբինյաններին նվիրված մարդկանց, աղատագրել է Կիլիկիան բյուզանդական լծից: Մի այլ տեղ նշված է, որ, աղատվելով բանտից, նրան հաջողվում է փախչել Կոստանդնուպոլսից, թաքնվել մի հայ քահանայի մոտ և ապա անցնել հայոց ղորքի գլուխ, աղատել Կիլիկիան բյուզանդական լծից: Մի երրորդ աղբյուրում էլ նշված է, որ նա մասնակցել է կայսեր արշավանքներին և հետո, ապստամբելով նրա դեմ, վերականգնել Կիլիկյան իշխանությունը:

Գ. Պատկանյանը 1850-ական թթ. սկզբին «Արարատում» տպագրել է «Ոչ ոք չի կարող նախասահմանության կարգը փոխել» վերնագրով մի գեղարվեստական գործ՝ Թորոսի մասին³:

Օգտագործելով հույն կնոջ մասին եղած վարկածը, Մերենցը ստեղծել է վիպական մի նոր հյուսվածք: Վեպի առաջին գլուխներում հեղինակը նկարագրում է Թորոսի հանդիպումը մոր կողմից ծագումով Արծրունի մի հույն կնոջ, որը օգնում է նրան գաղտնի փախչել Կիլիկիա՝ իշխանության գլուխ անցնելու համար: Վեպի մեծ մասը նվիրված է Թորոսի պատերազմական գործողությունների և իշխանության ամրապնդման համար նրա ձեռնարկած միջոցների նկարագրությանը: Վեպն ավարտվում է Թորոսի մահով:

Կիլիկիայում ստեղծված պատմական իրադարձությունների խիստ բարդ պայմաններում, պատմության տվյալներով Թորոսը իշխանության գլուխ է անցնում եղբայրների՝ Ստե-

փանեի և Սլեհի օգնությամբ, աղատագրելով երկիրը թուրք-սելջուկների ասպատակություններից և բյուզանդական լծից: 1152 թ. Անդրոնիկոս Կոմնենոսի հրամանատարությամբ բյուզանդական զորքերը կրկին ներխուժում են Կիլիկիա: Թորոսին հաջողվում է ջախջախել թշնամուն, իսկ Ստեփանեի զորամասը ոչնչացնում է Բյուզանդիոնի դրզումով կրկին Կիլիկիա մտած սելջուկյան թուրքերին: 1156-ին բյուզանդական զորքերը երրորդ անգամ մտան Կիլիկիա: Թորոսի զորամասերը կրկին ջախջախեցին թշնամուն: 1159 և 1165-ին Բյուզանդիոնի նոր հարձակումներն ավարտվում են վերջինիս լիակատար պարտությամբ: Կայսրը ի վերջո ստիպված է լինում ընդունել անկախ Կիլիկիայի գոյության փաստը և հաշտություն կնքել նրա հետ:

Հետևելով պատմության փաստերին՝ Մերենցին հաջողվել է պահպանել ժամանակի պատմական ոգին: Միևնույն ժամանակ՝ Կիլիկյան պետականության խոշոր ներկայացուցիչներից մեկի՝ Թորոս իշխանի ռազմական և դիվանագիտական քայլերի, ինչպես նաև երկրի բարեկարգման միջոցառումների մեջ Մերենցը հայտնաբերում է հայ ժողովրդի պատմության առեղծվածներից մեկը, թե այդպիսի քայլերն ու միջոցառումները ժողովրդի ճակատագրի համար միանգամայն արդիական նշանակություն ունեին նաև XIX դարում: Ինչպես եվրոպական ուսմանտիկ պատմավիպասաններն, այնպես էլ Մերենցը իր ժամանակակիցների հոգեբանության նստվածքներում հայտնաբերում է նախահայրերից ավանդաբար ժառանգած հոգևոր իրողություններ և արժեքներ, որոնք բխում էին պատմական կեցության հարատևող նույնությունից: Դա ոչ թե պատմության մոգեռնացում էր, այլ՝ պատմականորեն և գեղարվեստորեն պատճառաբանված փաստ:

Պատմական փաստերի ոգուց բխող ստեղծագործական երևակայությունը Մերենցի մոտ միահյուսվում է մի սուր զգացողության հետ, որն իր մեջ է առնում պատմական ընդհանուր շղթան միացնող համանման իրադարձություններ: Ստեղծվում է պատմական ճշմարտությունն արտացոլող գեղարվեստական մի իրականություն, ուր ժամանակագրական

կարգով դարգացող դեպքերի շղթայում կենդանանում են աչդ-իրականության մեջ գործող պատմական և ոչ պատմական դեպքերը՝ իրենց պատմականորեն կոնկրետ և գեղարվեստորեն հավաստի գծերով:

Վեպի առաջին գլուխներում Մերենցը նախապատրաստում է բանտից նոր ազատված և սլալատի հսկողության տակ առնելված Թորոսի փախուստը Կ. Պոլսից՝ հայրենիք: Այստեղ առաջնակարգ դերը պատկանում է նրան հատկացված բնակարանի տիրուհի Նվփիմեին, նրա խնամակալ Դիոնիսին և ապա՝ Թորոսի փախուստը կազմակերպող Կոստանդին:

Կոստանդինը պատմական անձնավորություն է: Հույն սլաւամիչ Նիկիտա Քոնիատը իր «Ժամանակագրության» մեջ նկարագրում է 1137 թ. բյուզանդական զորքերի մուտքը Կիլիկիա և Վահկա բերդի կալազորի հրամանատար Կոստանդին անունով հայի հերոսական պաշտպանությունը, գերի ընկնելը: Կիլիկիայի գերեվարության ճանապարհին: Իր վնասում, ահա, Մերենցը երևակայությամբ շարունակում է նրա կենսագրությունը, կոնկրետ իրադարձությունների մեջ ստեղծում է հայրենասիրական զգացումներով համակված մի նոր կերպար: Պարզվում է, որ նա փախչելով գերությունից՝ 5 տարի շրջել է հայրենիքի բոլոր մասերը, տեսել է, թե ինչպես ժողովուրդը տառապում է բյուզանդական բռնություններից և «լալիս է» և կեղեցիքներում՝ «Ազատութիւն հղբարց մերոց գերելոց» երգելով: Համոզվելով, որ ժողովուրդը պատրաստ է դուրս գալու բռնակալի դեմ, նա որոշում է գտնել Ռուբինյանց գերված որդիներին մեկին՝ Թորոսին, երկիր վերադարձնել և նրան հանձնել ժողովրդական շարժման ղեկը: Թորոսի փախուստը տեղի է ունենում ընթերցողին հրապուրող ոռոմանտիկական, որոշ չափով արկածային դրվագների մեջ:

Նրիտասարդ Թորոսի խորհրդածությունները իրար են կապում անհատի, ազգի, ընդհանուր մարդկության երազանքը՝ վերացնել չարը, հաստատել բարին: Թորոսը քննում ու վերլուծում է բյուզանդական քաղաքականությունը, որն իր հաղթություններով և սլարտություններով բաց դռներ է ծեծում՝ մոտեցնելով իրեն կործանման շեմին: Ինչո՞ւ է այդպես վարվում:

այն Բյուզանդիոնը, մտածում է Թորոսը, որն ունեցել է այն-
պիսի մտածողներ, որոնք կարողացել են հասնել ոչ միայն իր.
այլև ամբողջ մարդկության ճակատագրի լուծումներին՝ դրանց
մեջ զննելով ճշմարտության ոգին: Մերենցը Թորոսի խորհրդա-
ծուխյունների մեջ արծարծում է հարցեր, որոնք հուզում էին
նաև իրեն՝ հեղինակին, քանի որ ներկայում ևս նրանք չէին
կորցրել իրենց իմաստն ու նշանակությունը. «...և փոխանակ
զիս նկունս արհամարհելու, իմ ազգս հալածելու,—մտածում
է Թորոսը,—արևելյան քրիստոնեության փաղանգ մը կկաղ-
մեր կեդրոնացնելու համար իր ազգը և զմեզ, որպեսզի ար-
վելքի և արևմուտքի հարձակմանց կարենար դիմանալ, որոնց
կամ մեկուն, կամ մյուսին առջև օր մը դիաթալալ պիտի կոշ-
ծանի, և այս մայրաքաղաքը պիտի դառնա Անի մը համապ-
յալ և առևանգյալ» (էջ 14):

Պատմական անցյալի իրական պատկերը վերականգնող
ապագա պատմաբանները, դիտական վերլուծումներ կատարե-
լով, անշուշտ, կանդրադառնան նաև պատմական օրինաչա-
փություններից դուրս այն երևույթներին, որոնց մեջ գիլանա-
գիտական խաղերը անուղղելի վնասներ են սվել ժողովուրդ-
ներին՝ ստիպելով նրանց կանգնել պատմության դատաստանի
առջև: Այսպես էլ մտածում և լուսավորիչ Մերենցը՝ ինչպե-
ս պատմական անցյալի, այնպես էլ իր ապրած օրերի, սեփա-
կան ժողովրդի կրած տառապանքների առթիվ:

Ինչպես իր հոգվածներում, այնպես էլ այստեղ Մերենցը
հաճախ դիմում է հունական-հռոմեական ավանդական պատ-
մական հերոսներին: Նման հիշատակումներից են՝ Լիկուրգոս
իր սահմանած օրենքներով և անձնական հավատարմությամբ
Սպարտայի թագավոր Լեոնիդը, որը հերոսաբար ընկավ կռվի
դաշտում՝ պարսից շահ Քսերքսեսի դեմ պատերազմելիս: Մե-
րենցը հիշում է նաև ասիական զորավար և քաղաքական
գործիչ Արիստիդեսին՝ որպես օրինակ ազնվության և արդարա-
դատության: «Տեսնենք ո՞վ պիտի հաջողի այս խաղին մեջ
և հաղթությունը որո՞ւ պիտի լինի,—ասում է Թորոսը:—Ան-
շուշտ իմս, այո, իմս պետք է լինի, վասն զի ևս ցամաքի ու
ծովու պիտի տիրեմ. այս է գուշակությունը...» (էջ 15):

Մ'անուել Բ-ի պալատի մուտքի մոտ Մերենցը իր հերոսին
հանդիպեցնում է հոր և որդու թշնամուն՝ Անդրոնիկոս Կոմեն-
նոսին՝ հայտնի մի անձնավորության, որի անունը պատմու-
թյան մեջ մնաց որպես նենգ, դավաճան, ուրացող, և որը խար-
դախությամբ կարողացավ մի քանի տարի իշխել բյուզանդա-
կան գահին: Կ. Մարքսը նրան բնութագրել է որպես «հանճա-
ռեղ գաղանային խրախճանասեր...», իշխան ու ավանտյուրիստ,
քաջ և ստոր, խորամանկ և դավաճան...»⁴: Առաջին հանդիպ-
ման ժամանակ Անդրոնիկոսը դրսևորում է իր՝ «վերին հպար-
տությամբ» քողարկված ցինիկ պահվածքը:

Թորոսի անհատականության բարդ, միաժամանակ իրենց
ուժեղ կողմերով խտացված համակողմանի գծերն արդեն երե-
վում են վեպի առաջին գլուխներում: Հետագա գործողություն-
ների մեջ նա պետք է մարմնավորեր Մերենցի փիլիսոփայա-
կան-բարոյաբանական և բաղադրական հայացքները: Վեպում
պատմական ճշմարտացիությամբ լուծվում են միջնադարյան
ֆեոդալական հարաբերությունների էությանը վերաբերող և
հայ պատմիչների կողմից ոչ ճիշտ ընկալված ու մեկնաբան-
ված շատ հարցեր, որոնք ավելի լայն ընդգրկումներով ար-
ժարվում էին նաև եվրոպական պատմավեպերի մեջ: Այդ
հարցերի շարքում Մերենցը առանձին կարևորություն է տա-
լիս միասնական ուժեղ պետականության խնդրին՝ որպես ներ-
քին ուժերի համախմբման, ազգային կյանքի կաղմակերպման
հուսալի միջոցի: Մերենցի կարծիքով Թորոսը առաջին հերթին
պետք է նվաճեր ոչ թե իշխանների, այլ ժողովրդի համակրան-
քը և իր գլխավոր հենարանը հաստատեր ժողովրդի հետ ունե-
ցած դաշինքի վրա: Վեպի առաջին իսկ էջերից Մերենցն իր
հերոսին ներշնչում է ժողովրդասիրության խոր զգացում: Իր
առաջին մենախոսության մեջ Թորոսը մտորում է, թե իր պա-
պերը ինչպես էին տառապում այն օրերին, երբ Անին դավա-
ճանությամբ տրվեց հույներին, և ժողովուրդը մնաց անօգնա-
կան ու անապավեն, ենթակա օտարի կամայականություննե-
րին: «Ահա ժողովրդյան սերն էր,—խորհում է նա,—որ կո-
գնորեր իմ պապերս և հունական ատելությամբ և արդար վրեժ-
խնդրությամբ կենեհին Տորոսի բարձանց վրա կանգնելու ազա-

տության դրոշակը, և ես այդ սիրտը ունիմ և կզգամ ես որ չէ
թէ միայն իմ նախահարցս զավակն եմ, այլ այս օտարա-
խորթ հունաց գրականության, որ չեն գիտեր և չեն ճանչնա-
րենց լիկուրգները, իրենց լեոնիտասները, իրենց արիստի-
ները...»⁵։

Ի՞նչ ճշմարտություն է հայտնաբերում Թորոսն իր նախ-
նինների մոտ. ամենից առաջ՝ բուն հայրենասիրությունը՝ որ-
պես ազգային գոյության նախապայման։ Այդ հայրենասիրու-
թյան բարձրագույն օրինակն, ահա, նա տեսնում է հունական
գրականության մեջ հայտնի այն իրական պատմական մեծու-
թյունների մոտ, որոնցից նա շատ բան էր ուսել գերություն
օրերին։ Ծերենցի ստեղծած գեղարվեստական նոր կերպաբ-
ղալիս էր բացահայտելու Ռուբինյան իշխանության դրական
այն կողմերը, որոնք, հատկապես Թորոսից մինչև Լևոն
նպաստեցին Կիլիկյան թագավորության ամրապնդմանը։

«Ո՛հ իմ Սև լեռան պայծառ արև,— խորին ներշնչանքով
ասում է նոր միայն բանտից ազատված Թորոսը,— երբ բուռն
ժայռերուդ վրա պիտի կանգնիմ, և զԹորոս ան ատեն պիտի
տեսնեն իմ ազգս և օտարները, չէ թե տղա մը, որ վերեն վար
կկշռեն, այլ հսկա մը, որու հետ խոսելու համար պետք է վա-
րեն վեր խոսին, և պետք է այդ Անդրոնիկոս համոզվի, թե Կոր-
յունը առյուծ է» (էջ 14)։ Եվ իսկապես, վեպի ավարտին, ամ-
փոփելով Թորոս իշխանի դերը Կիլիկիայի պատմության մեջ.
Ծերենցը գրում է. «Ո՛վ որ ազգային պատմությունն ուսնի
ուշադրությամբ հայ դյուցազանց առաջին կարգի մեջ կնշմար-
այս մեծ հանճարը, որ ոչ միայն իր ժամանակեն, այլ նաև իր
բախտեն վեր էր» (էջ 203)։

Ինչպես նշեցինք վերևում, Ծերենցը երկու անգամ եղել էր
Կիլիկիայում, շրջագայել էր երկրի քարային և դաշտային մա-
սերում, տեսել հին քաղաքների ավերակները, ունկնդրել էր
անցյալի փառքի մասին ժամանակակից կիլիկեցիների զրույց-
ները։ Ծերենցի արխիվում պահպանվել են ինչպես Կիլիկիայի
այնպես էլ առհասարակ պատմական Հայաստանի վերաբեր-
յալ ուսումնասիրություններից պատառիկներ, որոնք ցույց են
տալիս նրա քննական վերաբերմունքը հին պատմիչների, ինչ-

պէս նաև ժամանակակից պատմաբանների, օրինակ՝ Ստ. Փափազյանի, Գարագաշյանի, պատմագիտական հայացքների հանդեպ: Ծերենցն առաջին պատմամիլիտասանն է, որ ծանոթ լինելով ոչ միայն հայոց պատմությանը, այլև եվրոպական պատմագրությանը՝ վեպ գրելուց առաջ վերականգնում է պատմության միասնական ընթացքը ներկայացնող պատմական գեպքերի շղթան, գեղարվեստական պատումին ներհյուսում է պատմության ընդհանուր օրինաչափությունները հավաստող իրական պատմական փաստեր: Այդ փաստերին իրենց խորհրդածությունների մեջ անդրադառնում են կամ հեղինակը, կամ նրա պատմական հերոսը:

Նախ տեսնենք, թե ինչպես է Ծերենցի ստեղծած կերպարն ազդարացնում իր դերը Կիլիկիայի կործանված պետության վերականգնման գործում և ո՞րն է ազգային բաղձանքների գլխավոր ելակետը: Դեռ Կիլիկիա չմտած, Կիպրոսի ս. Մակարի վանքում նա հանդիպում է Սարգիս անունով մի երիտասարդի, որի առաջնորդությամբ Թորոսի խումբը նալով հասնում է Կիլիկիայի ափը:

Ծերենցը մեր առջև բացում է Կիլիկյան լեռնաշխարհը: Նրանք մտնում են կիսավեր ճերմակ բերդը: Նվփիմեն Թորոսի հետ «դղյակը կը պտտեր, որ իրոք այն ժամանակի շենքերուն վայելուչներեն մեկն կրնար համարվիլ, ընդարձակ սենյակներով, գեղեցիկ մատուռով, ջրի կապարյա ագուգայնեբովն և ընդարձակ պարտեզովն՝ ուր խառնիխուռն անտառացել և վայրենացել էին կիտրոնիք, ձիթենիք, թթենիք, բրաբյանք և դափնիք» (էջ 77): Ահա և Ամուտա բերդը, որը գրավելուց հետո Թորոսը բարձրացնում է Կիլիկյան պետական դրոշը, հայտնի դարձնելով իր վերադարձը հայրենիք:

Թորոսի նպատակն էր վերականգնել ժողովրդի հավատը ազատության վերականգնման և երկրի անկախության նկատմամբ: Նա այսպես է դիմում ժողովրդին. «Նս ուրեմն եկա, որ ձեզի հետ այս գերության ամոթը և նախատանաց շղթաները կտրեմ» (էջ 91): Բարձրացնելով հայրենական դրոշը՝ Թորոսը պատերազմական գործողությունների հետ միաժամանակ սկսել էր ժողովրդին ներկայացնել իր պետական-բաղաբական-

ազգային գործունեության ծրագիրը: «Ժողովուրդը,—գրում է Մերենցը,—ինչպես ասիական ամեն մի ժողովուրդ, երբեք չէր երևակայած այնպիսի ազատ կառավարություն մը, ինչպես որ հունք և հռոմայացիք իրենց պատմության մեկ ժամանակին կրցել էին ունենալ և ի գործ դնել և զօր հանրապետության անվանած էին ի փառս և ի պատիվ հայրենյաց ու մարդկային ազգին» (էջ 103):

Ազգության գաղափարը, գրում էր Մերենցը, թեպետ այն ժամանակներում չկար այժմյան հասկացողությամբ, բայց նույնիսկ օտարազգիների վկայությամբ հայերը պիտեին պաշտպանել իրենց և հնազանդվել պետական ուժին, եթե նա հրաշխավորում էր իրենց կյանքը և ազատությունը: «Ժողովուրդը միշտ առաջնորդի պետք ուներ, ինչպես ամեն մի ժողովուրդը ունեցեր են և պիտի ունենան» (էջ 104): Պետությունը ժողովրդի համար նաև «հնավանդ կրոնից և սովորությանց պաշտպան էր»: Մերենցի նկարագրությամբ և պատմության տվյալներով՝ Թորոսն իր ռազմական տաղանդի ուժով հետզհետե ոչնչացնում է թշնամեկան ուժերի դիմադրությունը, միաժամանակ արագ կերպով շեղոքացնում իշխանական ուժերի տարանջատվածությունը՝ երկրի միասնական զորությունը հակադրելով հունաց պետության ուժին: Երբ Լամբրոնի իշխանը, զգալով իր պարտությունը, պատրաստակամություն է հայտնում դաշնակցել նրան, Թորոսը չի համաձայնում այն պատճառաբանությամբ, «թե վաղը պարագան որ ներև, դաշինքնին պիտի ստեն, երդմունքնին ռանակոխ պիտի ընեն» (էջ 185): Քննադատելով Լամբրոնի իշխանին՝ Թորոսը գտնում է, որ նա իր մեջ տեսնում է ոչ թե պետության սրբագործված ներկայացուցչին, այլ անհատ Թորոսին: Լամբրոնի իշխանի պատգամավորին նա ասում է. «Թորոս բան մը չէ, այլ իր ետին հայությունը՝ այս ամենքը, որ կտեսնես և այն ամենքը, որ Մասիսի ստորոտեն բոլոր աշխարհքիս վրա ցանկիր կտարածվին, օտարին բռնությանց, հարստահարությանց տակ կհեծեն, որոնց կրոնքը, անունը, կյանքը և ստացվածքը վտանգի մեջ են, այն ամենքը, այսօր իմ կոնակս կեցած են, և պետք է զրուցեմ թե հիմա, այս վայրկենիս այս հայությունը, որ քո

տերդ շի ճանշնար և որուն համար ևս կյանքս, արշունս և ամեն ունեցածս կզոհեմ հիս՝ այս խեղճ Թորոսին վրա կկայանա» (նույն տեղում):

Պետության և հասարակության կառուցվածքների մասին դատողություններ անելիս Մերենցը մի հիմնավոր կարծիք ունի, որ շարունակ արժարժել է իր հողվածներում և այժմ էլ դարձնում է այս և մյուս վեպերի գլխավոր խնդիրներից մեկը: Դա հռոմեական և հունական օրինակներին հետևելու ձգտումն էր. «Ազգի մը բախտը,—գրում է նա՝ նկատի ունենալով դասական ժողովուրդների պատմությունը,—մարդու մը կարողութենին շէր կախվեր, այլ ազգին բարոյական զորութենին, բայց ո՛ր էր այդ բարոյական զորությունը, ո՛ր էր այդ բարոյական զորությունն ստեղծելու դաստիարակությունը» (էջ 200):

Մենք հիշում ենք նաև Մերենցի մտքերն «Ապակեդրոնացում» հոգվածում, ուր նա դարգացնում էր Ֆրանսիայի XIX դարի առաջին կեսի պատմաբանների՝ կենտրոնաձիգ իշխանության ստեղծման շուրջը պատմական քննությունից արված եզրակացությունները, որոնց համաձայն էլ փորձում է բացատրել, թե ինչո՞ւ Հայաստանում չպահպանվեց պետական իշխանությունը: Մխիթարյան դրականության մեջ այդ հարցի բացատրությունները մնացին պատմիչների վավերացրած «անմիաբանության» ոչ պատմական տեսության շրջանակներում: Միակ բացառությունը թերևս 1843 թվականին Ալիշանի հրապարակած հոգվածն է այդ հարցի շուրջ: Այստեղ Մերենցը բերում է օրինակներ Ֆրանսիայի պատմությունից, ուր պատմական դարգացումը հանգեցրեց բացարձակ միապետության, որը մի բայլ առաջ տարավ պետության հետ և ազգի դարգացումը: Հայկական իրականության մեջ այդ պրոցեսները չհասան իրենց վերջնական ավարտին: Տևական պատերազմների թատերաբեմ դարձած Հայաստանում, ներքին ուժերի հակասության պայմաններում, կործանվեցին Բագրատունյաց վերջին իշխանությունը և Կիլիկյան պետությունը: Մերենցի կարծիքով, լիցիտ թագավորին՝ «այդ երկաթյա մարդուն», չուստահատեցրին ոչ այնքան պատերազմները, որքան այն, որ նա չկարողացավ համախմբել ներքին ուժերը և չստեղծեց կենտ-

րոնաձիգ իշխանություն: «...Արշակունի, Բագրատունի, Արծրունի, Սյունի, Ռուբինյան կանվանելին, վասն զի բարոյական զորություն մը չունենալիս զատ չգիտցան նաև կեդրոնական զորություն մը ելլել, չունեցան Գաղղիացիոց պէս մարդիկ, որ կարենային անկարողութենէ ազատել կեդրոնական իշխանությանը, զոր ապակեզրոնացումը ջլատել է»⁶:

Միջնադարյան ֆեոդալիզմի էությունը կազմող՝ ուժերի տարանջատվածությունը, սեփական պետականության բացակայությունը իրենց ծանր հետևանքներն են թողել հայության ազգային հոգեբանության վրա: «Անոր համար ալ պետք էր, որ նա նախախնամությունը բարոյական իշխանություն մը հաներ խեղճ հայոց ազգին համար, իշխանություն մը թեպետ բարոյական բայց կանոնավոր դասակարգայնությամբ ժողովրդյան ներքին և արտաքին բռնությունների առած հարվածներուն դարման ըլլար» (նույն տեղում): Ահա այն կարող էր բարձրացնել ժողովրդի կենսական ուժերն այն ժամանակ, երբ ունենար «կեդրոնական զորություն» ներկայացնող կենտրոնաձիգ իշխանություն: Թորոսը, որպէս միջնադարյան «անկարգության» մեջ «կարգի» ներկայացուցիչ, պետք է հետապնդեր «բարոյական զորություն», այն է՝ կենտրոնաձիգ իշխանության գաղափարի իրականացմանը: Ծերենցը նախ ներկայացնում է այն միջավայրը, որում գործել և մեծ հաջողությունների է հասել պատմության հերոսը՝ Թորոս իշխանը: «Այնպիսի խառնաշփոթ և անիշխանության ժամանակի մեջ ուր անկարելի էր ապահովություն, ամեն շրջակա իշխանությանց քով լրտեսներ կհաստատեր, գիտնալու համար, թե ուր կից իրեն վտանգ կրնար հասնիլ, կամ օգուտ. վասն զի ոչ խոստմունք, ոչ դաշնադրություն, ոչ երդմունք նշանակություն չունեին ամենեկին»⁷:

Այդ պայմաններում, ահա, Թորոսը, պատերազմական գործողություններին ղուգընթաց, ձեռնարկում է նորաստեղծ պետության ամրապնդման գործին: Պետությունը ղեկավարելու համար ոչ միայն պետք էր կարողանալ պաշտպանել երկիրը թշնամուց, այլև լինել տնտեսագետ, վիճակագրագետ, աշխարհագրագետ՝ հասկանալ ժամանակի պահանջը և նրա

ասպագան: Դիոնիսը, հետեւելով Թորոսի մտքերին, զգում էր «այլ լուռ և անխոնջ բնության նպատակը, ուր կնշմարեր հայ-րենասիրության հետ նաև վրեժխնդրության ոգին»: Նա ասում է Թորոսին. «...անիրավ և անգութ չլինիս, վրեժխնդրության հոգւով, հիրավի, անիրավ աշխարհիս մեջ շանիրավել դժ-վար է, բայց դու մեծ հոգի ունիս, և ես կճանշնամ մարդկային բնությունը, անոր համար այս խոսքերը քեզի կընեմ» (էջ 65): Որպեսզի Թորոսի կառուցելիք շէնքը՝ պետությունը, երկարա-տե լինի, պետք է, խորհուրդ է տալիս նա, ձեռք բերած գիտե-լիքները ծառայեցնել իր նպատակին և համբերություն ցու-ցաբերել ամեն տեսակի արգելքները հաղթահարելու դեպքում: «Բու եղբայրդ՝ Ռուբեն թեպետ սրամիտ, գեղեցիկ և կորո-վի,— ասում է Դիոնիսը,— բայց շուներ ոչ քո համբերությունդ, ոչ գիտությանց սերդ, ոչ քո խոհեմությունդ, և անոր համար ալ ամեն բան և կյանքն ալ կորսնցուց» (էջ 67):

Պատմության մեջ Թորոս Բ-ն միացել է իբրև պետական խոշոր գործիչ: Նա արտացոլել է իր պատմական կոնկրետ ժա-մանակաշրջանի առաջադիմական միտումները, նպաստել Կի-լիկյան Հայաստանում Ռուբինյան կործանված իշխանության վերականգնմանը: Բայց Մերենցին պատմական փաստերը չեն հետաքրքրել լոկ իբրև տարեգրության նյութ: Նա ստեղծել է դարի ոգուն համապատասխան այն կերպարը, որը կարող էր առաջ տանել պատմության շարժիչ ուժը հանդիսացող ժո-ղովրդի ձգտումը՝ ազատվել օտարի լծից, ապրել սեփական իշխանության ներքո: Պատմության հանդեպ ազատության սկզբունքը հնարավորություն է տալիս ումանտիկ պատմավի-պասանին՝ պատմության ճշմարտապատում փաստերի մեջ կատարել այնպիսի ընտրություն, որը համապատասխաներ իր սահմանած գաղափարական ճշմարտությանը, ճշմարտություն, ուր կարողանում է գտնել անցած և նոր ժամանակների միջև ա.յն ընդհանրությունները, որոնց մեջ պարփակված են ժողո-վրդի պատմական վարդաքման միտումները:

Թորոսը կարևոր է համարում ճանաչել իր ժողովրդին. «նա-կմտնե՛ր երբեմնի գյուղեր, կտեսնե՛ր հայ ժողովրդյան մոնչյու-նը ընդդէմ նախատող և հարստահարող հույն վարձկանաց»

կլսեր անոնց հայհուդութիւնքը ընդդէմ հայ հավատոց, կտեսնէր իրեն ծանոթ հայրենի կալվածները հափշտակող հույ՝ իշխանաց գոռով ամբարտաւանութիւնը և այսպէս ութը օր դիտելով, դնենելով Ալեքսանդրիո ծոցէն մինչև Ամանոսի հյուսիսային ծայրերը շրջադայեցալ քայլ առ քայլ զրեթե նշանելով մտքին մեջ ծառ, թուփ, ժայռ, բլուր, լեռ, բերդ, աւան, գյուղ և ավերակ» (էջ 84):

Թորոսի կերպարի զաղափարական զարգացումը հետզհետե բացում է նրա գործունեութեան շրջանակները: Իր շուրջը համախմբելով լեռնականներին՝ նա Ռուբինյան խաչի դրոշը բարձրացնում է Ամուտա ամրոցի զլխին և կոչ անում ժողովրդին՝ պատերազմը շահելու և երկրի անկախութիւնը վերջնականորեն ամրապնդելու համար «...Սիրով և միաբան լինիլ, իրարու օգնել, անարգ նախանձ և սղտիկ սիրտ չունենալ: Մեր անձնական շահուն հասարակաց օգուտը նախադասել» (էջ 93):

Թորոսն ունկնդրում է ժողովրդի տրտունջներն ու բողոքները՝ Անարզաբայի տիրոջից. «Վաստակի գործ կէտաւարե, հարկ տուրք կառնե մեզ ու մեր տղաքը անոթի կմեռցնե, ինքը չի կշտանար... դատ կհնարե, սուտ վկա կստեղծե, որ բանտի պատժի տուգանքի ճար գտնե, կաշառք առնե, արյուն թափե... Մեր գեղերը քանդվեցան, մեր տուներն ավերակ դարձան, ինք՝ պալատներ կշինե, պարտեղներ կշինե, մեր ավերակաց վրա...» (էջ 106): Եվ այսպէս պանդաւանքի մի ամբողջ տարափ, որոնք բացի օտար նվաճողների գործադրած ահալիւր բռնութիւններից և կոտորածներից, ցուցադրում են հայ իշխանների գործադրած զաղանային արարքները:

Եվ ահա Թորոսին հաջողվում է արագ կերպով ամրապնդել իր պիրքերը:

Նա հետզհետե համախմբելով ժողովրդին ստեղծում է կանոնաւոր բանակ, զգուշանում է շափաղանց տուրքերից, խրատիւ հսկում է դատաւորների վրա, «...ոչ միայն որ ի բնուստ անիրաւութեան թշնամի էր, այլ նաև անոր համար, որ լսւի համոզված էր թե առանց արդարութեան ունիցէ իշխանութեան՝ մեծ ու փոքր կկործանի» (էջ 140), կրոնասիր էր առանց կրո-

նամուրության: Նա քննադատում է դավանաբանական վեճերը, հունագավան կրոնի բացասական ներգործությունը հայության միասնության և իշխանության պահպանման գործում:

«Պետք է չի մոռնալ, թե որովայնապարար և խաբեբա ձկեղեցականաց քով կան գործունյա և աշխատասեր հիկեղեցականք ալ որ իրենց ազգը և ժողովուրդը կսիրեն և զիտեն նաև զիրենք անոնց համար զոհիլ» (էջ 95—96): Ներսես Շնորհալու հետ ունեցած խոսակցության ժամանակ Թորոսը մեծ սխալ է համարում Գրիգորիս կաթողիկոսի ձգտումը՝ լուսավորչական եկեղեցին դարձնել հունագավան: Այդ միացման մեջ Թորոսը տեսնում էր սեփական ազգի «սուզման» վտանգը: Ներսես Շնորհալուն նաև ասում է. «...հայ եկեղեցվոյն փոքր պրոշակը անկախ պահեցեք, ինչպես որ ես ազգային անկախության պրոշակը անկախ պահելու կջանամ» (էջ 191):

Թորոսի համար այս կարևոր հանգամանքը կապվում էր ժողովրդի ցուցաբերած ակտիվ վերաբերմունքի հետ: Ի՞նչով էր պատասխանում ժողովուրդը Թորոսի այդ քաղաքականությանը: «Պատերազմական քաջություն, քրիստոնեական հավատք, — գրում է Մերենցը, համաձայնելով Թորոսի մտքերին, — ամեն մարդ գինվոր է և ամեն մարդ իր հայրենի կրոնի գերին է: Իր համար ազգային պրոշակը խաչն էր և իր բոլոր աստվածաբանությունը լուսավորչա կրոնք անփոփոխ պահպանելն, ուրիշ նրբամիտ ժողովրդաց բաժինն էր իրեն համար կրոնական դավանությանց, արարողությանց և վարդապետությանց համար փոփոխություններ մտցնել, ինք որ պարսից հունաց և արաբացվոց դեմ իր բոլոր զորությանը այն յուր կրոնքին պաշտպանության համար ամեն բան զոհած էր այս մասին անդդովելի էր» (էջ 103—104): Այս դեպքում նույնացնելով ազգի պաշտպանության գաղափարը կրոնի պաշտպանության հետ՝ Մերենցը պարզապես կամենում էր ընդգծել ազգային հատկանիշներով իր ինքնության պահպանման՝ ժողովրդի իրավունքը:

Ռուբինյան իշխանության մեջ դնելով ժողովրդապաշտպան գաղափարներ՝ Մերենցը սրբագործում էր Թորոսին՝ նրա մեջ դնելով իր ազգային բաղձանքներն իրականացնող, բոլոր

կողմերով իդեալական հերոսին բնորոշ գծերը: Ծերենցի ռոմանտիկական հայեցությունը լայն հնարավորություններ է տալիս ստեղծելու նման մի կերպար:

Թորոսը զգում է իր անհատականության ուժի զորությունը և իր կշանքի վերջին ժամին խոստովանում է, թե՝ «իմ նարահարց գործերն ավելի մեծերը, անոնց իրականութիւնէն ավելի ընդարձակը սահմաններ էր ինձի նախախնամության ձեռքը՝ իմ ազգիս զիս առաջնորդ և պատասպարան ընելու համար» (էջ 205):

«Ավանդապատումի» էջերում տեղ է գտել կիլիկյան ժողովրդի մեջ տարածված գրույցներից մեկը Թորոսի մասին: Զրույցը վերնագրված է՝ «Թորոս իշխանի թուրը»: Ժողովուրդը պատմում է, թե «լսելով, որ իր եղբայր Ստեփաննէն դավադրաբար սպանված է բյուզանդացիների կողմից, Թորոսը քաջերի գլուխն անցած հարձակվում է Տարսոնի վրա: Կատաղի կռիվ ժամանակ նա հեռվից նետում է թուրը, որը մխրձվում ու մնում է քարի մեջ: Տեսնելով այդ հրաշքը՝ Թորոսի գինւորները կրկնապատկւլած ուժով տապալում են քաղաքի պարսպի դուռը և ներս խուժելով զրավում այն: Ասում են, թե մինչև հիմա էլ Տարսոնի ավերակների մեջ, պարսպի դռան ճակատին դեռ երևում է Թորոս կոնիի թուրը»^Ծ:

Ֆրանսիական ռոմանտիկական դպրոցի մշակած նոր գրույթների մեջ մեզ ծանոթ են կենտրոնաձիգ պետության ստեղծման և պատմության առաջընթացով պայմանավորված փորձի դրական հետևանքները միջնադարի ժողովուրդների ազդեցին կազմավորման համար: Ֆրանսիական թագավորների մեջ հայտնի է Լյուդովիկոսների մղած պայքարը բուրժուական միապետության հասնելու համար:

Ֆրանսիական պատմավեպը լուծել է այդ հարցը, ստեղծելով պետական միասնության ձգտող ուժեղ միապետներ: Հայ պատմագրության մեջ թագավորները հիմնականում երևան են եկել ֆեոդալական տարանջատ ուժերի դաշնադրությամբ սեփական դիրքերն ամրապնդելու համար: Ինչպես նշեցինք, Թորոսի կերպարը ստեղծելիս Ծերենցն ազատվել է հայ պատմիչների «միաբանության և անմիաբանության» դոգմա դար-

ձած հասկացության կաշկանդումներից և Թորոսի մեջ ամբասնդել է երկրի տարանջատ ուժերը շեղոքացնող ուժիդ պետական գործչի հատկանիշները:

Բ. Ռեիդովն իր «Ֆրանսիական պատմական վեպը ռոմանտիզմի շրջանում» աշխատության մեջ, անդրադառնալով պատմական հերոսի ընտրության հարցին, հիշում է, որ Հյուգոն մի փամփուխ քննադատեց Վ. Սկոտին, որ իր վեպի համար Ֆրանսիայի պատմությունից ընտրել է Լյուդովիկոս IX-ին, «այդ մոռյալ և դաժան» թագավորին: Բայց տարիներ անց նա ինքը ներկայացրեց նույն թագավորին, որպես ֆրանսիական կենտրոնաձիգ իշխանության հիմքերն ամրապնդող եռանդուն գործչի:

Մերենցն իր վեպում հակադրում է իրար երկու պատմական անձնավորությունների՝ Թորոսին և Էդբորը՝ Մլեհին: Թորոսից հետո, 1169 թ. Կիլիկիայի իշխանապետությունն անցնում է Մլեհին: Պատմությունն ասում է, որ նա շարունակում է վճռական գործողություններով վերջնականորեն դուրս մղել սելջուկ թուրքերին և բյուզանդացիներին: 1175 թ. նա սպանվել է Կիլիկիայի իշխանների ձեռքով: Ժողովուրդը հիշում է Մլեհի գերեզմանի տեղը: Այդ առթիվ ավանդությունն ասում է. «Ասում են, թե այստեղ (հիշված դամբարանում—Ռ. Ն.) իր մականով, սաղավարտով ու թրով թաղված է Մլեհ քաջ իշխանը, որին սպանել են Կիլիկիայի իշխանները (նրա անհանգիստ ու բռնակալ բնավորության համար)»⁹:

Պատմիչների մոտ Մլեհը ներկայացված է բնավորության բացասական գծերով: Սմբատ սպարապետը գրում է, որ նա պատրաստվում էր սպանել Էդբորը՝ իշխանությունը գրավելու համար: Թորոսի մահից հետո նա: Հալեպի իշխան նուր էդ Դինի օգնությամբ ոչնչացնում է իր թշնամիներին, բայց և զոհ է դառնում տարանջատ ֆեոդալական ուժերի դիմադրությանը: Միքայել Ասորին գրում է, որ Մլեհը «անհավատների» օգնությամբ շատ չարիք հասցրեց քրիստոնյա ժողովրդին:

Մերենցը երկու Էդբայրների կոնֆլիկտի մեջ առաջնությունը տվել է Թորոսին, նրա մեջ խտացնելով «բարոյական իշխանության» ուժի զորությունը, որն իր մեջ խտացնում էր և՛

վինվորական ուժը, և՛ խնամատւթյունը՝ պատմական ճշմարտության հանդեպ: «Ինչ էր այս բարոյական իշխանությունը,— գրում է Մերենցն իր «Ապակեդրոնացում» հոդվածում,— որ յուր սխալմանց, յուր թերութեանց հանցանաց և նաև ոճիրնեւուն մեջ մեծամեծ ծառայություն պիտի բնիք ազգին և վերջը նորա էությունը պիտի բլար ապագային մեջ»:

Մերենցն իր վեպում, աշխատելով հավատարիմ մնալ նաև պատմական փաստերին, դրական կարծիք է հայտնել Ռուբինյան առաջին իշխանների՝ խաչակիրների հետ մի շրջանում ունեցած դաշնադրութեան համար, պատմական կոնկրետ պայմանների մեջ տեսնելով դրա անհրաժեշտությունը: Բայց Հալեպի իշխան Նուր էփ Դինի դիմանադիտական խաղերի մեջ չի տեսել կամ չի կարողացել կռահել Կիլիկյան պետութեան հասանելիք օգուտը: Մերենցը փորձում էր գտնել այն օղակները, որոնք կարող էին կապել պատմութեան շղթան իր ապրած օրերի հետ՝ քաղաքական բարդ իրադրութեան մեջ լուծելու իր ժողովրդի ճակատագիրը: Ուստի պատահական չէ, որ նա քննադատում էր բյուզանդական նենգ քաղաքականությունը, սխալ համարելով այն թէ՛ իր ժողովրդի և թէ՛ մերձավոր քրիստոնյա ազգերի, ինչպես և Կիլիկիայի համար:

Պատմութեան էջերում ևս Մլհհ իշխանը մնացել է իբրեքաջ, անվիշում և «պատերազմասեր» իշխան և, շարունակելով հղբոր գիծը, ընդարձակել է իր երկրի սահմանները նոր նախճումներով, աշխատել է չեղոքացնել հայ տարանջատ ֆեոդալների ուժերը՝ ամրապնդելու համար պետական իշխանությունը:

Բայց քաջ լինելը բավական չէ, ասում էր Թորոսը, պետք է և խոհեմ լինել՝ առաջ տանելու համար գործը: Թորոսը Մլհհի և Ստեփաննի տարածայնութեանների մեջ տեսնում էր Կիլիկիայի իշխանութեան մասնատումը, որին պետք է հետևեր նոր կործանման վտանգը: Իսկ Թորոսը, ինչպես վկայում է պատմութեանը և ինչպես ներկայացնում է նրան Մերենցը, «...կիսափազեր Հայաստան մը ընել հրկիրը, Հայաստան մը զորավոր և անթափանց բնութեան պարիսպներու և ծովու սահմանին մեջ պարփակչալ»: Թորոսի գաղափարական սկզբունքների և նրա բնական էութեան մեջ մի գեղեցիկ ներդաշնակու-

թյուն կա: Երբ նա քարոզում էր ամեն տեղ և իր հղբայրներին, ինչ՝ «սիրեցեք միմյանց», դա քրիստոնեական քարոզ չէր, կամ սենտիմենտալ զգացմունք: Փոխադարձ ըմբռնումների վրա հիմնված միաբանությունը և դաշնադրությունը պետք էր Թորոսին՝ ժողովրդի կյանքն ապահովելու և երկրի ուժերն ամրապնդելու համար: Նա Մլիհին ասում էր. «Մեր պալատքը մեր ժողովուրդը զորացնել և աղէկ կառավարելն է: Օգնենք իրարու ւիրենք մեկըմեկ, ըլլանք մեկ սիրտ մեկ հոգի, զորացնենք, շատցնենք մեր ժողովուրդը, բնակինք լեռները, ուր մեր ցուրտ երկրին բնիկ հայը կորովի և քաջ կլինի, օրը հեռու չէ, որ դաշտը մերինն է, գիտնալ է համբերել և մեր փառասիրությունը չափավորել»¹⁰:

3

Որքան էլ Մերենցն իր ամբողջ ուշադրությունը բեռնում է Թորոսի ռազմական տաղանդի, դիվանագիտության, ազգային-քաղաքական և բարոյաբանական խորհրդածությունների վրա, որքան էլ քննադատները մեղադրեն Մերենցին՝ իր հերոսի անձնական կյանքի առանձին կողմերի նկարագրությունների պակասի համար, այնուհանդերձ վեպի թռուցիկ ակնարկների, Թորոսի խոսքերի և գործողությունների մեջ երևում է նրա ներքնաշխարհի, զգացմունքների խորությունը՝ նույնիսկ ռազմական գործողությունների մեջ, թշնամու հետ հաշվհարդարի ժամերին, մարդկային հարաբերությունների մեջ, վճռական, ազդեցիկ որոշումներ կայացնելիս: «Ներքին մարդը» երբեք չի ձուլվում պետական, դինվորական դորժի մեջ, նա մնում է միշտ մարդկային առաքինությունների բարձրության վրա, միշտ ձաղկելով հասարակական բարոյականությունը խախտող անձնական մոլորություններ: Մերենցի ումանտիզմի համակարգում անխախտ է մնում հին լուսավորչի հավատը մարդու բնական էության մեջ պահպանված «առաքինությունների» նկատմամբ, որոնք, նրա կարծիքով, խաթարվում են կյանքի բազմաթիվ հակասությունների մեջ:

Ուստի գարմանալի չէ, որ հեղինակը հույն բժիշկ Դիոնիսիոսին դարձրել է Թորոսի բանականության և խղճի մեկնաբանն ու խորհրդատուն: Դիոնիսը վեպի հետաքրքիր կերպարներից է: Նա ճամփորդել էր շատ երկրներ և խորամուկս էր բնության գաղտնիքներին: Հեղինակը օժտել է նրան հումանիստական բարձր գաղափարներով: Նրա կարծիքով մարդու առաջին հատկանիշը պիտի լինի ատելությունը աշխարհակալների դեմ, բռնության դեմ: Նա սեր և համակրանք պետք է ունենա թրշվառի, անօգնականի հանդեպ: Իբրև հասարակության անդամ՝ նա պետք է վայելի բնությունից տրված իր ազատությունը:

Հեղինակը ցույց է տալիս Դիոնիսի վերաբերմունքը Թորոսի հանդեպ: Իբրև Բյուզանդիայի քաղաքացի՝ նա դատափետում է իր երկրի բռնակալների քաղաքականությունը այլ ժողովուրդների նկատմամբ: «Քեզի հետ խոսողը, պետք է համոզվիս, որ ազգի մը շի վերաբերիր. մարդկության դավալեն է, և ամենեն ատելի մարդիկ իրեն աշխարհակալներն են, ուստի քեզի դինվորիդ իմ խրատս այս կուզեմ լինի, որ անիրավ և անգութ չլինիս վրեժխնդրության հոգով» (էջ 65):

«Անիրավ, անգութ» չլինելու գաղափարը Մերենցն անց է կացնում իր վեպի միջով՝ իբրև մարդկային բնության կարևոր հատկանիշ: Բայց ոչ հեղինակը, ոչ Թորոսը և ոչ Դիոնիսը չեն ասում, թե պետք է հանդուրժել թշնամուն: «Հիրավի, անիրավ աշխարհիս մեջ շանիրավել դժվար է», — ասում է Դիոնիսը: Մերենցի խոհերը մարդու մարդկային բարձր բարոյականության մասին խորապես կապված են բոլոր ժամանակների մարդկային հարաբերությունների մեջ մեծ մարդու գաղափարի հետ, որ մշակել է պատմության փիլիսոփայության:

Հումանիստական լայն աշխարհայացքի տեր՝ Բյուզանդիոնի քաղաքացին իր մտքերի, խոհերի մեջ խորապես արտացոլում էր ոչ միայն սեփական ժողովրդի՝ անտիկ ժամանակներում ձևավորված բարձր քաղաքացիության սկզբունքները, այլև փորձում էր եվրոպական նոր քաղաքակրթության մեջ տեսնել պատմափիլիսոփայական մտքի այն սաղմերը,

որոնք մի երկու դար հետո պիտի ազդարարեն հվրոպական վերածնության դարաշրջանը:

«Թե որ աստված լավ հաջողություն մը տա և քեզի պես շորս հինգ հաջորդ ունենաս,—ասում է նա Թորոսին,—կրնաս տևողական Հայաստան սա լեռներու վրա փոխադրել, թե ոչ՝ առօրյա ստվեր մը և քանի մը ավերակ ավելի կձգես այդ ավերակաց երկիրը Սարգանաբալին գերեզմանին քով...» (էջ 66):

Թորոսի կողքին հեղինակն առաջին պլանի վրա ներկայացնում է Բաբկենին: 12 տարեկան հասակից նա ընկերակցել է հորեղբորը և հորը: Պատերազմներում, գերության օրերին և այժմ ամբողջ ուշադրությունը կենտրոնացրել էր Թորոսի վրա՝ նրա մեջ տեսնելով հորեղբոր խելամտությունը, համարձակությունը և քաջությունը: Ինքը՝ Բաբկենը, հազիվ թե պարզ կարդալ և գրել գիտեր, բայց արտակարգ խոհուն էր, ուժով, տուկուն, անգրգվելի, հավատարիմ և նախանձահույզ, «Թորոսը իր հայրենասեր հույսերուն զավակն էր»:

Բաբկենի խորհրդածությունների մեջ ուշադրության արժանի է նվաճումն ասած մի խոսքը, թե՝ «մեր իշխանները, տիրուհիս, միշտ անտարբեր կմնան. բայց մեր լեռնյիք զանոնք կարթնցնեն, թե որ պետք ալ լինի կբռնադատեն, որ միանան և նաև հնազանդին. թե որ իշխաններուն մնա, որ թեպետ քաջ են՝ բայց նախանձոտ և հպարտ, մենք միշտ ողորմելի գերի կլինենք ամենուն՝ հույնին և սարակինոսին» (էջ 56):

Ուրեմն, ըստ Բաբկենի, ստացվում է, որ իշխանները իրենց հայրենիքի ճակատագրի նկատմամբ անտարբեր են և ձգտում են պահպանել միայն իրենց ունեցվածքը: Ժողովուրդն ավելի զգաստ է հայրենիքի նկատմամբ, և նա է, որ խթանում է իշխաններին՝ ոտքի ելնելու երկրի պաշտպանություն համար: Սրանք մտքեր էին, որոնց հետ, հաջորդ վեպում. Ծերենցը ավելի հանգամանորեն պիտի անդրադառնար:

Բաբկենը հիշում է Թորոս Ա-ին: «Բայց ինչ մարդ էր,—երանությունք ասում է նա,—երկու աչերն երբ մեկուն վրա ձգեր, գիտեիր թե սիրտդ կկարդա, գեշ մտածողն ալ, լավ մտածողն ալ աչքին երևալն կվախնային»: Նա պատմում է

Թորոս Ա-ի ժամանակ տեղի ունեցած մի դեպք, թե ինչպես «ժողովրդյան քանի մի հարյուր խելոքներ» խորհուրդ են տվել Թորոսին, թե եթե իշխանները չհպատակվեն թշնամու հետ պատերազմում, իրենք պատրաստ են հաշվհարդար տեսնել նրանց հետ: Թորոսը չի համաձայնում այդ մտքին: Կարճ ժամանակ անց նա համոզվում է, որ ժողովրդի ներկայացուցիչների արտահայտած կարծիքը ճշմարիտ է և երախտիքով է լցվում նրանց հանդեպ: Բաբկենի խորհրդածուխյունների մեջ ձևավորվում է «Երկունք Թ դարու» վեպի գլխավոր հերոսի ուրվագիծը:

Թորոսն իր շուրջն է համախմբում ժողովրդի «քանի մը հարյուր խելոքների» ներկայացուցիչներին: Կոստանդինը, Սարգիսը, Սասնեցի «գյուցադուններից» մեկի տղան՝ Թոռնիկը, Թորոսի թե՛ պատերազմական գործողությունների և թե՛ պետական գործունեության առաջին խորհրդատուներն են:

Առաջին իսկ հաղթանակից հետո Թորոսն անմիջապես մասնակից է անում ժողովրդի ներկայացուցիչներին՝ երկրի և պետության բարեկարգման գործին, բանակի անձնակազմը կազմում է գերազանցապես ժողովրդի կողմից ընտրված ներկայացուցիչներից: Ամրոցների և կալվածքների մի մասը տալիս է խելացի և գործունյա մարդկանց, պայքար է ծավալում հարստահարությունների դեմ: Թորոսի իշխանության օրոք երկիրը կենդանացավ: «Խաղաղություն եկավ ժողովրդյան, և դաշտավայրն բոլոր ծածկվեցավ հասկերոք, որմն ծանրացավ ողկուղոք, ուրախության ձայներ սկսան դարձյալ լսվիլ, և հայոց իշխանը, որ խաղաղություն կսիրեր՝ վասնզի գիտեր ժողովրդյան օգտակարը, դաշինքներ կհարգեր, վասնզի անոնցմով միայն կարելի է պետությանց սահմաններն ասպահովել» (էջ 176):

«Մեր պատմության մեջ մոռացված է մեր ժողովրդի մի նշանավոր տարրը՝ կինը,—գրում է Բաֆին իր «Սամվելի» առաջաբանում,—մենք ծանոթ ենք մի քանի կանանց անունների մասին...»¹¹: Եվ իրոք, հայոց պատմությունը մեզ հիշեցնում է V դարի հայ կանանց, որոնք իրենց ամուսինների հետ Ավարայրի դաշտում պաշտպանում էին հայրենիքը: Հիշում է

Այժմենիկին՝ Անիի պարիսպների վրա հարազատ քաղաքի համար մարտնչելիս, հիշատակում է Սահականդուխտին, որը մանուկներին երաժշտություն էր սովորեցնում. մի քանի անուններ միայն:

Պատմիչներն իրենք մեծ մասամբ իրոք լուում են այս պարագայում: Բայց պատմությունը նաև ժողովրդի կենդանի հիշողությունն է և որպես այդպիսին՝ շատ ավելի խոսուն. ժողովրդական լեգենդներում, վրույցներում, ավանդություններում տղամարդկանց հետ հավասար գործում են նաև կին հերոսները: Եվ եթե պատմավիպասանը ձգտում է հարազատ մնալ պատմական ճշմարտությանը, մանավանդ, երբ խոսքը վերաբերում է պատմության մեջ ժողովրդի վճռական դերին, ապա չի կարող հաշվի չառնել այս իրողությունը: Կինը ընտանիքի հիմքն է, տղամարդու հետ համահավասար՝ նաև իր երկրի քաղաքացին: Այս գաղափարը լուսավորական դարաշրջանի հայտնություններից մեկն էր: Ահա թե ինչու եվրոպական պատմավեպում շատ հաճախ իրադարձությունների կենտրոնում գործում են կանայք, ավելին՝ իրենց հոգեբանությամբ, մտածելակերպով, անձնական ու հասարակական վաբբազծով արտահայտում են պատմական պահի բնորոշ էությունն ու ոգին: Հենց այդպիսին են Ծերենցի անդրանիկ վեպում գործող կին հերոսները, որոնք ակտիվորեն մասնակցում են Թորոս իշխանի՝ պետական կարևորություն ունեցող նախաձեռնումներին: Ուստի «Ժողովուրդ՝ արք և կանայք, ծերք և տղայք, որ պատերազմի չէին եկած՝ գունդագունդ ունեցածը կբերեին և երեկո չեղած բանակն առատությամբ լցվեցավ»¹²: Ծերենցը հպանցիկ հիշում է Բաբկենի ժրաջան և առատաձեռն կնոջը՝ Շուշանիկին և նրա աղջիկներին՝ ընթերցողի երևակայության մեջ վառելով նրանց «սև լայն նշաձև աչքերուն կրակը... որոնց մեջ թեպետ լեռնային ազատության հոգին կփայլեր, բայց սքանչելի հեղություն մը ունեին ծնողական հրամանաց, սև ոպնիպե մազերնին բարակ և խիստ հյուսքերը ուսերնին բռնոր կպատեր և պարզ գունավոր կտավն հագուստ մը անոնց երկայն և ճոխ հասակին միակ զարդարանքն էր» (էջ 87):

Վեպում պատմութեան էջերից վերակենդանացել է Պապերոնի Սմբատ իշխանի աղջիկը՝ Ռիթան: «Եվ էր նա իմաստուն և անուն զոր Ռիթա»,—գրում է Մատթեոս Ուռհայեցին: Երեկեցը նրանից կերտել է մի հռչակապ կերպար՝ Մարգրիտին, որն իր հասարակական-մարդկային բարձր առաքինություններով, որպես դրական կերպարի իդեալ, մտել է մեր գրականության մեջ հայտնի կին հերոսների շարքը՝ Մուրացանի քույր Աննայից մինչև Շիրվանզադեի անձնուրաց Շուշանիկը:

Անարզաբայի Սմբատ իշխանի աշխանդակ ընտանիքի մեջ միակ լուսավոր կետը Մարգրիտն էր: «...այն ընտրյալ և արտաքու կարգի բնավորություններն էր, որոնց լուսությունը, նայվածքը, շարժմունքը նաև՝ կիսոսի և կարտահայտե հոգևոյն կատարելությունքը, և նույն բնության վիճակյալ անձինք իրար շուտ կհասկնան» (էջ 135):

Մարգրիտը մեզ ներկայանում է ն՛ ընտանիքում, ն՛ իրենց զղյակի պարիսպներից այն կողմ ապրող ժողովրդի մեջ: Ընտանիքում նա «փշոտ մացառներու և տատասկներու մեջ անման ծաղիկ...», որին հարգում և որից ակնածում էին նույնիսկ «ժպիրհները և անզգամները», հայրը դաժան և ժողովրդին ատելի մի մարդ, զգուշանում էր աղջկանից՝ ամեն անգամ նրա առջև ամոթահար իր արարքներից:

Թորոսը պատրաստվում է պաշարել Անարզաբան: Իշխանը Ռուբինյան տոհմի հին թշնամիներից է, հունական կողմնորոշումով: Նա չի կամենում ենթարկվել Թորոսին՝ զրկվել իր անկախությունից: Աղջիկն ասում է նրան. «Այո ես երբ չեղտունները իմ ծերուկ Մարտիրոսը հետ առած, իմ ղեկերու տուփս մեկտեղ կիջնեմ քաղաք, ամեն տուն կմտնեմ, հայ, հույն, տաճիկ իրենց հիվանդությունները և վերքերը, ինչպես տունները, ինձի կբանան, ամեն բան կիմանամ: Գիտեմ որ բոլոր քաղաք այս և կին, ծեր և տղայ քահանա և աշխարհական մեղի թշնամի են, դիտեմ, որ երբ թշնամին գա ու բանակը պարնե, առանց նեւ մը, քար մը նետվելու, զոները պիտի բացվին, ետքը այս միջնաբերդը իր բերդապահները պիտի մատ-

յեն: Եւ գիտեմ թե թշնամին, որ մենք ապստամբ կանվանենք, մեր կարծածեն և լսածեն շատ ավելի ղորավոր է» (էջ 119):

Իրականանում է Մարգրիտի գուշակութիւնը. Թորոսի բանակի մոտենալուն պես Անարզաբայի ժողովուրդը փորձում է բացել միջնաբերդի դռները: Սմբատ իշխանը մոլեգնած դուրս է սլալում, ընկնում քարերի տարափի տակ, աղջիկը փրկում է հորը: «Առաքինութեան հաղթանակը» գլխում Ծերենցը նկարագրում է միջնաբերդի ներսում տեղի ունեցած իրադարձութիւնները, Սմբատ իշխանի ինքնասպանութիւնը, ժողովրդի և ղինվորների պահանջը Մարգրիտից՝ հաջորդելու հորը: Նույն գլխի հաջորդ էջերում ներկայացվում է Կիլիկիայի մեծ իշխան, բանակի հրամանատար Թորոսի և Սմբատ իշխանի դուստր Մարգրիտի պաշտոնական հանդիպումը: Պատմութեան էջերում երևի ոչ մի տեղ արձանագրւած չէ բնավորութեան նման առաքինութիւններով օժտւած պաշտոնական անձերի այդպիսի երկխոսութիւն: Ծերենցը մարդկային կերպարի վեհութիւնը հասցրել է բարձր կատարելութեան, որի մեջ նա տեսնում է մարդկային հարաբերութիւնների վեհութեան ամենամեծ երաշխիքը:

Մարդկային առաքինութեան մի այլ դրսևորում է հույն մայրական ծագումով հայ, իշխանական տոհմի զավակ Եւփիմեն՝ ազգային նկարագրով ավելի համարձակ, իր գործողութիւնների մեջ ազատ, բայց նվիրւած իր ուխտին, պարզ բնավորութեան աղնովական բարեկրթութեամբ զարգարւած:

Ինչպես նշեցինք, հենվելով հույն կնոջ մասին պատմութեան մեջ արւած հիշատակութեան վրա, Ծերենցը հորինում է մի ամբողջ պատմութիւն Եւփիմենի՝ սկզբում Ռուբենի և ապա Թորոսի նկատմամբ տածած զգացմունքների մասին: Իր իսկ Եւփիմենի պատմածներից երևում են աղջկա անհանգիստ, մի փոքր էլ արկածախնդրութեան հակված բնավորութեան գծերը, որոնք խստորեն տարբերւում են մարդկային բնավորութեան կաղմակերպւած, լրջմիտ անհատականութիւնից: Սակայն երկուսին մոտեցնողը և Թորոսին գրավողը մարդկային առաքինութիւնը հավաստող ուղղամտութիւնն է, արդարամտութիւնը, անսահման բարութեան հետ: «Մի կարծեր զիս այն

կանանցմե, որոնց մտքին ընդարձակությունը իրենց սրսկապանակեն անդին չի կրնար տարածվիլ, ո՛հ չէ՞, ես քեզի՝ ինչպէս Ռուբենին՝ իշխանական աթոռ մը կփափագեմ, ես ձեր այս տոհմական կազմվածքին մեջ Պլուտարքոսի դշուցազուններ կտեսնեմ. ներե, ես դեռ մորս ազգին դշուցազունքը չեմ ճանչիր, և կրնաս ապահով լինել, որ անխոնջ գործակից մը և ամենայն վտանգաց անվիհեր դիմագրաւ մը հիս պիտի գրտնես» (էջ 25):

Այդ բոլորին Թորոսը պատասխանում է միմիայն մի բաղձանքով՝ «...դու փառասեր ես, կըսես, կուզես թագուհի ըլլար. եղիր, միայն հայ եղիր, և առաջին սպասավորդ և խոնարհ ծառագ ես կլինեմ ու բոլոր իմ ազգս քո հպատակդ կլինի, միայն թե օտարին գերութենէն ազատի» (էջ 26): Աղջկա խոսքերի մեջ կանացի սեթեթանք կա, որը, սակայն, լի է ջերմ հավատով Թորոսի հանդեպ ունեցած սիրո նկատմամբ: Եվ իզուր չէ, որ Թորոսը աղջկա հեռանալուց հետո իրեն գտաւ փոխված բոլորովին. «սիրտը նոր անծանոթ վարթությամբ մի գեղուն, և խաւար աշխարհքը լուսավոր եղած էր իրեն համար, երեկոյան արեւուն վերջի ճառագայթները վճիտ ոսկեղէն էին, ծառերու և ծաղկանց կանաչը շատ ավելի գեղեցիկ էր, քան մեկ ժամ առաջ, օդը առողջ ու թեթեւ էր շնչելու» (էջ 27):

Եւփիմեն դիմանում է բոլոր փորձություններին «Խմ պարտքս է,—ասում է նա,—վիրավորների դարմանել, որբերու, աշխիներու հաց, բնակարան ու մխիթարություն ճարել, հուսահատները քաջալերել, աչո, գիտեմ իմ պարտքս ասոնք են և թե որ ասոնք ես չի կատարեմ, արժանի չեմ իշխանի մը, ոչ թե կին, այլև ոչ ազախին լինելու» (էջ 67—68):

Եւփ Մարգրիտը, և՛ Եւփիմեն, ինչպէս դրում է Մերենցը, շատ մեծ գործեր կատարեցին, «իրենց գթած ձեռքով շատ ցաւեր սփռեցին, շատ խստություններ մեղմացուցին» (էջ 170): Երկու տաքերը բնավորություններ, բայց ոչ հակասություններ ստեղծող, այլ իրենց միասնությունը ընդգծող, իսկ այդ միասնության մեջ երևում են նրանց հոգեկան գեղեցկությունները: Կանանց այդ երկու կերպարները ինքնին արտահայտում են

ճարգկային առաքինության մասին հեղինակային իդեալի տարբեր կողմերը. մեկը՝ աշխույժ, անհանգիստ, միշտ ոգեվորված, միշտ հիացող, մյուսը՝ լռիկ, ներհուն, իմաստնացած էր խոհերի և որոշումների մեջ, երկուսն էլ դեղեցկի ձգտումներով ու զգացմունքներով լեցուն, բարի ու գթառատ:

Ծերենցը տպավորիչ գույներով է ներկայացնում Թորոսի ապրումները Եվփիմեի մահից հետո. երբ փոքրիկ Գոհարիկը հոր ծնկներին էր նստում, «իր գանգրահեր գլուխը կգնեռ կուրծքին, իր փափուկ ձեռքերով նորա մորուքը կփայփայեր լուսալիր, քաղցր աչքերը նորա խորունկ աչքերուն կհառեր, եր գողտիկ ձայն՝ սրտին և տարիքին պարզութենեն բխած անոր ականջին անուշ խոսքեր կմրմնջեր...» (էջ 172), արդյոք ինքը՝ Ծերենցը, այդ պահին չէ՞ր հիշում իր մորը կորցրած խաղուկի վաղ տարիները, երբ նա ամեն կերպ աշխատում էր մոռացության տալ իր վիշտը: «Ինչո՞ւ, հայրիկ, այսպես մեծ շունչեր կառնես» — հարցնում էր Գոհարիկը՝ լսելով հոր սրտից բխած հառաչանքները: «Դժվար էր այդ հարցմունքին պատասխանել, պետք էր խույս տալ, բայց ո՞ւր, ամեն օր, ամեն վայրկյան, երբ զբաղմունք չինք կթողվին, այսպիսի տեսարաններ կնորոգվեին, մինչև որ ժամանակը, որ հիշատակ չի մոռցներ այն մտքերուն, որ հիշողություն ունեն, այլ կը տկարացնե...» (էջ 172—173):

4

Ծերենցը գեղագիտական բնույթի կամ գրաքննադատական հոգվածներ չի գրել: Նրա արխիվում մնացել են պատառիկներ, որոնք ներկայացնում են մի քանի ձևակերպումներ առհասարակ ոճի մասին: «Ոճը մտածության արտահայտության արտաքին ձև է — գրում է Ծերենցը, — որը զգալի կընե գաղափարները կամ զգացմունքները, որ ծածկյալ էին ի մեղս»: «Ոճը կարգն է, որ պետք է դնել մտածության մեջ: Երբ նոքա լավ կապվին, սեղմվին իրերոց, ոճը կլինի հզոր, կորովի և համառոտ: Իսկ ընդհակառակն ծանր և դանդաղ բառերն իրար հա-

շորդեն, ինչչափ շքեղ լինեն, ոճը կլինի ճապաղ, թուլ և գետնաքարշ»¹³։

Ուրեմն Մերենցը ոճը համարում է գրողի ստեղծագործության գաղափարական բովանդակության և գեղարվեստական առանձնահատկությունների արտահայտման ձև։ Որքան սերս-լինի նրանց միասնությունը, այնքան ավելի պարզ և հստակ կլինի գրողի ոճը։ «Կան այնպիսիները, որոնք ճիշտ կմտածեն, բայց ճշտությամբ չեն արտահայտեր մտքերը»։ Գեղեցիկ պատկերները, ասում է նա, չեն կարողանում ծառայեցնել իրենց նպատակին։ Գեղարվեստական պատկերը ճիշտ արտահայտելու համար կարևոր նշանակություն ունի լեզուն, նրանով միայն կարելի է որոշել գրողի գեղարվեստական մտածության արտահայտչականության չափը։

Այս խորհրդածություններն ինքնին ցույց են տալիս Մերենցի խստապահանջ վերաբերմունքը գեղարվեստական երկի նկատմամբ։

Ճիշտ է, Մերենցի վեպերի գեղարվեստական աշխարհը ամբողջապես ենթարկված է նրա լուսավորական աշխարհայացքին և ռոմանտիկական պատմահայեցողությանը, բայց այդ աշխարհը միաժամանակ ներկայացնում է մի ներդաշնակ գեղարվեստական իրականություն, ուր գործում են յուրահատուկ և հետեռական օրենքներ։ Վիպասանն աշխատում է հատկապես իր գաղափարատիպերին օժտել մարդկային բնավորության անհատականացված գծերով, որպեսզի հեղինակային մտադրություն արտահայտելով հանդերձ՝ նրանց անձնական և հասարակական վարքագիծը հոգեբանորեն ու տրամաբանորեն պատճառաբանված լինի տվյալ վիպական իրադրության պայմաններում։ Թորոսի հոգեկան կերտվածքի մեջ, օրինակ, բանականությունը և զգացմունքը հանդես են գալիս միասնաբար։ Հերոսի անձնական ապրումները ամբողջապես ողողված են անհույս սիրով ու խոր մտահոգությամբ՝ հայրենի լեռնաշխարհի ու նրա մարդկանց նկատմամբ։

Ինչպես տեսանք, վեպի առաջին էջերում Թորոսն արտաքին անտարբերության քողի տակ մեծ հաջողությամբ թաքցնում էր իր ներքին խռովքը և հուղապրումները։ Ահա նա,

բանտից ազատման առաջին օրը, նստած իրեն հատկացրած բնակարանում, վերհիշում է մանկության օրերը, երբ հայրը և հորեղբայրը սկյութացոց դեմ մղած պատերազմից հաղթանակով վերադարձան, հիշում է այդ առթիվ ժողովրդական յնծուկները: Եվ ահա կիսաքուն վիճակում երևում է նրան «ոսկեթիւ մազերով կին մը թեթև քայլերով իբր ստվեր անկողնին շուրջը կպտտի...»¹⁴: Մանկության վերհուշը՝ «ոսկեթիւ մազերով» կնոջ խորհրդավոր տեսիլքում, կիսաբաց դուռը, իր հայտնաբերած սենյակը, պատի վրա եղբոր՝ Ռուբենի նկարը՝ թարմ ծաղիկներով պսակված: «Աս տեսարանը մեկն էր ինք փոխեց, սրտին փոթորիկը դադրեցավ, ալեկոծությունը հանդարտեցավ և հորդառատ արցունքի հեղեղ մը երեսնիվար կվազեր ձեռքը ճակատն ու մթնցած աչքերը կգոցեր, արձան մը տխրության հոն կեցեր էր...» (էջ 23): Վերապես բացվում է խորհրդավոր գաղտնիքը: Նրա առջև կանգնած էր «տեսիլքը»՝ իր ազատարարը՝ Եվփիմեն: Մեկ անգամից վերանում է արտաքին շպարը Թորոսի դեմքի վրայից. նա չկարողացավ խոսել «վասնդի արցունք և սրտի հուզմունք ձայնը խեղդեր էին»:

Իրար հաջորդող խորհրդավոր տեսարանները՝ պալատից մինչև իր բնակարանը, այնուհետև նույնքան խորհրդավոր դնակը և Եվփիմեի հայտնությունը մի անգամից կենդանություն են տալիս նրան, կյանքի կոչում, լցնում նոր հույսերով ու երազներով: Այս ամենը շուտով գործնական ընթացք է ստանում, և Թորոսը հասնում է նրան, որ ոչնչացնում է իր բռնի ելած դարանակալ խումբը:

Անցնում են ահա տառապանքներն ու տապնապները: Թորոսն իր հայրենիքում է: Կիլիկիայի խստաշունչ բնույթունը իր գեղեցկությամբ և բնական բարիքներով Մերենցի գրչի տակ կարծես մեղմանում է գորովագութ մոր նման, հույս ու ապավեն ներշնչում իր զավակներին, անխոնջ աշխատավորի ձեռքը կարողանում է այդ քարային երկիրը վերածել «դրախտի»: Հեղինակը նկարագրում է Բաբկենի սուրը, որն իր «բնական դիրքերովն ու օդով ախորժեղի բնակարան մըն էր բլրակի մը ստորոտը շինված, մեկ կողմ ահագին խորածորի մը վրա կնայեր, ուր կենդանի ջուր մը ժայռերու վրային շառաչմամբ

կիջներ, բլրակը և տնակը ծածկված էին զանազան սպառնալից ծառերու ճյուղերուն և տերեւներուն մեջ, և որոնց շուրթին տակ գետնէն ութ-տասը կանգուն բարձրութեամբ տախտակամած մը կար ընդարձակ ու պարզ փայտի նստարաններու շրջապատը ու վանդակապատ, որ ամառ գիշերներ ննջարանի համար նաև կծառայէր այդ տաք երկիրներու մեջ» (էջ 87):

Թորոսը մտնում է քարային Կիլիկիա: Բնությունը նրան ուժ ու կորով է տալիս: Թշնամու ամերանքները չեն ընկճում նրան՝ թախիծ ու վիշտ պատճառելով: Ընդհակառակը՝ բնությունն իր հրաշք գեղեցկութեամբ, իբրև ազատութեան խորհրդանիշ, ներդաշնակ զգացումներով է լցնում նրա ողջ էութիւնը: Լծորդված հերոսի երազանքներին՝ այն առաջ է մղում Թորոսին և նրա խմբին՝ հասնելու գլխավոր նպատակին:

Անձամբ շրջելով Կիլիկիայի ողջ տարածքը՝ Մերենցն իր հերոսից ավելի լավ էր ճանաչում այն: Թորոսն այդ պակասը լրացնում է մանրակրկիտ հարց ու փորձով: Պետք է նկատել, որ Թորոսի մոտ համարյա բացակայում են ումանտիկներին հատուկ տվայտանքները՝ իրենց ներսում որոնելու այն, ինչ երազում և չեն գտնում իրականութեան մեջ:

Բնությունն իր գեղեցկութեաներով հովվերգական պատրանքներ չի ներշնչում Թորոսին, նա չի անձնավորում բնությունը՝ նրա մեջ գտնելու սիմֆանք ու երազանք: Նրա կողքին բայցով վանահայրը նույնպես հեռու է բնութեան քրիստոնեական ներշնչումներից: Նրանց առաջնորդում են գործնական ծրագրեր, որոնք պետք է իրականացվեն մոտ ապագայում:

Թորոսի բնավորութեան ուժեղ և կայուն հատկանիշների մեջ Մերենցը դրել է մարդկային խղճի մի արտակարգ զգացում, որը նույնիսկ զարմանք է պատճառում իր շրջապատին: Դա մի խիղճ էր, որն արտահայտում էր ուղղամտութիւն, արդարամտութիւն, միաժամանակ հեռու էր քրիստոնեական ներողամտութեան որևէ երանգից: Բանականութեան և զգայմունքների սերտ համակցումը նրա այդ խղճին տալիս էր անձնականը քաղաքացիական շահերին զուգակցելու՝ բարոյակերթող և դաստիարակող բարձր հատկանիշներ:

Խղճի և մարդկայնության կատարյալ մարմնացում է Մարգրիտը: Ծերենցի ռոմանտիկական հայեցողությունը իր բնորոշ արտահայտությանն է հասնում՝ չափազանց բարի աղջկա և չափազանց դաժան հոր հարաբերությունը նկարագրելիս: Վիսլասանը ոչ մի պատենջ չի դնում հոր և աղջկա մեջ: Հարազատ աղջկա մարդկային առաքինությունների անհաղթահարելի ուժը մի կողմից, մյուս կողմից՝ իրագործությունների բնական ընթացքը Անարզաբայի տիրոջը հասցնում են իր բարոյական պարտության գիտակցությանը, և նա ինքնասպանություն է գործում:

Մարգրիտի բարոյականությունը նույնպես ղերծ է քրիստոնեական մորալից, թեպետ նա հավատացյալ էր և շարունակ ձգտում էր բաշվել մենաստան: Բայց դա բխում է ոչ թե կրոնական մղումներից, այլ իր ընտանիքում և շրջապատում եղած հակասությունների ողբերգական գիտակցությունից: Երբ հանգամանքները հանում են նրան այդ միջավայրից, շատ տեղերում նա կարողանում է ազդել իր ամուսնու՝ Ստեփանեի վրա, կատարել համապետական և համաժողովրդական գործեր, որոնք բարձրացնում են նրա անունը՝ իբրև ճշմարտության համար մարտնչող առաքինի կնոջ:

Թորոսի մոտ բացակայում է կասկածը բանականության հաղթանակի նկատմամբ: Դա Ծերենցի լուսավորական հայացքների ուղղակի արտահայտությունն է, ուր ղգալի նստվածքներ ունեն նաև գաղափարական յուրացումները հին աշխարհի քաղաքակրթությունից: Հերոսը հեղինակի գաղափարական ևրկվորյակն է: Որքան էլ Ծերենցը կյանքում հանդիպել էր իր երազանքի և իրականության բախման տխուր օրինակների, բոլոր դեպքերում չէր կորցրել հավատը իր լուսավորական երազանքների իրագործման նկատմամբ: Հավատի այս զորությունամբ է գործում նաև նրա վիսլական հերոսը: Թորոսի համոզումները մնում են անխախտ և ղերծ ռոմանտիկ խառնրվածքներին հասուկ հիասթափություններից և մեկամաղձուր վերապրումներից:

Մենք արդեն նշել ենք, որ Ծերենցն իր գլխավոր հերոսի՝ Թորոսի, արկածախնդիր Մլեհի, դավաճան Անարզաբա իշ-

խանի, բարբարոս Անդրոնիկոսի զեղարվեստական կերպար-
ները կերտելիս օգտվել է պատմական տվյալներից: Թորոսը
Սմբատ Գունդատաբլի և հայ մյուս պատմիչների մոտ ներկա-
յացված է հիմնականում դրական գծերով: Մերենցին պետք չի
ևղել խմբագրել նաև Մլեհի կերպարը, քանի որ այն, ինչ ընկած
է նրա առաջին վեպի հիմքում՝ պետականության ամրապնդ-
ման և բարգավաճման գաղափարը, պատմությունն ինքը ար-
գեն ներկայացրել էր Թորոսի և նրա հաջորդների՝ Լևոն Զ-ի և
մյուսների մեջ:

Վահրամ Բաբունին, հենվելով զլիավորապես Սմբատ
Սպարապետի «Ժամանակագրության» վրա, չափածո շա-
րագրել է Ռուբինյանց իշխանության պատմությունը: Պետա-
կան-քաղաքական իրական դեպքերի միաձույլ հյուսվածքում
Բաբունին պատմության տվյալները մեծ հաջողությամբ ձուլել
է իր ստեղծած զեղարվեստական իրականությանը, դրել նրա
մեջ հայ ժողովրդի ազգային-քաղաքական կյանքի հետ կապ-
ված՝ դարերով չլուծված այն հարցերը, որոնք հուզում էին նաև
Մերենցին և նրա ժամանակակիցներին¹⁵: Թորոս Լևոնի զեղար-
վեստական կերպարն ինքնին մի հայտնություն էր ժամանա-
կի համար*: Առանձնապես հետաքրքիր ու գրավիչ են հար-
ցերի գրվածքը և այն լուծումները, որոնք ցույց են տալիս
Մերենցի պատմահայեցության և զեղարվեստական մտածու-
թյան սերտ ներգաշնակությունը: Դա, ինչպես նկատել ենք,

* Ղևոնդ Ալիշանը 1873 թ. վենետիկում տպագրած իր «Շնորհալի և պա-
րագայ իւր» ուսումնասիրության մեջ, անդրադառնալով Կիլիկյան հայ պե-
տականության պատմությանը, Բաբունի Վահրամի «Ոստանաւոր պատմու-
թեան Ռուբինեաց» պոեմից բերում է Թորոս իշխանի արտաքինի զեղար-
վեստական նկարագիրը:

«Էր սա մարմնով յառաջացեալ,
այլ և հոգով յոյժ դորացեալ,
Ձողորմութիւն առատ տուեալ
Բարձաց գործուք բարդաւաճեալ,
և հաւատով պայծառացեալ,
Աստուածային գրովք վարժեալ,
և իմաստոց արուեստ մտեալ»:

բխում էր Ծերենցի՝ այդ օրերի այն նոր տրամադրություններից, որոնք պատմական նոր հույսերով էին տոգորում ծանր ճակատագրի շեմին կանգնած հայությանը:

Ծերենցի մոտ բավական հաջող են ներկայացված ժողովրդի մարտունակ ոգին ներկայացնող գեղարվեստական պատկերները: Բաբկենի, Կոստանդնի, Սարգսի ու հպանցիկ ներկայացված այլ կերպարների մեջ հեղինակը խտացրել է ժողովրդի ոգին արտացոլող գծերը: Այստեղ բնական են հնչում ինչպես Թորոսի, այնպես էլ ժողովրդի ներկայացուցիչների կերպարներում Ծերենցի մարմնավորած այն հատկանիշները, որոնք գալիս էին նույն օրերին գրի առնված ժողովրդական էպոսից: Դա ինքնին բնորոշում է հեղինակի գաղափարական կապը բանահյուսության հետ, ուր ամենից ավելի ամբողջական է երևան գալիս ժողովրդական շարժման տարերքը:

«Թորոս Լեոնի» վեպում հեղինակը ղետեղում է Կիլիկիայի հին հայերի երգերից երկուսը: Բաբկենը ս. Մակար վանքից դիտում է Կիլիկյան լեռները և տխուր մրմնջում Ռուբեն մեծ իշխանի և իր ընկերակիցների մասին Տորոսի բարձունքների վրա հորինված երգերից մեկը:

1878 թ. Ծերենցին ուղղած նամակներից մեկում Ս. Ալիշանյանը գրում է, թե հավանել է «Թորոս Լեոնին», բայց խորհուրդ է տալիս ոտանավորներ չմտցնել վեպերի մեջ: Ծերենցը Թագուկին գրած մի նամակում հայտնում է, թե վեպում ղետեղված ոտանավորները իրենք չեն, այլ «գաղթականների» հորինածը: Նա նկատի ունի Ռուբինյան իշխանության հաստատման շրջանից մնացած Ռուբեն Ա.-ի մասին տարածված երգերը:

«Փոթորկալից մեզ բուն հողմեր հոս բերին,
Մեծին հայոց Մասիսն էր մեր խանձարուրք,
Արագածու գլուխն էր մեր արքունիք,
Նըպատ, Գրգուռ, Բյուրակն էր մեր շտամարան»... 16,

Ըստ երևույթին բամբուկաբույսերը երգել են՝ փառաբանելով Ռուբինյան իշխանության հիմնադրի քաջությունները՝ դնելով նրա մեջ ժողովրդական դյուցազուններին հատուկ էպիկական գծեր: Ծերենցը բերել է Ռուբեն իշխանի մասին ժողովրդական

մի այլ երգ, որի մեջ ասվում է, թե ահա եկել են օտար դաշտեր ու լեռներ, թողել սրբություններն իրենց և ապավինել Ռուբենի դրոշին, որը զորավոր «սյուն է արքայական այալաւաւին», իսկ մինչ այդ՝

«Վահան, սուսեր, նիղակ և տեգ անկյալ կային ժանգոտեր,
Հայուն անուն վատթարացալ՝ էրմեն*, ոչ ոք կանվաներ
Մինչ մեր անշուք անկյալ փառաց արքայական արմատեն
Ընձյուղ փառաց՝ լույս ծագեցաւ քաջն և արին մեղ Ռուբեն»:

Ռուբենի օրով կենդանացաւ «գաղթական» աշխարհի
յլանբը.

«Մեր այգիներն ոսկի ողկույզ, անուշ գինի կհոսեն,
Մեր աղջիկներն քաղցր ձայնով և բնարով գեղգեղեն.
Մեր կտրիճներ աղատության դեն ու բուսեր ըշկահեն,
Ջի կործանյալ մեր դահույից արքայական արմատեն՝
Ընձյուղ դաւար՝ հույս ծագեցաւ քաջակորովն մեղ Ռուբեն» (էջ 96):

Նույն ոգով էլ Մերենցն է նկարագրում Կիլիկյան աշխարհը, երբ վերջապես խաղաղություն է տիրում Ռորոսի երկրի վրա «Տորոսի լեռներն ոչ միայն ուրախություն ու նվազարանաց ձայներուն արձագանք կուտային, այլ նոցա երկիրը իր մետաղական հարստությամբ աշխատող ժողովուրդը կվարձատրեր: Վանքերը Սև լեռան վրա ոչ միայն աստծու փառաբանությունը հերկինս կբարձրացնեին, այլ նաև ժողովրդական դպրոցներ էին: Կիլիկիոյ բեղմնավոր դաշտերը մշակյալ հասկերով ու պտղատու ծառերով կզարդարվեին, ամեն տեսակ կենդանյաց հոտեր իր հարստության աղբյուր էին» (էջ 203):

Պատմական ճշմարտության պահանջը ինքնին որոշում է նաև վեպի կոմպոզիցիայի սկզբունքները: Հրաժարվելով պատմական անցյալի գեղարվեստական վերարտադրության հին նորմաներից՝ Մերենցն իր վեպում ընդարձակում է պատմական իրականությունը՝ տեղի, ժամանակի, մարդկային հոգեբանությունների ցուցադրությամբ: Վեպի կառուցվածքը հնա-

* «Էրմեն. թարգմանի այր մարդ, արի մարդ» (Մանոթություն, Մերենցի):

րաւորություն է տալիս հեղինակին 1843—1869 թթ. Կիլիկիա-յում տեղի ունեցած պատմական իրադարձությունները հաջողությամբ կապել գեղարվեստական երևակայությամբ հյուսված՝ Թորոսի անձնական կյանքի իրողությունների հետ: Ծերենցի նկարագրություններից երևում է, որ Թորոսը ունի մտավոր և հոգևոր հարուստ ներքնաշխարհ. դա երևում է շրջապատի հետ ունեցած կապի, Եվփիմեի, Դիոնիսի հետ խոսակցությունների, ինչպես նաև սեփական դատողությունների ու խորհրդածությունների մեջ: Վեպում թե՛ պատմական բնանկարը և թե՛ պատմության փաստերը գեղարվեստական ձև են ստանում էմոցիոնալ հագեցվածությամբ: Թորոսի մտքի և հոգու որոնումների մեջ երևում են հայ պատմական կյանքում նոր տեղաշարժերի հետ կապված հոգևոր նորոգման առաջին ծիլերը, որոնք Կիլիկյան հաջորդ իշխանների օրով պիտի իրենց կնիքը դնեին մշակույթի մեջ: Հոգեբանության աշխարհակա-նացման այս երևույթները, ինչպես հեղինակն է նշում, Թորոսի մոտ բացվում են նրա կարգացած գրքերի և Դիոնիսի մտքերից եկած հայտնությունների մեջ: Բաբկենը նրան ասում է. «Դուն ալ մեր իշխանը՝ լավ ես, խելոք ես, գիտուն ես, շատ կարողացել ես, վարդապետի չափ բան գիտես» (էջ 18): Որքան էլ սխեմատիկ երևա Թորոսը ընթերցողի աչքին, այնուհան-դերձ նա գեղարվեստական հաճույք է պատճառում ոչ միայն իր հայրենական գործունեությամբ, այլև կեցվածքով, խոհե-րով և ներփակ զգացմունքներով:

Մատթեոս Ուռհայեցին գրում է, թե երբ Անդրոնիկոսը մտավ Կիլիկիա, Թորոսը ընդառաջ գնաց նրան և համաձայնեց ենթարկվել կայսեր, եթե նա ձեռք չտա իր պետական իրա-վունքներին: Վեպում Ծերենցն անդրադառնում է Թորոսի այս խոսքերին, միաժամանակ նշում Թորոսի մերձավորների ան-հանգստությունը նրա այդ քայլի առթիվ: Ծերենցը Թորոսի առաջարկի մեջ դնում է իր սեփական հղացումը, որը պետք է համապատասխաներ պատմական հերոսի գաղափարական միտումներին: Ծերենցի հերոսը այսպես է մեկնում իր բնոր-դի կատարած քայլի իմաստը. «...հայ ազգի օգուտը կա-հանջեր, որ հունաց հետ եղբայրաբար երթանք, անոնց նիզա-

կակից լինինք ընդդեմ այն թշնամյաց, որ զմեզ կշրջապատեն և օրավուր կզորանան...» (էջ 149):

Երբ Անդրոնիկոսը ամբարտաւանությամբ մերժում է, Թորոսը նախահարձակ է լինում և հաղթությամբ ավարտում պատերազմը հունաց դեմ: Մ. Ուռհայեցին նկարագրում է այդ պատերազմի ողջ ընթացքը: Ծերենցը, ինչպես նշում է Ա. Տերտերյանը, իր նկարագրությամբ գերազանցում է Մ. Ուռհայեցուն: Թորոսի հարձակման ժամանակ սկսված գիշերային փոթորիկը, «...և ամբլի սաստիկ առավոտյան հայ արշավանաց փոթորիկը՝ ամեն բան խառնափնթոր և ողորմելի վիճակի մեջ կցուցներ այդ բանակը, կիսակործան և կանդուն վրաններ, վահաններ, նիզակներ, սուրեր գետին փռված, թամբյալ ձիեր ոտնկապ կխխնջէին հեծյալներու սպասելով որք չի կային» (էջ 153): Եվ ահա Թորոսը՝ «այդ սպանդանոցին վրա կեցած կը նայեր,—շարունակում է նույն տեղում հեղինակը,—կիսորհրդածեր մարդկային անմտության վրա, որ խաղալիք քանի մը անպիտան, հիմար և թեթև գլուխներու, այդ չափ ճապաղաց տեղի կուտար»:

Ծերենցը հարկ չի համարում նկարագրել Մամեստիայի պալատը, ուր ապրում էր Թորոսը Եվփիմեի հետ: Բայց, ահա, ինչպես Կոստանդնուպոլսի բյուզանդական կայսեր պալատը, այնպես էլ Անդրոնիկոսի վրանի նկարագրությունը ցույց է տալիս նրա արգահատանքն այդ շրեղությունների հանդեպ: «...Գորգեր, բեհեզյա անկողիններ, ծիրանի վերմակներ, ոսկի և արծաթյա գեներ, կանանց զարդարանք, երաժշտության նվագարանք խառնիխուռն զրված էին, այնպես որ մեծ թատրոնի մը մթերանոցի կնիմաներ, բան թե սպարապետի մը վրան» (նույն տեղում):

Խորքից ճանաչելով Կիլիկիայի պատմության մեջ մեզ հետաքրքրող ժամանակաշրջանը՝ Ծերենցն իր հերոսին օժտել է հեռատես ուղմական դիվանագիտությամբ: Թորոսի յուրաքանչյուր գործողություն նախօրոք ենթարկելով չափի ու ձևի՝ Ծերենցն իր հերոսի միջոցով քննադատում է Բյուզանդական կայսրության նենգությունների մեջ թաքնված ոչ խելամիտ,

անհետատես քաղաքականութիւնը, որը վերջում կործանում քերեց նրան:

Թորոսի իմաստնացած քաջութիւնն ու համարձակութիւնը, միաժամանակ մտքի սլացքն ու խորաթափանցութիւնը, որոնք ներկայացված են նաև պատմութեան մեջ, հնարավորութիւն են տալիս Ծերենցին՝ իր վիպական հերոսին ներկայացնելու ողորմատիկական ամբողջ վեհութեամբ: Ժողովրդի հաջողութեան գաղտնիքը նաև նրա առաջնորդի խելքի, ուժի և համարձակութեան մեջ է, գրում է հեղինակը, նա է, որ ազգային հղորմութեան երաշխիք է տալիս, հայրենասիրութեան և միաբանութեան զորավիգ դառնում:

5

Ինչպես նշեցինք գրքի առաջին մասում, «Թորոս Լեոնի» վեպը լույս տեսնելուն պես, հիացմունք առաջացրեց Կ. Պոլսի և Թիֆլիսի գրական շրջաններում և ժողովրդի մեջ: Ստ. Պալասանյանը Ծերենցի այդ վեպի մասին նկատել է, «թե շատ քիչ գիրք կատարահի «Թորոս Լեոնի» նման՝ իր ժամանակին գրված ու հրապարակված»: 1879 թ. «Փորձում» տպագրած իր հոդվածում գրախոսը նշում է, թե հեղինակի նպատակն է եղել «ներկա տալնապալից ժամանակներում» ցույց տալ, որ Թորոսի նման անվահեր հոգին ու ջերմ հայրենասերը կարող է հայութեանը հանել կործանման անդունդից և կյանքի կոչել ինքնուրույն և ազատ ապրելու համար: Իսկ Ս. Երեմյանը 1912 թ. տպագրած «Ազգային դեմքեր» գրքում ուղղակի գրում է, որ «Ծերենցն իր «Թորոս Լեոնի» վեպով թուրքահայ գրականութեան մեջ հեղափոխական դարթումի առաջին նշանը կուտար»¹⁷:

«Կունենալի՞նք Թորոս Լեոնին, եթե Ծերենց յուր սրտին բարախոմանց ունկ դրած չլիներ Թորոսի ապրած վայրերն, չկարենալինք իրեն համար ըսել «Մինչ կործանյալ ավերակաց արքունական արմատեն... և ահա նա այդ հայրենասեր ոգին որ տառապյալ ոգով ի Կիպրոս առանձնացյալ, անդ կապրեր»

կարծես հողմոց բերած հիշատակներովը, կենաց հմայն հաներ ապագային», — գրում է Արփիարյանը¹⁸:

Վ. Փափաղյանն իր «Պատմություն հայոց գրականության» գրքում Մերենցին գնահատում է իբրև՝ «ոչ միայն անկեղծ հայրենասեր, այլև հմայող պերճախոս, անկեղծ ազգասեր, քարոզիչ և միաժամանակ ջերմ ժողովրդասեր»¹⁹: Փափաղյանը վկայում առանձնապես հավանում է ժողովրդից ելած հերոսներին՝ Բաբելենին և Սարգսին: Խորապես ծանոթ լինելով եվրոպական գրականությանը, նա, Մերենցի վկայերի մասին խոսելիս հատկապես նշում է Ալ. Դյումայի ազդեցությունը. «Նրա գրելու ձևերն ու հետաքրքրելու արհեստը, հյուսվածքները հենվում են նույն վարպետ շարժումներով, և նույնիսկ տիպարները գծվում են նման ներկերով ու վրձնի համարձակությամբ» (նույն տեղում, էջ 477):

Հետաքրքիր մտքեր է հայտնում Լևոն «Ռուսահայոց գրականության պատմություն» գրքում: Նա գնահատում է Մերենցի մոտ ժողովրդի հերոսականության գաղափարը, որը ստեղծում է հայրենասիրության ջերմ մթնոլորտ: Լևոն Մերենցի պատկերած հայ կանանց կերպարների մեջ տեսել է ներքին կապ V դարի կանանց անձնավիրության և իր ժամանակի այն կանանց միջև, որոնք մասնակցում էին հասարակական-ազգային կյանքին: Կանայք Լեոյի գիտազաշտում ժողովրդական հպարտություն արթնացնողներ են: Մերենցի գլխավոր հերոսին Լևոն համեմատում է իտալական ազգային-ազատագրական շարժման ղեկավար Դարիբալդիի հետ, նրա մեջ տեսնում ժողովրդի առաջնորդի լիարժեք պատկերը²⁰:

«Թորոս Լևոնի» վեպին փայլուն գնահատական է տալիս Հ. Թումանյանը՝ Մերենցի մահվան 25-ամյակին նվիրված հանդիսավոր նիստում. «Եվ երբ ետ եք դառնում դեպի ՅՍՍՀ-ական թվականները, — ասում է նա, — ճանաչելու թե ո՞վ էր էդ հիմնադիր վարպետը, ձեր հոգին լցվում է անկեղծ հրճվածությամբ: Չգիտեք նրա ազատասեր ոգու վրա հիմնար, նրա վառ հայրենասիրության ու ժողովրդասիրության վրա դարմանաք. նրա հոգու ազնվության ու մարբության վրա ուրախանաք, թե՛ նրա սրտի քնքշության ու ճաշակի նրբության վրա:

Եվ ի՞նչ իմաստուն ու գեղեցիկ է դնում նա իր գործի հիմքը, իրեն հերոս առնելով Թորոս Լևոնիին՝ բյուզանդական քան-տում փակված հայ իշխանազնը, որ բանտից դուրս փախչելով հասնում է իր հայրենիքը, ազատասիրության շունչ է փչում, սիրտ տալիս, ոտքի է հանում իր ժողովրդին ու կանգնեցնում է ամուր՝ իր ազատ կյանքով ապրելու հայ ժողովրդի ազատա-սիրության ոգին, էսպեսով նա հանդիսանում է մի խորհրդա-նշան, մի ոգի, որ թագավորում է հայոց թե՛ պատմական, թե՛ ժամանակակից կյանքի վրա հիմնած գրականության մեջ և պրոանում ու ամրանում ժողովրդական ուժով՝ հերոսական խորհուրդներից հերոսների ծնելով»²¹:

Այս հակիրճ խոսքերով Թումանյանը բնութագրում է այն առանձնահատկությունները, որոնք բարձրացնում են Մերեն-ցին հայ գրականության բարձրագիւր դիրքերը՝ նոր ավան-գույթներ ստեղծելով ումանտիկական պատմավեպերի համար:

«Թորոս Լևոնի» վեպն ինչպես իր տպագրության օրերին, այնպես էլ Թումանյանի և իր ժամանակի համար համահնչյուն առձագանքներ է տալիս, պատմության խորքից բարձրացնելով ազատագրական շարժման իր դրոշը, հանուն ազգային գոյու-թյան և ժողովրդի կյանքի հարատևման:

Նույնպիսի զգացումներով են համակված Հայրենական մեծ պատերազմի շրջանում Մերենցի վեպի գաղափարական բովանդակության նոր մեկնությունները: 1942 թ. Ա. Տեր-տերյանը տպագրեց «Հայրենասեր կինը Մերենցի վեպերում»՝ խորհրդածություններով ու համեմատություններով հարուստ գրական ընդարձակ ակնարկը: Մերենցը հայրենասիրության խնդրում կանգնած է Նալբանդյանի կողքին, հայտարարում է Տերտերյանը: Հեղինակը, ինչպես այնուհետև նկատում է քն-նադատը, առանց մոռենոնացնելու պատմական հերոսների հայ-րենասիրական զեղումները, գտել է անցյալի և իր սպրած օրերի կապող թելերը: «Մերենցի հայրենասեր գրիչը բանաս-տեղծական թռիչք է ստանում այդ բոլոր արհավիրքների հան-դեպ և պարզ ցույց է տալիս, թե այդ զայրույթը միայն պատ-մական հուշ չէ, այլ իր սպրած դաժան ժամանակի արտա-հայտություն»: Տերտերյանի ակնարկն աչքի է ընկնում պատ-

մահասարակական ֆոնի վրա արված բաղմապիսի համեմատություններով, որոնք բնորոշում են նրան՝ որպես լայնահայաց ու խորաթափանց գրականության պատմաբանի:

Մերենցի պատմական վեպերի գաղափարական և գեղարվեստական առանձնահատկությունների քննությանն են նվիրված նաև Սարինյանի «Հայկական ռոմանտիզմ» աշխատության համապատասխան գլուխը և «Պատմա-բանասիրական հանդեսում» տպագրած «Մերենցի» ակնարկը: Մերենցի վեպերում հեղինակը դիտում է ռոմանտիկական պատմավեպի գեղարվեստական և ճանաչողական այն ուրույն գծերը, որոնք արտացոլում են գեղարվեստական մտածողության և պատմագրության կապը, դրանց միասնությունը՝ պատմական անցյալի և ժամանակակից կյանքի աղերսներն արտացոլելիս:

Պատմության դասերում հայտնաբերելով ազգային գոյության գլխավոր պայմանը հանդիսացող հայրենասիրությանն որ դրսևորումները, նկատում է գրականագետը, հեղինակը Թորոսի կերպարի մեջ տեսնում է հատկանիշներ, որոնք պատմությունն իբրև վարդապետ միասնական պրոցես կապում են ներկա օրերի հետ, հարստացնելով մեր պատկերացումներն ինչպես անցյալի, այնպես էլ ներկա օրերի ազգային բազմաճյուղի մասին: Բարձր գնահատելով «Թորոս Լեոնի» վեպի պատմագեղարվեստական արժանիքները, գրականագետը բացահայտում է Թորոսի և Հովնանի գաղափարական միասնությունն արտացոլող գլխավոր հատկանիշը՝ պետության և ժողովրդի միասնության մեջ տեսնել ժողովրդի հաղթանակի և նրա կյանքի բարեկեցության ուժը:

Այսպիսով, Մերենցի «Թորոս Լեոնի» վեպն, ինչպես իր ժամանակին նշում էր Հ. Թումանյանը, այսօր էլ մնում է հայրենասիրության և ժողովրդասիրության վառ օրինակ մեր սերունդի համար: «Թորոս Լեոնի» վեպում պետության ու ժողովրդի կապի գեղարվեստական մեկնաբանության շատ կողմեր այսօր էլ մնում են սովետահայ պատմավիպասանության ուղեգրության կենտրոնում:

1. «ԵՐԿՈՒՆՔ Թ ԴԱՐՈՒ» ՎԵՊԸ ԵՎ ՆՐԱ ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՈՒՆՔՆԵՐԸ:
2. ՎԵՊԻ ԱՌԱՋԻՆ ԳԼՈՒԽՆԵՐԸ: 3. ՎԵՊԻ ԳԼԽԱՎՈՐ ՀՆՐՈՍ ՀՈՎՆԱՆԸ, ԳՈՒՐԳԵՆ ԻՇԽԱՆԸ ԵՎ ՍՄԲԱՏ ՍՊԱՐԱՊԵՏԸ:
4. ՎԵՊԻ ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ՀՅՈՒՍՎԱԾՔԸ:
5. ՔՆՆԱԴԱՏՈՒԹՅՈՒՆԸ

1

Ինչպես տեսանք, «Երկունք Թ դարու» պատմական վեպը Մերենցը գրել է առաջին վեպից անմիջապես հետո: Առաջին և այս վեպի գաղափարական միտվածության ընդհանրությունները հավաստում են ժամանակակիցների արտահայտած այն կարծիքը, թե երկրորդ վեպի գաղափարը Մերենցը հղացել է դեռևս Կիպրոսում, երբ նա գրում էր «Թորոս Լևոնին»: Մենք արդեն գիտենք, որ 1876—1878 թթ. արևմտահայ ազատագրական շարժման վերելքը աղգային երազանքների իրականացման հույսերին մեծ թափ ներշնչեց: Մերենցն առաջինն էր հայ գրողների մեջ, որ լայն տեսադաշտի մեջ առավ ժողովրդական շարժման այդ երազանքները և ստեղծեց իր ժամանակի համար անսովոր սյուժե, որի շարժիչ ուժը ժողովուրդն էր, և նրա առաջնորդն այս անգամ ոչ թե ազնվական դասի ներկայացուցիչն էր, այլ այդ ժողովրդի ծոցից դուրս եկած՝ նրա իղձերի անմիջական թարգմանը:

Հայոց պատմության էջերից Մերենցին ծանոթ էր Թորոս Լևոնի մեծ իշխանից ավելի վաղ ժամանակներում ապրած գյուղացի Հովնանը: Թովմա Արծրունին պատմում է, թե ինչպես 851 թ. արաբ ոստիկան Յուսուֆը նենգությամբ ձերբակալում է Տարոնի իշխան Բագարատ Բագրատունուն և դերի ուղարկում իսալիֆին: Սասունցիները, խուժեցի Հովնանի զբլխավորությամբ, իջնում են լեռներից, մտնում Մուշ, սպանում են Յուսուֆին՝ ապստամբության դրոշ բարձրացնելով արաբական բռնիշխանության դեմ:

«...Բնակիչը լերին, իրեն տեսին թե վարեցավ իշխանն ի գերության,—գրում է Թ. Արծրունին,—ինքեանք պատրաստել էին զնոյն փարշմանն կրել զոր դաշտայինքն կրեցին՝ հասին

միաբան բազմությունն մեկնակազէնքն խութայ ի հնարս արուեստ գիտութեանսն իւրեանց զոր ի պէտս օժանդակութեան ձմեռայնոյ հնարաւորեալ էին: Եւ բարձեալ աղտեացս հանապազակիրս ի պատրաստութիւն գաղանացն որ ի մայրիսն որ քանան, կամ թշնամեաց ի վերայ հասելոց, և եկեալ ի վերայ քաղաքին պաշարեն զնա և զվօրուն մատնեն ի սատակումն որոյ զպատանդսն Վասպուրականի հանեն յարգեւանեն և գերիացն, ընդարձակեն, զկապուտ նույս բաժանեն յինքեանս»¹: Իսկ Յուսուֆ ոստիկանը, պատմում է Թ. Արծրունին, փախչում մտնում է Մուշի բարձրաբերձ եկեղեցին, պատսպարւում նրա գմբեթի ներսում: «Եվ անդ ի միջոց գմբեթին զօղեալ ավարեալ սարսըռալից զողմամբ զետեղեալ լինէր»: Խոթեցի ապստամբները գտնում են նրան և սպանում «եւ ես աշօք իմովք տեսի վայրն վայն, որ հարեալն էր զնա, և ի նմանէ ստուգեցի, վասն նորա» (նույն տեղում):

Հովնանի անունը Թ. Արծրունին հիշատակում է նրա զերի ընկած ժամանակ. «...էր ընդ գերիալսն ի լեռնին Խութայ Հովնան անուն, սա այն էր, որ մինչ յեւանելն բուխալի ի սկզբանն մտանելոյ նորա ի Հայս՝ եկաց ընդդեմ նորա բնակօք լերինն և հարուածս մեծամեծս հասուց ի վերայ զօրացն գունդքն տաճկաց և հասին զերնայինսն ձերբակալ արարեալ զերանելին Հովնան ետուն կապանօք ի բանտ արքունի»²:

Խոթեցիների ապստամբության մասին հիշատակություն կա նաև Հովհաննէս Դրասխանակերտցու մոտ: Հայաստանի պատմությունը պատմիչների նկարագրություններով չի ավարտւում: Հայոց տարեգրության մեջ կան փաստեր, որոնք հայտնի են դարձնում ոչ միայն իշխանների, այլև ժողովրդական պայքարի բազմաթիւ էջեր: Պատմությանը հայտնի է, որ VI—X դարերում Հայաստանի տարածքում կրօնական քողի տակ եղել են սոցիալական շարժումներ, որոնք առանձին ղեպքերում դրսևորել են նաև ազատագրական ձգտումներ: Այդ շարժումների մեջ առանձին տեղ է գրավել պալլիկյանների և թոնգրակեցիների երկարատև պայքարը իշխանների դեմ: Պատմությունը շատ բան է հիշում Սմբատ Զարեհավանցու՝ իր ժամանակի հայտնի ղեմքերից մեկի, գործունեության մա-

սին՝ բավական հետաքրքիր դրվագներով և իր՝ Զարեհավան-
ցու, հայացքների վերաբերյալ ականակներով: Ղևոնդ պատմիչը
նշում է Դրիգոր Մամիկոնյանի գլխավորությամբ Տալբում հա-
մախմբված ապստամբների մղած պայքարը իշխանավորների
դեմ՝ իբրև աստծու դեմ ուղղված «հանցանք». «Եվ ամենայն
որդիք յանցանաց... ի գունդ ապստամբեին, որք ոչ ճանչէին
գերկիւղ աստուծոյ և ոչ գահ իշխանաց և ոչ զպատիւ ծերոց,
այլ իբրև ալազգի և օտարացեալ ասպատակ սփռեալ գերէին
վեղբայրս և զազգակիցս»⁵:

Դրասխանակերտցին նույնպես դժգոհում է տերերի դեմ
ուղղված գյուղացիական ընդվզումներից: Լինում է և այնպես,
նշում էր պատմագիրը, որ փոքրավորները ցանկանում էին
հասնել մեծավորներին. «...և ծուռ աչքն ըստ Սողոմոնի հնա-
րին, զի տեարս տրեխատրեալ՝ ի գետնի գնացուցեն և ին-
քեանք ելցեն յերիւարս ահի պարանոցս և առաթուր հարօղս՝
խրոխտացեալք և սոնքացեալք մեծաւ ապստամբութեամբ»⁶:

Ակնարկելով գյուղացիական ապստամբությունները՝
Դրասխանակերտցին մեղադրում է ոչ միայն օտար նվաճողնե-
րին, այլև հայ իշխաններին, որոնք պատերազմելով իրար
հետ՝ ուժեղացնում էին գյուղացիական դժգոհությունները:
Պատմիչը ատելությամբ է խոսում կրոնական քողի տակ հե-
տըզհետե ուժեղացող սոցիալական շարժումների մասին:

IX դարի առաջին կեսից ծայր առնող և հետզհետե ծավալ-
վող թոնդրակյան պայքարը ֆեոդալների դեմ, լինելով հիմնա-
կանում սոցիալական բնույթի, ուղղված էր նաև օտար բռնա-
կալների դեմ: Նրանց քարուղների մեջ կարևոր տեղ էին գրա-
վում մասնավոր սեփականության վերացման, եկեղեցական
կալվածքների համայնացման, գույքի արդար բաժանման պա-
հանջները: Պաշտոնական եկեղեցու կրոնական սկզբունքները
պաշտպանող հայ պատմիչները սոցիալական այդ պայքարին
հակադրում էին «տիրասիրության» գաղափարը:

Ինչպես Դրասխանակերտցու, այնպես էլ մյուս պատմիչ-
ների մոտ առկա է սոցիալական այդ շարժումները եկեղեցու
դիրքերից քննադատելու և նրանց սկզբունքները բացասելու
կիրքը: Պատմիչի ուշադրության կենտրոնում ֆեոդալական

Ներքին պառակտումներն են, որոնք, նրա կարծիքով, հիմնական պատճառն են երկրի կործանման: «Բայց և ես տխրական տրտմության բանս ինչ աստ յառաջ բերեմ ասել. քանզի դրացիք մեր և ազգք որ շուրջ մեօք են հունականք և եգերացիք և գուգարացիք և ուտեսցիք, հյուսիսական ազգք բնակեալ առոտամբն Կովկասու, ի մտի եղեալ եթե գուցե յինքեանս հետի աղագս գտանել մարթասցին՝ ոստիկանն չար թէ երբեք չէն գտցէ զքաղաքս և զականս և զգեօղս, վասն այնօրիկ ի խել է բրել, կորուսանել և յատակէլ ջանացան, առ ստորոտով իւրաքանչիւր աշխարհաց իւրեանց. և անխառն ընդ նոսին և աւուզակի և սրիկայք ելին ի մարտս ընդ երկրի մերում...: Եւ այսպէս անմարդկացեալ անդաւակացեալ խոպանացեալ և անշքեղացեալ այնուհետ ավանք և շէնք մեր եղին իբրեւ զանդրստան մացառախիտ և ցամաքեցան բողբոջք բուսոց արտաւարաց և արօտից, և քաղաքք մեր կործանեցան առ ի չդոյէ բնակչաց, և երկրագործք մեր սպառեցան և սուգ զգեցան»⁵:

Ծերենցի նոր վեպի հիմնական թեման 851 թվականի ժողովրդական ապստամբությունն է արաբական խալիֆաթի դեմ: Պատմության տվյալներով՝ այդ ապստամբությունը գլխավորում էին Արծրունիները և Բագրատունիները: Պատմությունը նշում է, որ Բագրատունյաց թագավորության սկզբնաշրջանում Արծրունիների մոտ նկատելի էր բարեկամական մերձեցում երկրի նոր տիրակալի՝ Աշոտ Բագրատունու հետ: Սակայն Գագիկ Արծրունու գահերեցության շրջանում ծագեցին անջատողական ձգտումներ: 908 թ. ստեղծվեց Վասպուրականի թագավորությունը: Աշոտ Բագրատունին՝ Բագրատունյաց թագավորության հիմնադիրը, 855-ին փոխարինում է հորը՝ Սրմբատ Բագրատունի սպարապետին: 862-ին նա խալիֆայութունից ստացել է իշխանաց իշխանի տիտղոսը: Պատմիչները վկայում են Աշոտ Ա Բագրատունու վարած ուղմական և դիվանագիտական քաղաքականության դրական արդյունքը՝ սկստության ամրապնդման գործում:

Վեպում խոսվում է Աշոտ Արծրունու մասին, որը 849-ին կազմակերպել է Վասպուրականի 16 իշխանների դիմադրությունը Հայաստան ներխուժած արաբ Աբուսեթին՝ հեռացնե-

լով նրան Վասպուրականից և Հայաստանի մի շարք գավառներից: 852 թ. նա պաշտպանվել է Բուղայի հրոսակների հարձակումից, բայց գերի է ընկել իր որդու՝ Դերենիկի հետ և ուղարկվել Բաղդադ: 859 թ. կեղծ ուրացությամբ ազատվել է գերությունից, վերադարձել Վասպուրական՝ վերականգնելով նախկին իրավունքները:

Մանրամասն ուսումնասիրելով Սեբեոս, Ղևոնդ, Հովհաննես Դրասխանակերտցի պատմագիրների, ինչպես և IX դարի հայկական իրադարձությունների շուրջը օտար աղբյուրներում պահպանված տեղեկությունները՝ Մերենցն իր վեպի պատմական հենքը հյուսելիս՝ արտահայտում է փաստերի նկատմամբ իր դրական կամ բացասական վերաբերմունքը՝ ելնելով գաղափարական այն մեկնակետերից, որոնք ընկած են վիպական իրականության հիմքում: Պատմական իրադարձությունների վերաբերյալ ժերենցյան խորհրդածություններին ակտիվորեն մասնակցում է վեպի գլխավոր հերոսը՝ Հովնանը:

Մերենցն իր վեպում հիշում է հայոց կաթողիկոս Հովհաննես Դրասխանակերտցուն, երբ վերջինս իշխանաց ժողովի ժամանակ Սասնա ժողովրդի անունից խնդրում է կաթողիկոսից մի օրհնության կոնդակ, կոչ անելու հայերին համաժողովրդական պատերազմի՝ ընդդեմ արաբ թշնամու: Հովհաննես Դրասխանակերտցին, սակայն, որքան էլ հայրենասեր էր և արդարամիտ, չէր կարող համաժողովրդական շարժման ղեկը տալ Հովնանի ձեռքը՝ ելնելով դասակարգային դիրքերից: Մերենցն իր հերոսին այս անգամ հանդիպեցնում է երկրի երկրորդ պաշտպանին՝ Սմբատ սպարապետին: Այստեղ ևս Հովնանը պարտվում է, քանի որ ֆեոդալական նույն սկզբունքներով կառավարվող իշխանը չէր կարող ղեկը տալ ժողովրդի ձեռքը: Այստեղից էլ սկիզբ է առնում այն կոնֆլիկտը, որին և նվիրված է վեպը: Դա կոնֆլիկտ էր ժողովրդի և իշխող դասի, կոնֆլիկտ պետութան և ժողովրդի, կոնֆլիկտ եկեղեցական դասի և ժողովրդի միջև: Այս կոնֆլիկտն իր բարձրարվեստ գեղարվեստական մարմնավորումն է գտել Մերենցի վեպում:

Առաջին գլուխը Մերենցն սկսում է 851 թ. ձմռան նկարագրությամբ. «...Ձմեռ պատել էր Տարոնո գավառը, դաշտը ձյունը ծածկել, ճերմակցուցել էր բոլորովին, իսկ Սասնո լեռը ձյան և սառույցի դանգված մըն էր ահարկու։ Ուլ կսեր թե ալդ բարձրության մեջ, ալդ սառնամանյաց մեջ կյանք և մարդկություն կշնչեին։

Վարը դաշտը՝ Մուշ քաղքին մեջ մահ և լուսություն կտիրեին և Տորոսի ալդ սարը լի էր կենոք և շարժմամբ. բուրբ օդին մեջ շրջմովիկ կհոլովեր, մարդ ձյուներուն մեջ կեններ, կիջներ, կսողար, կը սահեր և այնպիսի եղանակին այնպիսի շարժումներ քնել այն լեռնաբնակ ժողովուրդը միայն կրնար, ժողովուրդ՝ որ ցրտին սաստկության և ամառվան տաքության դեմ միևնույն բուրդե զգեստը միայն ուներ և այժի մորթե կոշկածե օդ ոտից. դարի և մանավանդ թե կորյակ իրեն հացը կմատակարարեին, վասնզի ալդ բարձրությունն ու ժայռերուն հողի սակավությունն այն միայն կուտար իրենց աշխատությանց և սաստիկ տառապանաց։ Իրենց բնակությունները հեռի էին ի միմյանց, և ալդ պատճառով շատ անգամ իրարու լեզուն հագիվ թե կիմանային, և լեզու, թեպետ հաշ, բայց օտարացյալ կհամարվեր ի շրջակայից, և թարգմանի կարոտ իմանալի լինելու համար։ Էվ ալդ սարերու բարձրության մեջ ժողովուրդը անբաժանելի ուներ յուր նիզակը, ուր յուր գորությունն էր քնդդեմ գազանաց և քնդդեմ թշնամյաց և ի պաշտպանություն յուր իշխանաց, որ ի Մուշ կնստեին և սրոց ակնարկության անմուռն կհնազանդեր տիրասիրությամբ»⁶։

Լեռնային ձմռան այս դաժան, բայց կյանքով ու շարժումով լի պատկերին հակադրվում է ներքևում՝ Մուշի դաշտում թաղավորող ձմռան պատկերը, որ հատկանշվում է համատարած անշարժությամբ, մահատարած սուգով։ Ռոմանտիկական պատկերին բնորոշ այս հակադրությամբ հեղինակը կամենում է ասել, որ այնտեղ՝ ներքևում դեպքեր են տեղի ունեցել։ Հաջորդ էջում բացվում է ալդ տրամադրության դադտնիքը։

Ահա եկեղեցու դռան առաջ հավաքված մարդիկ տխուր նայում են դեպի դաշտը, ուր փռված էր Մուշը: Դրանք՝ «...այդ երիտասարդքը, շղթայից և գերությանց ազատյալ լեռը ապաստանել էին, ոմանք զենք ունեին, իսկ ոմանք անզեն էին»:

Բնության նկարագրությունը, եկեղեցու դռանը հավաքված մարդկանց տխուր կեցվածքը, քահանայի անհանգստությունը՝ Մուշից լեռը բարձրացած երիտասարդներին կերակրելու, նրա քաջալերական խոսքերը, սրահի մթության մեջ հետզհետե ասվարացող բազմության զենքերի փայլը և, վերջապես, սուրբ Կարապետ վանքից եկած կոնդակի ընթերցումը հայտնի են դարձնում եղելությունը: Թշնամին գրավել է Մուշը, իշխան Բազարատ Բագրատունուն և շատ շատերին գերի տարել, ավերել է քաղաքը, Յուսուֆ ոստիկանը նստել է Մուշում՝ շարունակելու իր նախճիրը:

«Այսօր արաբը կուգա, կջարգի, գերի կտանի հայը,— ասում է քահանան,— վաղը հայը կիջնե արաբին վրա, ամենքը կջարգե. կիրճերը կառնու, մեկ հատ չի փախցներ, բայց ի՞նչ օգուտ, երկու տարի չի տեեր այդ նզով ազգը դարձյալ կուգա և ավելի դուրեթյամբ և անհամար. հայը պետք է համբերե մինչև որ գա՝ դանակը ոսկրին կոթնի՝ էլ համբերելու ճարը հատնի, այն ատեն սմբած գառը առյուծ կդառնա, լեռ ու դաշտ կգոռան» (էջ 211):

Քահանայի խոսքի ազդեցությամբ՝ ժողովրդի ցասման առաջին ալիքը հրապարակ է հանում բոլորից ճանաչված գյուղապետ Հովնանին. «...և ահա սրահին մեկ կողմեն դուրս եկավ միջահասակ մարդ մը, որ երեսին գույնով տարբերություն չուներ ոչ ոքե. արևը, քամին, տաքն ու ցուրտը փչել էին այդ երեսին վրա, բայց երկու խոր աչքեր ուներ, որ երկու փայլուն սլաք էին երկաթյա և թափ կանցնեին երբ նկատեին դիմացնին, սրտին խորը իբր թե կտեսնեին: Կլոր գլուխ, քառակուսի դեմք, ջղային մսուտ կազմվածք, քառասնի չափ տարիք, ահա մարդը, որ Հովնան կկոչվեր» (էջ 212):

Ո՞վ էր արտակարգ ուշադրության արժանացած այդ Հովնանը: «Եթե յուր զգեստները նկատենք,— ասում էր նրա մասին իշխանուհի Հռիփսիմեն,— եթե յուր ազգային անունը նկատենք,

եթե յուր հարստություններն ու կալվածքները նկատենք, ամենառաջինը մարդը ու եթե իբրև քաջ և խելոք մարդ նկատենք մեր բոլոր իշխաններու՝ ոչ Վասպուրականի համար կամ այլ բոլոր Հայաստանի իշխաններուն մեջ տասը հոգի չեմ գտնել նորա հետ բաղդատելու համար» (էջ 253—254): Դասային բնորոշ հոգեբանությունը կրող, միաժամանակ այդ հոգեբանությանը հակադրվող Հովհաննես Թեմուրշանը նոր հայացքն ինքնին արգարացնում էր Հովհանի սաժաթ սերը Վասպուրականի հաղթանակով, «որուն վիճակին բարձրության և հեռավորության միջոցը խեղճ լեռնցիին չէր կրցել չափել» (էջ 225): Գուրգեն իշխանը Հովհանի մեջ տեսնում էր՝ «այդ անսովոր մարդը, որ հայ ժողովրդականի տիպն էր, զեմբի վրա հառապատառություն և կորով հայտնի կերակրին» (էջ 217):

«Թորոս Լեոնի» վեպում մենք ծանոթացանք Բաբկենի, Կաստանդենի, Սարգսի կերպարներին: Հովհանը գերազանցում է թե՛ մեկին, թե՛ մյուսին և թե՛ երրորդին: Այստեղ ժողովրդի ծոցից դուրս եկած մարդը իր գիտելիքներով, իր մտածողությամբ և կոնկրետ գործողություններով հանդես է գալիս ժողովրդի առաջնորդի դերում: Ռոմանտիկական կերպարին բնորոշ գծերով նա մարմնավորում է նախապաշարմունքներից, կրոնական դոգմաներից ազատ, բնությանը մոտ, մայր հողի վրա հաստատուն կանգնած հայրենասեր մարդուն, որը տարված է ոչ միայն ժողովրդին թշնամու ճիրաններից ազատելու, այլև՝ «նորա ձեռնավորությունը բանիլ և գործով խեղճերու և անտերներու և նորա ահարկու խստությունը անիրավներու և հարստահարողներու դեմ հայտնի էր» (էջ 223):

Երկրորդ գլուխը Ծերենցը վերնագրել է «Ժողովուրդը»-ի. Սկսած 1815 թ. զբաժ իր «Ուերվիլ» գրքում նկարագրում է դաշտավայրն իջնող լեռնական ապստամբների խումբն՝ իրենց առաջնորդի հետ: Ծերենցի վեպում ևս, համանման մի տեսարանում, երբ ձյան «մոլեկան հեղեղը շարունակում էր թափվել սարն ի վեր, Հովհանը հազարի չափ նիդակավորների հետ առջևից սկսեց սահել. ...բոլոր Սասուն գիտեր թե այդ մարդը հոգնիլ, վհատիլ չէր գիտեր, վտանգ զինքն հրեք ահաբեկիլ չէր... Տխուր առանց՝ երևելու աղոտ լույս մը կձգեր երբեմն

սպիտակ սպիտակ ձյունին վրա և ամեն սև նյութն տեսանելի կընենր՝ թեպետ բան մը չի կար, որ ճերմկած չլիներ»։ Ինչպես այս, այնպես էլ տեղանքի կամ առհասարակ բնության՝ ծերենցյան ուրիշ նկարագրություններում նկատելի է ռոմանտիկական գունավորումով տրված՝ իրական պատկերների վերարտադրության ձգտումը։ Որքան էլ Ծերենցի վեպերում բնությունը հնթակա է հեղինակային տրամադրությանը, այնուամենայնիվ չի կորցնում իր օբյեկտիվ-առարկայական նշանակությունը, մի բան, որ հետագայում ավելի է խորանում Բաֆֆու և Մուրացանի ստեղծագործության մեջ։

Եվ ահա, երբ սասունցիները ոչնչացնում են քաղաքը պաշտպանող արաբական զորամասը և սպանում ոստիկանին, առավոտը՝ «...Արևը վճիտ երկնից վրա կփայլեր և ձյան անդրադարձության աչքերը կշլացներ...»։

Գուրգեն իշխանը, որին Հովնանը փրկեց գիշերային ձյան քղետից, այժմ կանգնած նրա առջև դիտում է այդ մարդուն, որն ազատեց Մուշը թշնամուց, ազատեց գերիներին։ Նրանց միջև տեղի է ունենում մի երկխոսություն, որը կողմնորոշում է վեպի ընթացքը։ Էականն այստեղ Հովնանի տված պատասխանն է, թե ինչպես պետք է վերջնականորեն լուծվի երկրի ազատագրման հարցը. «Ուր որ հայ կա պետք է միաբանին և առանց նախարարաց իրենց գլխուն ճարը տեսնեն, ան ատեն թերևս հայ ազգը իր փրկությունը կգտնե» (էջ 218)։

Միջնադարի համար Հովնանի հայացքը այնքան էլ տարօրինակ և զարմանալի չէր, քանի որ ժողովրդական ապստամբությունները, հենց Հովնանի ապրած ժամանակներում աղանդավորական քողի տակ լայն ծավալ ստացած սոցիալական շարժումները, որոնք ուղղված էին ազնվականության դեմ, արդեն խոր արմատներ էին նետել ժողովրդի գիտակցության մեջ։ Արաբական հրոսակախմբերի դեմ նախորդ դարերից շարունակվող պայքարը հասել էր իր բարձրակետին։ Հարկավոր էր համախմբել ուժերը՝ վերջնական հաղթանակի և պետականության վերականգնման համար։ Մյուս կողմից՝ ծավալված գյուղացիական շարժումները ցույց էին տալիս այն խորը

կոնֆլիկտը, որ դարեդար շարունակվում էր ազնվականության և ժողովրդի միջև:

Իր դարաշրջանի համար անհասկանալի չէր նաև այն հայտարարությունը, թե՝ «հայ ժողովրդյան թշվառության միակ պատճառը այդ ազնվական դասն է» (էջ 219): Այդ գիտակցությունը հասնում էր ոչ միայն հայ գյուղացուն, այլև այն ազնվականին, որն իր վրա էր զգում սեփական դասի բարոյական վարքագծի ծանրությունը. «Երբ ազդի մը գլուխ կանցնի մարդ մը,—շարունակում է Հովնանը,—դաս մը, մարդիկ և ամենն պատիվ փառք հարգանք, հարկ կընդունին, փոխարենը պարտականություն մը կա դանի ոչ միայն պաշտպանելու, այլև կառավարելու»:

Հովնանը լուկ ապստամբ չէր, տիրող դասի «արատների» քննադատ և կամ վերացական արդարության և ճշմարտության բարոյիչ: Նա կազմակերպված գործնական պայքարի հետ միաժամանակ կատարում է դարաշրջանը բնորոշող բնահանրացումներ, որոնք հանդիման են պատմության ազատագրական պայքարի մեջ ժողովրդի բազաբական դերի բնկալմանը: Այստեղ հարցերը դրվում են ոչ թե իշխանների համագործակցության և միաբանության տեսանկյունից, այլ ազգային միության՝ ժողովրդի և պետության բարոյական դաշինքի անունից: «Եթե առաջին վեպում,—գրում է Ս. Սարինյանը,—ազատագրական շարժման առաջնորդը՝ Թորոս Լևոնին, ազնվականական դասից էր և այդ դիրքերից էր լուծում «ազգային միության» իդեալը, ապա «Երկունք» վեպում այդ դերը ստանձնում է «ժողովրդական մարդը»՝ խոթեցի Հովնանը, որը նույն իդեալը հաստատում է ժողովրդի շահերի տեսանկյունից»⁷:

Ծերենցն իր վեպը վերնագրել է «Երկունք Թ. դարու»: Վեպի վերջին էջում նա գրում է. «Մայրն Հայաստան՝ այդ բազմաշարչար մարտիրոսը որ երկայն տասը տարիներու մեջ անլուր թշվառությամբ տքնեցավ, ոտնակոխ բազմատեսակ բարբարոսաց, ավար անդութ հրոսակաց, ստրուկ մերձավորաց և օտարաց, հարվածյալ ի թշնամյաց և յուր հարապատ որդեկաց,—վերջապես անգամ մ'էլ կրցավ սրբել թաց արտսուքը՝ յնցեց՝ նետից արյունաշաղախ մոխրամած ցնցոտիները, թո-

դուք այդ ցավուց անկողինը և յուր դառն երկանց հաշորդեցին երջանիկ ու զվարթագին ավուրք...»⁸։

Ճիշտ է, Մերենցն ինչպես նախորդ, այնպես էլ այս վեպում ընտրել է հայ ժողովրդի կյանքի համար շրջադարձային նշանակութուն ունեցող պատմաշրջան՝ մի դեպքում Ռուբինյան պետականության ամրապնդումը, մյուս դեպքում Բագրատունիների թագավորության ստեղծումը, բայց հարցը սրանով չի ավարտվում։ Այս վեպում, ինչպես նկատում է Ս. Սարինյանը, Հովնանի կերպարը պատմական մեծ շառավիղի վրա է դրվում։—Նա միացնում է պատմության բոլոր դարերը և մեծ տեսադաշտի ռոմանտիկական մասշտաբի վրա իր հերոսի մեջ խտացնում ժողովրդի պատմական իրավունքի փիլիսոփայությունը։

Հովնանի տեսիլքում Աշտիշատի տաճարի քրմուհին գուշակում է Հայաստանի ապագան՝ լի արհավիրքներով։ «Դու պետք է ցույց տաս,—ասում է նա Հովնանին,—օրինակ լինիս հայ թշվառ աշխարհի թե ժողովուրդը ողորմելի, արհամարհելի էակ մը չէ, թե յուր արյունն ունի, այն ամեն առաքինություն, որով կ'պարծին նոքա, որ իրենց հարց անվան վրա կգոռողնան և շատ անգամ զուրկ են նոցա առաքինութենեն... Գնա՛, ասպաքեզն ընդարձակ է, գալիք պատուհասը սոսկալի է, զորացիր, վասն դի հեռի չէ օրը, որ վահաններ պիտի ջախջախվին, նիզակները կոտորտին, սուրերը փշրին» (էջ 299)։

Քրմուհու գուշակությամբ՝ Հովնանն այն մարդն էր, որն իր զորությամբ և պայքարի օրինակով պետք է ցույց տար, թե այդ գալիք արհավիրքների մեջ ժողովուրդը չի կարող մնալ միշտ որպես «ողորմելի և արհամարհելի էակ», թե նա իր մեջ ունի իր հեռավոր նախնիների քաջության և առաքինության օրինակները։

Աշտիշատի հեթանոս քրմուհու հետ է կապվում վեպի առաջին գլխի բնութանը. Ավետարանի՝ Հովհաննես առաքյալի «Հայտնության» ժԲ գլխից բերված այն հատվածը, թե կինը, որ հղի էր, ծանր ցավերով ծնեց մի արու զավակ, «...որ հանդերձեալ էր հովուել զհեթանոս դավադանաւ երկաթեաւ»։ Հետո ասվում է, որ վիշապները մեծ ջանքեր դործադրեցին կուլ

առաջ մանկանը, բայց երկնայինի կամքով նա մնաց կենդանի, վերջում կործանվեցին չար ուժերը և երանությունը տիրեց մարդկությանը⁹։

Մ. Մամուրյանն իր «Հայկական նամականիի» մեջ նկարագրում է մի երազ՝ «Խոր Վիրապի» մեջ։ Ահա մի արձան՝ մի ձեռքին գավաղան բռնած, մյուսին՝ երկրագունդը, ճակատին գրված «Ազատություն», լանջին՝ «Խրափունք»։ Պատվանդանին պառկած է մի թևատ կույս՝ շղթայված։ Նա հույս ունի, որ նորից կաճեն իր թևերը և կթռչի ազատ երկնակամարում, կայծեր կցանի դուրացուկներ ծնելու համար, և ազատության այդ կայծերը կտարածվեն աշխարհում¹⁰։

Մ. Մամուրյանը ավելի վճռական ու ազդեցիկ է դնում ազատության խնդիրը։ Այդ ազատությանը հասնելու համար պետք են «ոչ թե Պետրոսի բանալին, Պողոսի փողը, ոչ բանականության քրմուհու աթոռը, ոչ Նապոլեոնի հրաշեկ ուժը, այլ Սոկրատի լեզի բաժակը, Նադուլրեցու խաչը, Վարդանի արշուներ, Բրուտուսի դաշույնը, Տելլի նետը, Ֆրանկլինի ու Գարիբալդու դրոշները... բռնության հեղեղների դեմ ճշմարտության թմբեր կանգնեցնելու համար» (նույն տեղում, էջ 522)։

Մերենցի և Մամուրյանի մոտ բնորոշ են ուժի միջոցով բռնությունը, չարը խափանելու միտումը, անկախության և ազատության բաղձանքն իրականություն դարձնելու ջերմ փափագը։

Այսպիսով՝ «Երկունք Ի՞ դարու» վեպի առաջին երեք գլուխները ինքնին խորհրդանշում են վիպական իրադարձությունների մեջ Մերենցի առաջադրելիք հիմնադրույթը՝ ժողովրդի իրավունքի հարցը, որը դարերի մեջ ամրապնդեց ազգային գոյության պահպանման ժողովրդական ներքին ուժերը՝ ազգային ինքնությունն արտացոլող կենսալից շիթերով։ Այդ գլուխներում հեղինակն առաջադրում է նաև հարցեր, որոնք բխում են առաջին հերթին Հովնանի ապրած դարաշրջանի ազգային-քաղաքական-սոցիալական պայմաններից, հասնում մինչև Մերենցի ապրած օրերը՝ ղեկարվեաւորեն հաստատունով պատմության միասնական պրոցեսի ներքին կապերն ու ընդհանրությունները։ Պատմական ճշմարտությունը գեղար-

վեստական ճշմարտությամբ հաստատելու, այդ միջոցով հոգեբանական մեծ ընդհանրացումների հասնելու՝ Ծերենց արվեստագետի հմտությունը հնարավորություններ է ստեղծում լայն և խոր ընդհանրացումների, որոնք խիստ կարևոր էին այդ շրջանում՝ պատմական վեպի սկզբունքները ճշգրիտ սահմանելու համար:

3

Հովնան, Գուրգեն իշխան և Սմբատ սպարապետ գաղափարական-հոգեբանական գծերը վեպում ընթանում են Ծերենցի պատմագիտական հայացքների սերտ զուգորդությամբ: Այս եռամետ սկզբունքների մեջ խտացվում են հիմնականում Հովնան-Գուրգեն իշխան, Հովնան-Սմբատ սպարապետ զուգահեռներում արտահայտված գաղափարական մեկնակետերը:

Թովմա Արծրունին պատմում է, որ Բուղայի արշավանքների շրջանում Գուրգեն Ապուպելճ իշխանը Հունաստանից գալով հայրենիք՝ Սմբատ սպարապետի խորհրդով մտնում է ծառայության Բուղայի բանակում, վերջում միանում Սմբատ սպարապետին՝ ընդգեմ Բուղայի, հետո օգնում Բագրատունյաց իշխանության հաստատմանը: Ծերենցն օգտագործել է Գուրգեն Ապուպելճի կոնֆլիկտն իր տոհմակից Արծրունիների հետ, ստեղծել է նոր կենսագրություն, որի համաձայն նա, ահա, հանդիպելով Հովնանին, հետզհետե փոխում է իր հայացքն ազնվական դասի նկատմամբ և համակրանք է ցուցաբերում Հովնանի անձի և նրա գաղափարների նկատմամբ:

Թողնելով Հովնանին Աշտիշատի ավերակներում՝ իր և իր ժողովրդի ճակատագրի շուրջ խորհրդածելիս, Ծերենցը հետևում է Գուրգեն Արծրունի իշխանին, որը գնում էր Ռշտունյաց ոստանը՝ իր հարսնացու Ռշտունյաց օրիորդին Թորթումի դղյակը տանելու, որը ստացել էր իբրև պարգև հունաց պատերազմներից քաջությամբ մասնակցելու համար: Իր ժամանակին Աշոտ Արծրունու պապը դավադրաբար սպանել էր տվել Գուրգեն իշխանի հորը՝ Ապուպելճին և տիրացել նրա կավածքներին: «Ահա ութը տարի է, որ կթափառիմ թողած իմ

հայրենի Վասպուրական երկիր, և ինչ տեսա, ամեն տեղ մարդ նույն գազանը տեսա՝ վատ հաշաղկոտ, շողոքորթ, անգութ, դուռդ հաջողությանց մեջ, անարգ ձախորդության մեջ, վերջապես մարդ՝ ողորմելի կենդանի»¹¹։

Զ-րդ գլխում Գուրգեն իշխանը նորից հանդիպում է Հովնանին, այս անգամ նրանք հասկանում են իրար, դառնում գաղափարական բարեկամներ, խոստանում առաջին իսկ կանչին հասնել և օգնել իրար։ Նրորդ հանդիպումն արդեն գործնական բնույթ է կրում։ Իշխանների ժողովում կաթողիկոսը շիջանկանում ունկնդրել Հովնանին և արտոնել նրան՝ ժողովրդի գլուխն անցնելու։ Այժմ ահա երիտասարդ իշխանների ժողովն է, որը ղեկավարում է Սմբատ սպարապետի որդի Աշոտը՝ Բաղրատունյաց տոհմի ապագա հիմնադիրը։ Աշոտ Բագրատունին նույնպես ունի այն գիտակցությունը, որ պետք է ստեղծել միանձնյա իշխանություն և որ՝ «Ոչ թե անմիաբանությունն է մեր թշնամին, այլ Հայաստան ուտող, սպառող ցեղը անիշխանությունն է, միմիայն պատճառ չուր կործանման ավերակաց և գերության» (էջ 286)։

Այն ժամանակ ահա, երբ իշխանները դեռ որոշումներ էին անում, Հովնանը խորտակում է Հայաստան մտած Բուղայի հսկա բանակը։ Նրբ արաբ զորավարի պատգամավորը կանգնում է խոթեցի զորավար Հովնանի առջև, վերջինս ասում է նրան. «...հոս այս լեռներուն մեջ պետք է լավ գիտնեա Բուղա, որ ոչ իշխան կա, ոչ նախարար, ոչ ազնվական, ոչ ազատ, բայց և ոչ մի ծառա և մի գերի, ուստի խաբւիւելու մարդ ամենին չի կա և մեռնելու պատրաստ ամեն ոք» (էջ 291)։ Հովնանը հանդիպում է Սմբատ սպարապետին, նրա հետ երկար խոսակցությունից հետո համոզվում, որ «նախարարությունը՝ բազմագլխյան վիշապ՝ ի կորուստ պիտի տաներ Հայաստան» (էջ 295)։

Հովնանի և Գուրգեն իշխանի շորրորդ հանդիպումը։ Այս անգամ նրանք պաշտպանվում և ցրում են թե՛ արաբական և թե՛ հունական խմբերը։ Հովնանն արդեն ապավինում է Գուրգենի բազկի ուժին և ցանկանում է, որ Հայաստանը շուտով ճանաչի նրան։ Հովնանը վերջին անգամ հանդիպում է սպա-

րապետին, վերջինս զղջում է, որ Հովնանին չլսեց՝ համաժողովորդական կողով երկիրը փրկելու համար. «Ի՞նչու աստված՝ քեզ այդ լեռներուն գլուխը դրավ և զիս նախարարական գահին վրա, որ ես արժան չէի՝ և դու որ արժան էիր» (էջ 371): Հովնանն իր վերջին խոսքն է ուղղում սպարապետին, առաջարկում նրան դառնալ երկրորդ Վարդան, բայց այն Վարդանը, որն այս անգամ կարողանա կործանել «այդ դարավոր բազմագլխյան վիշապը, որ նախարարություն կանվանեն, ջնջել անհետացնել, որ հայություն գլուխ մը միայն ունենա և ժողովուրդ մը լինի մի հոտ մի հովիվ: Մի՞թե մեր ամեն թշվառությունց պատճառ անիշխանություն չէ՞, որու առանց խելահաս լինելու անմիաբանության անուն տվեր են և պիտի տան դարուց ի դարս» (էջ 372):

Ոչնչացնելով նախարարությանը, ազնվական դասին, Ծերենցը իշխանությունը չի տալիս ժողովրդի ձեռքը: Նա դեմ է դյուղացիական այն ապստամբություններին, որոնք հավասարություն են քարոզում: Գրգռել ժողովրդին ընդդեմ յուր դարավոր տերերի, այն էլ այնպիսի ժամանակ, երբ մի կողմից արաբը, մյուս կողմից հույնը ոտնատակ են տալիս երկիրը, անմտություն է, — խորհում է Հովնանը: Ո՞րն է, ուրեմն, ճանապարհը: Ս. Կարապետ վանքի դռանը նրան հանդիպած քուրմը ասում է Հովնանին. «Բայց դու խառնուրդ ես զինվորի և քահանայի, դու խառնուրդ ես հավատո և թերահավատության, դու խառնուրդ ես քաջության և եթե ոչ երկյուղի՝ զոնե կասկածանաց» (էջ 224): Աշտիշատի սովերակի տեսիլքով Հովնանը հասկանում է, որ պետք է վճռական կերպով պաշտպանել ժողովրդի իրավունքը և մարտահրավեր նետել զարերի արհավիրքներին և պահպանել ժողովրդի կենսունակ ոգին՝ ապրելու և հարատևելու համար:

Բացասելով ազնվականության դերն՝ իբրև ժողովրդի առաջնորդող ուժի, Ծերենցը կանգնում է մի դժվարին հարցի առջև, ինչպե՞ս համադրել ժողովրդի և բոլոր դեպքերում պատմականորեն իր գոյության իրավունքը պահպանող տիրապետող դասի շահերը, ինչպե՞ս վերաբերվել իշխանների և թաղավորի միջև եղած կասլի հարցին: Ծերենցը տեսնում է երեք

խափ՝ ժողովուրդ, հոգևոր դաս և ավնվականութիւն: Հիմնական հարցերը նա լուծում է Հովնանի միջոցով: Գլխավոր դերը պատկանում է նրան՝ որպէս պատմութեան շարժիչ ուժը ներկայացնող ժողովրդի ներկայացուցչի: Բայց նա չպետք է դառնա ժողովրդի առաջնորդը: Սմբատ սպարապետը ափսոսում է, որ նախախնամութիւնը Հովնանին ստեղծել է լեռների տերը դառնալու, իսկ իրեն տվել երկրի իշխանութիւն, որին ինքը արժանի չէ: Պետք է ստեղծել երկրի միասնութիւնն ամրապնդող գլխավոր երաշխիքը՝ պետական և բարոյական կապը ազգի միջև:

«Թորոս Լեոնի» վկայում Մերենցը հաջողութեամբ իրագործում է իր գլխավոր մտադրույթը: Թորոսը պատմութեան էջերում Կիլիկիայի իշխանն էր, Ռուբինյան պետութեան ներկայացուցիչը: Նա կյանքում իրականացնում է միջնադարյան պետականութեան եվրոպական սկզբունքները, ստեղծում է ուժեղ կենտրոնածիփ պետութիւն, ֆեոդալներին ենթարկում է և համախմբում ժողովրդական ուժերը մի նպատակի համար՝ պահպանել ազգային պետականութեան ուժը: Մերենցը օժտում է նրան հումանիստական բարձր գաղափարներով, որոնք դուրացնում են նրա կապը ժողովրդի հետ, հոգեբանական նըստվածքներում դնում լայն աշխարհայացք ունեցող քաղաքացիութեան ղեկավարներ:

Մերենցի ցանկալի հերոսը նաև Հովնանն էր: Նրա հայրենասիրութեան մեջ հեղինակը պրկել է դարերի փորձով հարուստացած հայ ժողովրդի պատմական ձգտումները, որոնք հանգում են համաժողովրդական պատերազմի՝ օտար գաղթիչների դեմ: Թորոս Լեոնին ավնվական դասի ներկայացուցիչն է, որը խորապէս գիտակցում է իր պետութեան միասնութեան գրավականը հանդիսացող ժողովրդի հետ համագործակցելու պահանջը: Մերենցը այդ համարում է ազգի բարոյական միասնութեան հիմքը, ազգի պահպանման և զարգացման խորհրդանիշը:

Բաֆֆին «Կայծեր» վկայում գրում է, թե Բանաստեղծը ստեղծում է ժողովրդի համար իդեալներ, բարձր համամարդկային իդեալների տիպարներ, նա մոտնում է պատմութեան

խորքը և ժամանակների հնությունից դուրս է բերում ցանկա-
ցած հերոսին և նրանց պատկերում իրենց վսեմ գործերով,
դնում սերնդի առաջ, որ նրանցից օրինակ առնեն և նրանց
նման լինեն: Նա ստեղծում է այնպիսի տիպարներ, որոնք ներ-
կայի մեջ դեռ ծնված չէին, այլ ապագայում պետք է հայտնը-
վեին: Նրա սուր աչքերը տեսնում էին ներկայի մեջ այդ չժըն-
ված տիպարների ամենափոքրիկ նշմարները:

Ինչպես Մերենցն, այնպես էլ Հովնանը չեն ժխտում ան-
հատի դերը երկրի անկախության և ուժեղ պետականություն
ստեղծելու հարցում: Միջնադարյան ըմբռնումներով Հովնանը
այդպիսի ուժեր տեսնում էր կաթողիկոսի և Սմբատ սպարա-
պետի գործունեության ճիշտ նպատակադրման մեջ: «Եթե կա-
թողիկոսը միայն ուղև շարժիլ, եթե իմ խորհրդոցս ուղեր
հետևիլ,— ասում է Հովնանը,— գար Ս. Կարապետ, հաներ ոտ-
քի եկեղեցական բանակը, ժողովրդոց բանակը հարյուր հա-
յարներով կկանգնե անմիջապես, և մենք հաջքս ան ատեն ոչ
վատ կլինեինք, ոչ անմիաբան, ոչ նախանձոտ, այլ քարով
միայն ղինջալ՝ շուներու պես կհալածեին թշնամին, որուն
անարգ ոտից տակ կհսծեն դերությամբ մեր զավակները, մեր
կանայք, մեր իշխանքը, մեր եկեղեցին, մեր հավատքը...»¹²:

Մերենցն այս տողերը գրում էր այն ժամանակ, երբ Բեռ-
լինի կոնգրեսից հետո, Ներսես պատրիարքը դեռ շարունակում
էր հավատալ ինչպես եվրոպական պետությունների, այնպես
էլ սուլթանի խոստումներին: Դրասխանակերտցին, որ ջերմ
հայրենասեր էր, բավարարվում էր միայն քարոզներով և երկ-
շոտությամբ էր նայում տեղի ունեցող իրադարձություններին:
«Դու Ղևոնդ գտիր— ասում էր Գուրգեն իշխանը Հովնանին,—
ես քեզ տասը Վարդան կգտնեմ»: «Մի հոտ մի հովիվ» գաղա-
փարի մեջ Մերենցը տեսնում էր միասնական իշխանության
ուժը ամբողջ ազգի վրա, որը պիտի ամրապնդեր պետական
մտածողությունը, ազգային ինքնագիտակցության արմատնե-
ր գցեր անհատի հոգեկան նստվածքների մեջ:

Մենք անդրադարձանք Հովնանի վերաբերմունքին Սմբատ
սպարապետի վարած քաղաքականության հանդեպ: Պատմու-
թյունն ասում է, որ Սմբատ և Աշոտ Բագրատունիները զգույշ

քաղաքականությունն էին վարում արաբական խալիֆաթի նկատմամբ: Սմբատ սպարապետը՝ «...Սոսկումով կտեսներ թէ մտեր էր այնպիսի ճամփու մեջ, որուն ելքը ղինք գահալիժներ և հանդունդս կտաներ... Կտեսներ ղինքը դատապարտված նորա անգութ ձեռքին մեջ անիրավության և մատնության գործիք մը լինելու...: Մահվան երկյուղը հազար անգամ ավելի սիրելի էր իրեն քան թե այդ բռնավորին երեսը տեսնել, բայց այն առջի օրվան հուսով թե թերևս հայրենյաց ցավերը մեղմացնեն, թշվառ ժողովրդին օգտակար կարենա լինիլ կհնազանդեր» (էջ 368):

Հովնանի գուշակությունը կատարվում է. Սմբատ իշխանը ընկնում է Բուղայի ծուղակը, գերի տարվում Բաղդադ և, չընդունելով ուրացության պահանջը, մեռնում է բանտում:

Մի փոքր այլ է Աշոտ Բագրատունու դիրքը: Նա ևս ընդունում է, որ, ինչպես Գուրգեն իշխանն էր ասում երիտասարդ իշխանների ժողովում, «...մեր բոլոր թշվառությանց բուն աղբյուրը ղորավոր կապ մը չունենալնեա կծնանի» (էջ 286), իսկ այդպիսի կապ ունենալու համար պետք է ղորացնել աղբը և այդ ղորությունը պաշտպանելու համար կազմել մի միություն: Աշոտ Բագրատունին, եթե մի ղեպքում ցանկանում է, որ Հովնանը «լռիկ մնջիկ գործե», պատրաստի ժողովուրդը և վտանգի օրն ու ժամը հասնելուն պես «գործել սկսի», մյուս դեպքում նա գանգատվում է, որ Հովնանի մղած մարտերը Բուղայի դեմ բավական վնասեցին իրենց ղգուշավոր քաղաքականությանը, գրգռելով արաբներին՝ էլ ավելի արյունահեղ մարտեր մղելու համար:

Աշոտ Բագրատունին 855-ին խալիֆայությունից ստանում է իշխանաց իշխանի տիտղոսը, հետո դառնում հայոց երկրի թագավոր: Ծերենցն այդ առթիվ գրում է. «...Աշոտ Բագրատունի խոհեմությամբ և իմաստությամբ երկիրը սկսավ կառավարել և շինել, մինչև ամեն մտածող մարդ կրնար զարմանալ և մինչև այսօր կարող է զարմանալ, երբ լավ խորհրդածե թե այդ ոտնակոխ Հայաստանի ժողովրդոց մեջ ինչ աստիճանի կենսական ղորություն կար, որ այնչափ թշվառությանց, այն-

շափ տառապանաց փոթորիկներէ մեջ երկիրը կը խլրտեր և կսկսեր շեննալ» (էջ 401):

Ծերենցը լուծում է առեղծվածք: Աշոտն, ըստ հեղինակի, կարողացաւ հասկանալ ժողովրդի մեջ պահպանված կենսական գորութիւնը և իշխանութիւն ստացաւ այն պահին, երբ Խալիֆաթը զգաց ժողովրդական շարժման ուժը, ստիպված եղաւ զիջել և իշխանաց իշխանի տիրոջ շնորհել Աշոտ Բագրատունուն: Ծերենցը դրա մեջ տեսնում է Հովնանի և նրա ապստամբ ժողովրդի հաղթանակած փառքը:

Բայց Հովնանը ժողովրդի առաջնորդութիւնը չի տալիս Բագրատունուն: Գուրգեն իշխանը, որ վաղուց արդեն կապեցրէր հզօրեմանորեն խզել էր իր դասից, շարունակում է բորբոքել ժողովրդական ապստամբութիւնը՝ հասնելով հաջողութիւններ: Գուրգենի համար իբրև թանկ հիշողութիւն մնում է Հովնանի վառ կերպարը, որն արթնացրեց իր մեջ ժողովրդի մարդը և հասկանալի դարձրեց նախարարական դասի ներքին սնանկութիւնը: Խոսքով իշխանը, երիտասարդ իշխան Աշոտ Սյունեցին միանում են Գուրգեն իշխանին՝ ժողովրդի հետ բռնակալների դեմ պայքարելու համար:

«Գուրգենի կյանքը,—գրում է վեպի վերջին էջում Ծերենցը,— մանրանկար պատկերը կրնա համարվել Հայաստանի այն ժամանակաց տաժանելի վիճակին, հալածանք, մատնութիւն, դավ, բանտ, շղթաներ, պատերազմ, վերք, հիվանդութիւն, հաղթութիւն, պարտութիւն, սիրելիաց բաժանումն և վերջապէս հանգստութիւն, երջանկութիւն սրտին սիրելիոյ հետ միավորութեամբ» (էջ 434):

Ծերենցը իր վեպում նշում է, որ Արծրունի Ապուպելճի որդին ազգային-ժողովրդական հերոս է եղել, բայց մնացել է անտեսված պատմիչների կողմից: Նկարագրելով Աշոտ Բագրատունուն՝ իշխանութեան գլուխն անցնելու նախօրյակին երկրում դեռևս տիրող անկարգութիւններն ու ընդհարումները, հեղինակը Գուրգենին ներգրավում է մի շարք արկածների մեջ: Հերոսն ի վերջո հաղթահարելով բոլոր արգելքները շարունակում է պայքարը զավթիչների դեմ, մերկացնելով նաև իր դասի ներքին հակասութիւնները:

Ծերենցի վեպերի գաղափարական բովանդակությունը և առաջադրած հարցերն ինքնին վկայում են հեղինակի համոթությունը՝ պատմական իրադարձությունների մեջ որոնելու այն հանգույցները, որոնք հետաքրքրում և հուզում էին ժամանակակիցներին: Բաֆֆին գրում է. «Ժամանակակից վեպի բարձր նշանակությունը հենց նրանումն է, որ վճռում է այն բոլոր հարցերը, ինչ որ փիլիսոփայությունն ու ուսումը անզոր են լինում վճռելու: Նրա մեջ քննադատվում են ամեն տեսակ հիմնարկություններ, ամեն տեսակ երևույթներ, ինչ որ ներկայացնում է մեզ կյանքը և մարդկությունը»¹³:

4

Ինչպես տեսանք, պատմական իրադարձությունների ֆոնի վրա Ծերենցը ներկայացնում է IX դարի քաղաքական պատկերը՝ հիմնականում Տարոնի և Վանի տարածքի վրա: Հեղինակն ստեղծում է գեղարվեստական մի հյուսվածք, ուր երևան են գալիս մարդկային անհատականացված բնավորություններ: անձնական հարաբերություններ արտացոլող հոգեբանական երևույթներ, կապեր:

«Եթե Վալտեր Աքոտը և էբերսը գրեցին գեղեցիկ պատմական վեպեր,— գրում է Բաֆֆին,— որոնց մեջ յուր բոլոր մամրամասներով պատկերանում է վաղեմի մարդու կյանքը, այդ հաջողությունը պետք է վերաբերեր ոչ այնքան նրանց տաղանդին, որքան նյութերի այն ահագին պաշարին, որ պատրաստել է նրանց համար նախընթաց գրականությունը: Այդ երջանիկ վիպասաններին մնում էր միայն օգուտ քաղել արդեն պատրաստի նյութերից: Բայց հայոց դժբախտ վիպասանը ինչ ա.նի: Նա պետք է ուժ տա իր երևակայությանը, իսկ լուկ երեակայությունը մի ճիշտ պատմական վեպ նկարել չի կարող»¹⁴:

Ինչպես հետագայում Բաֆֆին, Ծերենցը ևս մեր հին պատմագրության բացը լրացնում է ոչ միայն ստեղծագործական երևակայությամբ, այլև ժողովրդի մեջ դարերով անփոփոխ պահպանված բարբերի, սովորույթների, կենցաղի, ազգային նկարագրի, բանահյուսության մանրակրկիտ ուսում-

նասիրությամբ: Մարդիկ, սերունդներ եկել ու անցել էին, և այց բնաշխարհը, երկիրը մնացել էր անփոփոխ: Ամեն քար ու թուփ, ամեն լեռ ու ձոր, ամեն ավերակ համր բարբառով վիպասան են, կարող են պատմել իրենց մեջ երբեմնի ապրած մարդկանց, նրանց կյանքի, հետաքրքրությունների, կրքերի ու խոհերի մասին: Պատճառներից մեկն էլ հենց այս է, որ Մերենցի վեպերում այդքան լայն տեղ ունի երկրի պատմական բնանկարը:

Մերենցը ծանոթ էր Կիլիկիայի ամբողջ տարածքին, բնությանը, հնություններին. «...մանր առուներն ու վտակները, որ երբեմն սիրուն բլրակներ ելջեն, երբեմն ահավոր լեռանց պատուվածներն և կերթան Թորթումի գետը թափելու— տեղ տեղ թուփեր ու մայրյաց անտառներ, տեղ տեղ խոտավետ ձորակներ, որ շարունակ կփոխվին: Հետո ահագին ասլառածներ ոմանք կամար-կամար ձևացյալ, ոմանք անճոռնի սեպացյալ մեկ կողմեն. մյուսեն ծառերու, պարտեզներու և մարդագետիններու կանաչություն սոսկում և զվարճություն աչաց կպատճառեին: Վերջապես կհասնեին կտեսնեին գետը, որ գեղեցիկ լիճ մը կձևանար՝ և այդ լիճը, որ դարձյալ ի գետ կփոխարկեր և կղիմեր՝ կթափեր քարափանց վրայեն ահագին բարձրութենե սոսկալի շառաւմամբ փրփուր և ցնցուղ և փոշի դառնալով: Ծիշտ այդ գեղեցիկ և միանգամայն ահավոր տեսարանին մոտ գեղեցիկ ամառանոց մը կար միահարկ, որ մատղկան տաճար կնմաներ, և որու դռան առջև կանգնած էր Վահրիճ քանի մը սպասավորներով»¹⁵:

Գեղագիտական բարձր հաճույք ներկայացնող այս տեսարանի նկարագրությունը Մերենցն ավարտում է հետևյալ խորհրդածությամբ. «Այն օրերեն մինչ այսօր հազար և ավելի տարիներ անցան, գետը, լիճը, ջրվեժը, փրփուրը, ցնցուղը, ամենն էլ անփոփոխ մնացած են և այսօր ուղևորը հեռու աշխարհներե կերթա, կտեսնե, կհիանա, բայց այդ տաճարանման ամառանոցը ո՛ր է, հետքը անգամ չի մնացեր. ո՛ր են գավառին հայ բնակիչք, իրենց եկեղեցյաց ավերակները մնացել են՝ իրենք անհետ բոլորովին» (նույն տեղում):

Գուրգենն այդ ամառանոցը պատրաստել էր իր Հեղինեի համար, իսկ նա այստեղ չկար, և ահա բնությունը ուրախ է, ծիծաղկոտ, իսկ ինքը՝ տխուր. «Ամեն բան կծիծաղեր բլուրին վրա, ծառերը ծաղկած էին, մանուշակ իր քաղցր հոտը կարձակեր, կանաչը՝ դարնան ավետաբերը կծածկեր շրջակայքը, բայց Գուրգեն առանց յուր միտքը հասնելու սրտին հառաչանոք կերգնուր թի անգամ մ'էլ չափտի դառնար, ոչ այդ շենքը և ոչ այդ բնության գեղեցկությունը տեսնելու» (էջ 317):

Ծերենցը նկարագրում է Ճորոխ գետի ափին Բագրատունիների կառույցներից մեկը. «Վանք՝ այսինքն բերդ յուր բարձր պարիսպներով, յուր աշտարակներով, բուրգերով, բլրո մը վրա շինված, որ երկու ջրերու միացած տեղը թերակղզի եղած ատեն զորավոր զորք ուներ: Պարանոցը, որ ցամաքի հագորդակցության կապն էր՝ բերդի երկաթապատ դուռն էր դրված, որուն շրջապատը շինությունք կային, ուր բազմության զինյալ սպասավորաց և զորականաց վանքին ծառայության և պաշտպանության պաշտոնն ունեին» (էջ 325):

Եթե մի դեպքում բնությունն արձագանքում է մարդու հոգեկան աշխարհի ուրախ-տխուր վերապրումներին, ապա մի այլ դեպքում Ծերենցի մոտ այն մնում է իր գեղեցկության հիացքի մեջ քարացած՝ մարդկային արարքների ահուլի պատկերների առջև. «Խնչպես ամառվա օր մը պայծառ արև և երկինք՝ տերև չի շարժիլ, բնությունը բոլոր լուսյան մեջ կըսպասե, կգուշակե փոթորկը, որ կհասնի որոտալով, փայլակ կայծակ, հոգմ հեղեղ թափելով ամեն կողմե, նույնպես ամեն ոք կապասեր փոթորկին»: Այս պատկերների մեջ Ծերենցը ներկայացնում է մարդու ձեռքով ստեղծված դաժան ու հակաբնական պատկերներ, որոնք ավելի ահավոր են երևում կյանքի ու երջանկության համար երկնքում փայլող արևի ճառագայթների տակ:

Ռոմանտիկական հակադրությամբ բնորոշվող այսպիսի պատկերների կողքին Ծերենցն ստեղծում է նաև մարդկային անհատ բնավորություններ, որոնք իբրև բնության արարածներ, իբրև նրա մի մասնիկը, բնության նման անաղարտ

իրենց մշակված կամ անմշակ բնական կերտվածքներով, մարմնավորում են ճշմարտությունն իր ամեն երանգների մեջ:

Ծերենցն, իհարկե, պանթեիստ չէ, բայց նրա հերոսներից շատերը, մասնավորապես Հովնանը, Գուրգեն իշխանը, նրա ծառան՝ Վահրիճը, բնության մոտ վանգնած մարդիկ են, բոլոր փորձությունների մեջ, կյանքի բոլոր հանգամանքներում հավատարիմ են իրենց բնական կերտվածքին: Նրանց բնավորության ու վարքագծի բոլոր դրական կողմերը պայմանավորված են սրանով:

Անձնագոհության, հերոսականության, անշահասիրության, ժողովրդասիրության և հումանիզմի խոր հատկանիշներով օժտված Հովնանը իր տոկուն բնավորությունն ու աննկուն պայքարի կամքը ձեռք է բերել կյանքի արհավիրքների մեջ: Հաստատակամ, զուսպ այդ մարդու մեջ հեղինակը դրել է մի քնքուշ հոգի: Իր ապրած ժամանակի օրենքների հարկադրանքով աշխարհի առջև փակ մնացած Հովնանի ղգացմունքների հարուստ աշխարհը վերջին անգամ բացվում է Վասկանուշի առջև:

Վասկանուշը՝ Բագրատունյաց իշխանուհին, դատապարտվում է վանական կյանքի այն բանի համար, որ համարձակվել է խախտել միջնադարյան օրենքները և սիրել գլուղացի Հովնանին՝ նրա արժանիքները բարձր դասելով աղնվական ծագումից: Տարիների տառապանքների մեջ չմարած սերը միջնադարյան վանքի մուսլ պատերի մեջ արձագանքում է իբրև մարդկային անհատականության հաղթանակը դաժան իրականության հանդեպ:

Վասկանուշի հոգեկան խռովքը Ծերենցը նկարագրում է մի գեղեցիկ ումանտիկական պատկերով: Ահա նա դիտում է Ճորոխ գետի ընթացքը և խորհում. «Ի՞նչ է գետի ընթացքը, ծովու մը՝ ափունքին տված հարվածները, որոց յուրաքանչյուր ալիք միևնույն շարժմունքն ու խաղն ընելով մեր աչքը և մեր միտքը կգրավեն առանց մեր մտքին տիրապետող խորհուրդը խախտելու, Վասկանուշ այդ Ճորոխին հախուռն ջրերուն մեջ կտեսներ յուր Տարոնո հայրենի պալատին ոսկեձեղուն և նկարեն սենյակները, կտեսներ զինք յուր ոսկեթել բեհեզներուն:

մէջ, կտեսներ Հովնան Սասնո առյուծակորյունը յուր քսան տարիներուն մէջ՝ նորա լայն ճակատը և մեծ գլուխը սև մազերով պսակլալ, որ ուսերուն վրա կիջնէին, նորա կայծակնափայլ աչքերը, որ յուր ականարկին առաջ կխոնարհէին և կբաղցրանային, կտեսներ լուսնի հանդարտ լուսով յուր վարդենյաց պարտեզը ինք նստած և առյուծը ոտքերուն քով ի գուճս, կը տեսներ հանկարծ յուր գլխուն վրա կանգնած յուր հոր՝ Վասակա բարկաճաշք՝ աչքերը... և ահա ոսկեծնդուն պալատ, բեհեղներ, Հովնան, վարդինիք, լուսին և ամեն բան Ճորոխի ալիք կը հափշտակեն կտաններ, և կմնար ինք յուր տխուր սենեկին մէջ միայնակ, որուն լուսթյունը կընդհատէր կրակարանին հրոյն ճարճատմունքը» (էջ 397):

Վիպասանի տաղանդավոր գրչի արգասիք են Վասկանուշի հոգեկան խռովքին հաջորդած՝ Սյունյաց իշխանուհու՝ մանկամարդ Զարուհու՝ վանք բերելու և ապա՝ երիտասարդ Աշոտ իշխանի և Վասկանուշի հանդիպման տեսարանները: Հոգեբանական խորը, զգայուն ապրումներով լեցուն այդ տեսարաններում հեղինակը բացում է կյանքով ու սիրով լցված երիտասարդ հոգիների զգացումները: Վասկանուշի դեմ կանգնած աղջիկը նրա հոգում արթնացած հուշերին հաղորդում է ուժ, կենսունակութիւն, լուծելու իր շլուծված ճակատագրի առեղծվածը՝ աղջկան փրկելու ջերմ ցանկությամբ: Վասկանուշը ասում է Աշոտ իշխանին. «Այս աշխարհքս յուր թշվառությամբ կճանչնամ և իմ քարի պես սիրտս կարծած է որ՝ ավելի ձեզի պես թշվառներու համար գութ ու կարեկցութիւն ունի» (էջ 334):

Եթե երիտասարդ Աշոտ իշխանի սերը բորբոքվում է, ընդլըզում անարդարության դեմ, ապա Հովնանը, ենթարկվելով իր ճակատագրին, լուսթյամբ է կրում իրեն հասած ծանր հարվածը: Աստված արդեւի՞ք է անհավասար սիրուն հասնելու իրավունքը, ուրեմն նա պետք է ենթարկվի աստվածային այդ պատվիրանին, այդպես էր մտածում Հովնանը: Երբ 27 տարի հետո տեղի է ունենում նրանց հանդիպումը Արտանուշի վանքի պատերի ներսում, նա դեռ իրեն հանցավոր է համարում՝ խախտելու համար տերերի սահմանած օրենքը: «Դեռ այն ժամա-

նակ,— ասում է Հովնանը,— կերթայի իմ լեռներուս գլուխը
և առանձնության մեջ ժամերով, օրերով այդ հիշատակներին
կհափրանայի և հրեշտակային արբեցությամբ հերկինս կամ-
բառնայի և ինձ այնպես կթվեր թե մարդկանց ամենեն երջա-
նիկը ես եմ» (էջ 354): Ծիշտ էր գուշակել իր ժամանակին Աշ-
տիշատի քուրմը. զինվորի կողքին, «քահանայի» կրոնական
ոգին Հովնանի մեջ կծկում է անձնական վայելքի ամեն ղզա-
ցում, և նա այդ ընդունում է որպես «աստվածային պատիժ»:

Այդպես չէ՞ Վասկանուշը: Իրենց դժբախտության պատ-
ճառը նա վերագրում է ոչ թե աստծուն, այլ մարդկանց,
«...որովհետև մարդիկ նորա օրենքները ծամածռել հանդգնե-
րան, ծնողք հիմար սովորությանց և գողողության իրենց ղա-
վակաները և իրենց ծնելական զութը ղոհել օրենք ըրեր են և
ազնվատոհմությունը, երբ բարձրեն արհամարհոտ աչք կծգե-
ռամկի վրա և կկարծե թե անարգ արարածն իրեն համար է
ստեղծյալ, ահա այսպես կպատժվի և գերության շղթաներու
դառն ճաշակը կառնե: Ո՞ր նախարարական ցեղն է, որ չունե-
նա մեկը Բաղդատ, և ի՞նչ ըրին, որ արժանի չլինին այդ անար-
պանաց և երկրին կործանման» (էջ 355):

Երբ Վասկանուշի համար հնարավորություն է ստեղծվում
թողնել վանքը, նա հրաժարվում է, քանի որ «նախարարաց
մեջ աղնիվ ղգացմունք և առաքինությունը» շատ քիչ են: Եվ
Վասկանուշը չի ցանկանում մասնակցել վանքի պատերից
դուրս տեղի ունեցող «անիրավությանց և կեղեքմանց» «լավ
համարեցաքեզի պես առանց հուսո սիրել, սերը նյութականու-
թյան չիջեցնել երբեք յուր բարձրութենեն...» (էջ 356):

Վասկանուշի կերպարը ռոմանտիկական պատմավեպում
ներկայանում է իր գաղափարական ըմբռնումներով, որոնք
բարձրացնում են նրան իր ժամանակից, դարձնում մարդկային
անհատականության գեղեցկության բարձրագույն դրսևորում--
ներից մեկը:

Մերենցը հասարակական գիտակցության նոր երանդներ է
դնում Հռիփսիմե տիկնոջ՝ Աշոտ Արծրունու մոր հայացքների
մեջ: Տիկինը Սմբատ Բագրատունու բույրն է. նա աչքի է ընկ-
նում իր «հռչակավոր սրամտությամբ, խոհեմությամբ, ճար-

տարութեամբ, բարեպաշտութեամբ»: Բայց նա միաժամանակ
ունի կարծիքներ, որոնք դուրս են բերում նրան իր դասային
նեղ շրջանակներից, դարձնում խոհական կերպար:

Հռիփսիմն տիկինը մտածում է, ինչպես իր եղբայրները,
որ պետք է խոհեմութեամբ վարվել թշնամու հետ, առանց
«գրգռելու և քանանք միանալու և միացնելու մեր մեծ իշխան-
ները և մյուս կողմեն երկիրը լավ կառավարենք՝ զորացնենք»
(էջ 252):

Շրջապատում տեղի ունեցող իրադարձությունների մեջ
Հռիփսիմն տիկինն իր եղբայրների նման կողմնորոշվում է դե-
պի ժողովրդական շարժումները: Նրա կարծիքով, այն իրա-
դրության պայմաններում, որի մեջ գտնվում են իրենք, պետք
է հենարան դարձնել ժողովրդին: Մատնացույց անելով Հով-
նանին՝ նա ասում է. «Ով ուզեր Սասունն իրեն ունենալ՝ պետք
է Հովնանին միջնորդ ունենար»: Նա իշխաններին խորհուրդ է
տալիս մոռանալ դասային խտրականությունները և ձեռք մեկ-
նել «շինականին»:

Հռիփսիմն տիկինը Արծրունյաց իշխանուհի էր. նա մտա-
ծում էր որդու՝ Աշոտի հաջողության մասին, այնուհանդերձ չէր
կարող անարգար համարել Գուրգեն Ապուպելճի արդար պա-
հանջը՝ հայրենական կավածքների հարցում: Սերենյն աշխա-
տում է ուղիներ գտնել՝ առանց դիպչելու Արծրունյաց տոհմին,
պաշտպանել Բագրատունյաց տոհմի «առաքինությունները»՝
հույս ունենալով խաղաղությամբ լուծել հարցերը:

Վեպի հետաքրքրական կերպարներից է Գուրգեն իշխանի
սպասավոր Վահրիճը: Մենք նրան հանդիպում ենք ապատված
գերիների հետ իր տիրոջն ուղեկցելիս՝ Մուշից Ռշտունյաց ոս-
տանը: Առաջին խոսակցությունը տիրոջ և ծառայի միջև ցու-
ցադրում է նրա կեցվածքը. սրամիտ դարձվածքները, արագ
կողմնորոշումները հիշեցնում են եվրոպական դրականության
մեջ մտած «պիկարոյական» տիպերը: Վահրիճն օժտված է հու-
մորի զգացումով, նվիրված է իր տիրոջը, բայց և ունի իր սե-
փական դատողությունները՝ շրջապատի երևույթների և մարդ-
կանց նկատմամբ: «Գյուղացին» գլխում Մերենյն պատմում
է խաղի՞ գյուղում Վահրիճի հյուրընկալությունը, ուր նա

պատմում է սասնեցիներին՝ արաբների դեմ հարձակման և հաղթանակի մասին: Ահա այստեղ, գրում է հեղինակը՝ «երգող բանաստեղծն իր եռաթելյան պարզ նվագարանը ձեռքն առած երգեց սասնեցոց գովաբանությունը» (էջ 251): Ծերենցը գրականության մեջ բերում է «Սասնա ծռերի» առաջին գրառումների առաջին արձագանքները:

Վեպի գեղարվեստական հյուսվածքում տեղ գտած բացասական կերպարներից են ոստիկան Յուսուֆը, Բուղա զորավարը: Նրանք ներկայացված են ավելի շատ հեղինակի նկարագրությունների մեջ: Բուղայի հանդիպումը Սմբատ սպարապետին թերևս եղակի տեսարաններից է, ուր երևում է բարբարոս հրոսակապետի արյուն արբու և խարդախ հոգին: Դավաճան իշխանների հետ Հովնանի երկխոսությունները էապես չեն ցուցադրում հայրենիքի դավաճան մատնիչների ժանտ հոգիները: Ամենաուժեղը Հովնանի հաճած մահվան վեհոն է և նրանց մահապատիժը Դվինի դռներին՝ ի տես թշնամու:

Մենք հիշեցինք Վ. Սկոտի «Ուերվիլ» վեպում գյուղացիների վայրէջքը լեռներից: Այդ վեպում ժողովուրդը համակրանք չունի 1646 թ. Յակոբիտների ապստամբության նկատմամբ, ապստամբություն, որի նպատակն էր վերականգնել Ստյուարտների իշխանությունը: Սկոտը նկարագրել է այդ ապստամբությունը, ցույց տվել նրա հետադիմական բնույթը և ուր գյուղացիները համակրանք չեն ունեցել թագավորի գահին ուր հավակնորդի նկատմամբ: Գեղարվեստական ճշմարտությունն այստեղ ուղղել է պատմության փաստերից արված ելբակացությունները: Դա հեղինակի առաջին պատմավեպի հաղթանակն էր անգլիական գրականության մեջ:

Ծերենցի վեպում պատմական ճշմարտությունն այն է, որ IX դարում Բագրատունյաց իշխանությանը ծնունդ տվող համաժողովրդական շարժման ընդհանուր ոգին ինքնին բարձրացրեց Հովնանին և մյուս ապստամբներին՝ ինչպես օտար զավթիչների, այնպես էլ սեփական իշխանների դեմ: Հովնանի պատմական միտումների շրջանակներն ավելի լայն են, քան Մատթեոս Ուռհայեցու արձանագրած փաստի մեջ: Ծերենցը նրա մեջ դրել է ռոմանտիկական մի պատմափիլիսոփայու-

թյուն, որն իր մեջ է առնում ոչ միայն իր դարաշրջանի, այլև հաջորդ դարերի մեջ հայության հարցի լուծման պատմական առաքելությունը:

5

Անցյալի քննադատները ծայրահեղ կարծիքներ են հայտնել հատկապես Սերենցի «Երկունք Թ՝ դարու» վեպի մասին: 1880 թ. «Փորձ» ամսագրի № 7—8-ում լույս է տեսնում Ե. Գեղամյանի (Հայկունի) քննադատական հոդվածը: Հոդվածի սկզբում հեղինակը մի քանի ճիշտ դատողություններ է անում. չկան, գրում է քննադատը, ամբոցների ներսի նկարագրություններ, Սասնա կյանքի ու կենցաղի նկարագրություններ, վիպերգության վերարտադրման կտորներ, Հովնանի կաղմակերպած «վերժխնդրության» գեղերի նկարագիրը և այլն:

Բայց հարցը դրանով չի պարզվում: Հեղինակն անցնում է իրեն հետաքրքրող բուն նյութին: Ո՞վ է Հովնանը, հարցնում է քննադատը. ըստ հեղինակի՝ «Հայ ժողովրդի տիպը», «ժողովրդական դինվորը», «ժողովրդի մարդը»: Բայց եթե նա սնվել է պալատական միջավայրում և նրան ծանոթ են Բաղասրատ Բագրատունու հայացքները, ասում է քննադատը, ուրեմն ապստամբության ծայրը դռնվում է պալատում: Եթե այդ այդպես է, ասպա ինչո՞ւ Հովնանը ոչ մի դաշինք չկնքեց իշխանավորների հետ:

Քննադատին դուր չեն գալիս Հովնանի «ռամկավարական» հայացքները: Նախարարները չեն ընդունում նրա առաջադրած պահանջները: Դեռ դարմանալի է, ասում է Գեղամյանը, որ նրան ազատ են արձակում: Նա չի հավանում Հովնանի կերպարը՝ որպես անհատականություն, նրա քաղաքական դավանանքը, կյանքի և պատմության վերաբերյալ նրա փիլիսոփայությունը:

Գեղամյանը չի ընդունում Հովնանին իբրև դադափարատիպ, նրա մտքերն ու գործունեությունը: Ներկայացված փաստերը համարելով պատմական՝ նա բողոքում է փաստերի ազավազման դեմ:

Եթե իր ժամանակի քննադատությունը ընդունեց Վ. Սկոտի ներկայացրած գեղարվեստական ճշմարտությունն իբրև պատմական իրականության փաստերի ճշմարտացի վերականգնում, ապա Մերենցի վեպի նկատմամբ տեղի ունեցավ հակառակը: Բանն այն է, որ 1880-ական թթ. պահպանողական հոսանքը դեռևս սրբագործում էր իր անքննադատ վերաբերմունքը հայ պատմագրության նկատմամբ: Նա կամենում էր հաստատել այն, որ հայերը եղել են տիրասեր ժողովուրդ, որ նրանք թշնամի չեն եղել իրենց տերերին և նրանց պայքարն ուղղված է եղել միայն օտար զավթիչների դեմ, այն էլ իրենց իշխանների հետ:

Այդպիսի կերպար չկա մեզ պատմության մեջ, հայտարարում է Գեղամյանը, դանց առնելով գյուղացիական ապստամբությունները՝ աղանդավորական շարժումների քողի տակ. «Նա ցանկանում եմ Հովնանին տեսնել մի որոշ մշակված գաղափարի մեջ,—գրում է քննադատը,—նրանք կարող են կործանվել, բայց նրա կայծերը կհասնեն սերունդներին»: Նրա կարծիքն այն է, որ «ժողովուրդի դինվորը» ճիշտ չի ըմբռնել իր դերը, որ նրա գործադրած ուժերը ավելորդ են և աննպաստ: Կերպով են գործադրվում: Հովնանը ճանաչում է Հայաստանի ցավերը, բայց բուժիչ դեղեր չունի և այլն: Ըստ Գեղամյանի՝ Հովնանը չէր կարող իրականում հանդես գալ նախարարների ազդպիսի քննադատությամբ: Քննադատի կարծիքով Մերենցը պետք է ցույց տար, թե ինչպես Բագրատունիները հասան իշխանության և միաժամանակ բացատրել, թե ինչպես պետք է նախարարները գործեին առհասարակ: «Զեմ կարծում, թե դուք այն համոզման տեր մարդկանցից լինիք, որոնք կարծում են, թե մեզ լուի Հովնաններ են հարկավոր,—գրում է քննադատը՝ դիմելով Մերենցին,—ընդարձակ կերպով մեզ ծանոթացրիք Հովնանի ծրագրի հետ, ծանոթացրեք նույնպես Սմբատի ու Աշոտի ծրագրերի հետ»¹⁶:

Վերջում Գեղամյանը խոստովանում է, որ Մերենցի վիպասանությունը բազմակողմանի խորհուրդ ունի ժողովրդի համար, այդ պատճառով էլ ցանկալի է, որ նրա ընթերցողների թիվը ըստ կարելիության բազմաթիվ լինի: «Սակայն մեր:

ակնարկած պակասութիւնները,—գրում է նա նույն տեղում.—
իւանգարում են այդ գրքերի տարածման գործը»:

1883 թ. «Մշակի» էջերում նույնպիսի քննադատութեամբ
հանդես եկավ Դեղամյանը Րաֆֆու «Կայծերի» դեմ՝ Հայկունի
ստորագրութեամբ: Րաֆֆին պատասխանեց նրան. «Պ. Հայ-
կունու կրիտիկան և «Կայծերը» վերնագրով մի ընդարձակ
հոդվածով, «Փաւստոս» կեղծանունով: Բարձր գնահատելով
«Կրիտիկայի» դերն ու նշանակութիւնը գրականութեան գա-
ղափարական ուղղութիւնների և գեղարվեստական զարգա-
ման գործում՝ Րաֆֆին սահմանում է քննադատական մի շարք
սկզբունքներ, որոնք բնորոշում են մեր գրականութեան զար-
գացման և արդի քննադատութեան խնդիրները: Րաֆֆին ցույց
է տալիս, որ Հայկունին խառնում է իրար և՛ գրական ուղղու-
թիւնները, և՛ վեպերի տեսակները, և՛ գրական հերոսներին
բնույթը: Ցույց տալով Հայկունու տգիտութիւնը և հետամնաց
հայացքները Րաֆֆու «Կայծերի» նկատմամբ «Փաւստոս»
գրում է. «Եթե վեպը կյանքի ու նրա երևույթների նկարագր
է, եթե վեպը մի արտահայտութիւն է ժողովրդի մտաւոր և
հոգեկան տրամադրութեան. շատ բնական է, որ միևնույն ժա-
մանակներում լույս տեսած դանազան վեպեր կարող են բա-
վական նման լինել միմյանց, եթե ոչ իրենց բովանդակու-
թեամբ և տիպերով, բայց գոնե իրանց ոգու ընդհանուր ներ-
շնչութեամբ, իրանց գաղափարներով»:

Հենց այդ պատճառով Աբովյանի, Մերենցի և Րաֆֆիի
բողոքը վեպերը իբրև ժամանակի մտածութիւնների և զգա-
մունքների արտահայտութիւն, իրանց հիմնական գաղափար-
ներով բավական նման են միմյանց, թեև իրանց բովանդակու-
թեամբ և տիպերով բոլորովին տարբեր են»¹⁷:

Րաֆֆին բացատրում է, թե ինչպես է պատահում, որ մեր
գրականութեան մեջ ժամանակ առ ժամանակ լույս են տես-
նում միևնույն «բնավորութեամբ», միևնույն ոգով զրված վե-
պեր: Դա նմանեցնում է հրաբխային այն ժայթքումներին,
որոնցից ձևանում են տարբեր գագաթներ, բլուրներ, որոնցից
յուրաքանչյուրն իր ներքին բաղադրութիւնն ունի. «Եթե Աբով-
յանի, Մերենցի և Րաֆֆիի վեպերն ընդունելու լինենք որպէս

մի բնական երևույթ մեր գրականության մեջ և եթե վերևում
բերած օրինակով քննելու լինենք նրանց հայտնվելու պատ-
ճառները, անշուշտ, կտեսնենք, որ համեմատության մեջ
սխալված չենք. Աբովյանի «Վերք Հայաստանին» հրաբխային
գործության առաջին ժայթքումն էր: Բայց այդ ժայթքումը կա-
տարվեցավ բավականին թույլ և դանդաղ կերպով և վեր հանեց
դեռ ոչ կատարելապես կազմակերպված մի բարձրության:
Հետո ժայթքումները կատարվում են ավելի սաստիկ և սաստիկ
կերպով երևան են հանում ավելի մեծ բարձրություններ, որոնց
վերջինը և իր կազմակերպությամբ ավելի կատարելագործ-
վածը պետք է համարել Բաֆֆիի «Կայծերը»¹⁸:

Այսպես, ուրեմն, Գեղամյանի՝ Մերենցի, այնպես էլ Բաֆ-
ֆու վեպերի («Կայծեր») «ոչնչացնող» քննադատությունը
պատճառ դարձավ Փավստոսի (Բաֆֆու)՝ մեր գրականության
համար նշանակալից քննադատական ակնարկի հրապարակ-
ման: Այդ քննադատությունն էլ կարևոր նշանակություն
ունեցավ Պերենցի վեպերի տեղն ու դերը մեր գրակա-
նության մեջ ճիշտ որոշելու գործում: Դա մեծ գրողի տա-
րանդի հայտնություններից մեկն էր:

Ինչպես գիտենք, Ստ. Պալասանյանն առաջիններից մեկը
գնահատեց Մերենցի վեպերը՝ դիտելով դրանց հասարակական
նշանակությունը արդիականության դիրքերից: Նույն ժամա-
նակներում Մերենցի պրական ուղղության նկատմամբ ուրույն
մոտեցում է հանդես բերել Հ. Պարոնյանը: «Մեծապատիվ մու-
րացկաններում», հերոսներից մեկի միջոցով, հեղինակը քն-
նադատում է վիպասանի կերպարները՝ ռեալիզմի դիրքերից.
«Երբ աղգային նշանավոր, հանճարեղ և հերանուշ Մերենցը
ասոնցմե մին նկարագրով անբնական անձ մը կներկայացնե,
ամեն կողմն կբասրվի, թե Մերենցն տակավին մանուկենց է
անձեր ստեղծելու արվեստին մեջ, թե միևնույն անձին վրա
Ադամն և Նեոն, սատանան և հրեշտակն, Զոյլին ու Հոմերոսն,
արականն ու իգականն միանգամայն կներկայացնե»:

Պարոնյանը Մերենցի ռոմանտիզմն է շեշտում, երբ նշում
է. «Թե նրա ներկայացրած անձերը ոչ «ինչպես որ են», այլ
ինչպես որ կերևին»: Պարոնյանի այս դիտողությունները

գրականության մեջ նկատուիլ են իբրև բացասում Ծերենցի վիպասանության: Սակայն հարցի իմաստը բոլորովին այլ է: Պարոնյանի դիտողությունների մեջ գործ ունենք երկու մեթոդների, իրականության արտացոլման երկու սկզբունքների՝ գեահատման հետ՝ գեղարվեստական զարգացման պատմական տարածքի վրա: Հանդես գալով ռեալիզմի դիրքերից՝ մեծ էգզիծաբանն արտահայտում էր գրականության առջև դրված ժամանակի հրամայական պահանջը. շուտով 80-ականները, շարժումը պետք է հաստատեր նրա իրավացիությունը: Սակայն Պարոնյանը, որ հայտնի է իր զգաստ մտքով ու լայն շրջահայացությամբ, չէր կարող բարձր չգնահատել Ծերենցի վեպերի պատմական դերն ու գեղարվեստական նշանակությունը:

1900-ական թթ. Լեոն Ծերենցին գնահատում է՝ իբրև էր ժամանակի ազգային-հասարակական գաղափարներն արտացոլող գրողի: Բայց սյուտեղ նա, ինչպես իր ժամանակըն Ն. Գեղամյանը (Հայկունին), գտնում է, որ Հովնանի կերպարը «Երկունք Թ՝ դարու» վեպում հորինված է, և թե պատմությունը մեղ չի տվել այնպիսի երևույթներ (խոսքն ազգային-սոցիալական շարժումների մասին է—Ռ. Ն.), որով կարողանայինք եզրակացնել, թե հայ ժողովուրդը երբևէ գիտակցել է իր գրությունը և կամ որևիցե փորձ արել թոթափելու իր վրածանրացող ազնվապետական լուծը:

Ավելի ճիշտ և պատմական մոտեցում է հանդես բերում Վ. Փափազյանն իր «Պատմություն հայոց գրականության...» գրքում: Դրվատելով ժողովրդական ուժերի պատմական դերը, Փափազյանը Հովնանի կերպարի մեջ տեսնում է ժողովրդական շարժման վառ արտահայտություններից մեկը: Ծերենցն առաջինն էր, որ, ինչպես նկատում է գրականության պատմաբանը, պատմության խորքերում գտնում է այն թիկերը, որոնք կապում են հինը նորին և ներկայացնում մեր ժողովրդի ազգային-քաղաքական ձգտումներն իրենց ամբողջության մեջ:

«Գրականության մեջ, այդ նոր դեմոկրատիկ շիջտը,— գրում է Փափազյանը,— խորապես ազդեց Բաֆֆին և ներշնչեց նրան հաճախ լավագույն մտքեր, հետագա գրվածքները»

ժամանակ: «Կայծերի» հեղինակը մեծապես օգտվեց Մերենցի
ու: միայն գրելու ձևերից, այլև քարոզներից ու առաջադրած
գաղափարներից»¹⁹: Բաֆֆին նոր աստիճանի բարձրացրեց
պատմավեպի գաղափարական բովանդակության ինչպես ար-
դիական աղերսներն, այնպես էլ գեղարվեստական ընկալման
չափանիշները:

Գլուխ չորրորդ

1. «ԹԵՈԴՈՐՈՍ ՌԾՏՈՒՆԻ» ՎԵՊԸ ԵՎ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ:
2. ՎԵՊԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ:
3. ԹԵՈԴՈՐՈՍ ՌԾՏՈՒՆՈՒ ԿԵՐՊԱՐԸ

1

Արաբական առաջին արշավանքները Հայաստան նկա-
րագրել են Ղևոնդ պատմիչը, Սևբեոսը, Հովհաննես Դրասխա-
նակեթոցին, Սամվել Անեցին և ուրիշներ: Օգտագործելով
պատմիչների տված տեղեկությունները, Մերենցը հատկապես
իր այս վեպում յուրովի է մեկնաբանել պատմական իրադար-
ձությունները և արել պատմական ճիշտ եզրակացություններ
ու կռահումներ:

Վեպի Զ գլուխը նվիրված է Բյուզանդիոնի և Պարսկաս-
տանի միջև բաժանված Հայաստանի ընդհանուր պատկերի
նկարագրությանը: «Հայաստան բաժնված երկու մեծ ինքնա-
կալությանց՝ բյուզանդական կայսրության և պարսից սասան-
յան պետության մեջ, հարկատու երկուքին, ոտնակոխ երկու-
քին՝ աննկարագրելի ալեկոծության մեջ կծփար շարունակ:
Այս երկու մեծ տերությունք միևնույն հիվանդությամբ վարակ-
յալ՝ արտաքուստ զորության փայլ մը ունեին, բայց ներքուստ
երկուքն էլ հավասար փտած և որդնոտած կործանման վիճա-
կին մեջ էին»¹:

Մերենցը նկարագրում է բյուզանդական կայսրությունը,
որը հարատևեց մինչ կիլիկյան թագավորների ժամանակնե-
րը, միշտ երերալով, բայց միշտ պահպանելով իր արտաքին
ուժն ու իշխանությունը: «Վերջը,—գրում է Մերենցը,—քանի
որ մեր պատմության ժամանակին կըմոտենանք, կտեսնենք,

տր կայսերական գահուլից վրա բարձրացող մարդիկ ավելի կպզտիկնան, և մեծ կործանվածները խառնուրդ մը ունին առաքինութեանց և մոլորութեանց. ի բաց թողլալ Մորիկ հոռմեացի կամ Հայկազն (որու ծագումն նշանակութիւնն պետք չէ տնենա հայու համար), որ ավելի ազնիւ սիրտ ցցուց մեռնելու վայրկենին քան թե գահուլից վրա: Կտեսնենք Հերակլ՝ դուռցազն թագաւորութեան սկիզբը և վատթար վերջերը: Այդ մարդը իր մեծամեծ հաղթութեամբ պարսից դեմ, այն տկարութեան հասցուց, բերաւ այդ երկու թագաւորութիւնները, արաբաց հարվածներուն չկրցան դիմանալ, ընկճեցան կամ տապալեցան» (էջ 479):

Մերենցը հեռավոր անցյալի իրական եղելութիւնները դիտում է խոր քննական տեսանկյունից՝ բացահայտելով դրանց պատմական իմաստն ու նշանակութիւնը, որը և վիպական իրականութեան մեջ գեղարվեստորէն ճշմարտացի է դարձնում դէպքերի ու դեմքերի շարժման տրամաբանութիւնը:

Մերենցը պատմական Հայաստանի հասարակական կառուցվածքում առանձնացնում է երեք հիմնական շերտ՝ եկեղեցական դասը, նախարարական դասը և Աղատաց խումբը, որոնք երկրի իրավական տերերն էին, և ժողովուրդը. «Ինչպէս քնական է ազնւլատոհմութեանց ամեն տեղ արհամարհ աչոք նայիլ հասարակ ժողովրդեան վրա և հարստահարել,—գրում է նա,—նույնը սովորաբար կընեն հայոց նախարարք և աղատք, վասնզի այդ երրորդ մասը՝ ժողովուրդը, որուն մեկ իրավունքը չհիշվիր մեկ տեղ մը, չի կար հաստատութիւն մը, որուն վրա ինք հենվեր, չի կար կազմակերպլալ օրենք մը, որ զինք պաշտպաներ, եթէ լիներ ևս՝ երբ օրենքը առանց պարտեան կրցեր էր մեկուն պաշտպանութիւն լինիլ, օրենքներն ուժ ունենալու համար միշտ կազմակերպլալ մարմնո մը պետք ունեն և օրենքներն արդար գործադրութեամբ միայն կրնան ժողովրդոց սիրելի լինել և իրենց սրտին մեջ տպավորիլ՝ սովորութիւն դառնալ» (էջ 481):

Մերենցը դուրս է գալիս իր հիմնական թեմայի շրջանակներից և խոսում ժողովրդի սոցիալական ծանր վիճակի մասին. «Կային ժամանակներ ուր նախարարութեան ձեռքը այն

աստիճան կծանրանար ժողովրդյան վրա ոսկվո ու արծաթի՝ հարկապահանջներ դնելով... որ հեղինակ մը նմանցնե այդ խեղճ շինականը այսինքն ժողովուրդը՝ «Մարդու, որ կընկնի ի ծով և հնարք չի գտներ ելնելու» և «հիվանդի, որ ցավեն տագնապյալ խոսելու նաև կարողություն չունի»²:

Ծերենցն այս վեպում նորից անդրադառնում է հայ պատմագրության մեջ վաղուց ի վեր հուղվվող «միաբանության» և «անմիաբանության» հարցին. «Ինչո՞ւ շտեմենք թե միմիայն պատճառ՝ քաղաքագիտության պակասությունն էր Արշակունի թագավորաց քով, որ Հայաստան անիշխանության կմատներ»։ Տրդատը կարողացավ ջնջել հազարավոր տարիներով արմատացած կռապաշտությունը։ Այդ անելուց հետո նա պետք է ջնջեր և նախարարությունը, և ոչ թե իր «անպիտան հաջորդներն» Արշակա թողուլ, որ մոլությանց և հիմարությանց անճոռնի խառնուրդ մ'էր և քան զամենքը։ Վատթարագույն, և որ բնական էր թե չէ հաջողեր այդպիսի մեծ ձեռնարկություն» (էջ 482):

Մեր օրերում պատմավիպագրության շուրջ հաճախ հայտնվում են տարամետ մտքեր ու կարծիքներ։ Դրանց անդրադառնալիս գրականագիտության, ինչպես նաև պատմագիտության համար անհետաքրքիր չի լինի երբեմն նկատի ունենալ նաև պատմական իրականության, դրա գեղարվեստական վերստեղծման, վերջինիս արդիական նշանակության վերաբերյալ ծերենցյան հայացքները։ Ի՞նչ էր պահանջում Ծերենցն իր հետ գործող ազգային գործիչներից, ինչպիսի՞ աղերսներ կան նրա տպագրած հոդվածների և վեպում արված խորհրդածությունների միջև։

Ծերենցի մտորումները հիմնականում զարգանում են մի ուղղությամբ՝ հայության հաստատուն հենարանը պետք է լինի պետական մտածողության միասնությունը, գործողությունների միասնությունը։ Իսկ եթե հայ ժողովրդի պատմական գոյության հաղարամյակների ընթացքում իրոք բացասական դեր է կատարել նրա ներքին ուժերի անմիաբանությունը, ապա դա հետևանք է ոչ թե ժողովրդի էթնիկական նկարագրի ինչ-որ յուրահատկության, այլ պատմական պայման-

ների: Հայերն, ի վերջո, նույնչափ անմիաբան էին, որչափ «ամեն ազինք, որ զորավոր կառավարութիւն չեն ունեցեր երբեք» (էջ 483):

Առանց զորավոր, կազմակերպւած իշխանութեան և խիստ օրենքների անկարելի է որեւէ միաբանութիւն, գրում է Մերենցը նույն տեղում, քանի որ «փոքրիկ շահեր մեծ շահերու դեմ կապստամբին, և մեծ շահեր զորութեան պետք ունին պղտի: շահեր և անոնց բանսարկութիւնքը ճնշելու համար: Խիստ կառավարութեան ամենն անպիտանը նախադասելի է անիշխանութեան»: Հենց նախարարութիւնն ինքնին «անիշխանութիւն էր: արմատացալ: Եվ որովհետեւ չի կրցաւ կանոնավորալ ազնւապետութիւն մը նաեւ կազմել՝ ինք ինկաւ դահաւեթ և սղգն էլ իր հետ տարաւ»: Այդ «ազնւապետութիւնը» ինքը կենտրոնացված պետական իշխանութիւնն էր, որի օրինակները, ինչպէս տեսանք, Մերենցը գտնում էր Ֆրանսիական կենտրոնական բացարձակ միապետութեան մեջ:

Հայաստանում, գրում է նա, «եթե թագաւորութիւն կամ նախարարութիւն կարենային զորավոր կառավարութիւն մը ձեռ առնուլ եկեղեցական իշխանութեան պէս, այն ժամանակ անիշխանութեան վտանգն ազատ կլինէր Հայաստան և կըրնար անկարծելի լինիլ իր զորավոր դրացաց, բայց դժբախտաբար երբեք նախարարութիւնը այդ շէր խորհած և որ շատ կարևոր և գործադրելի էր այս միջոց ժամանակի մեջ, որուն պատմութիւնը կգրենք» (էջ 484):

Մերենցը, ահա, իր նոր վեպով կամենում էր ցույց տալ, թե եթե արաբական արշավանքի սկզբին, երբ հզոր պետութիւնները՝ Բյուզանդիոնը և Պարսկաստանը ապրում էին անկման շրջան, Հայաստանում ստեղծվեր պետական մի «զորավոր» ուժ, ապա նա կարող էր փրկել հայոց երկիրը կործանման նոր վտանգից:

«Այո՛, կու գա անշուշտ օր մը,—հայտարարում է վեպի գլխավոր հերոսը՝ զորավոր իշխանութեան համար պայքարող այն նվիրյալ հայրենասերը,—օրը ապագա դարուց ստվերներու մեջ ծածկյալ, այն օրը, ուր մեր նախարարական անունները անհետ, աներևույթ լինին Հայաստան աշխարհքի վրայէն

և ազատն ու անազատ ի մի ձուլյալ բռնության մութճերու հարձածներեն՝ միաբան և միասիրտ թոթափեն շղթաները և եղբայր զիրար անվանեն» (էջ 493):

Ծերենցի վեպերի միջով կարմիր թելի նման անցնող, ժողովրդական ակունքներից բխող այդ լավատեսությունը կազմում է ապագայի նկատմամբ նրա հույսերի ու հավատի գլխավոր հիմքը:

Առաջին անգամ արաբական հրոսակախմբերը Հայաստան ներխուժեցին 640 թ. և, ուժեղ դիմադրություն հանդիպելով, ետ քաշվեցին: Բայց նրանց հաջողվեց Վանա լճի հյուսիսային ափերով մտնել Արարատյան հովիտը, դրավել Դվինը, ալիւրել այն և, ավար ու գերիներ վերցնելով, վերադառնալ Բաղդադ:

641 թ. Թեոփոր Ռշտունին Բյուզանդիո կայսեր կողմից նշանակվում է Հայաստանի սպարապետ: Պարսկաստանի իշխանության անկման հետևանքով Ռշտունին դառնում է նաև Արևելյան Հայաստանի փաստական տեր: 643 թ. Կոստանդին Զ-րդ նոր կայսրը ազատում է Վարադտիրոց Բագրատունուն և նրա որդի Սմբատին՝ վերադարձնելով առաջինին իր իշխանությունը: Սակայն շուտով հայրը վախճանվում է, և իշխանությունը մնում է Սմբատ Բագրատունուն:

643 թ. սկսված երկրորդ արշավանքի նախօրեին Բյուզանդիան ուղարկում է օգնական զորք՝ Պրոկոպի դորավարությամբ: Վերջինս մեծ պարտություն է կրում, և ճակատամարտը շահում է Ռշտունին: Պարտություն կրելով արաբական զորքերը շարունակում են պատերազմել մինչև 646 թվականը: Այդ մարտերն ի վերջո ավարտվում են Ռշտունու զորքերի պարտությամբ և հայոց սպարապետի գերեվարությամբ: Ամբողջ VII դարի ընթացքում արաբների մղած մարտերը Հայաստանում կրում են թալանչիական և հետախուղական բնույթ: Դրան հետևում է արաբական խալիֆայի հաստատումը Հայաստանում:

2

Վեպը սկսվում է Գրիգոր Մամիկոնյանի ու իր քեռի Սուրեն Կամսարականի՝ Վարդանաբերդ մուտքով: Նա գալիս էր Ռշ-

տունյաց ոստանից, ուր թողել էր իր սիրած էակին՝ Թեոդորոս Ռշտունու դստերը՝ Թենիին։ Մայրը՝ Բյուրեղ Մամիկոնյանը, դեռ որդու կարոտը չառած, տեղեկացնում է Թեոդորոս Ռշտունի սպարապետի գալուստը Վարդանաբերդ։

Թեոդորոս Ռշտունին՝ հայոց սպարապետը, Վարդանաբերդում տեղեկություն է ստանում, որ արաբական հրոսակախումբերը ներխուժել են Հայաստան և Վասպուրականի վրայով հասնում են Այրարատ։ Թեոդորոս Ռշտունին հայտնում է Պրոկոպին թշնամու առաջխաղացման մասին։ Վերջինս անամոթաբար է վարվում հայոց զորավարի հետ։ Ռշտունին իր սակավաթիվ զինվորներով կարողանում է ետ մղել թշնամուն, սակայն վերջինիս հաջողվում է այլ ճանապարհով մտնել Այրարատյան դաշտը, ջախջախել հանգիստ թողնված Պրոկոպի բանակը և առաջ շարժվել՝ ավերելով և ոչնչացնելով ամեն ինչ, ինչպես առաջին արշավանքի ժամանակ։

Վեպի երրորդ գլխում նկարագրվում է Վարդանաբերդի անկումը, Մամիկոնյան տիկնոջ փախուստը գաղտնի անցքով և անսպասվածությանից խուսափելու համար խեղդվելը լճում։ Հենց այդ ժամանակ լճի ափին հայտնված Զավենը, սկանառես տիկնոջ խորասուզվելուն, անզոր նրան փրկելու՝ գտնում է մացառների մեջ թաքցրած փոքրիկ Արփենիին և տանում Կողզվան, պատսպարում իր տանը։ Այդ ժամանակ Զավենի տանը իջևանած հույն Թումա՝ զորավարը գաղտնի վերցնում է մանուկ Արփենիին։ Զավենը, երկու տարի որոնելով աղջկան, հանդիպում է նրան Կ. Պոլսում, փախցնում է և բերում հայրենիք։

Վեպի առաջին գլխում ներկայացված Սուրեն Կամսարականը և իր զարմիկը՝ Գրիգոր Մամիկոնյանը, բաժանվելով Զավենից, բռնվում են շեյխ Ալիի զինվորների կողմից և գերի տարվում Դամասկոս։ Վեպում նկարագրվում է Սուրեն Կամսարականի և Գրիգոր Մամիկոնյանի ծանր գերությունը շեյխ Ալիի մոտ։ Հրաժարվելով կրոնափոխ լինել՝ նրանք հեծում են շղթաների մեջ։ Վերջապես նրանց հաջողվում է աղատվել կապանքներից և շեյխի արաբական ձիերի վրա, նոր զենք ու զրահով փախչել Դամասկոսից։

Ճանապարհին նրանք հանդիպում են արաբ զինվորների։
Կամսարականը հեռացնում է Գրիգոր իշխանին և նրանց հետ
գերի ընկած Գաղրիկին, ապա ինքը, խուլյա տալով արաբներից,
ընկնում է Կիլիկիայի լեռներում բնակվող ասորի համայնքի
զինվորների ձեռքը։ Շեղվելով վեպի ընթացքից՝ Ծերենցը
պատմում է այլ լեռներում բնակվող հին ազգի մնացորդնե-
րից մի փոքր խմբի մասին, որոնք չկամենալով ենթարկվել ո՛չ
մահմեդականներին, ո՛չ հունական կրոնին, ապրում են՝ երա-
զելով մի ուժեղ զորավար՝ իրենց կյանքն ու դավանանքը պահ-
պանելու համար։ Ենթարկվելով զանազան արկածների՝ Սու-
րեն Կամսարականին հաջողվում է ազատվել նրանցից և մտնել
Կեսարիա։ Այնուհետև մի հայ իշխանի օգնությամբ նա հաս-
նում է յուրայիններին։

Ծերենցի վեպում մի շարք հատվածներ նվիրված են Հա-
յաստանի հին զինվորականներից մեկի՝ Ատոմ Շահունու և
Թեոդորոս Ռշտունու աղջկա բարեկամությանը։ Սպարապետը
պատմում է նրա կյանքի տխուր պատմությունը՝ 5 երեսների
ու նրանց մոր կորուստը և Թենիի նկատմամբ խոր հայրական
զգացումներն՝ իբրև սփոփանք սեփական կորուստների։ «Հի-
քավի զարմանալի հակառակներ կը կազմեն այդ երկու կեր-
պարանքը, այդ մագաղաթյա դեղնած կնճած երեսները, այդ
ձյունի պես ճերմակ մազերն ու մորուքը, այդ ցցվյալ ոսկոր-
ներով կաշին մը պատյալ մատ, մինը մեկ կողմեն, և մյուս
փողմեն գողտրիկ դեռափթիթ երեսներ, լուսալիր նշածև աշ-
քեր, սև-սև հոնքեր և մազեր, ձյունափայլ պարանոց մը և վա-
յելուչ հասակ» (էջ 499)։

Ինչպիսի՞ գորովանքով է նկարագրված դեռատի աղջկա
առաջին սիրո խոստովանությունն իր հոգևոր հորը՝ Ատոմ
Շահունուն։ Ծեր զինվորականը հանգստացնում է նրան՝ խոս-
տանալով տեղեկություններ հաղորդել Գրիգոր Մամիկոնյանի
մասին։ «Եւ ծեր զինվորն այս խոսքերը զրուցելուն՝ կջանար յուր
կերկեր ձայնին փափկություն մը տալ, և իր սառ, չոր, ոսկրոտ,
կրկայն մատներով նորա գողտրիկ երեսները կշոյեր։ Բայց
տեսավ նաև խեղճ աղջիկը, որ այլապէս այս երկար նկարա-
գիրն ըրած էր՝ շատ մը արտասուք թափելով, և ցուրտ չէր

զգացած՝ հիմա կդողար՝ կը սարսուեր, վասնզի դեռ ձմեռ էր և զարունը բավական հեռի և արևի ջերմությունը տկար, ուստի հորդորեց, որ երթա տաքանա» (էջ 504):

Ատոմ Շահունու կերպարի բնորոշ գծերը երևում են ոչ միայն Թեոդորոս Ռշտունու տված բնութագրի, այլև իր՝ Շահունու՝ ղինվորական խորհրդում արտասանած խոսքի մեջ. «...Մենք քիչ կխոսեինք և շատ կգործեինք: Նւ այն միայն կգործեինք, որ մեզի կհրամայեր (մարդպանը—Ռ. Ն.) և ամեն բան կարգի կանոնի մեջ կհաջողեր, և այն մարդը, որ ամենքը բաղմահաղթ կանվանեին, և արքայից արքան յուր պահույնից սյուն կհամարեր և հիրավի, վասն զի Սմբատու մահվանեն քիչ վերջը պահույն էլ ինկավ, թագն էլ, այն մարդը կսիր մեզ թե՛ մեր բոլոր հաջողությունք և հաղթությունք ձեր միակամ ղինվորական կարգապահության և ձեր ղորավարին հաջողության արդյունքն են» (էջ 505):

Ծերենցի ներկայացրած ժողովրդի մարդիկ, որոնք այս կամ այն կերպ անշվում են տերերի հետ, հնազանդ են, այն խորը գիտակցությամբ, որ իրենց նվիրվածությանը օգնում են միայն հայրենիքի սերը և մարդկային առաքինությունը: Զավենի նվիրվածությունը և երկար տառապանքները Արփինիին գտնելու համար, բխում էր նրա մարդկային հոգու բարձր զգացումներից և առաքինությունից: Գաղրիկը, որը գերության շրջանում ճանաչել էր Գրիգոր Մամիկոնյանին և Սուրեն Կամսարականին, իր էպիզոդիկ կերպով ներկայացված իրադրության մեջ պահպանում է տարածությունն իր և տերերի միջև, համոզված, որ բնության և մարդկային ճշմարտություններից մեկն է դա:

Ամենից ցայտուն կերպարը Թեոդորոս Ռշտունու գանձարանի կառավարիչն է՝ Հուսիկը: Նրբ գանգատվում էին Հուսիկի ժլատությունից և ոսկիները պահելու ագահությունից, Ռշտունյաց տիկինը բացատրում էր, թե՛ «Յուր ագահությունը իր անձին հարստության համար չէր՝ այլ ոսկին կսիրեր իր բնության համար, պանծը բանալ, յուր տեսրակներուն հաշիվը քննել՝ և միշտ եկամուտը ծախքին ավելի գտնել, հոն էր յուր բոլոր պլանրճությունն ու գոռողությունը, և այն ատեն ինքն իրեն կա-

մաց և ահռելի ձայնով կըսեր. «Թող տեսնեն Ռշտունիք, թե ինչ մարդ է Արտամեստին: Հուսիկ և ինչ կընե, երբ գանձատան մը գլուխ ունենա» (էջ 507—508):

Վեպում Ծերենցը որոշ տեղ է հատկացնում Մուշեղ և Համազասպ Մամիկոնյաններին, որոնք աշխատում են գրավումներով ամրապնդել իրենց դիրքերը, նույնիսկ շեն խնայում եղբորորդուն՝ Գրիգորին, տարածելով նրա մահվան լուրը, գրավում են ունեցվածքը և նույնիսկ նրա հայտնվելու դեպքում էլ չեն ցանկանում այն վերագարձնել: Բայց քանի որ նրանք համագործակցում են Թեոդորոս Ռշտունու հետ պատերազմական գործողություններին, սպարապետը հարկ է համարում այդ հարցի լուծումը թողնել ապագային՝ այդ պահի միասնությունը չխախտելու համար:

Վեպում առանձին տեղ են գրավում կանայք՝ Բյուրեղ Մամիկոնյանը, Ռշտունյաց տիկինը, Բագրատունյաց իշխանուհին: Բյուրեղ իշխանուհին երևում է առաջին գլխում: Հեղինակը նկարագրում է Մամիկոնյան տիկնոջ հոգատարությունը՝ սերը իր ժողովրդի նկատմամբ: Թեոդորոս Ռշտունին այդ առթիվ ասում է. «Ներկու-երեք անգամ այս տարվան մեջ անցա այս տեղաց և ինչպես սովորությունս է գեղերը գիշերեցի-ամեն տեղ տեսա երջանկություն և Մամիկոնյաց տիկնոջ դուլություն և օրհնություն լսեցի այդ բարի և պատվական շինականաց բերնին: Քիչ քիչ ինձ համոզմունք կդառնա, թե մենք երջանիկ ընելու համար ժողովուրդը կանանց պետք է հանձնենք երկրին կառավարությունը, և միայն պատերազմով զբաղինք, միայն եթե այն ևս կարենայինք հաջողությամբ ի գլուխ հանել» (էջ 448—449):

8-րդ գլխում Ծերենցը ներկայացնում է մեղ արդեն ծանոթ Ռշտունյաց իշխանուհի Սեդային: Տիկինը հմտությամբ կառավարում էր գավառի գործերը: Այն ժամանակ էլ, երբ Ռշտունյաց տերը իր Ոստանում էր, տիկինը օգնում էր նրան երկրի կառավարման գործերում ևս. «Այդ կինը որ ձմեռներն իբրև թե կքաշվեր և իշխանին կթողուր երկրին կառավարությունը, դարձյալ ինքն էր մամն բան տեսնողը, վասն զի Թեոդորոս այդ տեսակ գործերը և աղերսագիրները տիկնոջ կողմարկեր:

Ուստի Ռշտունյաց ընդարձակ գավառին բնակիչք գիտեին ուժ
պետք է դիմել...» (էջ 506):

Ծերենցի ներկայացրած դրական կին հերոսները օժտված
են ոչ միայն անձնական, ընտանեկան, այլև հասարակական
բարոյականության բարձր զգացողությամբ: Դա նրանց առա-
քինության առաջնահերթ չափանիշն է: Քննադատությունը
առանձին նշանակություն է տվել Ծերենցի վեպերում հանդես
եկած այն կանանց, որոնք եռանդուն կերպով մասնակից են
դառնում հայրենասիրական դործունեությանը, հեռու լինելով
նեղ անձնական կրքերից, իրենց սիրո անբասիր զգացումները
նվիրում են սեփական ընտանիքին և հայրենիքին:

«Սովորական կին չէր Ռշտունյաց տիկինը,— գրում էր Ծե-
րենցը Թեոդորոս Ռշտունու կնոջ՝ Սեղայի մասին,— հազիվ քա-
ռասնամյա՝ շատ ավելի պակաս կցցներ: Յուր կերպարանա-
գեղեցկությունն այնպիսի փայլ չուներ, որ աչք շլացներ, ա-
յն վարպետներու նկարներուն կատարելությունն ուներ. Բ-
բանի նայի որ՝ աչքը կզրավի, կը հափշտակե, վայելուչ հա-
սակը, դիմաց համեմատությունը, հոնից և աչաց հրամայող
ակնարկը՝ խառնուրդ խնդության և քաղցրության, որք ձգող
և տիրապետող զորություն մը ունեին, ժպիտը, որ հաճույ-
կամ արհամարհանք կհայտներ, յուր նաղելի շարժումներն ու
քալվածքը, յուր մանր ձևերն ու ոտքերը և վերջապես բոլոր
այս մարմնո կատարելությունը, յուր սրամտության, յուր
նուրբ ճաշակին հետ միացյալ կանանց ակումբի մեջ նաև
ամեն մարդու նկատողության և ակնածության վրնք առաքնա-
կընեին» (էջ 509—510):

Արտաքինի նկարագրությունն ինքնին ենթադրում է և նբա
կեցվածքին համապատասխան արդուզարդը, երկրի տիրոջ
տիկնոջը վայել՝ «Մարգարտային վարսակալ պսակը ճակտին
բեհեզյա քողին վրա, փունջ մը մաղերու խոպուպիք իջած ա-
տից երկու կողմեն, սամուրենին մետաքսյա պարեգոտին վրա-
յեն ձգյալ, ոսկեթել մուճակներ ոտքերուն, Ռշտունյաց տի-
կինը թաղուհի կնմաներ յուր բաղմոցին վրա» (էջ 510):

Ուժեղ անհատականությամբ օժտված մեծ տիկինը Ծե-
րենցի գրչի տակ ուրվագծվում է նաև իր առինքնող կեցված-

քով, որի մեջ և արտացոլվում են նրա հոգեկան առաքինու-
թյունները: Ապա նրա մանկամարդ աղջիկը՝ Թենին, որը սի-
րահարված էր նորահաս երիտասարդ Գրիգոր Մամիկոնյա-
նին: Նրա անկաշկանդ, բայց և խոհեմությամբ քողարկված
զգացմունքների մեջ առկա է բնական անաղարտությունը, որը
և փայլ էր տալիս նրա գեղեցկությանը:

Ծերենցի կին կերպարների հոգևոր հատկանիշները հետա-
գայում ավելի հարստացած երևացին Րաֆֆու ստեղծագործու-
թյուններում:

Վեպում ներկայացվում են արաբների դեմ մղած պաշտ-
պանական պատերազմի առանձին դրվագներ: Ծերենցը նպա-
տակ չի ունեցել լայն պլանով ներկայացնել կռվի դաշտում
հերոսացող առանձին իշխանների և ժողովրդի ներկայացուցիչ-
ներին: Ս. Կամսարականը, որ միշտ եղել էր Ռշտունու կողքին,
այժմ գերի էր Դամասկոսում: Ապա նրան տեսնում ենք ասո-
րական համայնքում՝ սպասելով հարմար առիթի այնտեղից
հեռանալու: Գրիգոր Մամիկոնյանը նույնպես երկար ժամանակ
անց է կացնում գերության մեջ և միայն վերջում իրեն դրսևո-
րում սիրանքներով: Հեղինակը միայն հիշատակում է այդ
սիրանքների մասին: Թշնամու բանակից երևում է միայն շեյխ
Մլին՝ Վարդանաբերդի հրդեհումով և Դամասկոսում, երբ ջան-
քեր է թափում դավանափոխ անելու իր գերիներին:

Առանձին գլուխների համար հեղինակը բերել է մի շարք
բնաբաններ՝ Շլեգելից, Լամարթինից, Ալֆ. դ'Մյուսելից, Բյու-
ֆոնից, Հոմերոսից: Գլուխներից մեկում Ծերենցը նկարագրում
է Զավենի հոգեկան ծանր պահերից մեկը: Ահա նա փրկելով
Արփենիին՝ վերադառնում է Վարդանաբերդ՝ Գրիգորին և
Մ. Կամսարականին որոնելու: Սրտի մորմոքով նա տեսնում է
հրդեհից կործանված ամրոցը, լճից հանում է Մամիկոնյան
տիկնոջ և աղջկա դիակները, ամփոփում հողի մեջ, տեսնում
է մոտակա ավերված գյուղը: Ամբողջ կյանքը կոտորածներ և
ավերումներ տեսած գյուղացի ծեր կնոջ հետ ունեցած խոսակ-
ցության ժամանակ նա բացականչում է. «Տեր աստված, տեր
աստված, այս ի՞նչ պատուհաս է մեր վրա...» (էջ 467):

Այս տխուր դեպքերը նկարագրելիս, Ծերենցն իր հերթին արտահայտում է սեփական ասլուումները Շլեգելից բերած բանաստեղծության հետևյալ հատվածով՝ սեփական թարգմանությամբ.

«Մի տխրություն, խորին և աներեր
Բնակյալ հույս տեղիս կը տանի քո քայլեր.
Արձագանք անցելոյն՝ ոչինչ այլ չի լսվիր,
Հիշատակ քեզ գրավել, ներկան չի նշմարվիր—
Ձերթ ղանգակ հեռաձիգ խառնակոչ կը հնչեն
Մայր ծառոց գագաթունք հողմավար կարտասովեն,
Չիք մի ձայն բնության իբր մեռեալ նա թվի
նվ ի մեջ դամբանաց՝ ես լուի կամ կենդանի» (էջ 463):

Ինչպես է վերապրում ծեր զինվորը Մամիկոնյան դստեր կարոտը. «Խեղճ զինվորը ձեռքը ծնոտին դրած հուսահատության արցունք կը թափեր, կհարցներ Նրասխու ալիքներուն, կհարցներ երկնքի թռչուններուն, ամենքն անտարբեր՝ պատասխան չէին տար: Վերջապես հուսահատ՝ կերթար եկեղեցի ժամերով կաղոթեր և տխուր տուն կդառնար: Շաբաթն անգամ մը, կհեծներ ձին, կերթար լճին քով կնստեր՝ անթարթափ կնայեր կղզին և կդառնար, իսկ երբ լիճը սառեցաւ յուր Տիկնոջ գերեզմանին վրա արտասուք կթափեր և կդառնար» (էջ 475):

Վեպում Ծերենցը ստեղծում է հոգեբանական կերպարներ, որոնք առաջին հերթին աչքի են ընկնում իրենց նվիրվածությամբ, սիրով ու ջերմությամբ. դրանցից մեկն է ահա Ատոմ Շահունին: Իր զավակներին և կնոջը կորցրած ծերունին Թենիի լույսի մի շողով կամենում է կենդանացնել մեռած սիրտը: Ծերենցը հիշում է Համարթինի բանաստեղծության մի հատվածը, ուր նա ասում է.

«Մնի՝ կանցնի և կհասնի սամենայն
Ճակատագրին յուր անորոշն է սահման.
Առ օվկյան՝ տխուր ալիք,
Քամվոյն տերև փախուսիկ,
Լույսն իրիկվան և մարդ՝ մահվան:
Սակայն ում փույթ, ո՞ւր, սիրելիս,
Մեր օրերուն շափն անծանոթ.

Միայն հանդարտ թող ի հալիս
եվ հարահետ անուշահոտ
Լիզմեղ վարե, սուր ժամանակ» (էջ 498):

Ինչպես նախորդ վեպերում, այնպես էլ այստեղ սլուծե-տալին տարբեր գծերը, տարբեր միջավայրերի պատկերումը, հանգույցներն ու կոնֆլիկտները ցույց են տալիս հեղինակի լայն երևակայությունը և գրչի վարպետությունը:

Մերենցն աչքի է ընկնում պատկերների դինամիկ նկարագրությոններով. «Դարձյալ լուծյուն հաջորդեց, միայն ձիերու սմբակներու ձայնը կլսվեր. ձիավոր մը փոթորկելով գնաց աներևոյթացալ և խումբը փոքրիկ լիճի քովն պտույտ ընելով և ժայռն ի վեր բարձրանալով մեծ դռան մը առջև կանգնեցալ. ձիերը սկսան խրխնջել և գետինը ծեծել, դռները ճռընչեցին բացվեցան, Վարդանաբերդի գավիթը ճահերով լուսավորվեցալ վայրկենին...» (էջ 441):

Հեղինակի երկերի գլխավոր նպատակն է ներկայացվող պատմական իրադարձությունների մեջ արտացոլել հայ մարդու սովորույթները, թշնամուն ևս մղելու զորեղ կամքը: Արվեստագետի կողքին կանգնած պատմաբանը, որը քննում է ստեղծված պայմանները, աշխատում է վեր հանել այն դժվարությունները, որոնք առաջանում են ներքին ուժերի ջլատումներից: Եթե առաջին վեպում Թորոս իշխանը վերականգնում է Կիլիկյան պետության անկախությունը, ապա Մերենցը դաբացատրում է ժողովրդական ուժերի հետ համագործակցելու նրա գիտակցությամբ ու եռանդով: «Երկունք Թ դարու» վեպում հեղինակը Բագրատունիներին քննադատում է իշխանության վերականգնման մեջ ժողովրդի ունեցած դերի թույլ գիտակցության համար: «Թեոդորոս Ռշտունի» վեպում ներկայացված պատմական իրականությունն ավելի բարդ էր ու խճողված: Այդ իրականության հետ կապված հարցերին Մերենցը փորձում է անդրադառնալ Թեոդորոս Ռշտունի գեղարվեստական կերպարի մեկնաբանության մեջ:

Նախորդ էջերում մենք փորձեցինք տալ պատմական այն իրադրությունը, որի մեջ դտնվում էր Հայաստանը VII դարի կեսերին: Ռշտունին ակնատես է լինում Սասանյան իշխանության կործանմանը և արաբական հրոսակների ներխուժմանը Հայաստան: Պատմության մեջ հայրենասիրության, խիղախության մեծ սխրանքներով իրեն սրբազորած Թեոդորոս Ռշտունի սպարապետի կերպարում Սերենցը դնում է և իր սևփական խորհրդածությունները, որոնց մի մասին մենք անդրադարձանք պատմական իրականությունը ներկայացնելիս: Թեոդորոս Ռշտունին տաղանդավոր ղորավար էր, ռազմական, բազաբագիտական և դիվանագիտական մեծ փորձի տեր: Նրան մենք հանդիպում ենք առաջին իսկ էջերում՝ Մամիկոնյան զղչակում: «Միջահասակ և հազիվ մի հիսուն տարու մարդ մը կերևար այն ատեն. յուր լայն ճակատը, յուր հոնքերու զորեղ կամարը, յուր ցածր և անխռով նաչվածքը, յուր արծվի բիթը, յուր լայն կուրծքը, յուր բոլոր կերպարանաց հզոր համատությունը, ավելցնենք ասոնց վրա յուր հակիրճ և վճռական խոսակցությունը՝ առաջին ակնարկին հարտնի կրննին նշանավոր մարդը, որ հրամայելու համար ստեղծված էր»³: Թեոդորոս Ռշտունին հայոց առաջին իշխանն էր: Սերենցը նրան կոչում է «իշխան հայոց, Ռշտունյաց տեր»: Նա կաշսրից ստանում է «Պատրիկ իշխան» տիտղոսը:

Հեղինակը թվարկում է նրա առավելությունները՝ արդարության ուրին, քաջասրտությունը, հայրենի կրոնին հավատարիմ լինելը, ժողովրդի հանդեպ ունեցած գութը, որը, նրա կարծիքով, «միայն ճշմարիտ հայրենասիրություն կրնա համարվիլ»: Նախարարների հետ խոսելիս նա միշտ հիշեցնում էր, թե՛ «իրենց պարտավորությունը ժողովրդաց հայր և պաշտպան լինելն էր և ոչ հարստահարել» (էջ 447): Թեոդորոսի երկյուղից նախարարներն աշխատում էին արդարության կառավարի: Նա շատ լավ գիտեր, որ հայրենասիրությունը ոչ «զաղգ շողոքորթելու և ոչ նախատելու մեջ է», և խորապես զգում էր, որ հայ ազգի թշվառության պատճառը «զորավոր ազգային կա-

ռավարութիւն մը չլինելէն և նախարարաց անկոպար իշխանութենէն առաջ կուգար, որով երկրին մէջ կատարյալ անիշխանութիւն և փոքրիկ բռնավորներ կտիրեին ստրուկ և խաղալիք օտարին» (նույն տեղում):

Թեոդորոս Ռշտունին այն կարծիքն է հայտնում, որ «...եթե այս ոտնակոխ և ընկճյալ Հայաստան հիմա գլուխ վերցնե՝ կանգնի միաբան և միասիրտ, իմ արեւը վկա, որ օտարի հետք անգամ չի մնար այս երկրիս մէջ» (էջ 488): Թեոդորոսը մտածում էր, որ պատմական այս իրադրութեան մէջ, երբեք ինքնակալ ուժերը պարտված են, հնարավոր է և պետք է՝ «միաբանութեան ուխտ հաստատել հայ նախարարութեանց գլխավորներուն մէջ, միացնելով վրաց և աղվանից իշխանները, որով շատ լավ կարելի էր դիմադրել ամեն օտարաց» (էջ 494): Ռշտունուն հաջողւում է իրականացնել այդ միաբանութեան ուխտը, միավորել Սյունյաց և Վասպուրականի իշխաններին:

Սակայն, ինչպես պատմութիւնն է վկայում, Թեոդորոսին չհաջողվեց այդ դաշնութեամբ հասնել իր նպատակին: Նա փորձեց կանխել արաբական նորանոր ներխուժումներ՝ 653 թ. Օսման խալիֆի հետ կնքած մի դաշինքով: Բայց Բյուզանդիոնի միջամտութիւնը և արաբների նոր ներխուժումները կործանեցին ամեն ինչ: Եվ ահա Թեոդորոսը Կոգովիտի բարձունքից դառնացած նայում է «ոչ միայն եղած ավերակաց վրա, այլև այն ապագա դարերուն վրա, որ դեռ ավերակներ պիտի բերեին և անապատը պիտի ընդարձակէին, վասն դի հայտնի երկու դավաճանի այս դժբախտութեան պատճառ կերեին, և գաղտնի ուրիշներ ստիւերներու մէջ կային, որ չէին երևեր: Ո՛ր էին Մուշեղ և Հմայակ Մամիկոնյանք, ինչու չէին շարժյալ, երբ թշնամին իրենց երկիրը կմտներ: Իսկ նոքա, որ եռանդուն խոստմունքներ ւրած էին՝ իշխանք Սպերացվոց, Բագրատունյաց, Մանանաղյաց, Դարանաղյաց և Եկեղյաց դավառին, իշխանք Վանանդու և Դիմաքսենից, ոչ ուրեք երևեին» (էջ 536):

Պատմութիւնն ասում է, որ նրանք մատնեցին կայսեր Ռշտունու արաբների հետ դաշինքի մէջ մտնելը. այդ ուխտին հավատարիմ մնացին վրացիք, աղվանցիք և սյունեցիները:

Պատմութիւնն ասում է նաև, որ երբ Ռշտունին իմանում է կայսեր հրամանը՝ իրեն ձերբակալելու մասին, ամրանում է Աղթամար կղզում՝ պաշտպանվելու համար։ Սակայն հույներին հակված ներսես Տայեցի կաթողիկոսին հաջողվում է միջամտութեամբ կանխել պատերազմը հույների հետ։ Սպարապետ է նշանակվում Մուշեղ Մամիկոնյանը։ Թեոդորոսը ձերբակալվում է և տարվում Կ. Պոլիս։ Այստեղ նկարագրվում են բուլղանդական կայսրութեան պալատական ներքին դավերը, կայսերափոխութիւնները։ Այս առիթով զեղարկւտական հյուսվածքի մեջ է մտնում հունական դորավար, ծագումով հայ Թեոդորոս Նրիզացին։ Թեոդորոս Ռշտունին աղատվում է կալանքից և վերադառնում հայրենիք։

Թեոդորոս Ռշտունու պարտութեան մեջ Մերենցը նորից տեսնում է տիրապետող դասի ցուցաբերած հասարական ձրգտումների արտահայտութիւնը։ Ժողովրդական ուժերի միասնութեամբ միայն հնարավոր էր հասնել ցանկալի հաջողութեան։ Իսկ հաջողութեան հասնելու պայմանը միայն ղենքի մեջ տեսնելը քիչ է, եղբակացնում է հեղինակը, կարևոր է նաև դիվանագիտութեան ճիշտ ընթացքը։

Իր մահից առաջ հայոց սպարապետն ասում է Գրիգոր Մամիկոնյանին, թե իր անձնական կյանքի սխալներից մեկը եղավ այն, որ հայրենակիցների անիրավութիւնը պատուհասելու համար հավատաց հույնին և արաբին. «...չի կրցի նախատեսել, թե օտարին շահասիր բարերարութիւնը ընտանյաց անիրավութենէն վատ է, և դորա պատիժը ահա կկրեմ օտարութեան մեջ վերջացնելով կյանքս» (էջ 636)։ Նա խորհուրդ է տալիս իր փեսային՝ հորդորել, խրատել ամենքին, որ եթէ չեն կարող պատժել, «համբերութեամբ տանին իրարու պակասութեան հանցանաց և եղեռանց անգամ, այլ անքավելի ոճիր համարին օտարը հրավիրել, օտարին՝ հայրենի երկիրն ոտնակոխ ընել տալ»։

Վերջին գլխի՝ Հոմերոսից բերված բնաբանն ասում է. «Այդպես է անտառաց մեջ տերևներու սերունդը, և այդպես նաև մահականացվածը։ Տերևները ոմանք՝ քամին գետին կթա-

փն, և ոմանք կանաչ անտառի կբողբոջն՝ երբ գարնան եղա-
նակը կհասնի,—այդպես մարդկանց սերունդք երբեմն կծաղ-
կին, երբեմն կվերջանան» (էջ 637):

Նորից պարտվեցին հայերը, պատմութիւնը նորից ջա-
տեց նրա ուժերը, հին թշնամին՝ Բյուզանդիոնը, դարեր տևող
իւր անկման մեջ իսկ նենգ, կեղծավոր և դաժան բռնութեամբ
շարունակեց ոտնատակ տալ մեր երկիրը: Եկավ նորը, որը 300
տարի լրացրեց Բյուզանդիոնի արածը: Ժողովուրդն ապրեց
այն հուլիսով, որ անտառի մեջ թափվող տերևները կպահեն այն
կանաչը, որ նորից բողբոջներ տա՝ գարնան գալուն պես:


Ծերենցն իր վեպն ավարտում է այն օրերին, երբ 1878-ից
հետո ազգային ինքնագիտակցութեամբ արթնացած արևմտա-
հայութիւնը պատրաստվում էր ապստամբութեան: Բայց խա-
փանարար ուժերը նորից հորդում են հայութեան ճակատագրի
մը, և նորից կործանվում է ամեն հույս ու ապավին:

Վիպասանն իր գիրքն ավարտում է՝ կշտամբանք ուղղելով
իւր այն նախնիներին, որոնք կառուցեցին հոյակապ պալատ-
ներ ու տաճարներ, ամրոցներ, վանքեր ու եկեղեցիներ, բայց
չկարողացան պահպանել դրանք: Նրանք չհասկացան և չցան-
կացան հասկանալ պետականութեան ուժով ամրապնդված
միասնական ուժերի անհրաժեշտութիւնը՝ մարդկային անհա-
տի տեղը և դիրքը պահպանելու գործում:

«Նախախնամութեան խրատն էին. սոքա,—գրում է Ծե-
րենցը նույն տեղում,—բայց դժբախտաբար անօգուտ անցան:
Մարդը եթէ չխրատվեր յուր հարց, յուր նախնայ օրինակէն,
չունի նոցա պատմութիւնը, կրնկնի նույն սխալանաց մեջ և
կմատնվի նույն տառապանաց, նույն տանջանաց»:

Ծերենցն իր վեպն ավարտում է այդ օրհասական օրերի
համար, իր կարծիքով, շատ անհրաժեշտ պատգամով. «Ժողո-
վըրդական միաբանութեան ոգի և ուսումնարան: Այս երկու
բանը,—գրում է նա,—կարող են հայ ազգին կենդանութեան
շունչ բերել»: Համախմբել ժողովրդին, սովորեցնել նրան
կյանքի և ազգային ինքնութեան, սեփական անկախութեան հա-
մար պայքարելու միջոցները, որը և ըստ նրա կարող էր հասց-
նել հաղթանակի:

Ստեղծագործելով հայության հույսերի ու երազանքների փլուզման ծանր ժամանակներում, Ծերենցը չի կորցնում իր հավատն ապագայի նկատմամբ: Զինվելու և պատերազմելու համար պետք է հասնել ազգային-քաղաքական գիտակցության՝ ներքին ուժերը համախմբելու: Վերջին վեպից հետո Ծերենցը նորից մտնում է ժողովրդի մեջ, օգնում բարձրացնելու նրա ոգին՝ հետագա փորձություններին դիմանալու համար: Դա նրա կյանքի գլխավոր նպատակն էր և այդ երազներով նա կրնա քեց իր մահկանացուն:



ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Առաջին մաս

Գլուխ առաջին

- 1 Ն. Չարենցի անվան զրականության և արվեստի թանգարան (այսուհետև՝ ԳԱԹ), Ծերենցի ֆ., № 20/1 (առաջին բաժին), էջ 24: Ծերենցի անտիպ հուշերից և աղջկա՝ Բագուկի նամակներից հատվածներ առաջին անգամ օգտագործվել են մեր կողմից, 1961 թ. հրատարակված «Ծերենց» գրքույկում: Նույն ֆոնդից հանված նոր նյութերը նույնպես օգտագործվում են առաջին անգամ:
- 2 Ղևոնդ Ալիշանն իր ծոցատետրի զրառումներում, Պոլսից Վենետիկ մեկնելու օրը, նշել է 1832 թ. մայիսի 9-ը: Մինչև Վենետիկ հասնելու թվականները վերցրել ենք Ալիշանի նշումներից: (Տե՛ս այդ մասին Ս. Սարգսյան, Ղևոնդ Ալիշան. պատկերներ նրա կյանքից), Երևան, 1978, էջ 26:
- 3 ԳԱԹ, Ծերենցի ֆ., № 16/1, էջ 2:
- 4 Ծերենցի թողած նյութերի մեջ պահվում են նրա հուշերից մնացած առանձին հատվածներ և պատառիկներ: Դրանցից մեկը «Ս. Ղազարը», գրվելիք հուշերի առաջին գլուխն է: Իր փոքրիկ առաջաբանում նա նշում է, թե հուշեր գրում են մեծությունները, բայց փոքր մարդկանց կյանքը նույնպես հետաքրքիր է, մանավանդ, երբ նրանք բացում են կյանքի շատ ճշմարտությունները: Հուշերից քաղվածքները տե՛ս փակագծի մեջ:
- 5 ԳԱԹ, Ծերենցի ֆ., 18/1, էջ 1:
- 6 «Փոքրձ», 1879, № 4, էջ 158:
- 7 ԳԱԹ, Ծերենցի ֆ., № 18/1:
- 8 Սարգիս Զալալյան, Ճանապարհորդութիւն ի Հայաստան, Տիփլիս, 1842, Ա, էջ 6:
- 9 «Փոքրձ», 1879, № 4, էջ 158:
- 10 «Պատմա-բանասիրական հանդեսի» 1934 թ. № 2 էջ 62-ում տպագրած հոդվածում զրականագետ Ս. Շտիկյանը նշում է, որ Պեշկիթաշլյանը Պոլիս է վերադարձել ոչ թե 1845-ին, այլ 1843-ին: (Հոդվածն է՝ «Մ. Պեշկիթաշլյանի երգիծական մի ոտանավորի մասին»):
- 11 Ս. Ասկերյան, Հասունյանի քաղաքականությունը, Տիփլիս, 1868, էջ 76—77:
- 12 «Փոքրձ», 1879, № 5, էջ 197:
- 13 Ավ. Պերպերյան, Պատմություն Հայոց, Կ. Պոլիս, 1871, էջ 351:
- 14 Ծերենցի Փարիզ մեկնելու վարկածը հանված է 1849 թ. ապրիլի 27-ին

Փարիզում հիմնադրված «Արարատյան ընկերության» «Հայտարարության» մեջ նշված հետևյալ տողերից. «Տարիեն ի վեր աշխարհի կեդրոն Փարիզ կեցած ենք...»: Սակայն գրականության և արվեստի թանգարանում, Մերենցի անտիկ հուշերում, մենք հանդիպեցինք հեղինակի ձեռքով գրված երկու փաստի, որը կասկածի է ենթարկում այդ թվականի ճշմարտացի լինելը: Հուշերից մեկում խոսելով Փարիզում գտնվող Մուրադյան վարժարանի մասին (որտեղ նա Փարիզ գալուն պես դասեր էր ստանձնել) հիշում է, որ Մխիթարյանների հետ շփվել է երկու անգամ: 1. Հինգ տարի եղել է ս. Ղազար վանքում (1832—1837), երկրորդ անգամ՝ Պոլիս վերադառնալուց հետո՝ 9 տարի անց Փարիզում: Փարիզի Մխիթարյանների մասին խոսելիս նա գրում է, որ 1846-ին ականատես է եղել վարժարանում նրանց գծադրություններին և բացահայտ հակակրթությանը լուսավորչական դավանանք ունեցող հայ աշակերտների հանդեպ: (Տե՛ս ԳԱԻ, Մերենցի ֆ., 16/2, էջ 19 և 21): Մա նշանակում է, որ Մերենցի Փարիզ մեկնելու թվականի հարցը կարիք ունի վերանայման:

Գ Լ ՈՒ Խ Ե Ր Բ ՈՐ Ղ

- 1 Տե՛ս Ս. Շտիկյան, Հայ նոր գրականության ժամանակագրություն (1801—1850, Երևան, 1973, էջ 329:
- 2 Հ. Շիրմանյան, Հրատարակությանը հավաքմունք, Ա, էջ 8: Հրատարակված գործերը թվագրված չէ: Բ մասը լույս չի տեսել:
- 3 Գանիել Վարուժան, Երկեր, Երևան, 1946, էջ 357:
- 4 «Նոր կյանք», 1899, № 1, էջ 181:
- 5 «Գրիգոր Օտյանի գոհարները», Կ. Պոլիս, 1931, էջ 34:
- 6 Նույն տեղում, էջ 34—35:
- 7 Վ. Ի. Լենին, ԵԼԺ, հ. 2, 1943, էջ 646:
- 8 «Մասիս», 1893, № 3997, էջ 388:
- 9 Նույն տեղում, էջ 387:

Գ Լ ՈՒ Խ Ե Ր Բ ՈՐ Ղ

- 1 Տե՛ս Հայկ Ղազարյան, Արևմտահայերի սոցիալ-տնտեսական և բաղադրական կացությունը 1800—1870-ական թթ., Երևան, 1967, էջ 467:
- 2 Աշ. Հովհաննիսյան, Նալբանդյանը և նրա ժամանակը, հ. 1, Երևան, 1955, էջ 476:
- 3 «Կոունկ Հայոց աշխարհի», 1862, էջ 614:
- 4 Նույն տեղում, էջ 614—615:
- 5 Միֆայել Նալբանդյան, ԵԼԺ, Երևան, հ. 3, 1982, էջ 270:
- 6 Աշ. Հովհաննիսյան, նշվ. աշխ., հ. 1, էջ 535:
- 7 Նույն տեղում, էջ 527:

- 8 Նույն տեղում, էջ 485:
 9 Հայկ Ղազարյան, նշվ. աշխ., էջ 520
 10 Մ. Նալբանդյան, եկժ, Երևան, հ. 4, 1983, էջ 114:

Գ Լ Ո Ւ Խ Շ Ո Ր Ր Ո Ր Վ

- 1 Միֆայել Նալբանդյան, եկժ, հ. 4, 1983, էջ 299:
 2 «Հայաստանի Կոչնակ», 1927, № 11, էջ 491:
 3 Մ. Մամուրյան, Երկեր, Երևան, 1966, էջ 53:
 4 «Արևելյան մամուլ», 1873, № 6, էջ 303:
 5 Նույն տեղում, № 8, էջ 384:
 6 Հ. Շիշմանյան, Հրատարակությանց հավաքածունք, և, էջ 77—78:
 7 Հայկ Ղազարյան, նշվ. աշխ., էջ 565:
 8 Թ. Գուշակյան, Խրիմյան Հայրիկ, Փարիզ, 1925, էջ 51:
 9 Հ. Շիշմանյան, նշվ. աշխ., էջ 137:
 10 Նույն տեղում, էջ 139:
 11 Նույն տեղում, էջ 144:
 12 Նույն տեղում, էջ 146:
 13 Նույն տեղում, էջ 133:
 14 «Արևելյան մամուլ», 1874, № 11, էջ 475:
 15 Նույն տեղում, էջ 476:
 16 Մեհենց, Եվրոպական քաղաքակրթության ներկա ժամանակներու հաղդին վրա ըրած ազդեցությունը, 1873, էջ 5:

Գ Լ Ո Ւ Խ Ի Ն Ղ Ե Ր Ո Ր Վ

- 1 Հ. Շիշմանյան, Հրատարակությանց հավաքածունք, էջ 105:
 2 Նույն տեղում, էջ 88:
 3 Նույն տեղում, էջ 99—100:
 4 Նույն տեղում, էջ 105:
 5 Բաֆֆի, եկժ, հ. 9, Երևան, 1958, էջ 85:
 6 Հ. Շիշմանյան, նշվ. աշխ., էջ 36:
 7 Նույն տեղում, էջ 150:
 8 «Մասիս», 1872, № 1243:
 9 Հ. Շիշմանյան, Հրատարակությանց հավաքածունք, էջ 34—35:
 10 Նույն տեղում, էջ 70—71:
 11 Նույն տեղում:

Պ Լ Ո Ւ խ Վ Ե Գ Լ Ե Ր Ո Ր Պ

- 1 «Մասիս», 1892, № 3958, էջ 49:
- 2 ԳԱԹ, Ծերենցի ֆ., 22/1, էջ 24—25:
- 3 Նույն տեղում, էջ 18—19:
- 4 Նույն տեղում, էջ 18:
- 5 Մանրամասն տե՛ս Ծերենցի ֆ., 22 հունվար, Բ, էջ 17:
- 6 «Մասիս» 1893, № 3970, էջ 92:
- 7 Ծերենցի Կիպրոս աքսորվելու վարկածն առաջին անգամ ժխտվել է 1961 թ. մեր կողմից հրատարակված «Ծերենց» գրքույկում:
- 8 Տե՛ս Ծերենցի ֆ., 22/1, էջ 20:
- 9 «Մասիս», 1893, № 3997, էջ 389:
- 10 Նույն տեղում:
- 11 Տե՛ս Ծերենցի ֆ., 22/1, էջ 24:
- 12 Ծերենցի ֆ., տե՛ս Թագուկի նամակների տետրը, էջ 24:
- 13 Նույն տեղում, էջ 86—87:
- 14 «Արևելյան մամուլ», 1876, № 1, էջ 23:
- 15 Նույն տեղում, № 10, էջ 349:
- 16 Տե՛ս 1965 թ. ռուսերեն հրատարակված Վ. Հյուգոյի ներկերի ժողովածուն, հ. 14, երկրորդ մաս, հինգերորդ գլուխ:
- 17 «Արևելյան մամուլ», 1876, № 3, էջ 136:
- 18 Նույն տեղում, № 7, էջ 176:
- 19 ԳԱԹ, Ծերենցի ֆ., տե՛ս Թագուկի նամակների տետրը, էջ 20:
- 20 Նույն տեղում, 17/1, էջ 2:
- 21 Նույն տեղում, էջ 180:
- 22 «Հայք», 1893, № 8, էջ 90—91:
- 23 ԳԱԹ, Ծերենցի ֆ., Թագուկի նամակների տետրը: Նկատի ունի Գ. Սըրվանձտյան և Վահան Պարտիզակցի վարդապետներին, որոնց ներսևս պատրիարքն ուղարկել էր գավառները՝ հայ գաղթականների հոսքը կանխելու նպատակով:
- 24 ԳԱԹ, Ծերենցի ֆ., № 14, էջ 2:
- 25 Նույն տեղում, էջ 233:

Պ Լ Ո Ւ խ Ե Ր Ո Ր Ե Լ Ե Ր Ո Ր Պ

- 1 ԳԱԹ, Ծերենցի ֆ., էջ 247:
- 2 Նույն տեղում, Թագուկի նամակը Հյուրմյուղյանին (չհամարակալված):
- 3 Նույն տեղում, Թագուկի նշումները, էջ 37:
- 4 Նույն տեղում, էջ 40:
- 5 Մերենց, Նրկունք Թ դարու, Տփլիս, 1895 թ., էջ և (5) (Ավ. Եղիկյանի արտասանած դամբանական ճառից):

- 6 «Փորձ», 1879, № 11, էջ 3:
- 7 Նույն տեղում, էջ 4:
- 8 Նույն տեղում, № 1, էջ 203:
- 9 Նույն տեղում, էջ 208:
- 10 «Մշակ», 1878, № 107:
- 11 «Փորձ», 1879, № 7, էջ 203:
- 12 «Մեղու Հայաստանի», 1882, № 52:
- 13 Մ. Մխիբարյան, 19-րդ դարի երկրորդ կեսի արևելահայ պարբերական մամուլի պատմությունից, Երևան, 1976, էջ 99, 145:
- 14 Տե՛ս Մերենց, Էրկեր, 1957, Երևան, էջ 641—642:
- 15 ԳԱԹ, Ծերենցի ֆ., № 22:
- 16 «Արաքս», 1888, գ. Բ, էջ 157—158:
- 17 Նույն տեղում, էջ 106:

Երկրորդ մաս

Գլուխ առաջին

- 1 «Բաղմավեպ», 1849, № 13:
- 2 Վ. Քերզիբաշյան, Հայ դրամատուրգիայի պատմություն, Երևան, 1959, էջ 152:
- 3 Առակ Զոպանյան. Մ. Պեշիկթաշյան, էջ 100:
- 4 Ս. Սարգսյան, Հայկական ուղևորություն, Երևան, 1966, էջ 209:
- 5 Խ. Աբովյան, ԵԺԺ, հ. 8 տե՛ս էջ 32—42:
- 6 «Մշակ», 1879, № 188:
- 7 «Արևելյան մամուլ», 1871, № 7, էջ 36:
- 8 «Մեղու Հայաստանի», 1883, № 121:
- 9 «Մասիս», 1885, № 3754, էջ 628:
- 10 Տե՛ս Մ. Մամուրյան, «Իվանոսի» առաջաբանը:
- 11 Տե՛ս Բաֆֆի, ԵԺԺ, հ. 7, Երևան, 1956, առաջաբանը:
- 12 Նույն տեղում, հ. 1, Երևան, էջ 61:
- 13 Մերենց, Էրկեր, Երևան, 1957, էջ 104 (հետագա նշումները տե՛ս տեքստում, փակագծի մեջ):

Գլուխ երկրորդ

- 1 Г. Г. Микаелян, История Киликийского армянского государства, Ереван, 1952, с. 113.
- 2 Մերենց, Էրկեր, էջ 5:

- 3 Տե՛ս «Արարատ», 1850—1851, № 12—15:
- 4 Архив Маркса и Энгельса, М., т. V, 1933, с. 190.
- 5 Մերենց, Երկեր, էջ 16:
- 6 Հ. Շիշմանյան, Հրատարակությանը հավաքմունք, էջ 79—80:
- 7 Մերենց, Երկեր, էջ 7:
- 8 Ա. Ղանալանյան, Ավանդապատում, Երևան, 1969, էջ 395:
- 9 Նույն տեղում, էջ 276:
- 10 Մերենց, Երկեր, էջ 24:
- 11 Բաֆֆի, Ելժ, հ. 7, էջ 6:
- 12 Նույն տեղում:
- 13 ԳԱԲ, Ծերենցի ֆ., № 11:
- 14 Նույն տեղում, էջ 176:
- 15 Վահրամ Ռաբունի, Ոտանավոր պատմություն Ռուբինեաց, Փարիզ, 1859:
- 16 Մերենց, Երկեր, էջ 55:
- 17 Ս. Երեմյան, Ազգային դեմքեր, շարք 5, Վենետիկ, 1914, էջ 441:
- 18 «Մասիս», 1884, № 3758, էջ 736:
- 19 Վրբ. Փալիազյան, Պատմություն հայոց գրականության, Թիֆլիս, 1910, էջ 476:
- 20 Առ, Ռուսահայոց գրականության պատմություն, Թիֆլիս, 1902, էջ 118:
21. Հովհ. Թումանյան, Ելժ, հ. IV, Երևան, 1951, էջ 450:

Գ Լ Ո Ւ Ս Ե Ր Դ Ո Ր Ղ

- 1 Թովմա Արծրունի, Պատմություն հայոց, Երևան, 1978, էջ 136:
- 2 Նույն տեղում, էջ 200:
- 3 «Պատմություն Ղևոնդայ», Ս. Պետերբուրգ, 1887, էջ 123:
- 4 Հովհաննես Դրասխանակերտցի, Պատմություն հայոց, Թիֆլիս, 1912, էջ 258:
- 5 Նույն տեղում, էջ 256—257:
- 6 Մերենց, Երկեր, էջ 209:
- 7 Ս. Սարգիսյան, Նշվ. աշխ., էջ 434:
- 8 Մերենց, Երկեր, էջ 434:
- 9 Տե՛ս «Աստվածաշունչ», Կ. Պոլիս, 1896, Հովհաննես Առաքյալի Հայտնությունը, էջ ԺԲ:
- 10 Մ. Մամուրյան, Երկեր, էջ 521:
- 11 Մերենց, Երկեր, էջ 231:
- 12 Նույն տեղում, էջ 279:
- 13 «Մշակ», 1883, № 144:
- 14 Բաֆֆի, Ելժ, հ. 7, էջ 8:
- 15 Մերենց, Երկեր, էջ 366—367:

16 «Փորձ», 1880, № 8, էջ 224:

17 Բաֆֆի, Եժ, հ. 10, Երևան, 1959, էջ 127:

18 Նույն տեղում, էջ 128:

19 Վրբ. Փափազյան, Պատմություն հայոց գրականության, Թիֆլիս, 1910,
էջ 477:

Գ Լ Ե Վ Ի Լ Խ շ ո Ր Ր Ո Ր Ղ

1 Մերենց, Երկեր, էջ 478:

2 Նույն տեղում, էջ 481:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Առաջաբան 5

ԱՌԱՋԻՆ ՄԱՍ

Գլուխ առաջին

1. Ծերենցը Ս. Ղազար կղզում: 2. Վերադարձ Կոստանդնուպոլիս:
3. Գաղափարական հասունություն: 4. Փարիզում . . . 11

Գլուխ երկրորդ

1. 1850—1852 թթ. հակահասունյան շարժման ապագա սլաքագլուխը: 2. 1850-ական թթ. արևմտահայ անդրանիկ լուսավորիչները 26

Գլուխ երրորդ

1. Ծերենցը Կ. Պոլսի «Հայոց համազգային Բարեգործական ընկերության» հիմնադիրներից: 2. Մ. Նալբանդյանը և «Բարեգործական ընկերությունը»: 3. Ծերենցը Զեյթունի ապստամբության շրջանում և նրա կապը Մ. Նալբանդյանի ծրագրումների հետ . . . 35

Գլուխ չորրորդ

1. Ն. Ռուսինյանը և Ազգային ժողովը: 2. Մ. Մամուլյան: 3. Մ. հերիմյան: 4. Հ. Սվաճյան: 5. Ծերենցի Ատեհախոսությունը . . 44

Գլուխ հինգերորդ

1. Օսմանյան և անգլիական քաղաքականության քննադատությունը: 2. Հոմի Վատիկանի և Հասունյանի դալադիր գործունեության մերկացումները: 3. Ծերենցյան խորհրդածությունները . . . 61

Գլուխ վեցերորդ

1. Սերենց մանկավարժը: 2. Կիպրոսում: 3. Վ. Հյուգոյի «Վիլյամ Շեքսպիր» աշխատության մի հատվածի թարգմանությունը: 4. «Թորոս Լեոնի» վեպի հղացումը 72

Գլուխ յոթերորդ

1. Սերենցը Թիֆլիսում: 2. Աղզային հարցի լուծման բաղձանքները: 3. Փակուղիներում 88

ԵՐԿՐՈՐԻ ՄԱՍ

Գլուխ առաջին

1. Պատմական այտմեն XIX դարի առաջին կեսի հայ գրականության մեջ: 2. Ռոմանտիկական պատմավեպի եվրոպական ակունքները: 3. Հայ գրականության զաղափարական միտումները 1860—1870-ական թթ. 103

Գլուխ երկրորդ

1. «Թորոս Լեոնի» վեպի առաջին գլուխները (Ա-Ը): 2. Թորոս իշխանը որպես պետական միասնական ուժի ներկայացուցիչ և ժողովրդի առաջնորդ: 3. Վեպի հերոսուհիները: 4. Վեպի գեղարվեստական առանձնահատկությունները: 5. Արձագանքները 115

Գլուխ երրորդ

1. «Երկունք Թ դարում» վեպը և նրա պատմական ակունքները: 2. Վեպի առաջին գլուխները: 3. Վեպի գլխավոր հերոս Հովնանը, Դուրգեն Իշխանը և Սմբատ սպարապետը: 4. Վեպի գեղարվեստական հյուսվածքը: 5. Քննադատությունը 160

Գլուխ չորրորդ

1. «Թեոդորոս Ռշտունի» վեպը և պատմությունը: 2. Վեպի բովանդակությունը և կառուցվածքը: 3. Թեոդորոս Ռշտունու կերպարը 192

Մանոթագրություններ 210



ՌՈՒԶԱՆ ՊԱՎԵԼԻ ՆԱՆՈՒՄՅԱՆ

ԾՆՐԵՆՑ

Կյանքը և գործը

Հրատ. խմբագիր Ջ. Խ. Օրմանյան
Նկարիչ Լ. Ս. Իգիթյան
Տեխ. խմբագիր Լ. Մ. Մանուչարյան
Սրբագրիչ Ա. Ա. Ավանեսյան


ИБ № 1062

Հանձնված է շարվածքի 29. 04. 1986 թ.: Ստորագրված է տպագրության
2. 10. 1986 թ.: ՎՃ 10817: Չափը $84 \times 108 \frac{1}{32}$, թուղթ № 1: Տառատեսակ
«գրքի սովորական» բարձր տպագրություն: Պայմ. 12,16 մամ., տպագր.
13,75+2 ներդիր մամուլ: Ներկ. մամուլ 12,16: Հրատ.-հաշվարկ. 9,7 մամուլ:
Տպաքանակ 2000: Հրատ. № 6783: Պատվիր № 479: Դինը 1 ռ. 50 կ.:
ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 375019, Երևան, Մարշալ Բաղրամյան
պող. 24 գ.:

Издательство АН Арм. ССР, 375019, Ереван,
пр. Маршала Баграмяна, 24 г.

ՀՍՍՀ ԳԱ հրատարակչության տպարան, 375019, Երևան, Մարշալ
Բաղրամյան պող. 24:

Типография Издательства АН Арм. ССР, 375019, Ереван,
пр. Маршала Баграмяна, 24.



A ii
74281